

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ



ՌՈՒՐԵՆ ՄԵՎԱԿԻ
ԱԶԻՆԵՐՈՎ

ԵՐԵՎԱՆ - 2009

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՆՎԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱԶՔԵՐՈՎ

**ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2009**

ՀՏԴ 891.981.0:941(479.25)

ԳՄԴ 83.32 + 63.3 (22)

Ս - 411 Պ.

Գիրքը տպագրվում է Մեծ Եղեռնի և
Հայոց աղատամարտի
«Ուխտատուն» թանգարան-ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Պետրոսյան Վլադիմիր

Ս - 411 Պ. «Ռուբեն Սևակի աչքերով».- Եր.: Հեղինակային Հրատ.,
2009 թ., 222 էջ + 16 էջ ներդիր:

Գիրքը նվիրված է Ռուբեն Սևակի կյանքին ու գործունեությանը:

ՀՏԴ 891.981.0:941(479.25)

ԳՄԴ 83.32 + 63.3 (22)

ISBN 978-9939-53-589-0

© Վլ. Պետրոսյան, 2009 թ.

Նվիրում եմ Ռուբեն Սևակի ծննդյան 125-ամյակին

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀՐԱՎԵՐ

2006 թ. լույս էր տեսել իմ «Չմոռանանք...» աշխատությունը, որն արժանացել էր նաև ժնևում բնակվող Նազարեթ Սրմաքեչյանի ուշադրությունն ու համակրանքին: Նա այդ առիթով հեռաձայնով կապվեց ինձ հետ: Ծանոթացանք և սկսվեց մեր բարեկամությունը:

Նազարեթ Սրմաքեչյանը հաճախ էր հեռաձայնում, հետաքրքրվում էր իմ գործերով, Հայաստանում տիրող իրավիճակով: Ասեմ, որ ինձ հետաքրքրում էր, թե Ն. Սրմաքեչյանը ինչպե՞ս էր իմացել իմ հասցեն:

Ինձ հաճախ Ֆրանսիայի Նիս քաղաքից հեռաձայնում էր իմ մեծ բարեկամ Հովհաննես Զիլինկիրյանը: Մի անգամ էլ նրան հայտնեցի, որ ինձ ժնևից հեռաձայնել է Նազարեթ Սրմաքեչյանը և հարցրեցի, թե արդյոք, ճանաչո՞ւմ է նրան:

Հ. Զիլինկիրյանը ծիծաղեց ու պատասխանեց, որ ինքն է տվել իմ հասցեն և ասաց, որ իրենք բարեկամներ են՝ իր աղջիկը՝ Անին Սրմաքեչի հարսն է:

2007 թ. դեկտեմբերին Նազարեթ Սրմաքեչյանը ինձ հրավիրեց Շվեյցարիա, բայց չկարողացա մեկնել աչքիս վիրահատության պատճառով:

Սրմաքեչը հրավերը կրկնեց 2008 թ. հունիսին: Նա հայտնեց, որ պայմանավորվել է նաև «Նայիրի» թերթի խմբագիր Ժիրայր Նայիրիի հետ և մեղ միասին ժնևում սպասելու է 2008 թ. հոկտեմբերի երկրորդ կեսին:

Վերջապես 2008 թ. հոկտեմբերի 20-ին, առավոտյան ժամը 6.00-ին «Ավստրիական ավիաուղիներ» ընկերության օդանավով մեկնեցի Վիեննա: Երեք ժամ անց, տեղական ժամանակով ժամը 6.10-ին օդանավը վայրէջք կատարեց Վիեննայի օդանավակայանում: Այստեղից 50 րոպե անց մեկ այլ օդանավով մեկնեցի Շվեյցարիա:

ՇՎԵՅՑԱՐԻԱ

Շվեյցարիան Եվրոպայի փոքր երկրներից մեկն է: Մայրաքաղաքը Բեռնն է: Շվեյցարիան սահմանակից է Ֆրանսիային, Ավստրիային, Գերմանիային, Լիխտենշտեյնին և Իտալիային: Երկրի տարածքի 2/3-ը լեռներ են: Այստեղ է գտնվում Եվրոպայի ամենից բարձր լեռնային զանգվածը:

Ալպյան լեռների ձյունապատ գագաթները, բազմաթիվ լճերն ու կանաչին տվող դաշտերը, իրենց նեղլիկ փողոցներով ու տներով միջնադարյան շունչը պահպանած փոքր բնակավայրերը կազմում են երկրի արտաքին բնութագիրը:

Դրա հետ միասին Շվեյցարիան աշխարհի առավել զարգացած երկրներից մեկն է, առաջատար տեղ գրավելով իր բարձր որակավորում ու փորձ ունեցող բանվորներով ու ինժեներներով, թողարկվող որակյալ արտադրանքով:

Շվեյցարիան նկատելի դեր է խաղում աշխարհի քաղաքական կյանքում: Այստեղ տեղի են ունենում միջազգային կոնֆերանսներ, վարվում են դիվանագիտական բանակցություններ:

Շվեյցարիան իրենից ներկայացնում է 23 կանտոնների կոնֆեդերատիվ հանրապետություն: Յուրաքանչյուր կանտոն ունի իր պառլամենտն ու կառավարությունը, իր օրենքները և օգտվում է լայն ինքնավար իրավունքից:

Միաժամանակ պետք է նշել, որ Շվեյցարիան վաղուց դարձել է ֆեդերացիա՝ կարևորագույն պետական ֆունկցիաների կենտրոնացումով: Օրենսդիր իշխանությունը պատկանում է երկու պալատից կազմված Ֆեդերատիվ ժողովին (պառլամենտ)՝ Ազգային խորհուրդ և Կանտոնների խորհուրդ: Առաջին պալատը կազմվում է համընդհանուր ընտրությամբ, իսկ երկրորդում՝ յուրաքանչյուր կանտոն ուղարկում է իր ներկայացուցիչներին: Գործադիր իշխանությունը պատկանում է Ֆեդերալ խորհրդին: Դրա յոթ անդամներից մեկը հերթականությամբ մեկ տարի ժամկետով ընտրվում է Շվեյցարական Կոնֆեդերացիայի պրեզիդենտ:

Շվեյցարիայի քաղաքական կյանքում կարևոր դերակատարում ունեն Արմատական-դեմոկրատական, Դեմոկրատական-

քրիստոնեական, Սոցիալ-դեմոկրատական, Շվեյցարիայի աշխատանքի կուսակցությունները:

Շվեյցարիան ունի հարուստ պատմական անցյալ: Հռոմեացիները Շվեյցարիան նվաճեցին առաջին դարում (մ.թ.ա.): Հռոմեական կայսրության անկումից հետո 3-4-րդ դարերում ժամանակակից Շվեյցարիայի տարածքում բնակություն հաստատեցին գերմանական ցեղերը: 6-րդ դարում Շվեյցարիան անցավ Կարլոս Մեծի կայսրության տիրապետության տակ:

Կարլոս Մեծի մահից հետո 843 թ. Վերդենի պայմանագրով Շվեյցարիան բաժանվեց ապագա երեք պետությունների՝ Ֆրանսիայի, Գերմանիայի և Իտալիայի միջև: 11-րդ դարից Շվեյցարիան անցավ «Հռոմեական սրբազան կայսրության» կազմի մեջ: 1499 թ. Շվեյցարիան ազատագրվեց այդ կայսրության տիրապետությունից և դարձավ Եվրոպայում ռեֆորմացիայի կենտրոններից մեկը: Ռեֆորմացիայից հետո կանտոնների մի մասը դարձավ բողոքական:

18-րդ դարի վերջին Շվեյցարիան նվաճեց Նապոլեոն Բոնապարտը: 1814-15 թթ. Վիեննայի կոնգրեսը ճանաչեց շվեյցարական պետության գոյությունը և Ռուսաստանի ցար Ալեքսանդր Առաջինի նախաձեռնությամբ հայտարարվեց հավերժական չեզոք երկիր:

Շվեյցարիայի տարածքը կազմում է 41.282 քառ. կիլոմետր, որից 38,3 տոկոսը բաժին է ընկնում գյուղատնտեսությանը:

Ըստ վերջին մարդահամարի տվյալների Շվեյցարիայի բնակչությունը կազմում է 7 միլիոն մարդ, որից մոտ 20 տոկոսն օտարերկրացիներ են: Բնակչության 54 տոկոսը խոսում է գերմաներեն, 19 տոկոսը՝ ֆրանսերեն, 8 տոկոսը՝ իտալերեն: Բնակչության 46 տոկոսը կաթոլիկներ են, 40 տոկոսը՝ բողոքականներ և այլն:

Բնակչության 3 միլիոն 73 հազար մարդ բանվորներ են: Բնակչության 4,5 տոկոսը զբաղվում է գյուղատնտեսությամբ, 27,8 տոկոսը զբաղված է արդյունաբերության մեջ, 67,7 տոկոսը՝ սպասարկման ոլորտում: Օտարերկրյա բանվորների թիվը հասնում է 964 հազարի: Գերմանախոս, ֆրանսախոս և իտալախոս ժողովուրդներն ապրում են համախումբ պատմականորեն ձևավորված մարզերում:

Շվեյցարիայում, չնայած բնակչության տարալեզու կազմին, գոյություն չունեն ազգային սուր հակասություններ: Երկրի սահմանադրությամբ բոլոր լեզուներն էլ հավասար են և ընդունվում են որպես ազգային: Ամբողջ Շվեյցարիայի համար ընդհանուր գործառնությունը տարվում է բոլոր լեզուներով: Ընդհանուր օրենքները հրապարակվում են բոլոր լեզուներով:

Շվեյցարիայում է գտնվում աշխարհի ամենաերկար թունելը: Դա Սեն-Գոթարդ թունելն է 16,9 կիլոմետր երկարությամբ: Այստեղ է կառուցված նաև աշխարհում ամենաերկար երկաթուղային թունելը՝ Ֆուրկա թունելը 15,4 կիլոմետր երկարությամբ: Երկրում երկաթուղու երկարությունը կազմում է 5 հազար կիլոմետր: Ավտոմոբիլային ճանապարհների երկարությունը հասնում է 71 հազար կիլոմետրի:

ԺՆԵՎ

Ժնև հասա առավոտյան ժամը 9.10-ին: Երևանի հետ տարբերությունը 3 ժամ է:

Ժնևը գտնվում է իր անունով լճի գեղատեսիլ ափին, Ալպյան լեռների ստորոտում: Ժնևն Արևմտյան Եվրոպայի հնագույն քաղաքներից է: Այդ քաղաքի մասին հիշատակել է Հուլիոս Կեսարը Գալլական պատերազմի մասին գրառումների մեջ: Միջնադարում Ժնևը պահպանել է իր անկախությունը և եղել է քաղաքահանրապետություն: Ժնևը Շվեյցարական կոնֆեդերացիայի մեջ է մտել միայն 1815 թ.: Այստեղ է ծնվել Ժան-ժակ Ռուսոն: Ժնևում է ստեղծագործել Վոլտերը:

1883 թ. Ժնևում Գ. Պլեխանովը ստեղծել է առաջին մարքսիստական «Աշխատանքի ազատագրություն խումբը»: Այստեղ է տպագրվել բոլշևիկյան «Իսկրա» թերթը Լենինի գլխավորությամբ:

Ժնևի բնակչության թիվն անցնում է 160 հազարից, իսկ քաղաքամերձ բնակավայրերի բնակչության հետ միասին կազմում է 400 հազար մարդ: Նրանցից 196 հազարը ծառայողներ են:

Ունի զարգացած արդյունաբերություն: Հայտնի են մեքենաչինական գործարանը, ժամացույցի մի քանի նշանավոր գործարանները և այլն: Ժներ Հայտնի է նաև որպես ֆինանսական կենտրոն: Ժնևում է գտնվում Ազգերի պալատը, որտեղ տեղավորված է ՄԱԿ-ի Եվրոպական բաժանմունքը: Ժնևում են գտնվում նաև Կարմիր Սաչի միջազգային կենտրոնը, Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը և այլն:

«ԻՆՉԱԿԵՍ ԸՆՏՅԱՔ ԶԻՍ»

Ժնևի օդանավակայանում ինձ դիմավորեց Նազարեթ Սրմաքեչյանը: Ես նրան դեմքով չէի ճանաչում: Դիմավորողները շատ էին: Ինչպե՞ս գտնել նրան: Բոլոր հայերս առանձնանում ենք մեր թախծոտ աչքերով: Եվ բազմության մեջ սկսեցի որոնել Սրմաքեչյանին: Նկատեցի ու մոտեցա թախծոտ աչքեր ունեցող բարձրահասակ, ատլետիկ կազմվածքով տղամարդուն և հայերեն բարևեցի նրան: Ջերմորեն ողջագուրվեցինք:

- Ինչպե՞ս ճանչցաք դիս, - հարցրեց նա:

- Ձեր աչքերով:

Ժպտաց և ասաց.

- Ես էլ նույն կերպ պիտի ճանչնայի քեզի:

Հենց այդ պահին Սրմաքեչը ձեռքի հեռախոսով կապվեց Երևանի հետ: Հեղուչին ասացի, որ հաջող տեղ եմ հասել:

Երկու խոսք Նազարեթ Հրանտի Սրմաքեչյանի մասին: Նրա հայրը ծնվել է Կոստանդնուպոլսում 1880 թվականին և մանուկ հասակից ղզացել է հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած բռնությունների ծանրությունը:

Հրանտը զբաղվում էր ջրի խողովակներ ու վառարաններ պատրաստելով և վայելում էր իր շրջապատի հարգանքը: Երբ սկսվում է Առաջին համաշխարհային պատերազմը, Հրանտ Սրմաքեչյանն էլ հազարավոր հայ երիտասարդների հետ տարվում է թուրքական բանակ: Գուցե նա էլ կիսեր տասնյակ հազարավոր հայ երիտասարդների ողբերգական ճակատագիրը, եթե մի դիպվածով չփրկվեր:

Հայ ղինվորներին ոչ միայն համադրեստ ու զենք չէին տվել, այլև հացից էին զրկել: Եվ Հայ ղինվորները իրենց քաղցը հագեցնելու համար սնվում էին խոտով: Դրա հետևանքով բազմաթիվ ղինվորներ թունավորվեցին ու մահացան:

Մի անգամ էլ թուրքական հրամանատարին հարկավոր է լինում լապտեր ունենալ: Հրանտը հանձն է առնում և պատրաստում է այդ լապտերը: Դրա համար իբրև պարգև նա ստանում է երկու հատ հաց, որը բաժանում է իր հիվանդ ընկերներին:

Շուտով թուրք հրամանատարը տեղափոխվում է Հալեպի ռազմաճակատ և իր հետ տանում է նաև Հրանտին: Հրանտը Հալեպում մնում է մեկ տարի: Այստեղից նրան հաջողվում է վերադառնալ Կ. Պոլիս, Հալեպից իր հետ բերելով երկու հայ որր տղաների:

Անտանելի շոգի պատճառով Հրանտը երկու որբերի հետ միասին տեղավորվում է Կ. Պոլիս տանող գնացքի վագոններից մեկի տանիքին: Կայարաններից մեկում թուրք ղինվորները բռնությամբ Հրանտին ու որբերին իջեցնում են վագոնի տանիքից և զբաղեցնում նրանց տեղը: Հրանտը ստիպված մի կերպ որբերի հետ խցկվում է վագոնի մեջ:

Երբ գիշերվա մեջ գնացքն անցնում է ցածր բարձրություն ունեցող թունելով, վագոնի տանիքին տեղ զբաղեցրած թուրք ղինվորները չեն նկատում վտանգը և նրանցից ոչ ոք չի փրկվում...

Կ. Պոլսում Հրանտը հանդիպում է Կոնիայից մի կերպ փրկված Լուսաբերին, ամուսնանում են և որոշում հեռանալ այդ քաղաքից: Նրանք հաստատվում են Ռումինիայում, որտեղ էլ 1926 թ. հոկտեմբերի 6-ին ծնվում է նրանց ավագ որդին՝ Նազարեթը:

Երբ սկսվում է Երկրորդ համաշխարհային պատերազմը Սրմաքեչյան ընտանիքը վերադառնում է Ստամբուլ: 1946 թ. Հրանտ Սրմաքեչյանն առաջիններից մեկն էր, որ ցանկություն հայտնեց վերադառնալ Հայրենիք՝ Սովետական Հայաստան: Սակայն թուրքական իշխանութունները ոչ մի հայ ընտանիքի չարտոնեցին Հայաստան վերադառնալ...

1966 թ. Ստամբուլում մահանում է Հրանտ Սրմաքեչյանը:

Իսկ Լուսաբերը մահանում է 1972 թ: Մահից առաջ նա իր զավակներին ավանդում է. «Չմոռանալ Հայաստանը»:

Ծնողների մահից հետո Նազարեթ Սրմաքեչյանը վերջնականապես կարողանում է հեռանալ Ստամբուլից և կնոջ՝ Սոնայի ու զավակների հետ հաստատվում է Շվեյցարիայի Ժնև քաղաքում:

Նազարեթ Սրմաքեչյանը դառնում է Շվեյցարիայի Հայկական համայնքի եռանդուն գործիչներից մեկը:

1988 թ. դեկտեմբերի 7-ի ահավոր երկրաշարժից հետո Նազարեթ Սրմաքեչյանը ջանք չի խնայել Հայաստանին օգնություն կազմակերպելու գործում: Իսկ, երբ սկսվեց Ղարաբաղյան շարժումը՝ Նազարեթ Սրմաքեչյանի գերդաստանը օգնության հասավ Լեոնային Ղարաբաղի հայ բնակչությանը: Այսօր էլ այդ հայրենասեր գերդաստանը նույն եռանդով շարունակում է օգնել Հայաստանին ու Լեոնային Ղարաբաղին:

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՋԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ

Ժնևի օդանավակայանում Սրմաքեչյան անակնկալ մատուցեց, ասելով, որ մի քանի ընկերացի վայրէջք կկատարի Հովհաննեսին բերող օդանավը: Սպասեցինք մի 15-20 ընկերացի: Բազմության մեջ երևաց Հովհաննես Ջիլինկիրյանը, որին տեսնում էի առաջին անգամ:

Մենք Հ. Ջիլինկիրյանի հետ ծանոթացել էինք 1994 թ. հեռակա կարգով Ժիրայր Նայիրիի միջոցով: Մեր մեջ հաստատվել էր իսկական բարեկամություն: Նա հովանավորել էր իմ երկու գրքերի տպագրությունը Ժիրայր Նայիրիի խմբագրությամբ՝ «Էնվերի վերջը» և «Արարատը պետք է մնա Երևանի կողմը», որոնք լույս տեսան Բեյրութում: Հետո, 2003 թ. Երևանում լույս տեսավ իմ «Ռուբեն Սևակը և մեր ժամանակը» աշխատությունը՝ դարձյալ նրա հովանավորությամբ: 2008 թ. Հովհաննես Ջիլինկիրյանը հաճույքով հովանավորեց նաև «Ժամանակի հրամայականը» խորագրով իմ հոդվածների առաջին հատորը:

Ժնևի օդանավակայանում առաջին անգամ հանդիպեցի Հով-

Հաննես Ջիլինկիրյանին: Մենք ողջագուրվեցինք, ինչպես վաղեմի ծանոթներ: Նրան դիմափորելու համար եկել էին նաև դուստրերը՝ Շամիրը, Անին և Արփին, որոնց հետ էլ ծանոթացրեց Հովհաննես Ջիլինկիրյանը:

Հարկ եմ համարում ընթերցողին ներկայացնել Հովհաննես Ջիլինկիրյանի ինքնակենսագրությունը.

«Ես, 1924-ին, Պոլսոյ ամենագեղեցիկ ծովափ-գիւղը Լող Ֆլորիա-ի մէջ ծներ եմ Թուրքիոյ առաջին վառողի գործարանը հիմնող Տատիաններու ընտանիքին պատկանող ազարակին մէջ:

Քերայրս ու Հայրս, Սիլիվրի-էն 1922-ին հեռանալու պարտադրուիլէն յետոյ, Ֆլորա-ի այս ազարակը Տատիաններու ազգականներէն վարձեր են:

Բայց միջոց մը ետք, Մուստաֆա Քեմալը մեզի այս ազարակէն վռնտեց:

Եվ Ֆլորիայի մէջ ծովին վրայ, իրեն համար պալատ մը շինիլ տուաւ:

Եվ ազարակն ալ իրեն մարդոցը յատկացուց: Մենք ալ Մաքրիգիւղի շրջակայքը, Տատիաններուն ուրիշ մէկ ազարակը վարձեցինք:

Այդ տարիներուն շրջակայքի հողերուն մեծամասնութիւնը Տատիաններուն ընտանիքին կը պատկանէին: Որովհետև Թուրք սուլթանը վառողի գործարանը հիմնեց, ըսելով՝ իբր վարձատրութիւն Մաքրիգիւղի շրջակայքի բոլոր հողամասերը Տատիաններուն նուիրեր է:

Իմ մանկութիւնս այս ազարակներուն մէջ անցաւ:

Բնութեան գեղեցկութիւնը այս ազարակներուն մէջ տեսնիլ սկսայ:

Բայց նոյն ատեն, Երկրագործութեան աշխատաւորներուն, ամառը արեւին տակ այրելով, ձմեռն ալ պաղեն դողդողալով կատարած աշխատանքներուն դժուարութիւնը այս ազարակներուն մէջ սորվեցայ:

Իմ մէջի բնութեան սէրը և գործաւորներուն հանդէպ ունեցած հիացումս ազարակի մէջ անցուցած կեանքիս կը պարտիմ...

Նախակրթարանի և միջնակարգի ուսումս, Մաքրիգիւղի Պեղազեան վարժարանին մէջ աւարտեցի: Այս վարժարանը

եկող թուրք քննիչ մը մեզի՝ հայերուն թուրք ըլլալը սորվեցուց:

«Թրքերէն «ER» քաջ ըսիլ է: «MEN» ալ մարդ ըսիլ է: «ER-MENI»-ի իմաստը թրքերէն «քաջ մարդ» ըսիլ է: Ուրեմն հայերը թուրք են» ըսաւ:

Այս ձաբուտութենքներուն այն ատենները հաւատացած էինք: Նոյնիսկ Մուստաֆա Քեմալին մահացած օրը հեծկլտոցով լացինք:

Թուրք ուսուցիչները, մանաւանդ հայկական դպրոցներուն մէջ, հայ աշակերտները թուրք մը ըլլալով կը հասցնէին: Բայց կամաց-կամաց աչքս բացուիլ սկսած էր:

Տարիքս յառաջանալով, հայ ազգին ենթարկուած ցեղասպանութիւնը աւելի հասկնալ սկսած էի:

Երկրորդական ուսումս Պոլսոյ Աւստրիական քոլէճին մէջ շարունակեցի: Եւ այս դպրոցէն 1944-ին շրջանաւարտ եղայ:

Եվ բժշկական համալսարանը արձանագրուեցայ: Բժիշկ ըլլալ կ'ուզէի: Որովհետեւ հօրեղբայրս Ռուբէն Սեւակ բժիշկ եղած էր:

Եւ հօրեղբօրս՝ հիացող մըն էի:

Բայց փափագը ուրիշ բան է: Կարողութիւնը ուրիշ բան:

Ես արիւն տեսած ատեն՝ նեղութիւն կ'անցնէի:

Այս վիճակիս մէջ՝ ինչպէ՞ս բժիշկ կրնայի ըլլալ:

Ստիպողաբար բժշկական համալսարանէն հեռացայ:

Եւ վաճառականի մը քով, իրր գրագիր աշխատիլ սկսայ:

1946-էրուն, պատերազմէն վերջաւորութեան պոլսահայերը թրքական վայրագութիւնէն ազատելու համար՝ Հայաստան ներգաղթել ուղեցին: Եւ հարուստ եւ աղքատ, շատ մը հայեր արձանագրուելու համար Պոլսոյ Սովետական հիւպատոսարանին առջև կարգի մտան:

Ես ալ Հայաստան երթալու որոշում տուի, եւ Սովետական հիւպատոսարան գացի արձանագրուեցայ:

Տուն վերադարձի ճամբուն վրայ նկատեցի, որ ետեւէս տեւաբար մէկը կուգար: Եւ մինչև որ տուն մտայ, մարդ մը ինձի հետապնդեց: Յետոյ թաղին պատասխանատու պաշտօնեայէն տեղեկացայ, թէ ինձի հետապնդողը ոստիկան մըն է եղեր, եւ

Թաղին պատասխանատուէն իմ մասին տեղեկութիւններ առէր է:

Այն օրէն յետոյ իմ մէջս թուրք ոստիկանութիւնէն վախը աւելի շեշտուեցաւ:

Դժբախտաբար, Կոլսահայերը՝ Հայաստան չի կրցան ներգաղթիլ: Ես ալ չի կարողացայ երթալ:

Եւ ստիպողաբար գործի կեանքի նետուեցայ:

Եւ այս ձեւով տարիներ անցան:

1955-ին Պոլսոյ մէջ 6-7 սեպտեմբեր ըսուած ողբերգութիւնը ապրեցայ:

Մինչեւ այդ օրը, թուրքին ի՞նչ ըլլալը ընտանիքէս լսած եւ գիրքերէն կարդացած էի:

Բայց 6-7 սեպտեմբեր 1955-ի գիշերը աչքերովս տեսայ, թուրքերուն ի՞նչ գազան եւ վայրենի ըլլալնին:

Եւ այն օրը երզում ըրի, որ այլեւս այս երկիրը պիտի չ'ապրիմ:

Եւ վերջապէս, օր մը վերջնականապէս Հեռացայ Պոլիսէն:

Այն Պոլիսը, որ Քրիստոնէութեան կեդրոնը եղած էր:

Այն Պոլիսը, որ թուրքերուն իշխանութեան ներքեւ քրիստոնեաներուն գերեզմաննոցը եղաւ...

Այսօր 30 տարիներէ ի վեր Եւրոպա կապրիմ՝ ազատ եւ առանց թրքական վախի:

Երբեմն, ինծի քանի՞ տարեկան ըլլալս կը հարցնեն: Ես ալ՝ «30 տարեկան եմ» կը պատասխանեմ: Դիմացինս կը շուարի եւ ի՞նչ ըսել ուզելս չի հասկնար:

Այո, կըսեմ...30 տարեկան եմ... Որովհետեւ 30 տարի առաջ թրքացած Հայ մը ըլլալով Պոլսէն Հեռացայ...

Եւ Եւրոպայի մէջ՝ ազատ ու իսկական Հայ մը ըլլալով կրկին աշխարհ եկա...»:

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԺՆԵՎՈՒՄ

Ինձ տեղավորեցին ժնեի առաջնակարգ Հյուրանոցներից մեկում, որը կրում էր «Ստրասբուրգ» անունը: Պայմանավորվեցինք հանդիպել ժ. 18-ին միասին ճաշելու: Ճաշեցինք ժնեի լճի ափին գտնվող ռեստորաններից մեկում: Այստեղ էին Սրմաքեչը, Ջիլինկիրյանը, Շամիրը: Հետո եկավ Սրմաքեչի որդի Վարդանը՝ կնոջ՝ Անիի և զավակներ Սիսվանի ու Լորիի հետ: Մեր միջև սկսվեց հետաքրքիր զրույց: Հիմնականում խոսում էի ես, քանի որ ինձ էին ուղղվում բոլոր հարցերը:

Իսկ, երբ եկավ Վարդանը, զրույցի նախաձեռնությունն անցավ նրա ձեռքը: Վարդանն առողջ մտածող երիտասարդ է: Ջերմ հայրենասեր: Նա հսկայական օգնություն է կազմակերպում Հայաստանին ու Ղարաբաղին: Նա ասում էր, որ բոլոր տնտեսական լծակները պետք է օգտագործել, որպեսզի ստեղծվի դեպի Բաթում տանող ճանապարհը:

Ռեստորանից դուրս եկանք գիշերվա ժամը 12-ին: Բոլորն ինձ հրաժեշտ տվեցին ու մեկնեցին: Մնացի Սրմաքեչի հետ: Մենք մոտ մեկ ժամ զրուցեցինք զանազան հարցերի շուրջ: Գիշերվա ժամը մեկին Սրմաքեչն ինձ բերեց Հյուրանոց: Այսպես անցավ ժնեում գտնվելու իմ առաջին օրը:

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻՆ

Հոկտեմբերի 21-ին, առավոտյան ժ. 10-ին Հյուրանոց եկան Հովհաննես Ջիլինկիրյանն ու Նաղարեթ Սրմաքեչյանը: Միասին գնացինք օդանավակայան՝ դիմավորելու Ժիրայր Նայիրին:

Ժիրայր Նայիրին Սփյուռքի ամենից առավել նշանավոր ազգային-մշակութային և քաղաքական գործիչներից է: Նա Հայտնի է նաև որպես տաղանդավոր հրապարակախոս ու խմբագիր: Ժիրայր Նայիրին Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման աչքի ընկնող ճարտարապետներից է և ամեն ինչ անում է դրանց դարգացման համար:

Երիտասարդ տարիներից ժ. Նայիրին դարձել է Սոցիալ դե-

մոկրատ Հնչակյան կուսակցության անդամ, հետո ընդգրկվել այդ կուսակցության ղեկավար կազմում, խմբագրել է Բեյրութում լույս տեսնող «Արարատ» թերթը:

Ժիրայր Նայիրին բնավորությամբ շիտակ ու ազնիվ, համարձակ մարդ է: Այդ նա էր, երբ 1960 թ. Սովետական Հայաստանի 40-ամյակին նվիրված տոնակատարությանը ժամանած արտասահմանյան Հայ մտավորականների հետ Սովետական Միության ղեկավար Ն. Խրուշչովի հանդիպման ժամանակ, ելույթ ունեցավ և բարձրացրեց Արևմտյան Հայաստանի հողերը վերադարձնելու խնդիրը:

Հետագա տարիներին Հնչակյան կուսակցության մեջ գերակշռեցին աջ հակում ունեցողները, որոնց հետ Ժ. Նայիրին, բնականաբար, չէր կարող համակերպվել և հարկադրված հեռացավ այդ կուսակցության ղեկավարության կազմից: Նա ստանձնեց «Նայիրի» թերթի խմբագրի պարտականությունը:

Եվ ահա 15 տարի է, ինչ Սփյուռքի դժվարին պայմաններում հրատարակվում է «Նայիրի» թերթը և տարածվում բոլոր այն երկրներում, որտեղ ապրում են Հայեր:

Ժիրայրին նույնպես տեղավորեցին «Ստրասբուրգ» հյուրանոցում, իմ սենյակի հարևանությամբ:

Ճաշեցինք միասին: Բայց սխալվում եմ, դա ոչ թե ճաշել էր, այլ զրույց հետաքրքրող հարցերի շուրջ, որոնք բոլորն էլ վերաբերում էին Հայաստանին: Իմ զրուցակիցները լավ գիտեին Հայաստանում տիրող կացությունը, բայց տված հարցերով ուղում էին ավելին իմանալ, ինչը, որ կատարում էի հաճույքով:

ԳՆՈՒՄ ԵՆՔ ԼՈՋԱՆ

Հովհաննես Զիլինկիրյանը նախաձեռնությունը վերցրեց իր ձեռքը և ցանկություն հայտնեց ինձ ու Ժիրայրին տանել այն վայրերը, որտեղ եղել է Ռուբեն Սևակը: Ես, որ գրել էի «Ռուբեն Սևակը և մեր ժամանակը» աշխատությունը, այդ առաջարկությունը համարեցի ինձ համար անփոխարինելի պարգև: Տեսնելու էի այն բնակավայրերը, լինելու էի այն փողոցներում, որոնցով

անցել էր Ռուբեն Սևակը: Վերջապես տեսնելու էի այն համալսարանը, որտեղ սովորել էր մեր հանճարեղ բանաստեղծը:

Հոկտեմբերի 22-ին, առավոտյան ժ. 9.00-ին մեկնեցինք Լոդան: Ճանապարհն անցնում էր գեղատեսիլ դաշտերով: Երկու կողմում տարածվել էին խաղողի անձայրածիր պլանտացիաները: Իմ ուշադրությունը գրավեցին ցելոֆանով ծածկված խնձորի այգիները: Մեր վարորդը բացատրեց, որ այգիներն այդպես ծածկում են բերքը թռչուններից պաշտպանելու համար: Իսկ այն այգիներից, որտեղ արդեն հավաքվել էր բերքը, այդ ցելոֆանն ծածկոցները շատ խնամքով փաթաթվել էին այգու միջով ձգվող խողովակների վրա:

Տներից ոչ հեռու իրար վրա դասավորված էին բավականաչափ մեծությամբ սպիտակին տվող հակեր: Պարզվեց, որ շվեյցարացի գյուղացին խոտը չի դիզում, ինչպես մեզ մոտ, այլ պահում է այդ հակերի մեջ, որտեղ խոտը չի կորցնում իր հատկությունը:

Իմ ուշադրությունը գրավեց ավտոճանապարհների պահպանման վիճակը: Մեր ավտոմեքենան սլանում էր արագությամբ և մենք ոչ մի ցնցում չէինք զգում: Երբ ճանապարհն անցնում էր ինչ-որ բնակավայրով կամ էլ առանձին տան մոտով, ապա ճանապարհի եղրին, այդ բնակավայրի կամ էլ տան ամբողջ երկարությամբ տեղադրված էին մոտ 3 մետր բարձրություն ունեցող ձայնախլացուցիչ թափանցիկ պատեր: Այս միջոցով լուծվել էր աղմուկի հարցը:

Ճանապարհի այն հատվածները, որոնք անցնում էին բարձր ժայռերի միջով, վերևից մինչև ներքև, հաճախ մի քանի կիլոմետր ձգվող տարածքի վրա, այդ ժայռերը ծածկված էին ամրացված երկաթե ցանցով: Դա արվել էր, որպեսզի ոչ մի վտանգավոր քարաբեկոր ճանապարհի վրա չընկներ: Ես մտովի պատկերացրի, որ Հայաստանում եթե այդպիսի երկաթե ցանցերով պատվեն մեր վտանգավոր ճանապարհները, ապա դրանք որքա՞ն կմնան իրենց տեղում...

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՋԱՆԻ ՄԱՍԻՆ

Առավոտյան ժ. 10-ին հասանք Լոզան: Մեր ավտոմեքենան կանգ առավ Լոզանի երկաթուղային կայարանի շենքի դիմաց: Վերջապես Լոզան քաղաքում ենք:

Լոզանը գտնվում է Շվեյցարիայի հարավ-արևմուտքում և համարվում է Վո կանտոնի կենտրոնը: Քաղաքը, որն ունի մոտ 150 հազար բնակչություն, տրանսվրոպական նշանակության երկաթուղային հանգույց է: Այստեղ է գտնվում Միջազգային օլիմպիական կոմիտեն: Ժնևյան լճափին ստեղծված է նավահանգիստ: Լոզանը միջազգային տուրիզմի կենտրոններից է:

Լոզանը հայտնի է Հռոմեական կայսրության ժամանակներից: Միջնադարում այստեղ իշխել է սենյոր-եպիսկոպոսը: 16-18-րդ դարերում Լոզանը կախման մեջ է եղել Բեռնից: 1803 թվականից Լոզանը Վո կանտոնի գլխավոր քաղաքն է: Լոզանում տեղի են ունեցել մի շարք միջազգային կոնֆերանսներ:

Լոզանի կոնֆերանսը սկսվել է 1922 թ. նոյեմբերի 22-ին և ավարտվել է 1923 թ. հուլիսի 24-ին: Կոնֆերանսին մասնակցում էին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Հունաստանը, Ռումինիան, Հարավսլավիան, Ճապոնիան, Թուրքիան և ԱՄՆ-ը՝ դիտորդի կարգավիճակով:

Անտանտի երկրները Սովետական Ռուսաստանի պատվիրակությանը թույլ տվեցին մասնակցել միայն Սևծովյան նեղուցների ռեժիմի մասին հարցի քննարկմանը:

Լոզանի կոնֆերանսի հիմնական խնդիրն էր Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի նախապատրաստումը և Սևծովյան նեղուցների ռեժիմի կարգավորումը: Սակայն Լոզան ժամանած Սովետական Ռուսաստանի պատվիրակության ղեկավար Վ. Վորովսկուն անօրինական կերպով զրկեցին դիվանագիտական կարգավիճակից, որից էլ օգտվելով սպիտակգվարդիականները նրան 1923 թ. մայիսի 10-ին սպանեցին:

Լոզանի կոնֆերանսի երկրորդ փուլում հիմնականում քննարկվեցին Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի հարցերը: 1923 թ. հուլիսի 24-ին Լոզանի կոնվենցիան ստորագրեցին Մեծ Բրիտանիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Հունաս-

տանը, Ռուսինիան, Բուլղարիան, Հարավսլավիան և Թուրքիան:

Լոզանում են գտնվում մի շարք հնագույն ճարտարապետական հուշարձաններ, որոնց մեջ առանձնանում է հռչակավոր Նոտր Դամ տաճարը, որը կառուցվել է 1175-1275 թվականներին:

ԼՈԶԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Լոզանի կայարանի մոտ մեզ դիմավորեց Հովհաննես Ջիլինկիրյանը և անմիջապես առաջնորդեց դեպի Լոզանի Համալսարան, որտեղ սովորել ու ավարտել էր Ռուբեն Սևակը: Ակնածանքով բարձրացանք այդ չքեղ շենքի աստիճաններով և չքամուտքի հսկայական դուռը բացելով ներս մտանք: Համալսարանի ներքին հարդարանքը, սանդուղքները, հարկաբաժիններն ու լսարանները, նաև տեղադրված քանդակները պահպանվել են նույնությամբ, ինչպես եղել են Ռուբեն Սևակի սովորելու տարիներին: Եվ այդ ամենը պահպանվում է արտակարգ հոգատարությամբ:

Մեր առջևից քայլող Հովհաննես Ջիլինկիրյանը մեզ տարավ գրադարան, որն իմ վրա թողեց արտասովոր տպավորություն իր մաքրությունը, աթոռ-սեղանով, ընթերցասրահների հարմարությունը ու բազմաթիվ համակարգիչներով:

Ես այս ամենը նկարագրում եմ, աչքիս առաջ ունենալով Երևանի Հանրային գրադարանը, Պետական Համալսարանի գրադարանը և Գիտությունների ակադեմիայի գրադարանը: Ինչքան պետք է աշխատենք այդ օջախներն այդպիսի չքեղ տեսքի բերելու համար: Պատրաստվում ենք նշել Հանրային (Ազային) գրադարանի 175-ամյակը, բայց մեր գրադարանը պահում ենք անշուք վիճակում, էլ չեմ խոսում ընթերցասրահների հնամաշ սեղանների ու կոտրտված աթոռների մասին:

Գիրքն այստեղ արժանի բարձրության վրա է պահվում: Մենք աշխարհով մեկ հպարտանում ենք մեր Մատենադարանով, բայց գիրքը վաճառում ենք փողոցի մայթերին, փոշու մեջ: Մի՞թե Մատենադարան ունեցող երկիրն ու նրա պետությունն

այսպես պետք է հոգան գրքի մասին:

Ուղում եմ ընթերցողն ինձ ճիշտ հասկանա: Ես դեմ չեմ եկեղեցիների կառուցմանը, թեև դրանով աշխարհին այլևս չենք զարմացնում: Ուրբան ազգանվեր ու ազգօգուտ գործ կլինեն, եթե մեր իրականություն մեջ այնպես արագ ու խորհրդավոր միջոցներով հարստացածներից գոնե մեկը մտածեր մեր Հանրային գրադարանի մասին:

Ոմանք կարող են առարկել, պնդելով, թե համակարգիչների դարում գիրքն այլևս չունի իր վաղեմի հմայքը: Այսպես մտածողները սխալվում են, որովհետև, օրինակ, Շվեյցարիայում, որը Եվրոպայում համակարգիչներով հագեցած երկրներից մեկն է, գիրքը մնում է որպես պաշտամունքի առարկա: Իսկ մենք դեռ համակարգիչներով հագեցած երկիր չենք դարձել, բայց գիրքն էլ դուրս է մղվում հարգանքի ոլորտից:

Հովհաննես Զիլինկիրյանը պատվիրեց և մի 10 րոպեից հետո գրադարանի աշխատակցուհին բերեց Հոգանի համալսարանի բժշկական ֆակուլտետն ավարտելու կապակցությամբ բժշկի աստիճան ստանալու համար Ռուբեն Սևակի պաշտպանած թեզը, որը տպագրվել էր 1911 թվականին: Այդ գրքույկը մեզ մատուցեցին ցելոֆանի ծրարի մեջ դրած, հաստ ստվարաթղթի հետ միասին: Մենք այդ գրքույկը մեր ձեռքը վերցրինք որպես մասունք, թերթեցինք զգուշությամբ: Իմ ուշադրությունից չվրիպեց Հովհաննես Զիլինկիրյանի հուղմունքը:

Հետաքրքրվեցի, թե գրադարանի գրքային ֆոնդը որքա՞ն է կազմում: Պատասխանեցին՝ մոտավորապես մեկ միլիոն: Եվ այդ ամբողջ քանակությամբ բոլոր գրքերը խնամքով պահվում են ցելոֆանի ծրարների մեջ ու այդ կերպ պաշտպանված են փոշուց և զանազան բակտերիաներից: Իսկ մեր գրադարաններից գիրքը ստանում ես՝ փոշու հաստ շերտը վրան նստած:

Հոգանի համալսարանի գրադարանի ընթերցասրահում դրված էին բազմաթիվ թերթեր: Ժիրայր Նայիրին վերցրեց «Լեմոնդ» թերթի 2008 թ. հոկտեմբերի 22-ի համարը և ինձ ցույց տվեց առաջին էջի վրա տպագրված հոդվածի խոշոր տառերով գրված վերնագիրը՝ «Կապիտալիզմի Բեռլինի պատը»: Նա այդ հոդվածից թարգմանեց հետևյալ ուշագրավ միտքը. «ԿԱՊԻՏԱ-

ԼԻԶՄՆ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՅՐ ԳԱՂԱՓԱՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Է, ՈՐԸ ՓՈՒԼ ԿԳԱ: ԶԱՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՒՄ Է ՊԱՏԱՍԽԱՆ»:

Գրադարանի աշխատակցուհիներին մեկը հետաքրքրվեց մեղնով: Ո՞վքեր ենք, ո՞րտեղից ենք եկել: Հովհաննես Զիլինկիրյանը մեզ ներկայացրեց: Աշխատակցուհին ժպտաց և մեզ ցույց տվեց 1923 թ. Լոզանի դաշնագիրը ստորագրած պետութունների դեկավարների ծաղրանկարի և լուսանկարների պատճենը:

Գրադարանի ընթերցասրահի հակառակ կողմում գտնվում էր այն սրահը, որտեղ տեղի էին ունեցել Լոզանի կոնֆերանսի նիստերը: Այդ սրահն այժմ վերածվել է թանգարանի: Այն փակ էր և չկարողացանք ներս մտնել:

Ես ցանկություն հայտնեցի հանդիպել գրադարանի տնօրենին: Մտադրությունս այն էր, որ նրա հետ բանակցություն վարեինք՝ Ռուբեն Սևակին նվիրված հուշատախտակ դնելու մասին: Հ. Զիլինկիրյանը հավանություն տվեց առաջարկիս: Պարզվեց, որ նա այդ մասին վաղուց է մտածել: Սակայն գրադարանի տնօրենին չհաջողվեց հանդիպել: Պատասխանեցին, որ բացակայում է:

Համալսարանի հին շենքից դուրս եկանք բավականաչափ հուզված: Նախ, նրա համար, որ եղանք այն շենքում, որտեղ սովորել էր մեր մեծ բանաստեղծ Ռուբեն Սևակը և երկրորդ, որ այս շենքում են արևմտյան տերութունները թաղել հայկական հարցը և պաշտպանության տակ վերցրել ցեղասպանության գլխավոր հանցագործ Թուրքիային:

Այս առիթով հիշեցի Ավետիք Իսահակյանի խոսքերը Եվրոպայի թրքասիրության մասին: Հիմա, երբ գրում եմ այս տողերը կամենում եմ ընթերցողի ուշադրությանը հանձնել Ավ. Իսահակյանի գնահատականը. «Եվրոպան թրքասեր է, մենք պիտի հաշտվենք այս իրողության հետ և պիտի քննենք պատճառները: Ամենից առաջ և միշտ, Եվրոպան շահասեր է, ղզացմունք, մարդկայնություն, մարդասիրություն դեր չեն կատարում նրանց թեքադաքականության և թե մանավանդ կյանքի մեջ, իսկ նրանք մեծ շահեր ունեն Թուրքիայի հետ. վաճառականություն, կոնցեսիաներ, հարարերություն: Թուրքերին նրանք ճանաչում են, հետները գործ ունեն, դաշներ, պայմաններ, պետական հարարե-

րություններ և տնտեսական մեծ օգուտներ: Հայր նրանց աչքում մի բուռ, խեղճ, աղքատ, անանցյալ, տզևտ ասիական ժողովուրդ է, միայն կարեկցության արժանի»:

Հիշեցնեմ Ավ. Իսահակյանի մեկ այլ սպանիչ գնահատականը. «Եվրոպա... հումանիզմ, քրիստոնեություն, լուսավորություն, կուլտուրա... Սուտ խոսք, իլյուզիա, խարկանք: Եվրոպան՝ շահամոլություն, ավազակություն, զուրկ խղճից, բարոյականից, սրիկա, պոռնիկ, բարոյական ոչնչություն: Եվ հայ ժողովուրդը դրել է իր հույսը նրա վրա, այնինչ նա երեսուն արծաթով ծախում է մի ամբողջ ժողովրդի գոյությունը, հայրենիքը. մի ժողովրդի, որին նա հույսեր է տվել, խոստումներ և հիմա դավաճանում է»: (Ավ. Իսահակյան, Աֆորիզմներ, Երևան, 2001, էջ 120-121, 163-164):

«...ԱՅՍՏԵՂ ԹԱՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ»

Մինչ ժիրայր Նայիրիի հետ այս մասին մտքեր էինք փոխանակում, Հովհաննես Չիլինկիրյանը մեզ առաջնորդեց Համալսարանից որոշ հեռավորության վրա, լճափին գտնվող այն շենքը, որտեղ ստորագրվել է Լոզանի պայմանագիրը: Այժմ այդ շենքում գործում է ռեստորան, որի այն սրահում, որտեղ տեղի է ունեցել պայմանագրի ստորագրումը, փակցված է ցուցատախտակ: Այդ ցուցատախտակի մոտ լուսանկարվեցինք:

Թեև անձրևոտ օր էր, բայց կարծես չէինք նկատում անձրևը և շարունակում էինք մեր խոսակցությունը Լոզանի պայմանագրի շուրջ:

-Իսկ հիմա,- ասաց Հովհաննես Չիլինկիրյանը,- եկեք ձեզ տանեմ այն հյուրանոցը, որտեղ ապրել, ճաշել ու բանակցություններ են վարել Լոզանի պայմանագիրն ստորագրած անձինք:

Հետևեցինք նրան: Հասանք «Բորիվարժ» հյուրանոց, որը թարգմանվում է՝ «Գեղատեսիլ լճափ»: Այդ հյուրանոցը մի շքեղ պալատ էր: Շրջեցինք նրա ոսկեզօծ միջանցքներով ու սրահներով: Ամեն ինչ տպավորիչ էր:

-Եկեք ճաշենք այն ուստորանում, ուր ճաշել ու բանակցել են Լոզանի կոնֆերանսի մասնակիցները,- ասաց Հովհաննես Չիլինկիրյանը և մեզ առաջնորդեց ուստորանի ընդարձակ սրահը, որի պատուհանները բացվում էին լճի վրա:

Եվ ճաշի սեղանի շուրջ, մենք, Լոզան եկած երեք հայերս՝ Հովհաննես Չիլինկիրյանը՝ Ֆրանսիայից, Ժիրայր Նայիրին՝ Լիրանանից և ես՝ Հայաստանից մտքեր էինք փոխանակում Լոզանի կոնֆերանսի վերաբերյալ: Մեր զրույցը երկար տևեց: Ինձ համար առանձնակի հետաքրքրություն էին ներկայացնում Հովհաննես Չիլինկիրյանի արտահայտած մտքերը, նրա վերլուծություններն ու եզրահանգումները Հայկական հարցի, Հայաստանի, Սփյուռքում տիրող իրավիճակի և հատկապես ժամանակակից Եվրոպական տերությունների քաղաքականության մասին:

Լսելով Հովհաննես Չիլինկիրյանին, նրա հետ անմիջական մտքեր փոխանակելով ես ինձ անչափ հպարտ զգացի, որ պատիվ ունեմ զրուցելու ոչ միայն բազմակողմանի դարգացած, Սփյուռքի նշանավոր ազգային-հասարակական գործչի, այլև մեծ հայրենասեր պատմաբան գիտնականի հետ:

Չափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ Հովհաննես Չիլինկիրյանը միայնակ կատարում է մի ամբողջ ակադեմիական ինստիտուտի գործ՝ Ժիրայր Նայիրիի խմբագրությամբ լույս տեսնող «Նայիրի» թերթի էջերում հայերեն և թուրքերեն հոդվածներով մերկացնում պատմության ժամանակակից թուրքական կեղծարարների նկրտումները: Նրա ուշադրությունից չի վրիպում թուրքական մամուլի և ոչ մի հակահայկական հրապարակում: Հովհաննես Չիլինկիրյանն անմիջապես դրանց պատասխանում է և բացահայտում կեղծիքն ու պաշտպանում պատմական ճշմարտությունը:

...Երբ ուստորանից դուրս էինք գալիս, Հովհաննես Չիլինկիրյանն ասաց.

-Մոտավորապես մեկ դար առաջ այստեղ թաղեցին հայկական հարցը: Ահա, անցել է մոտ մեկ դար, մենք՝ հայ ժողովրդի ներկայացուցիչներս այստեղ ենք: Մեզ չկարողացան թաղել:

Հովհաննես Չիլինկիրյանը փնտրեց ու գտավ Լոզանի կոնֆերանսի մասին ծառերի ետևում ծածկված ցուցատախտակը,

որի մոտ նույնպես յուսանկարվեցինք:

Քայլում էինք Լոդանի փողոցներով, հիանում նրա շքեղ շինություններով ու պուրակներով և մտովի հիշում, որ դեռևս 1905 թվականին այստեղ ուսանելու նպատակով եկած Ռուբեն Սևակը ոչ միայն դարձավ նշանավոր բժիշկ, այլև Լոդանում ձևավորվեց որպես փիլիսոփա բանաստեղծ և պատվավոր տեղ գրավեց հայ մեծերի աստղաբույլում:

ՇՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՑԸ

Այնուհետև Հովհաննես Չիլինկիրյանը մեղ տարավ այդ շքեղ հյուրանոցի հարևանությամբ գտնվող այգին: Ծառուղու երկու կողմերում երևում էին փոքր գրանիտե, մարմարյա սալիկներ ինչ-որ մակագրություններով:

- Այստեղ,- բացատրեց Հովհաննես Չիլինկիրյանը,- թաղված են հարուստ կանանց շները՝ ծննդյան ու մահվան տարեթվերով:

Նա պատմեց, որ այս շքեղ հյուրանոցում են ապրում միլիոնատեր, բայց միայնակ կանայք իրենց շների հետ միասին: Եվ նրանց հոգսը չէ, թե աշխարհում սով ու պատերազմ կա: Նրանք իրենց շների վրա ծախսում են միլիոններ, բայց մի աղքատ մարդու սովից չեն փրկի...

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Այստեղ ուզում եմ ընդհատել իմ մտորում-տպավորությունների մասին պատմելը և ընթերցողին ներկայացնել Ռուբեն Չիլինկիրյանի՝ Ռուբեն Սևակի համառոտ կենսագրությունը:

Ռուբեն Չիլինկիրյանը ծնվել է 1885 թ. փետրվարի 15-ին Կոստանդնուպոլսից 65 կմ հեռու գտնվող Սիլիվրի քաղաքում, առաջավոր հայացքներ ունեցող մետաղագործ Հովհաննես Չիլինկիրյանի ընտանիքում: Սիլիվրի նախակրթարանն ավարտելուց հետո, Ռուբենը երկու տարի ուսանել է Պարտիզակի

ամերիկյան վարժարանում:

1901 թվականին Ռուբենն ընդունվում է Կոստանդնուպոլսի Հայտնի Պերպերյան վարժարանը և ավարտել 1905 թվականին: Ավարտական Հանդեսին Ռուբենն արտասանել է իր առաջին բանաստեղծությունը: Ահա, թե ինչ է գրել այդ առթիվ «Մասիս» Հանդեսը 1905 թ. օգոստոսի 13-ին. «Պէրպէրեան վարժարանի այս տարուան վկայականներու բաշխման Հանդէսին շրջանաւարտներէն պ. Ռուբէն Զիլինկիրեան կարդացած էր իր հեղինակած գողտրիկ մէկ ոտանաւորը, «Բաժանման խօսքեր», որ ընդհանուր գնահատման արժանացաւ. և Հանդէսին ներկայ գրտնուող գրագէտ ու գրասէր անձնաւորութեանց կողմէ փափակ յայտնուեցաւ որ հրատարակուի «Մասիսի» մէջ, իբրև ևրախայրիքը ապագայ խոստացող երիտասարդի մը: Այդ փափակին գոհացում կու տանք հրատարակելով սոյն ոտանաւորը, որ կրնայ լաւ տեղ մը գրաւել «Նորերու բաժին»ին մէջ»:

Ահա, պատանի Ռուբենի առաջին բանաստեղծությունից մի հատված.

«Տէր, դու մեր մէջ դրիր պապական ուսմունքին,
Գիտութեան կիրքն անզուսպ մեր մէջ դու ծնար,
Տալու համար մեզ զարգացման սէրն անգին՝
Գործածեցիր ամէն միջոց, ամէն հնար:
Տէր, դու մեր մէջ դրիր պապական ուսմունքին:
Այդ պապակին յագուրդ տալու անկարող
Քանիներ կան որք կը մնան անպաշտպան,
Ահ, քանիներ չունենալով միջոց, փող,
Իրենց միտքը մնայ անուս ու խոպան,
Այդ պապակին յագուրդ տալու անկարող...»:

Հենց այս առաջին բանաստեղծությամբ էլ մեր դեմ հառնում է ապագա հանճարեղ մտածողը, որը բողոքում է սոցիալական անարդարությունների դեմ, որի պայմաններում միջոց ու փող չունեցողները զրկված են կրթություն ստանալու իրավունքից ու հնարավորությունից:

Հարկ եմ համարում նշել, որ համաշխարհային գրականու-

Թյան պատմության մեջ շատ քիչ պոետների կարելի է հանդիպել, որ նրանց ապագա ուղին որոշվեր հենց առաջին քայլերից: Դրան հակառակ մենք հանդիպում ենք շատ ու շատ նշանավոր բանաստեղծների, որոնք իրենց առաջին բանաստեղծությունների մեջ սևփական ուղու վրա դուրս գալու արշալույսին օրինակ են վերցրել ուրիշներից, ընդօրինակել են նրանց ոճը:

Այդպիսին չէր Ռուբենը: Իր առաջին այս բանաստեղծությամբ նա արդեն ազգային էր: Նա դրան մինչև վերջ հավատարիմ մնաց: Նա հենց սկզբից գիտակցեց, որ իսկական ազգայինը չուխայի նկարագրության մեջ չէ, այլ ժողովրդի ոգին ըմբռնելու մեջ է: Ռուբեն Սևակն իր ստեղծագործությամբ հաստատեց այն ճշմարտությունը, որ բանաստեղծը կարող է ազգային լինել այն ժամանակ, երբ նկարագրում է բոլորովին այլ աշխարհ, բայց այդ աշխարհին նայում է ժողովրդի աչքերով, վերաբերում է ազգային տարերքով:

Պերպերյան վարժարանում բանաստեղծի դասընկեր Գ. Ամատյանի վկայությամբ Ռուբենը համարձակ էր, ուներ կազմակերպչական ջիղ: Նա ստեղծել էր աչակերտական խմբակ, որտեղ կարդում էր նաև իր գրած բանաստեղծությունները:

Մեկ այլ դասընկեր Զ. Սուրենյանը, հիշելով Ռուբենին, գրել է. «Ան կանուխէն արտայայտուեցաւ իբրև ապագայ բանաստեղծ իր շարադրութիւններով, և իբրև գործիչ իր սարքած ուսանողական և յեղափոխական միութիւններով, որոնց անկիւնաքարն էր եւ որ անոր կը գործակցէին Եղնիկ Քաջունի, Շահան Ռ. Պէրպէրեան, Ա. Գարակէօզեան (Զաւեն), Տիգրան Զէօկիրեան, Յակոբ Զպուրեան» («Հայրենիք», ապրիլ, 1930, էջ 44):

Ռուբենի կազմակերպած խմբակում, որին մասնակցում էին նաև դաշնակցության մի քանի անդամներ, ընթանում էին սուր բանավեճեր, որոնց ընթացքում նա կրքոտությամբ հանդես էր գալիս հայոց բոլոր ուժերը համախմբելու օգտին:

Այս մասին հիշեցի, որպեսզի ընդգծեմ, թե Ռուբեն Սևակն ինչպիսի մարդկային բարձր հատկություններ էր դրսևորում նրանց նկատմամբ, ովքեր համաձայն չէին իր հայացքներին: Ահա, այդ ապացուցող բազմաթիվ փաստերից մեկը: Դաշնակցության անդամ Արմենակ Գարակոզյանը երիտթուրքերի կող-

մից ձերբակալվել էր նրանց հետ դաշնակցության համագործակցության դեմ հանդես գալու համար: Եվ իրրե բողոք, բանտում Ա. Գարակոչյանը նավթ լցրեց իր վրա և ինքնահրկիղվեց:

Այս լուրը ցնցող ազդեցություն ունեցավ Ռուբեն Սևակի վրա և նա 1909 թ. մայիսի 27-ին գրեց «Ողջակէզ» բանաստեղծությունը, որտեղ կարդում ենք հետևյալը.

**«ԱԶԳԸ: Ինչո՞ւ հազարներու, բիւրերու,
Դիակներու վրայ ապրիլ այս հլու,
Այս գետնաքարչ կեանքը ստրուկ պոռնիկի...
Կեանք մուրալէն լաւ չէ՞ր մեռնիլ ուղղակի...»:**

Այսպես թափանցիկ կերպով բանաստեղծը հասկացնում էր, թե ինչ է նշանակում երիտթուրքերի հետ համագործակցելը:

Բայց բանաստեղծը դրանով չի բավարարվում: Նա իր խոսքն ուղղում է ողջակիղված ընկերոջը, գրելով հետևյալը.

**«Ոչ: Բանտերու աղջամուղջին մէջ անշուք,
Դիւցազնօրէն, ժայռօրէն լուռ, անշուկ,
ԳԱՂԱՓԱՐԻ խորանին վրայ սիրակէզ
Քու պարման մարմինդ ըրիր ողջակէզ...
Ու քո աչքերդ հրճուանքէդ խելագար,
Կը տեսնէին թէ բոցը ինչպէս կու գար,
Կարմիր, ուրախ, սրբազան բոցը ահեղ,
Պարանոցէդ, մարմինէդ վեր, դեպ ուղեղ...»:**

«ԱՅՍ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ՈՐՈՇԵՑԻ ԲԺԻՇԿ ԸԼԼԱԼ...»

Եվ այսպես Ռուբեն Ջիլինկիրյանը որոշեց ուսումը շարունակել Լոզանի համալսարանի բժշկական ֆակուլտետում: Կարծում եմ, որ կարևոր է պարզել, թե ինչո՞ւ նա ընտրեց հատկապես բժշկի մասնագիտությունը: Թող տարօրինակ չթվա այս հարցադրումը: Եվ ահա, թե ինչու:

19-րդ դարի վերջին և հատկապես 20-րդ դարի սկզբին, ինչ-

սկսեցին արևելահայ, այնպես էլ արևմտահայ իրականությունների մեջ, դպրոցի թիվ էին կազմում ուսուցիչները, փաստարանները, լրագրողները, գրողները և այլն: Նրանք մեծմասամբ իրենց դերը տեսնում էին ազգային-հասարակական կյանքի ասպարեզում, կարևորում էին խոսքի նշանակությունը և հաճախ անմասն էին մնում գավառներում տիրող իրավիճակին: Մինչդեռ գավառներում, հատկապես Արևմտյան Հայաստանում տիրում էր ահավոր թշվառություն, որն ուղեկցվում էր թուրքական իշխանությունների բռնություններով:

Եվ գավառներում համատարած թշվառություն մեջ հայտնված հայ մարդուն օգնելու գործում Ռուբեն Ջիլինկիրյանն իր պարտքը տեսավ բժշկական գառնալու մեջ: Ես այս իրողությունն ընդգծում եմ հատկապես նկատի ունենալով հետևյալը:

Մեզ հետաքրքրող ժամանակներում էլ բժշկին դիմելը թանկ հաճույք էր: Ավելի ճիշտ՝ ոչ թե թանկ հաճույք էր, այլ թշվառություն մեջ հայտնված մարդու համար անբերական խնայողական անհասանելի: Եվ նա, ով իրեն նվիրում էր բժշկությունը լավ գիտեր, որ ընտրում է մի մասնագիտություն, որի համար իրեն քչերը կարող են վճարել: Եվ ամեն բժիշկ չէ, որ պատրաստ էր այդ գոհողությունը, այսինքն իրեն նվիրել կարիքի մեջ հայտնված մարդկանց անվճար բուժօգնություն ցույց տալուն:

Ապագա բանաստեղծ, փիլիսոփա Ռուբեն Ջիլինկիրյանը հենց սրա մեջ էր տեսնում իր առաքելությունը, երբ որոշեց ընտրել բժշկի մասնագիտությունը: Ահա, թե ինչ է նա գրել 1905 թ. հոկտեմբերի 4-ին, ընկերոջը՝ Հ. Նազարյանին ուղարկած նամակում.

«Ոչ դրամին կիրքը ունիմ, ոչ փառքին կիրքը, ոչ համբալին կիրքը:

Կեանքը շատ տխմար բան մը եղած պիտի ըլլար, եթէ անոր նպատակը արշավ մ'ըլլար մինակ դրամասիրութեան ետեւէն, փառասիրութեան ետեւէն:

Կեանքը, Հրանդա, տառապանքով, ցաւով լեցուն այս կեանքը կ'արժե՞ր միթէ ապրիլ այս գծուծ բաներուն համար...

Ամէն բան փուճ է աշխարհիս մէջ, ամէն բան վաղանցուկ. սուտ են փառքը, սուտ՝ մեծութիւնը, սուտ՝ սա խաբեբայ եր-

Չանկութիւնն ալ, երջանկութիւնը, որ տառապանքով կը ծնի, տառապանքով կը մեռնի...

Անապատ, ամայութիւն, ունայնութիւն սա տիեզերքը:

Ու այս խարուսիկ ստուերներուն մէջ եթէ կայ հաստատուն եւ իրական բան մը, այդ ալ (ըստ իս) Ջարգացումն է, Բարութիւնն է:

Կեանքը այս երկու սկզբունքներուն համար միայն կ'արժէ ապրիլ, ըստ իս, Տգէտը, չարը չապրիր, մինչդեռ Գիտունը անհունութիւն մը կ'ապրի, ու բարին՝ անմահութիւն մը:

Ու եթէ բժշկութիւնը ընտրեցի ինձ ասպարէզ՝ միայն ու միայն այդ սկզբունքներու իրագործման համար է: Եւ յիրավի ո՞ր ասպարէզին մէջ մարդ աւելի դիւրութիւն եւ հակամիտութիւն ունի գիտնապէս զարգանալու՝ որքան բժշկութեան մէջ, եւ ո՞ր արհեստն հիւանդին կը շնորհէ կեանքը՝ մեծագոյն բարիքը, եթէ ոչ բժշկութիւնը դարձեալ:

Այս նկատումներով որոշեցի բժիշկ ըլլալ, գրագէտ բժիշկ մը, հոգեբան բժիշկ մը (եթէ կուզեք)»: (Արտաշէս Հովհաննէսեան. «Ռուբէն Սեւակի Քերթուածները», «Վէմ», Զ տարի, թիւ 5, 1939, էջ 14-15):

Որքանով ինձ հայտնի է, համաշխարհային գրականության պատմությունից, եղել են երկուսը, որոնք գրող լինելու հետ միասին ընտրել են բժշկի մասնագիտությունն և անձնագոհությամբ ծառայել իրենց ժողովրդին: Առաջինը ուսն Նշանավոր գրող Անտոն Զեխովն էր, որ ընտրելով բժշկի մասնագիտություն, դարձավ կարիքի մեջ հայտնված իր հայրենակիցներին անվճար բուժօգնություն ցույց տալու ջատագովր: Եվ այդ վեհ պարտքի գիտակցումով էր, որ նա մեկնեց Հեռավոր Արևելք՝ օգնելու ժանտախտի մեջ հայտնված իր հայրենակիցներին ...

Երկրորդը հայ գրականությանը պատիվ բերող հանճարեղ բանաստեղծ-փիլիսոփա Ռուբեն Սեւակն է, որը հենց առաջին աշխարհամարտի նախօրյակին թողեց Լոզանի բարեկեցիկ պայմանները ու եկավ Կոստանդնուպոլիս՝ նեցուկ լինելու իր ժողովրդին ու դարձավ երիտթուրքական բարբարոսների կազմակերպած ցեղասպանության զոհ:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՈՑԱՏԵՏՐԸ

Կարևոր եմ համարում պարզել նաև այն հանգամանքը, թե ինչո՞ւ Ռուբեն Չիլինկիրյանն ուսումը շարունակելու համար ընտրեց Շվեյցարիան ու Լոզանի համալսարանը:

Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ եմ համարում ընդգծել հետևյալը: 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին Շվեյցարիան, ընդհանրապես, և այդ երկրի մի շարք քաղաքներ, դրանց թվում նաև Լոզանը, դարձել էին տարրեր երկրներից, հատկապես Ռուսաստանից վտարանդի հեղափոխական գործիչների կենտրոն: Միաժամանակ քիչ չէին Ռուսաստանից այստեղ ուսանելու նպատակով եկած երիտասարդներ, որոնց մեջ կային նաև կովկասահայ տղաներ ու աղջիկներ:

Եվ միանգամայն բնական էր, որ բնավորությամբ ակտիվ ու առաջադիմական հայացքներ ունեցող Ռուբենը կապվեց այդ միջավայրի հետ: Վտարանդի հեղափոխականների հետ շփումները մեծ դեր խաղացին Ռուբեն Չիլինկիրյանի քաղաքական հայացքների բյուրեղացման գործում: Այդ շփումների մեջ կարևոր տեղ էին դրադեցնում Ռուսաստանից Լոզանում հանգրվան գտած հեղափոխականները և ուսանողները: Այդ մասին է վկայում 1906 թ. մայիսի 22-ին ընկերներից մեկին Ռուբենի ուղարկած նամակը, որտեղ պատմելով ռուս ուսանողների հետ հանդիպումների մասին, նա գրում էր. «**Ես հիմա քիչ շատ կը հասկնամ իրենց լեզուն**»: Միաժամանակ Ռուբենն ընկերոջը խորհուրդ էր տալիս նույնպես սովորել ռուսաց լեզուն, քանի որ «**գալ տարի պէտք պիտի ըլլայ քեզի**» (Գրականության և արվեստի թանգարան, Ռուբեն Սևակի ֆոնդ, գ. 1, թ.15):

Ռուբեն Սևակի ուսանելու տարիներին Լոզան էին գալիս կամ այնտեղով անցնում բազմաթիվ հայ գրողներ, աղգային, հասարակական ու քաղաքական հայտնի գործիչներ: Ռուբեն Սևակը հանդիպում էր նրանց, զրուցում հետները: Նրանցից Ռուբեն Սևակը ոչ միայն տեղեկություններ էր ստանում Ռուսաստանում, Անդրկովկասում և Թուրքիայում ընթացող իրադարձությունների մասին, այլև այդ գործիչների հետ զրույցների ընթացքում նաև ստուգում իր հայացքների հիմնավոր ու ճշմարիտ լինելը:

Այդպիսի հանդիպումներից մեկի մասին մեզ լուր է հասցրել Ավետիք Իսահակյանը, որը 1913 թ. եղել է Լոդանում: Ավետիք Իսահակյանն այդ ժամանակ արդեն շատ հայտնի բանաստեղծ էր և ուներ մեծ հեղինակություն: Ավ. Իսահակյանի հետ հանդիպման ժամանակ Ռուբենը նրա ծոցատետրի մեջ գրել է իր բանաստեղծություններից մեկը՝ «Հայաստան»:

1918 թ. դեկտեմբերի 13-ին ժնեից Ավ. Իսահակյանն Ա. Չոպանյանին ուղարկած նամակում հայտնում էր նաև հետևյալը. «Սիրելի բարեկամ Ար. Չոպանյան, այս նամակիս հետ ուղարկում եմ մի ոտանաւոր, որ 1913 թ. Լոդանում մեր եղերարախտ բանաստեղծ Ռուբեն Չիլինկիրեան-Սևակը գրեց իմ ծոցատետրիս մէջ. այս ծոցատետրս միայն վերջերս հնարաւոր եղաւ ստանալու (մօտս չէր ուրիշ ձեռագիրներիս հետ), ուստի եւ պարտք եմ համարում տպագրութեան յանձնելու, միգուցէ չկորչի այս գեղեցիկ բանաստեղծութիւնը: Որքան յիշում եմ ոչ մի տեղ չի տպուած դա» (ԳԱԹ, Ա. Չոպանյանի ֆոնդ, գ. 2763.1):

Արչակ Չոպանյանը. անշուշտ, լավ էր հիշում Ռուբեն Սևակին: Այդ նա էր, որ ստանալով «Կարմիր գիրքը» Ռուբեն Սևակին ուղարկած բացիկում շնորհակալություն հայտնելով գրում էր. «Կրակ ունիք եւ ձիրք,- ու խորհուրդ էր տալիս,- բայց դեռ պատաստ չէք. շատ կարդալու, ոճը յղկելու գրական դարգացումների պէտք ունիք, մի աճապարէք» (ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ, գ. 108):

Արչակ Չոպանյանն իր խմբագրած «Վերածնունդ» հանդեսի 1919 թ. թիվ 1-2-ում տպագրեց «Հայաստան» բանաստեղծությունը: Ահա այն.

« Ռ՞վ կու լայ այսպէս խշտեակիս շէմքին.
 - Քոյր, դարիպն է. բաց:
 Կմա՞խք մը կ'անցնի դուրսէն լալազին.
 - Սովն է. դուռըդ բաց:
 Տապա՞րն է ջախջախ դըրանս կուրծքին.
 - Զարդն է. դուռըդ բաց»:

Կարիք չկա, ըստ երևույթին, ենթադրությունների մեջ ընկնել: Բայց մի բան կարող ենք հաստատապես ասել, որ խոսքի արտահայտությունն նկատմամբ շատ պահանջկոտ Ավետիք Իսահակյանին ոչ միայն դուր էր եկել «այս գեղեցիկ բանաստեղծությունը», այլև անպայման նա համակարծիք է եղել Ռուբեն Սևակի փիլիսոփայությանը, որ նա արտահայտել է ընդամենը վեց տողում:

Այո, վեց տող: Բայց ինչպիսի՞ խորություն, ինչպիսի՞ ընդգրկում և Հայաստանի պատմական ճակատագրի ըմբռնում:

Շփվելով առաջադեմ, հեղափոխական գործիչների հետ, Ռուբենը նրանց միջոցով ծանոթացավ ռուս և եվրոպական նշանավոր գրողներ Լ. Տոլստոյի, Ա. Չեխովի, Մ. Գորկու, Ա. Սկիտալեցի, Վ. Հյուգոյի, Հ. Հայնեի ստեղծագործություններին: Այդ հումանիստ գրողներն այնքան հոգևհարազատ էին Ռուբեն Չիլինկիրյանի համար, որ նա ձևով էր բերել նրանց լուսանկարները և պահում էր իր գրքերի մեջ:

Ի՞նչով էին այս գրողները հրապուրել Ռուբեն Չիլինկիրյանին: Այս հարցին պատասխանելու համար շատ համառոտակիտանք նրանց բնութագիրը:

Ռուս մեծ գրող Լ. Տոլստոյը բոլոր ազնիվ ու օրինավոր մարդկանց կոչ էր անում միավորվել հանուն արդարության ու բարության, հանուն իրենց ժողովրդին ծառայելու: Լ. Տոլստոյն ամենից առաջ դիմեց ժողովրդի կրթված շերտին՝ մտավորականությանը: Հանուն արդարության մղվող պայքարում միավորվելու համար Լ. Տոլստոյը գտնում էր, որ հարկավոր է պատասխանել երկու հիմնարար հարցի: Առաջին. ո՞վ է պատասխանատու գոյություն ունեցող այլասերվածության համար և երկրորդ՝ ի՞նչ է հարկավոր փրկության համար:

Լ. Տոլստոյը բոլոր ազնիվ մարդկանց խնդիրն էր համարում նախ հասկանալ, հետո ժողովրդին բացատրել այդ անիծյալ հարցերի պատասխանը:

Ավետիք Իսահակյանը, նկատի ունենալով Լ. Տոլստոյի ունեցած դերը, հարցնում էր. «Ո՞ւր են այն մարդիկ, Տոլստոյի պես, որ ապրում են միայն ոգով ու ճշմարտությամբ»: (Ավ. Իսահակյան. Աֆորիզմներ, էջ 259):

Ռուբեն Սևակը հենց այդ մարդկանցից մեկն էր, որը ոչ միայն կիսում էր Լ. Տոլստոյի գաղափարները, այլև մտերիմներին երաշխավորում էր կարդալ ուսման մեծ գրողի գլուխգործոցը: (Ռուբեն Սևակ. Երկեր, հ. 2.. Եր. 2001, էջ 9):

Մ. Գորկին ռուսական իրականության այն խոշոր դեմքերից մեկն է, որը խոր ազդեցություն է թողել իր ժամանակակիցների մտածողության վրա ինչպես Ռուսաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Մ. Գորկին վճռականորեն հանդես էր գալիս բռնության դեմ և պայքարում էր աշխատավոր մարդու երջանկության համար: Մ. Գորկին համակրանքով է արտահայտվել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մասին և 1905 թ. ազգամիջյան ընդհարումների ժամանակ հանդես է եկել հայ ժողովրդի շահերի պաշտպանությունամբ:

Մ. Գորկու մասին Ավ. Իսահակյանը գրել է. «Մաքսիմ Գորկի-ըմբոստություն հասարակության դեմ. բողոք, կռիվ՝ վերափոխելու կյանքը, իրականությունը, մարդու փառաբանումը, պաշտամունքը, իրականությունը դասավորել նրան երջանկացնելու, ուժեղացնելու համար»: (Ավ. Իսահակյան. Աֆորիզմներ, էջ 259):

Ռուբեն Սևակին Մ. Գորկու հենց այս դիրքորոշումն էր գրավել:

Ա. Չելսովը, լինելով բժիշկ, չէր կարող անտարբեր մնալ ուսման հասարակ մարդու, Ռուսաստանի ճակատագրի նկատմամբ և նվիրվեց հասարակական օգտակար գործունեության: Բժիշկ Ա. Չելսովն իր գրական ստեղծագործություններով անմնացորդ ծառայեց իր ժողովրդին:

«Չելսովը, - գրել է Ավ. Իսահակյանը, - գալիք ժամանակների մարդն է, անդասակարգ իրավակարգի քաղաքացին, գիտության, աշխատանքի և պրոգրեսի խանդավառ մունետիկը»: (Ավ. Իսահակյան. Աֆորիզմներ, էջ 259):

Հայ իրականության մեջ Ռուբեն Սևակն այդ խանդավառ մունետիկներից մեկն էր:

Ռուս նշանավոր հասարակական գործիչ, գրող, ժուռնալիստ Ա. Սկիտալեցը համակրում ու պաշտպանում էր Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների, այդ թվում նաև

արևմտահայության աղատագրական պայքարը: Նա հրապարակած բազմաթիվ հոդվածներով մերկացրեց թուրքական ազգային բուրժուազիայի շահերն արտահայտող երիտթուրքական կուսակցության հետադիմական էությունը: Սկիտալեցը 1910 թ. հրատարակած «Թուրքական սահմանադրության երկու տարին» աշխատության մեջ այդ սահմանադրությունը զնահատեց որպես օսմանյան նացիոնալիզմի գաղափարախոսություն, որն իրականում նշանակում էր թուրքիայում ապրող քրիստոնյա ժողովուրդների իրավունքների սահմանափակում: (Ա. Սկիտալեց, Թուրքական սահմանադրության երկու տարին, «Մոսկովյան շարաթաթերթ» (ռուս.), թիվ 33, 1910, էջ 38):

Ահա, հենց սրանով էլ Սկիտալեցն ընդունելի էր Ռուբեն Սևակի համար, քանի որ ինքն էլ այդ նույն տեսակետն ուներ թուրքական սահմանադրության վերաբերյալ, ինչը, դժբախտաբար, չհասկացան նրանք, ովքեր իրենց ներկայացնում էին որպես արևտահայության փրկիչներ:

Ռուբեն Սևակին հոգեհարազատ էին նաև եվրոպական գրողներից հատկապես Հայնրիխ Հայնեն և Վիկտոր Հյուգոն:

Իր ամբողջ կյանքը Հ. Հայնեն նվիրեց գերմանական քրիստոնյա նացիոնալիստների, մտավոր սահմանափակությամբ հետադեմների դեմ պայքարին, որոնց մասին հանճարեղ մտածողը գրել է. «Մեղադրական վճիռը վաղուց հնչել է այդ հին հասարակության վրա: Թող իրականանա արդարությունը: Թող կործանվի այդ հին աշխարհը, որտեղ անմեղությունը պղծվել է, եսասիրությունը բարեկեցության մեջ է, մարդը շահագործում է մարդուն... Ես ամբողջ կյանքումս ատել եմ ու պայքարել նրանց դեմ և այժմ, երբ սուրն ընկնում է մեռնողի ձեռքից, ես սփոփված եմ այն համոզմունքով, որ կոմունիզմը, որի ճանապարհին նրանք առաջինը կհայտնվեն, նրանց կհասնի վերջին հարվածը և, իհարկե... ոտքով կճզմի նրանց, ինչպես ճզմում են սողունին»:

Չեմ սխալվի, եթե ասեմ, որ հայ իրականության մեջ, թերևս Ռուբեն Սևակն առաջիններից մեկն էր, որ մոտիկից ծանոթանալով գերմանական մեծ բանաստեղծի կյանքին ու գաղափարներին, այն ոչ թե ընդօրինակեց, այլ դարգացնելով, հայ գրականության մեջ մի նոր էջ բացեց քաղաքական լիրիկայի ասպարեղում:

Եվ ահա, Ավ. Իսահակյանի հետևյալ բնութագիրն ամբողջովին վերաբերում է նաև Ռուբեն Սևակին: «Հայնե-սիրտ, Հայնե-ղգայնություն, նուրբ, Հոր և Սողոմոն, Երգ Երգոց, բանաստեղծ և ուղղմիկ»: (Ավ. Իսահակյան, Աֆորիզմներ, էջ 265):

«...ԿԸ ՎԱԶԷԻՆ ԱՆԿԱՑՈՒՆ ԿԱՄՈՒՐՁԻ ՄԸ ՎՐԱՑ...»

Լողանում ուսանելու տարիներին Ռուբեն Սևակը մասնակցում էր դաշնակցության կողմից դեկավարվող Հայ ուսանողների «Արմենիա» միության հավաքներին: Ռուբենը կրքոտ ելույթներ էր ունենում այն ժամանակվա հասարակական գիտակցությունը հուզող բազմաթիվ հարցերի շուրջ, որոնց մեջ առանձնապես կարևորվում էին Թուրքիայում գործող հակասուլթանական կազմակերպությունների համախմբման խնդիրները: Դրանց մեջ գլխավորը մնում էր երիտթուրքական կուսակցության հետ համագործակցելու խնդիրը:

Ռուբեն Սևակը զգում էր այդ համագործակցության ոչ միայն անհեռանկար լինելը, այլև ամբողջ վտանգը, որից միայն կարող է վնասվել Հայ ժողովուրդը: Իր համոզմունքը Ռուբեն Սևակն արտահայտեց հետևյալ հարցականով. «Կարելի՞ է երեւակայել կամուրջ մը, որու մէկ ծայրը անդունդին յենուած ըլլար»:

Իսկ արդեն 1913 թ. գրած «Ահաւոր տարակոյսը» հոդվածում Ռուբեն Սևակը գրել է. «...Այս անհամար հոգիներով լեցուն շոգեկառքերը, այս մարդերն ու տղաքները հեւ ի հեւ կը վազէին անկայուն կամուրջի մը վրայ՝ որուն մէկ ծայրը դատարկութեան վրայ կը յենուր...: Կարելի՞ էր երեւակայել Կեանք-կամուրջ մը, որու մէկ ոտքը ոչնչութեան վրայ դրուած ըլլար...»: Եվ բանաստեղծ փիլիսոփան հարցնում էր, ավելի ճիշտ՝ զգուշացնում էր դրա վտանգը. «Այս բոլորէն ոչ մէկը եղբօր մը, զաւկի մը, հօր մահը չէ՞ր տեսած»: (Ռուբէն Սեւակ, նույն տեղը, էջ 389):

Երիտթուրքերի հետ համագործակցության նկատմամբ Հնչակյան կուսակցության դիրքորոշումը հայտնեց Ստեփան Սապահ-Գուլյանը, որը գրեց հետևյալը. «Մենք նրանց հետ

(այսինքն՝ Երիտթուրքերի - Վ. Պ.) որևէ գործ ունենալ չենք կարող. ժամանակն այլևս անցած է հասկացութեան գալու: Մեր ճակատագիրը, մեր բախտը նրանցից պիտի բաժանենք, վճռականապես, առանց տատանուելու»: (Ս. Սապազ-Գիւլեան, Ինքնաւար Հայաստան, Կահիրէ, էջ 85-86):

Երիտթուրքերի հետ համագործակցութեան անհեռանկար ու վնասակար լինելու մեջ շատ գործիչներ էին համոզված, որոնց տեսակետն ընդհանրացրեց Արշակ Չոպանյանը, գրելով. «Փարիզի վերջին կոնգրեսին մէջ սպաննուեցավ... Հայկական հարցը»: («Անահիտ», Փարիզ, թիվ 1-4, էջ 44):

Բոլորն էին զգում այդ համագործակցութեան վտանգավորութիւնը: Բոլորն էին զգում, որ Երիտթուրքերը նույն Երիտօսմաններն են, միայն դիմակը փոխած, որ նրանցից Հայութիւնը շատ է վնասվելու: Բոլորն էին զգում այդ վտանգավոր սիրախաղի հետևանքները: Բոլորն էլ զգում էին, բացի դաշնակցութեան լիդերներից, որոնք կորցրել էին իրավիճակը սթափ գնահատելու ունակութիւնը:

Սրա մասին է վկայում 1907 թ. դաշնակցութեան 4-րդ ընդհանուր ժողովի ընդունած հետևյալ որոշումը. «Միևնոյն ատեն թուրքերու մէջ տարածուած անհիմն թիրիմացութիւններուն վերջ տալու համար, ժողովը պարտ կը համարի յայտարարել, որ դաշնակցութիւնը թուրքիոյ մէջ ունեցած չէ եւ չունի անջատական ոչ մի ձգտում, այլ իր նպատակն է եղած աղգերու կատարեալ հաւասարութիւն եւ տեղական յայն ինքնավարութեան սկզբունքի համաձայն հայկական վեց վիլայէթներուն մէջ վարչական ինքնավարութեան հաստատումը, ինչ որ չի հակասեր միւս աղգերու իրաւունքին»: (Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Եր., 1992, էջ 424):

«ԳԻՆՈՎՑԱԾՆԵՐԸ»

Մ. Վարանդյանը իր «Պատմություն» մեջ բերում է դաշնակցության մեկ այլ նշանավոր գործիչ Ակնունու (Նաչատուր Մալումյան) նամակը, որը 1908 թ. օգոստոսի 8-ին Կ. Պոլսից ուղարկվել էր «Դրոշակի» խմբագրությունը: «Ձէք կարող երևակայել, թէ որքան ուրախ եմ ձեզ գրել այս քաղաքից, առանց երկիւղ կրելու երեկուան ամենազօր լրտեսութիւնից, մի քաղաքում, ուր 32 տարի փակուած բերանները մի գլուխ «աղատութիւն» են գոչում... Ամբոխը գինովցած է: Թող այդպես լինի: 30 տարի լուսուց յետոյ, 30 օր կարելի է գոռալ ու գինովնալ... Երբ կը վերադառնան ուսակսիոնի սև օրերը, նորից կարող կը լինենք մտնել «լուծեան ակումբը»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 427):

Երիտթուրքական հեղափոխությունից Ակնունին և իր կուսակիցներն այնպես էին «գինովցել», որ հրապարակավ հրաժարվեցին ազգային-ազատագրական պայքարից և առանց այլևայլության հայտարարեցին. «Թուրքաց Հայաստանը կը կազմէ կայսրութեան անբաժան մասը»: (Նիւթեր ՀՅԴ պատմութեան համար, հ. Ա, էջ 176):

Դժբախտարար այդ «գինովցածների» մեջ էին նաև Գրիգոր Զոհրապը, Դանիել Վարուժանը, Սիամանթոն և ուրիշներ:

Իսկ դաշնակցության պատմագիր Մ. Վարանդյանը գրում էր. «Բերկրանքով ողջունեցինք օսմանևան սահմանադրութիւնը, ոչ մի անջատական ձգտում, ոչ մի խօսք այլևս եւրոպական միջամտութեան, 61-րդ յոդուածի մասին, դադարեցուցինք «Պրօ Արմենիան» ու եւրոպական պրոպագանդը, լծուելով մեր իսլամ դրացիներուն հետ ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրութեան առաջադիմութեան և բարօրութեան»: (Մ. Վարանդեան, նույն տեղը, էջ 427):

1908 թ. հեղափոխությամբ, ի դեմս երիտթուրքական կուսակցության, իշխանության եկավ թուրքական ազգային բուրժուազիան իր շովունիստական գաղափարախոսությունը: Այդ բուրժուազիայի շահերն արտահայտող կուսակցությունն իշխանության գալով՝ անարգել գործելու պայմաններ ստեղծեց գողերի, պոռնիկների, թալանչիների, ավաղակների, սպեկուլյանտ-

ների, ստահակների, կավատների, ծախու. զրիչների համար: Հենց թուրքական հասարակության այդ տականքն էլ դարձավ երիտթուրքերի սոցիալական և քաղաքական հենարանը, նրանց ծայրահեղ հետադիմական ազգային քաղաքականության իրականացման գործիքը:

Այդ տականքը երիտթուրքական կուսակցության ղեկավարությամբ դարձավ իշխանության տեր, թալանում և սպանում էր պետության անունից, ստում ու կեղծում էր հանուն այդ պետության:

Դաշնակցության ղեկավարներն այնքան էին «զինովցած», ու այնպես էին տարվել թուրքական հեղափոխության մեջ իրենց դերով ու մասնակցությամբ, որ կորցրել էին զգոնությունը և ուշադրություն չէին դարձնում իրենց սթափեցնող կոչերին:

Սթափեցնող կոչ անողների առաջին շարքում կանգնած էր Անդրանիկ Օղանյանը, որը երիտթուրքերի հետ սկսած սիրախաղի վտանգավորության մասին դաշնակցության ղեկավարներին զգուշացնում էր, ասելով. «Մեղի բոլորիս համար թուրքերը մեծ ու խոշոր թակարդ մը լարած են և մեզ ամէնքիս ալ մէջը պիտի ձգեն»: Ավելացնեմ, որ այս խոսքերն Անդրանիկ Օղանյանը դաշնակցության ղեկավարներին ասել է Ադանայի հայ բնակչության կոտորածի նախօրյակին, 1909 թ. սկզբին, Կ. Պոլսում եղած ժամանակ:

Երիտթուրքերի հետ համագործակցության մասին համաձայնությունը ստորագրելուց անցել է 100 տարուց ավելի: Բավական երկար ժամանակաշրջան: Մեկ դար: Այդ ընթացքում հայ ժողովրդի կյանքում բախտորոշ նշանակություն ունեցող շատ իրադարձություններ են եղել: Հայ ժողովուրդը ապրեց ահավոր ողբերգություն: Արևմտյան Հայաստանը բռնությամբ հայաթափվեց, կազմակերպված ցեղասպանությանը զոհ գնաց մեկ ու կես միլիոն հայ:

Նկատի ունենալով անցած ժամանակաշրջանը, տեղի ունեցած իրադարձությունների տրամաբանական ընթացքը, կարելի է հստակորեն ասել, որ Ռուբեն Սևակի նման մտածող գործիչները միանգամայն ճիշտ էին, որ դեմ էին երիտթուրքերի հետ համագործակցությանը:

Այո, դաշնակցությունը սխալվեց համաձայնության գալով երիտթուրքերի հետ: Եվ այդ սխալի հետևանքները մինչև օրս չի հաջողվել վերացնել:

Ասպարեզ են իջել դաշնակցության անդամ շատ սերունդներ, բայց ամբողջ խնդիրն էլ այն է, որ մինչև հիմա դաշնակցության դեկավարները պնդում են, թե երիտթուրքերի հետ համագործակցելը հարկադրական քայլ էր: Բայց ո՞վ էր նրանց հարկադրել կատարել այդ քայլը:

Պարկեչտությունը պահանջում է, որպեսզի դաշնակցությունը ոչ թե արդարանա, այլ ընդունի իր սխալը և ներողություն խնդրի իր ժողովրդից դա անմիտ համագործակցության ողբերգական հետևանքների համար:

Բայց պարկեչտությունն այդ կուսակցության համար չէ: Երևի թե աշխարհում այն միակ կուսակցությունն է, որ իրեն համարում է անսխալական...

ԺՆԵՎՑԱՆ ԼՃԻ ԿԱՐԱՊՆԵՐԸ

Սակայն վերադառնամ մեր ուղևորության ընթացքին: Բարակ անձրևը թեև չէր դադարում, բայց մենք հափշտակված հետևում էինք Հովհաննես Զիլինկիրյանին, որը մեզ տանում էր Լոդանի փողոցներով և տալիս անհրաժեշտ բացատրություն:

Արդեն օրվա երկրորդ կեսն էր, որ նա մեզ տարավ Լոդանի հռչակավոր Նոտր Դամ տաճար: Դա մի հսկայական շինություն է բավականաչափ բարձր զմբկթով, որը երևում է քաղաքի բոլոր կետերից: Մտանք ներս: Տպավորությունը ցնցող էր: Հիշեցի Ավ. Իսահակյանի խոսքերը: «Նոտր Դամի տաճարը, - գրել է նա, - երաժշտություն է. ես կանգնում եմ նրա առաջ և լսում եմ, ունկնդրում այդ վսեմ նվազը և երազում» (Ավ. Իսահակյան, Աֆորիզմներ, էջ 205): Մենք էլ կանգնել էինք այդ վեհաշուք տաճարի մոտ և ապրում էինք նույն զգացողությունը...

Տաճարի մոտից իջանք լճափ: Մեր առջև փռված էր արևի շողքերից կարմրաոսկեգույն դարձած ջրի հարթությունը, որի վրա լողում էին անհաշիվ կարապներ: Ո՞վ գիտե, գուցե այս տե-

սարնն է նկատի ունեցել Ռուբեն Սևակը, երբ գրել է «Կարապ-
ները» բանաստեղծությունը, որի մասին հիշելով Հովհաննես
Չիլինկիրյանն արտասանեց մի քանի տող: Մեր տեսած պատ-
կերը ճիշտ և ճիշտ արտահայտում էր Ռուբեն Սևակի բանաս-
տեղծության հետևյալ տողերը.

«...Քնացող ջուրին երեսին վրայ մեղմօրէն
Երկու կարապ կը սահին լուռ, մենաւոր:

Իրենց մարմինը քնքոյշ է, գեղեցիկ,
Իրենց թեւերն արծաթակերտ, ձիւնագէս.
Ու մարմարի իրենց վիզը սլացիկ՝
Երազային տաճարներու սիւնին պէս:

Կը մօտենան անոնք իրար մեղմովին,
Ու կտուցնին իրար կու տան ուղղակի,
Այնպէս՝ ինչպէս ոչ մեկ չըթունք տակաւին
Այնքան սիրով չէ մօտեցած չըթունքի:

Ու ձիւնափառ իրենց թեւերն կ'առնեն վեր,
Կը գալարեն իրենց վիզը երկնասլաց.
Այնպէս՝ ինչպէս երկու բազուկ անձնուէր
Այդքան սիրով իրարու չեն գալարած:

.....
Վարը, քնացող ջուրին վրայ տրտմաբար,
Վեհ պարտքի մը գիտակցութեամբը լեցուած,
Բերան բերնի, վիզը վիզին, անբարբառ,
Կարապները կը մնան լուռ, քարացած...»:

«Կարապները» բանաստեղծության վերաբերյալ Ռուբեն
Սևակը գրել է. «Շատ անգամ՝ մութ գիշերով՝ Լէմանի ափին
վրայ կը հանգչիմ մենաւորիկ ու կը դիտեմ կարապները. mys-
tere-ով լեցուն այդ խորհրդաւոր էակները, հեռուները զոյգ-զոյգ,
գիշերին մէջ: Ու հոգիս, արցունքով լեցուն, կը մտածեմ. ինչո՞ւ
լեզու չունենային այդ խեղճերը, ինչո՞ւ չկրնայի կարդալ անոնց
սրտին մէջ այն անհունօրէն բարձր խորհուրդը, որուն մարմնա-
ցումներն են իրենք. ինչո՞ւ չհամբուրուէի անոնց հետ, եւ ինչո՞ւ

չկրնայի լսել իրենց. թէ՛ իրենց սրտին պէս սիրտ մըն ալ իմ կուրծքիս տակ կայ, իմ բանաստեղծի կուրծքիս տակ...»:

«...ԵՍ ՉԵՄ ԿՐՆԱՐ...»

Լողանում ուսանելու տարիների մասին Ռուբենն ընկերներին գրած նամակներում հայտնել է նաև իր առօրյա դրաղմունքների մասին, երբեմն հաղորդելով որոշակի հետաքրքրություն ունեցող մանրամասներ:

1907 թ. մարտի 26-ին ընկերոջն ուղարկած նամակում Ռուբենը գրել է. «Ես չեմ սիրեր մութ ու անորոշ գործերը. ես կը սիրեմ պարզութիւնը եւ անկեղծութիւնը...Ճաշարանիս մէջ ծեր կին մը կայ գերմանացի, որ ամէն օր իր հիացումը կը յայտնէ գերմանացիներուն վրայ, Վիլհելմին վրայ ու գերմանական լեզուին վրայ...զօր շատ քաղցրահնչիւն կը գտնէ: Կը գուշակե՞ս, որ երբ մէկը իմ առջեւ այս տեսակ խօսքեր ընէ, ես չեմ կրնար հանգիստ ճաշ ուտել, հետեւապէս ամէն օր վէճ կայ, իրարանցում, յուզում...» (ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ, գ. 17, թ. 28):

Այս փոքրիկ տեղեկությունը մեզ օգնում է որոշ տպավորություն ունենալ նրա ուսանողական օրերի մասին: Իհարկե, Ռուբեն Սևակին հայտնի էր 1890-ական թվականներին սուլթանի կաղմակերպած հայկական կոտորածների կապակցությամբ գերմանական կայսր Վիլհելմ Երկրորդի հակահայկական վերաբերմունքը:

1898 թ. Վիլհելմ Երկրորդը նորից այցելել էր Կ. Պոլիս: Կայսրի այցելությունը սուլթան Արղուլ Համիդի համար շատ կարևոր էր, քանի որ Գերմանիան խոշոր տերությունների մեջ միակն էր, որ ձեռնպահ մնաց ու չբողոքեց հայկական կոտորածներ կաղմակերպելու դեմ: Կայսրը հայկական ջարդերը համարեց «սուլթանի իրավունքն ու սուլթանն պարտականությունը»: (Ա. Երուսալիմսկի, Գերմանական իմպերիալիզմի արտաքին քաղաքականությունն ու դիվանագիտությունը 19-րդ դարի վերջին (Ռուսերեն), Մոսկվա-Լենինգրադ, 1948, էջ 138):

Վերոհիշյալ այցելության ժամանակ գերմանական կայսրը

Հարկ էր համարել նորից քաջալերել Արդուլ Համիդին Հայերի ջարդ կազմակերպելու համար, այն էլ այն ժամանակ, երբ կայսրի շքախմբի անդամներից մեկի վկայությամբ «ողջ քաղաքը դեռ չնչում էր մորթված Հայերի թարմ արյան հոտով և նույնիսկ կայսրին ուղեկցող անձանցից ոմանք իրենց վատ էին զգում»: (Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, գիրք 12, Թուրքիա, Երևան, 1985, էջ 118):

Ստանալով գերմանական կայսրի աջակցությունը, Արդուլ Համիդը հայտարարեց. «Ես ավելի շուտ կնախընտրեմ մեռնել, քան թե Անատոլիայի արևելքում ինքնավարության բարեփոխումներ անցկացնել»: (Մ. Արզումանյան, Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 217):

ԼԵՄԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ

Լոզանից մեղ Հովհաննես Զիլինկիրյանը տարավ Վեվե գեղատեսիլ քաղաք-ամառանոցը, որը գտնվում է Ժնևյան կամ Լեման լճի արևելյան ափին: Վեվեն հայտնի առողջարան է: Այստեղ է նաև բուժվել հայ ժողովրդի արժանավոր դավակ, հոչակավոր Միքայել Լորիս-Մելիքովը, որի մասին գրել և 2005 թ. հրատարակել եմ «Կոմս Լորիս-Մելիքով» գիրքը:

Արդեն երևկո էր, երբ Վեվե քաղաքից մեկնեցինք Մոնտրե քաղաք, որը նույնպես առողջարան է: Ճանապարհին կանգնեցինք Բայրոնի նկարագրած Շիլյոն ամրոցի մոտ: Լուսանկարվեցինք: Հետո եղանք այն հյուրանոցում, որտեղ ապրել է անգլիացի այդ մեծ բանաստեղծը:

Լոզանից սկսած մինչև Մոնտրե, մեր դեմ բացվեց բնության մի անկրկնելի գեղեցկություն: Հենց այդ գեղեցկությունն էլ պատկերել է Ռուրեն Սևակը «Լեման» բանաստեղծության մեջ, որն առաջին անգամ տպագրվել է 1907 թ. «Արևելևան Մամուլ» հանդեսի թիվ 34-ի 856-857 էջերում:

Այս բանաստեղծությունը իր ընկեր Հրանտ Նաղարյանի միջոցով ուղարկելով տպագրության, Ռուրեն Սևակը կից նամակում գրել է. «Պէտք է որ «Լեմանին» մէջ սրբագրութիւններ բա-

ներ չմտցուին, որովհետեւ այնքան փափուկ բանաստեղծութիւն մըն է, որ գրչի փափուկ հարուած մը կրնայ մեռցնել անոր հոգին»:

Համոզվելու համար, թե Ռուբեն Սևակն ինչքան ճիշտ էր, այդ, իսկապես «այնքան փափուկ բանաստեղծությունից» բերենք մի քանի հատված:

«Բլուրէն վար, սէգ ծառերու շուքին քով,
կը ստուերոտի չքնաղ լիճը Լէմանի:
Չնաշխարհիկ պչրուհիի նազանքով
Ափին աւազը կը գգուէ, կը շիկնի,
Բլուրէն վար, սէգ ծառերու շուքին քով:

Ու կը լայննայ լիճը, շրքեղ, աննըման,
Մինչեւ փէշը Ալպեաններուն սատափէ,
Մինչեւ Ռօնի լայն դաշտերը ուր Լէման
Իր կապուտակ ալեակները կը թափէ:
Ու կը լայննայ լիճը շրքեղ, աննըման...:

Մութը քիչ-քիչ կը թանձրանայ սխրալի:
Լիճին ամէն ափունքներէն հեռաւոր
Փոքրիկ լոյսեր կը պլպլան. կը փայլի
Սէգ լեռներու ձիւնէ ճակատը աղուոր.
Մութը քիչ-քիչ կը թանձրանայ սխրալի:

Հեւքով ուռած կուրծքին վրայ ջուրերուն
Ահա կանցնին թեթեւ նաւերը մութին.
Ահա դողդոջ տարփոտ երգերն ալ հեռուն
Սիրատոչոր շրթունքներէ կը փրթին
Հեւքով ուռած կուրծքին վրայ ջուրերուն:

Լէման, Լէման, պատմէ ինձ սէրըդ լըռիկ,
Անհուն սէրըդ, որ քու ջուրերըդ կապոյտ
Կուռեցնէ ալեակներով հանդարտիկ,
Եվ որ սարսուռ կու տայ քու ջինջ հայլոյդ,
Լէման, Լէման պատմէ ինձ սերըդ լըռիկ:

**Ահա ջուրերըդ կը դողան տենդահար...:
Ըսէ, կուրծքիդ մէջէն ցըցուող գեղեցիկ
Ալպեաններուդ դու ձիւնի՞ն ես սիրահար,
Կարապներուդ արդեօք վիզի՞ն սլացիկ...:
Ահա ջուրերը կը դողան տենդահար»:**

Եվ պոետը գիտե, որ մի օր էլ դեպի Ալպյան բարձունքները ձգտող ջուրը պետք է ետ քաշվի, բանաստեղծութեան վերջում դիմում է Լեմանին.

**«Ոսէ Լէման, ձայն տուր ջուրիդ ալքերէն:
Նաւերէն թող սիրոյ երգերն են հրավառ
Որ իմ սրտիս պէս քու սիրտդ ալ կը գերեն:
Ահ, վէրք մ'ունիս կապոյտ կուրծքիդ տակ թշուառ.
Ոսէ Լէման, ձայն տուր ջուրիդ ալքերէն»:**

Մենք երեքով կանգնել էինք գեղատեսիլ լճի ափին, հիանում նրա անկրկնելի պատկերով: Եվ մեր հիացմունքն ուղեկցվում էր Ռուրեն Սևակի «Լէման» բանաստեղծութեամբ, որն այնպես մեղմորեն արտասանում էր Հովհաննես Չիլինկիրյանը: Դա միայն բանաստեղծություն չէր, այլ այդ պահին հնչող մի գողտրիկ ու գերող երաժշտություն...

Այս տպավորութեամբ էլ, նաև մի քիչ էլ թախծոտ վերադարձանք Լոզան: Բոլորս էլ դարձել էինք ինքնամփոփ, մեր մտքերի հետ էինք և այդպես լուռ մնացինք մինչև Լոզանի երկաթուղային կայարան: Արդեն երեկոյան ժամը 7.10 րոպե էր: Հովհաննես Չիլինկիրյանի հետ պայմանավորվեցինք, որ հոկտեմբերի 23-ին, նույն կերպ գալու ենք Լոզան՝ մեր ճանապարհը շարունակելու դեպի այն վայրերը, որտեղ եղել էր Ռուրեն Սևակը:

ԼՈՆԴՈՆԻՑ ԵԿԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱԽՈՍԸ

Ժիրայր Նայիրին և նա զնացքով վերադարձանք ժնև, որտեղ ըստ պայմանավորվածության պետք է ներկա լինեինք ժնևի հայկական եկեղեցու ակումբում կազմակերպված միջոցառմանը:

Մեզ այդ միջոցառմանը տարավ Նաղարեթ Սրմաքեչյանը: Նա և Հովհաննես Զիլինկիրյանը մի տեսակ բաժանել էին իրենց անելիքը: Հովհաննես Զիլինկիրյանը ստանձնել էր մեզ ուղևեցել ժնևից դուրս՝ Ռուբեն Սևակի եղած վայրերով և որքան հնարավոր է ծանոթացնել Շվեյցարիային: Իսկ Նաղարեթ Սրմաքեչյանը, քանի որ աշխատանքով զբաղված էր, մեզանով զբաղվելու էր ժնև քաղաքում:

Եվ այսպես, քիչ ուշացումով հասանք եկեղեցուն կից գործող ակումբ: Անաղմուկ զբաղեցրինք ազատ աթոռները: Բանախոսը Լոնդոնից եկած մի երիտասարդ էր՝ Արամ Սաֆրաստյան անունով: Նա եղել էր Արևմտյան Հայաստանում, նկարահանել էր հայոց պատմական հուշարձանները և դրանք ցուցադրում էր՝ տալով հանգամանալից բացատրություններ: Իր խոսքի վերջում բանախոսն ասաց հետևյալը.

- Ինչպես տեսաք, սիրելի հայրենակիցներ, եթե մենք միջոցներ չձևոնարկենք, ապա մոտ ապագայում այս հուշարձաններից ոչ մեկի հետքն էլ չի մնա, քանի որ դրանց մեծ մասն արդեն ավերված է:

Այնուհետև տրվեցին հարցեր: Բոլորին մտահոգում էր հայկական, թեկուզ և ավերված, հուշարձանների ճակատագիրը: Եվ հանկարծ այդ ընդհանուր մտահոգության մթնոլորտում, սրահի վերջին շարքերում նստածներից մեկը բավականաչափ հեզնանքով բանախոսին հարցրեց, թե այդ հուշարձանները գտնվում են ուրիշ պետութայան տարածքում և ինչպե՞ս է նա պատկերացնում դրանց փրկելը:

Հարցնողի խոսքից երևում էր, որ նա արևմտահայ չէ: Երիտասարդ բանախոսը մի տեսակ կաշկանդվեց և չկարողացավ պատշաճ պատասխան տալ:

Այստեղ էլ միջամտեց անխոնջ ժիրայր Նայիրին: Նա խոսեց

տեղից, նախ ասաց, թե ով է ինքը, հետո էլ ներկայացրեց ինձ, հատկապես ընդգծելով, որ ես եկել եմ Հայաստանից և պատմական գիտությունների դոկտոր եմ:

Ժիրայր Նայիրին իսկական հուետոր է: Խոսում է համոզիչ ու փաստարկներով: Նա դրվատանքի խոսք ասաց երիտասարդ բանաստի մասին, ընդգծեց նրա կատարած աշխատանքը և հետո անդրադարձավ Թուրքիայի տարածքում գտնվող հայկական պատմական հուշարձանների պահպանման խնդրին: Նա անուղղակի պատասխանեց վերևում հիշատակված հարցի հեղինակին, ընդգծելով, որ դրա համար հարկավոր է պետականորեն զբաղվել և օգտագործել ՅՈՒՆԵՍԿՕ-ի լծակը, ինչպես նաև Եվրոպական կառույցների ազդեցությունը:

Երբ ավարտվեց միջոցառումը, հավաքված մարդիկ, օգտվելով Ֆուրչետ-սեղանից, խումբ-խումբ կանգնած զրուցում էին տարբեր հարցերի շուրջ: Պարզվեց, որ հարց տվող երիտասարդը Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչն է Ժնևում գտնվող ՄԱԿ-ի Եվրոպական բաժանմունքում, Հովհաննիսյան ազգանունով: Նա ոչ թե զրուցում էր, այլ բարձրաձայն խոսում էր, թափահարելով ձեռքերը: Ես հեռվից լսում էի նրա խոսակցությունը: Նա հաճախ կրկնում էր «իմ կարծիքով» խոսքերը և Ժիրայր Նայիրին ստիպված եղավ նրան ասել.

- Երիտասարդ, դուք Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչն եք և իրավունք չունեք այստեղ արտահայտել ձեր կարծիքը: Ի՞նչ է, ձեր կարծիքը տարբերվում է Հայաստանի Հանրապետության տեսակետից:

Այդ «դիվանագետ» երեխան իմ վրա թողեց տհաճ տպավորություն իր անբարտավան, մեծամիտ ու անդաստիարակ կեցվածքով, իր սաղր գիտելիքներով: Նրա հետ զրույցի էին բռնվել Ժիրայր Նայիրին, Նազարեթ Սրմաքեչյանը և էլի հասակն առած մի քանի մարդիկ: Իսկ մեր «դիվանագետը» նույնիսկ չունեք տարրական վարվելակերպ և այդ հարգարժան մարդկանց հետ խոսում էր չափից ավելի բարձրաձայն, ձեռքերը գրպանում դրած կամ դրանք թափահարելով: Այդ «դիվանագետ» երեխայի հետ զրուցելն այնքան տհաճ էր, որ Ժիրայր Նայիրին ստիպված

դադարեցրեց նրա հետ շփվելը:

Իսկ ես քիչ հետվից նայում էի ու լսում այդ երիտասարդին և մտածում հետևյալի մասին: Ժնեը համարվում է միջազգային դիվանագիտութայան կենտրոններից մեկը: Այստեղ են լուծվում միջազգային հարաբերությունների շատ հարցեր: Այստեղ են գտնվում աշխարհի բոլոր երկրների դիվանագետները, որոնք զանազան հարցերի շուրջ բանակցություններ վարելուց բացի, միմյանց հետ շփվում են, հաստատում գործնական, ընկերական հարաբերություններ և դրանք օգտագործում իրենց դիվանագիտական առաքելությունն իրականացնելու համար:

Եվ միթե՞ այս հանրահայտ ճշմարտությունը չեն հասկանում կամ էլ չեն գիտակցում Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը վարող անձինք, որոնք ժնեի նման կարևորագույն դիվանագիտական հանգույցում աշխատելու են ուղարկել ոչ միայն գիտելիքներ չունեցող, այլև տարրական վարվելակերպից զուրկ մարդու:

Ես այդ երիտասարդին չեմ մեղադրում: Նա այն է, ինչ որ կա: Ես մեղադրում եմ նրանց, ովքեր չեն մտածում մեր հանրապետության միջազգային հեղինակություն մասին: Չեմ ուզում ընդհանրացում կատարել, բայց ուզում եմ հարցնել, արդյոք մեր դիվանագիտության ձախողումների, անհաջողությունների մեջ թաքնված չէ՞ այն գաղտնիքը, երբ դիվանագիտական գործը վստահվում է պատահական մարդկանց:

ԹԱԼԻՆ ԱՎԱԳՅԱՆԸ

Այդ երեկո ես առիթ ունեցա ծանոթանալ Ժնեի հայկական համայնքի գործերին: Այսօրվա վիճակով Շվեյցարիայի հայկական գաղութում կա 5 հազար հայ: Նրանց մեծ մասը կենտրոնացել է Ժնեում: Ծանոթացա Թալին Ավագյանի հետ, որը Սփյուռքի հայտնի ազգային և հասարակակա՜ն գործիչ Հայկաչեն Ուղունյանի դուստրն է: Թալինը եռանդով շարունակում է իր հոր գործը և ստանձնել է Բարեգործական ընդհանուր միություն Յվրոպական բաժանմունքի գործերը:

Թալինը պատմեց այդ բաժանմունքի գործերի մասին, ասաց, որ նոր է վերադարձել Երևանից: Թալինը իմ վրա թողեց լուրջ ու մեր ընդհանուր ազգային գործերով մտահոգված բարձր մտավորականի ու ազգային գործչի տպավորություն: Ես ղգացի նաև հավաքին մասնակցող մարդկանց ջերմ ու հարգայից վերաբերմունքը Թալինի նկատմամբ:

Երեկոյին ներկա էր նաև Արթեն Շելեֆյանը, որի հետ մի Երկու տարի առաջ ծանոթացել էի Երևանում:

Հյուրանոց վերադարձանք գիշերվա ժամը 12-ին: Չնայած հոգնած էինք, բայց հյուրանոցի նախասրահում մոտ մեկ ժամ նազարեթ Սրմաքեչյանի հետ մտքեր փոխանակեցինք օրվա անցուդարձի, մեր ստացած տպավորության մասին:

«ՓՈՂՈՑ ԱՎԼՈՂԸ»

Հոկտեմբերի 23-ի առավոտյան ժ. 9-ին, ինչպես պայմանավորվել էինք Հովհաննես Չիլինկիրյանի հետ, ավտոմեքենայով մեկնեցինք Լողան: Ժամը 10-ին հասանք Լողանի կայարանի մոտ, որտեղ մեզ արդեն սպասում էր Հովհաննես Չիլինկիրյանը: Այս անգամ նա մեզ տարավ Լողանի Արդարադատության պալատ: Այս շենքը նույնպես պահպանվել է այնպես, ինչպես Ռուբեն Սևակի ժամանակ:

Հովհաննես Չիլինկիրյանը մեզ ցույց տվեց այն լուսանկարը, որտեղ պատկերված էր Ռուբեն Սևակը մի խումբ հայ մտավորականների հետ: Նրանք ժամանակին լուսանկարվել էին այդ պալատի պատուհանների տակ: Մենք էլ նույն կերպով լուսանկարվեցինք:

Քայլում էինք Լողանի կենտրոնական փողոցներով: Տեղում էր բարակ անձրև, օրը մի քիչ ցուրտ էր: Եվ փողոցներից մեկում մեր առջև հայտնվեց փողոց ավլող մի ծերունի:

- Նկատե՞ք, - ասաց Հովհաննես Չիլինկիրյանը, - նույն պատկերն է հիշեցնում, ինչ ժամանակին նկարագրել է Ռուբեն Սևակը:

Հովհաննես Չիլինկիրյանը նկատի ուներ Ռուբեն Սևակի 1911

Թ. գրած «Փողոց աւլողը» բանաստեղծութիւնը, որտեղ կան նաև հետեյայ տողերը.

«Ճիշդ տանըս դիմաց, այս ցուրտ օրերո՞ւն,
 Հին համազգեստով ծեր մը երերուն,
 Այս անձրեւի տակ, աւել մը ձեռքին,
 Մինչեւ իրիկուն լո՛ւո, դանդաղազի՛ն,
 Երկուքի կոտորած հասակն ալեւոր,
 Կը մաքրէ մայթին ցելսը՝ այնպէս որ
 Չաղտոտի կօշիկն ազնիւ անցորդին...:
 Ինչպէս թոյլ կու տանք այս բուքին, ցուրտին,
 Որ ծերերն այսքան կըռնակնին ծրոեն...
 Մարդերն ինչ անգուժ կենդանիներ են»:

«...ՍԱ ՀԱՅԱՍՏԱՆ ՁԷ...ՍԱ ԵՎՐՈՊԱ Է...»

- Այսօր,-ասաց Հովհաննէս Չիլինկիրյանը,- ձեզ կտանեմ այն գյուղերով, որոնցում ժամանակին եղել է Ռուրեն Սևակը, բուժել է հիվանդներին:

Մենք հաճույքով համաձայնվեցինք: Դուրս եկանք Լողանից: Մի քանի կիլոմետր անցանք և Հովհաննէս Չիլինկիրյանը ավտոմեքենան դուրս բերեց հիմնական մայրուղուց: Բայց այդ ճանապարհն էլ իր որակով չէր դիջում հիմնական մայրուղուն: Մեր ճանապարհն անցնում էր շվեյցարական գյուղերով, որոնք շրջապատված էին խաղողի պլանտացիաներով ու այսլան արտափայրերով: Դաշտի ազատ տարածքների վրա արածում էին անհաշիվ կովեր: Բոլոր գյուղերը հետաքրքիր էին իրենց յուրօրինակութեամբ, բայց ընդհանուրն այն էր, որ բոլորը մաքուր էին, փողոցները ասֆալտապատ:

Ես դարձացած հետաքրքրվեցի, թե այսքան մեծ քանակութեամբ կով են պահում, բայց գյուղերում դրանց հետքը չի երևում: Իսկ մեր գյուղերում, երբ առափուտյան նախիրը դաշտ են ուղարկում և երեկոյան ետ են վերադարձնում, գյուղերի փողոցներով անցնել չի լինում: Մեր բարի ուղեկիցը ժպտաց և ոչինչ չպատասխանեց:

Այդպես անցանք մի քանի գյուղի միջով: Ամենուրեք նույն մաքրությունը: Խնդրեցի Հովհաննես Չիլինկիրյանին.

- Կարելի՞ է կանգնել գյուղական տներից մեկի առջև, ևս ուղում ևմ ներս մտնել, տեսնել, ինչպես են ապրում և մի բաժակ ջուր խնդրել:

Հովհաննես Չիլինկիրյանը մեղմորեն ժպտաց ու ասաց.

- Սա Հայաստան չէ, որտեղ ամեն անցորդի առջև դուռը բացում են և ոչ միայն ջուր են տալիս, այլև հյուրասիրում են: Սա Եվրոպա է:

Այդպես էլ ոչ մի տան առջև չկանգնեցինք: Ավելի լավ էր Եվրոպային նայել հեռվից:

Մեր ճանապարհն անցնում էր խոր կիրճերով, մեկ վեր էր բարձրանում, մեկ էլ իջնում դեպի կիրճի հատակը: Ճանապարհի բոլոր կեռամաններում, որտեղ հնարավոր չէր եղել փորելով լայնացնել, կատարել էին հետևյալը: Կեռամանների նեղ հատվածում կանգնեցրել էին ամուր բետոնե սյուներ և դրանց վրա բետոնե ծածկով լայնացրել էին ճանապարհի այդ հատվածը ու դրանով երթևեկելը դարձրել անվտանգ: Ուսանելի փորձ է, որ կարելի է կիրառել նաև Հայաստանի լեռնային պայմաններում անցնող ճանապարհներով:

«ՁԵՁԻ ՍՅՈՒՐՊՐԻՋ ՄԸ ՊԻՏԻ ԸՆԵՄ»

Վերջապես Հովհաննես Չիլինկիրյանն ավտոմեքենան կանգնեցրեց մի խոր կիրճում կառուցված շինություն մոտ: Մառախուղ էր և շրջապատը լավ չէր երևում:

- Ձեզի սյուրպրիզ մը պիտի ընեմ,- ժպտալով ասաց Հովհաննես Չիլինկիրյանը:

- Այս խոր անդունդի մեջ Հովհաննես, ի՞նչ սյուրպրիզ պիտի ընես,- զարմացած հարցրեց Ժիրայր Նայիրին:

Պարզվեց, որ դա ճոպանուղու կայան էր: Ճոպանուղին կոչվում էր «Գլասիեր»: Ճոպանուղու վագոնիկը մեզ հանեց 2971 մետր բարձրության վրա: Դա Շվեյցարիայի ամենից բարձր ճոպանուղիներից մեկն էր: Կայանի շենքում կար հիանալի ռեստորան, որտեղ ճաշեցինք:

Մեր հարևանությամբ գտնվող սեղանի շուրջ նստած էին մի քանի ֆրանսուհի, որոնք աշխույժ դրուցում էին: Նրանցից մեկը խնդրեց իրենց խմբին լուսանկարել, ինչը, որ ես սիրով կատարեցի: Հետո նրանք հետաքրքրվեցին՝ որտեղի՞ց ենք եկել: Հովհաննես Չիլինկիրյանը պատասխանեց՝ Հայաստանից ենք: Ֆրանսուհիները ժպտացին և արտասանեցին. «Օ, Շարլ Ադնավուր»:

Կայանից աստիճանները տանում էին ավելի բարձր՝ լեռան գագաթը: Բարձրացանք ոտքով: Ես անհանգստանում էի Հովհաննես Չիլինկիրյանի համար, բայց նա հեշտությամբ հաղթահարեց վերելքը: Եվ ահա, մենք երեքով կանգնած ենք Յ հազար մետր բարձրություն ունեցող լեռան գագաթին, որը ծածկված էր ձյունով: Ես չհամբերեցի, մերկացա և ձյունով շփեցի մարմինս:

Երբևէ մտքովս չէր անցել, որ ինձ կվիճակվի կանգնել Ալպյան լեռնաշղթայի բարձր գագաթներից մեկի վրա և երևիսայի նման հրճվել: Իսկ Հովհաննես Չիլինկիրյանն էլ չէր թաքցնում իր ուրախությունը, որ մեզ պարգևել էր այդպիսի անկրկնելի հաճույք: Լուսանկարվեցինք:

Մեղանից ներքև ամպի սպիտակ քուլաները ծածկել էին ամեն ինչ և ոչինչ չէր երևում: Այնպիսի տպավորություն էր ստեղծվել, ինչպես ամպերից վերև օդանավով թռչելիս: Այդ բարձր գագաթին մնացինք մոտ 15-20 րոպե և վայելեցինք Ալպերի մաքուր օդը:

Նույն կերպ իջանք ներքև ու շարունակեցինք մեր ճանապարհը: Մոտավորապես ժամը 16-ին հասանք Գշտատ քաղաք, որը գերմանական կանտոններից մեկի կենտրոնն է: Գշտատի շենքերը տարբերվում էին մինչ այդ մեր տեսածներից: Այստեղ տներն աչքի էին ընկնում ծաղկամաններից կախված դանազան տեսակի ու գույնի ծաղիկներով պատված պատուհաններով ու պատշգամբներով:

ՀԱԿՈՐ ԱՎԱԳՑԱՆԸ

Նույն օրը, Երեկոյան ժամը վեցին վերադարձանք Լողան և Հովհաննես Չիլինկիրյանի հետ գնացրով մեկնեցինք Ժնև: Այստեղ, ժամը 20-ին ծանոթացանք Հ. Չիլինկիրյանի դուստր Շամիրի ամուսնու՝ Հակոբ Ավագյանի հետ:

Նա ոչ միայն գորգերի հայտնի մասնագետ է, այլև ակտիվ մասնակցում է Շվեյցարիայի հասարակական-քաղաքական կյանքին:

Հակոբը Ժնև է եկել Բեյրութից: Կարճ ժամանակ անց, նա իր ունակությունների շնորհիվ կարողացել է գտնել իր տեղը: Ի դեմս Հակոբի, ես տեսա Հայաստանին նվիրված հայրենասեր գործչի, որն իր հայանպաստ գործունեությունը վայելում է արժանի հարգանք ու համակրանք թե հայկական համայնքում և թե Շվեյցարիայի քաղաքական կյանքում: Հակոբը հանդիսանում է Շվեյցարիայում մեծ հեղինակություն ունեցող Քրիստոնա-դեմոկրատական կուսակցություն ընդհանուր վարչություն անդամ և այդ կուսակցության Ժնևի կանտոնի փոխնախագահ:

Հակոբը նոր էր վերադարձել Հայաստանից, որտեղ նա մեկնել էր Շվեյցարիայի Փեդերալ պառլամենտի պատգամավորների հետ միասին: Բնավորությունը այդ համեստ մարդը եռանդուն ջանքեր է գործադրել որպեսզի Շվեյցարիան ճանաչի հայոց ցեղասպանությունը:

Մեղ համար պարզվեց հետևյալը: Դեռևս 2002 թվականին Հայ-շվեյցարական բարեկամություն ընկերություն նախագահ Սարգիս Շահինյանը ներկայացրել է առաջարկություն հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին, բայց պառլամենտը մերժել է: Վերլուծելով իրավիճակը, Հակոբն առաջարկում է գործողությունները ծավալելու այլ տարրերակ: Եվ նա չի սխալվում:

Հակոբ Ավագյանը ցեղասպանության ճանաչման հարցը ներկայացնում է Քրիստոնա-դեմոկրատական կուսակցության երևելի գործիչ Ժան Կլոդ Վոդրոին: Վերջինս համաձայնվում է և ստանձնում հայոց ցեղասպանությունը ճանաչելու բանաձևի նախագիծը ներկայացնել պառլամենտի քննարկման: Սա արդեն հարցի լուծմանը տալիս էր նոր որակ, քանի որ ցեղասպա-

նությունը ճանաչելու առաջարկությունը ներկայացնում էր չվեյցարիացի, այն էլ այդքան ազդեցիկ գործիչը:

Բայց դա բավական չէր: Հարկավոր էր համառ ու տևական աշխատանք տանել պառլամենտում գործող խմբակցությունների հետ, որոնք նախկինում մերժել էին բանաձևի ընդունումը:

Զախերի հետ, որոնք առաջին քննարկման ժամանակ էլ քվեարկել էին ճանաչման օգտին, աշխատում էր Սարգիս Շահինյանը: Աջ խմբավորումների, սոցիալիստների և կանաչների հետ, որոնք առաջին քննարկման ժամանակ դեմ էին եղել ճանաչմանը, աշխատանքը տանում էր Հակոբ Ավագյանը:

Անհրաժեշտ եղավ առանձին-առանձին հանդիպել բոլոր պատգամավորների, խմբակցությունների ղեկավարների հետ, բացատրել հարցի էությունը, ներկայացնել ցեղասպանություն պատմությունը, դրա հետևանքները և այլն:

Իհարկե, պառլամենտի ներսում կատարվող աշխատանքն աննկատ չէր մնում և Շվեյցարիայում Թուրքիայի դեսպանն իր հերթին մեծ ջանքեր էր գործադրում հարցի քննարկումը ձախողելու համար: Թուրքիայի դեսպանը հենվում էր պառլամենտում գործող ծայրահեղ աջ պատգամավորների վրա: Նա փորձում էր նաև դիվանագիտական խողովակով ազդել Շվեյցարիայի Փեդերալ կառավարության վրա:

Ահա և եկավ հայոց ցեղասպանությունը ճանաչելու բանաձևի քննարկման օրը: Պառլամենտի այդ նիստին ներկա էին նաև Թուրքիայի դեսպանը, հյուպատոսը և 12 թուրք ժուռնալիստներ ու դեսպանության աշխատակիցներ:

Քննարկումը տևել է երկար և ընթացել է բավական բուռն: Ի վերջո հարցը դրվել է քվեարկության: Հայոց ցեղասպանությունը ճանաչելու օգտին քվեարկել է 102 պատգամավոր, դեմ՝ 57-ը: Դեմ են քվեարկել միայն ծայրահեղ աջերը: Քվեարկության արդյունքները հրապարակելուց հետո Թուրքիայի դեսպանն ու մյուսները ցուցադրաբար հեռանում են Շվեյցարիայի պառլամենտի նիստերի սրահից:

Հակոբ Ավագյանի նախաձեռնությամբ էլ պառլամենտում ձևավորվում է Շվեյցարական-հայկական բարեկամության ընկերություն, որի մեջ մտան 45 պատգամավորներ: Հենց այդ

խմբի ներկայացուցիչների հետ էլ Հայաստան էր մեկնել Հակոբ Ավագյանը:

Շվեյցարիայի պառլամենտի կողմից հայոց ցեղասպանությունը ճանաչելու բանաձևի ընդունումն ապացույց է այն բանի, թե ինչպես կարելի է այդ ուղղությամբ մյուս երկրներում աշխատանք տանել և հասնել հաջողության:

Ես հարկ համարեցի այսպես հանդամանորեն խոսել այդ մասին, քանի որ Հայաստանի մամուլը շատ ժլատ հաղորդում էր տվել Շվեյցարիայի պառլամենտի ընդունած բանաձևի մասին...

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հակոբ Ավագյանը մեր պատվին ճաշկերույթ էր կազմակերպել արարական ուստորանում:

Թող ընթերցողը չզարմանա, որ ես հաճախ եմ հիշում մեր ճաշելու մասին: Որովհետև դրանք միայն ճաշկերույթ չէին, այլ դրուցելու, մտքեր փոխանակելու ամեն հայի հուղող հարցերի մասին: Եվ այդ դրույցներն ինձ համար անչափ ուսանելի էին և կարևոր այսօրվա Սփյուռքի իրավիճակին ծանոթանալու համար:

Այդպիսին էր նաև Հակոբի կազմակերպած ճաշկերույթը, որին ներկա էր 15 մարդ, այդ թվում՝ Հովհաննես Զիլինկիրյանն ու Նազարեթ Սրմաքեչյանը: Մեր խոսակցության գլխավոր թեման Հայաստանի կացությունն էր, Ղարաբաղի հարցը, քանի որ ներկա գտնվողները առանձնապես դրանց մասին էին հետաքրքրվում:

Խոսք եղավ նաև Սփյուռքի գործերով նախարարություն ստեղծելու մասին: Զրույցի մասնակիցներից շատերի համար այդպես էլ հասկանալի չէր այդ նախարարության ստեղծման նպատակը: Քանի որ այս թեմայի շուրջ հետագա հանդիպումների ժամանակ էլ միշտ խոսք է բացվել, ուստի հարկ եմ համարում այստեղ ամփոփ կերպով ներկայացնել Սփյուռքի մեր հայրենակիցների հավաքական մտահոգությունը:

Նրանց հետաքրքրում էր, օրինակ, հետևյալ խնդիրը: Հայաստանից չի դադարում արտագաղթը: Գալիս են հազարներով, նաև ընտանիքներով, լեզու չգիտեն, չեն կարողանում հարմարվել տվյալ երկրի պայմաններին և աշխատանք էլ չեն գտնում: Ո՞վ պետք է հոգա նրանց մասին: Արդյոք, Սփյուռքի նախարարությունը զբաղվելո՞ւ է Հայաստանից արտագաղթած հայերի փիճակով, որոնք ցրված են աշխարհի շատ երկրներում և ի՞նչ է նրանց սպասում ապագայում:

Ճիշտ է, շատ զգույշ, բայց այնուամենայնիվ, իմ ունեցած հանդիպումների ժամանակ դրուցակիցներից ոմանք տարակուսանք էին հայտնում, ասելով, որ եթե այդ նախարարությունը ստեղծվել է Սփյուռքի նյութական միջոցները Հայաստան տանելու նպատակով, ապա պետք է իմանան, որ Սփյուռքն այդքան հարուստ չէ և հազիվ է իր գոյությունը պահպանում, մանավանդ, որ Սփյուռքում կան շատ պրոբլեմներ հատկապես հայապահպանության ասպարեղում: Նրանք բերում էին տարբեր գաղթօջախներից օրինակներ, որ փակվում են հայկական դպրոցները, գործող դպրոցներում պակասում են աշակերտները, մեծացել է ձուլման փտանգը:

Ժիրայր Նայիրին այս կապակցությամբ հիշեց, որ Սովետական Հայաստանի կառավարությունը մեծ ուշադրություն էր դարձնում Սփյուռքում գործող հայկական դպրոցներին, դրանց ապահովելով անհրաժեշտ քանակությամբ դասագրքերով, ուսումնական դանադան միջոցներով: Իսկ այսօր Հայաստանի անկախ հանրապետությունը այդ ուղղությամբ համարյա ոչինչ չի ձեռնարկում:

Իմ նրբանկատ դրուցակիցները շատ զգուշությամբ դժգոհում էին, որ մեծ դժվարություններով հավաքված նյութական, դրամական միջոցները Հայաստանում փոշիացվում են, չեն ծառայում իրենց նպատակին:

ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆՔ ԺՆԵՎ ՔԱՂԱՔԻՆ

Հոկտեմբերի 24-ի օրը Ժիրայր Նայիրիի Հետ անցկացրինք ազատ ուժիմով, ծանոթացանք Ժնև քաղաքին:

Մեր Հյուրանոցը գտնվում է քաղաքի կենտրոնում, Ժնևի լճից մի 150 մետր հեռու: Մենք իջանք լճափ, որտեղից բացվում է նշանավոր շատրվանի տեսարանը, որն ունի 130 մետր բարձրություն: Այդ շատրվանի ջուրը վերև է նետվում 1360 ձիաուժի հզորությամբ պոմպերի միջոցով 200 կմ/ժամ արագությամբ:

Ժնևի լիճը, որին ֆրանսիացիները տվել են Լեման անվանումը, ունի 80 կմ երկարություն և 14 կմ լայնություն, խորությունը 310 մետր է և ունի 582 քառ. կմ մակերես, որից 348 քառ. կմ համարվում է Շվեյցարիայի տարածք, մնացածը պատկանում է Ֆրանսիային:

Քայլեցինք 100 մետր երկարություն ունեցող լայնահուն Մոնրլանի կամուրջով և անցանք լճի աջ ափը: Լուսանկարվեցինք Ժան-Ժակ Ռուսոյի անունը կրող գեղատեսիլ կղզու դիմաց: Դիտեցինք Կարլոս 2-րդ հերցոգի հուշարձանը: Այստեղից էլ սկսվում էր Անգլիական այգին, որի մոտքի մոտ գործում էր ծաղիկներից պատրաստված հսկայական ժամացույցը:

Մեր ուշադրությունը գրավեց նավահանգստում գտնվող նավը, որն այստեղ է կայանվել 1904 թվականից: Ժիրայր Նայիրին, որ նախկինում էլ էր եղել Ժնևում, լավ գիտեր քաղաքը, սիրով ինձ ցույց էր տալիս ու պատմում դրա մասին: Նա ինձ տարավ Հին քաղաքի նշանավոր Սուրբ Պետրոսի տաճարի մոտ, որի կառուցումը սկսվել էր 1150 թվականին և շարունակվել էր մի քանի դար: Այս տաճարում է քարոզել բողոքական Կալվինը:

Այնուհետև անցանք Ժնևի ամենահին հրապարակը, որի վրա գտնվում է Արդարադատության պալատը՝ կառուցված 18-րդ դարի սկզբին: Ժնևի գլխավոր փողոցը՝ Գրան Ռյուն, որը գտնվում է մեր Հյուրանոցի հարևանությամբ, ամբողջությամբ պահպանում է իր հին տեսքը: Այստեղ 15-18-րդ դարերում կառուցված բոլոր շինությունները՝ մեկը մյուսից գեղեցիկ, պահպանվում են խնամքով:

Անցնում էինք Ժնևի գեղեցիկ փողոցներով և հիանում չքեղ

ցուցափեղկեր ունեցող խանութներով, որոնցում վաճառվում են դանազան տիպի ժամացույցներ, դարդեղեն, հագուստ՝ բարձր որակի, բայց և շատ թանկ գներով:

Որ փողոցով էլ որ անցնում էինք, հանդիպում էինք հյուրանոցի կամ ռեստորանի: Ժնև քաղաքում գործում է 190 հյուրանոց՝ 13 հազար տեղով:

Օրվա երկրորդ կեսին Ժիրայր Նայիրիի հետ այցելեցինք Հակոբ Ավագյանի օֆիս:

ՀԵՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԸ

Հոկտեմբերի 24-ին առիթ ունեցանք ծանոթանալու Հերման Սարյանի հետ: Հերման Սարյանը 23 տարի աշխատել է Ժնևում գտնվող ՄԱԿ-ի եվրոպական բաժանմունքում և զբաղվել է ԱՖրիկայի երկրների հարցով: 23 տարվա ընթացքում նա ձևոք է բերել դիվանագիտական մեծ փորձ: Հերման Սարյանը հաճելի դրուցակից է, լավ գիտե հայոց պատմությունն ու զբաղանությունը, ունի դիվանագետին սազող նուրբ հումոր: Նա իր դիվանագիտական աշխատանքից շատ հետաքրքիր դեպքեր պատմեց: Ես նրան առաջարկեցի այդ ամենի մասին գրել հուշեր: Ոոստացավ:

Շուտով, ինչպես պայմանավորվել էինք, մեզ միացավ Նադարեթ Սրմաքեչյանը: Մեր դրույցը շարունակվեց ռեստորանում: Այդ ընթացքում մեզ մոտեցավ մատուցողուհիների ղեկավարը: Ներողություն խնդրեց, որ միջամտում է մեր խոսակցությունը և ներկայացավ՝ Դոմինիկա Մուրադյան: Ասաց, որ հայ է, բայց հայերեն չի խոսում: Պատմեց, որ հայրը ամուսնացած է եղել ֆրանսուհու հետ: Մահացել է, երբ Դոմինիկան հինգ տարեկան է եղել: Հորը շատ ազդու է հիշում, բայց մայրը միշտ նրան հիշեցրել է, որ իր հայրը հայ է եղել և պահպանել է նրա ազգանունը: Դոմինիկան Ժնև աշխատանքի էր եկել Ֆրանսիայից և առաջին անգամ հայերի էր հանդիպում: Նա անչափ հուզվեց և հաղիվ էր դսպում իր արցունքները: Մենք էլ աղղվեցինք: Լուսանկարվեցինք նրա հետ հենց ռեստորանի սրահում և խոստացանք, որ

նորից իրեն կայցելենք: Չհաջողվեց: Երբ ինձ ճանապարհում էին՝
 Հերման Սարյանին ասացի.

- Դոմինիկային չմոռանաս, օգնիր նրան, որ հայերեն խոսել
 սովորի:

Խոստացավ:

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ

Երեկոյան մեղ միացան Թալին Ավագյանը, Արթեն Շելեֆյանը:
 Նազարեթ Սրմաքեչյանը խոսեց արևմտահայությանը համախմբելու
 անհրաժեշտությունը: Նրա հետ համաձայնվեց ժիրայր Նայիրին:
 Իսկ Արթենը բացատրեց թե համախմբման համար հարկավոր է
 հրավիրել համահայկական համագումար և ասաց, որ այդ
 համագումարը պետք է իր առջև դնի հետևյալ նպատակը.

Առաջին. Նպաստել հայոց ցեղասպանությունից ճանաչմանն
 ու դատապարտմանը:

Երկրորդ. Դնել պահանջատիրություն ու հատուցման հարցը:

Երրորդ. Նյութական օգնություն կազմակերպել Հայաստանին:

Ինչպես միշտ, մեր ճաշկերույթը վերածվեց հետաքրքիր բանավեճի:
 Այդպես է միշտ: Մենք միշտ չէ, որ կարողանում ենք միևնույն
 նպատակին հասնելու համար միասնական տեսակետ մշակել:
 Հենց այդ էլ նկատի ունենալով Նազարեթ Սրմաքեչյանը փաստեց,
 որ մեղ՝ հայերիս համար ամենից առաջ անհրաժեշտ է ինչպես
 Հայաստանում, այնպես էլ Սփյուռքում հաղթահարել այդ բարդույթը:
 Դրանով էլ կսկսվի մեր աշխատանքը: Երեկոյի ընթացքում
 ցանկություն հայտնեցի այցելել Մկրտիչ Շելեֆյանի շիրիմին:

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՅՅԵԼԱԾ ՎԱՅՐԵՐՈՎ

Հոկտեմբերի 25-ի առավոտյան Ժիրայր Նայիրիի հետ մեկնեցինք Լոզան: Այստեղ կայարանի շենքի մոտ մեզ դիմավորեց Հովհաննես Զիլինկիրյանը և նրա ուղեկցութեամբ շարունակեցինք մեր ճանապարհորդությունը Ռուբեն Սևակի այցելած վայրերով: Առաջին կանգառնը կատարեցինք պանիրի արտադրության կենտրոն Գրյուերում:

Այստեղ Ռուբեն Սևակի ժամանակներից սկսած գործում է չվեյցարական պանիրի խոշոր գործարանը և թանգարանը: Այստեղ պանիր սկսել են պատրաստել միջնադարից: Առաջին պանրագործները իրենց արտադրանքի խորհրդանիշ ընտրել են արագիլը: Այստեղից էլ Գրյուեր, որը նշանակում է «արագիլների երկիր»:

Մեկ կովն օրվա մեջ ուտում է 100 կգ կանաչ խոտ, խմում է 85 լիտր ջուր և ամեն օր տալիս է 25 լիտր կաթ: Գործարանում 400 լիտր կաթից ստացվում է 35 կիլոգրամ քաշով պանիրի մեկ գլուխ: Պղնձե յուրաքանչյուր չանի տարողությունը 4.800 լիտր է: Այդ քանակությամբ կաթից ստացվում է 12 գլուխ պանիր, յուրաքանչյուրը՝ 35 կգ քաշով: Այնուհետև պանիրի գլուխները 5-12 ամիս տեղադրությամբ պահվում են աղաջրի մեջ:

Թանգարանը տեղավորված է մի հսկայական շինության մեջ, որտեղ այցելուները հնարավորություն ունեն վերևից հետևել պանրի պատրաստման ամբողջ պրոցեսին:

Թանգարանը դիտելուց, այցելուների մատչանում Ժիրայր Նայիրիի հետ գրառում կատարելուց հետո մեկնեցինք ոչ շատ հեռու գտնվող Գրյուեր գյուղ: Այստեղ այցելուներն այնքան շատ են լինում, որ ճանապարհի ներքևում կանգնած ոստիկանը արգելում է ավտոմեքենաներով մտնել գյուղ:

Հովհաննես Զիլինկիրյանը կանգնեցրեց ավտոմեքենան և մենք նրա ուղեկցությամբ դեպի գյուղ տանող բլուրի վրա զգված փայտե լայն կոճերից պատրաստված աստիճաններով բարձրացանք վերև: Անցանք գյուղի փողոցներով, ամենուրեք տիրում էր իդեալական մաքրություն: Ցանկանում էի մտնել գյուղի դպրոց, բայց պարզվեց, որ այդ օրը դաս չկար:

«ԵԿԵՔ ՀԱՄԲՈՒՐՎԵՆՔ»

Գրյուեր գյուղից շարունակեցինք մեր ճանապարհը դեպի Շվեյցարիայի մայրաքաղաք Բեռն: Ցերեկվա ժամը 4-ին հասանք Բեռն: Ինչպես մյուս քաղաքներում, այնպես էլ Բեռնում առաջին խնդիրն էր գտնել հարմար ավտոկանգառ: Իմիջիայրոց Շվեյցարիայի բոլոր քաղաքներում կառուցված են մինչև 5-6 հարկ ունեցող ստորգետնյա ավտոկանգառներ, որոնց մուտքի մոտ յուսատախտակը ցույց է տալիս, թե որ հարկում կանգառի քանի ադատ տեղ կա:

Հովհաննես Չիլինկիրյանը, որը լավ գիտի Շվեյցարիայի քաղաքները, արագորեն գտավ հարմար ավտոկանգառը: Մի երկու-երեք ժամ քայլեցինք Բեռնի փողոցներով: Եղանք Հանրապետութան պառլամենտի հրապարակում, որը բավականաչափ մարդաշատ էր: Հնչում էր երաժշտությունը: Ելույթ էր ունենում ինչ-որ երաժշտական խումբ, որի յուրաքանչյուր կատարում ուղեկցվում էր աղմկալից կանչերով ու ծափերով: Հենց այդ հրապարակի կենտրոնում կար մրգի շուկա: Կատարվում էր աշխույժ առևտուր, բայց դարձանային այն էր, որ այդ շուկան շատ մաքուր էր:

Այդ հրապարակից սկիզբ էր առնում կենտրոնական փողոցը, որով անցնում էր միայն տրամվայր: Տրանսպորտի մյուս միջոցների մուտքն այդ փողոցով արգելված էր: Փողոցի երկու կողմում գործում էին բազմաթիվ խանութներ և այդ պատճառով մարդաշատ էր:

Մեր ուշադրությունը գրավեց հետևյալ տեսարանը: Այդ փողոցի հենց սկզբում դրված սեղանին մոտենում էին մարդիկ: Սեղանի մոտ նստածը մոտեցողներին ցույց էր տալիս ձեռքին բռնած թուղթը և ինչ-որ բացատրություն էր տալիս: Ոմանք լսում էին նրան ու ստորագրելով հեռանում: Կային նաև այնպիսիները, որոնք մոտենում էին, լսում այդ մարդուն ու անտարբեր հեռանում: Մենք էլ մոտեցանք այդ սեղանին, տեսնելու, թե այդ ինչ են ստորագրում:

Երբ մի փոքր հեռացանք ստորագրահավաքի սեղանից, Հովհաննես Չիլինկիրյանին խնդրեցի բացատրել, թե ինչ նպատա-

կով է այդ ստորագրահավաքը կազմակերպվում: Հենց այդ պահին, ստորագրահավաք սեղանից մի քանի քայլ հեռու մեր դեմ դուրս եկավ մի սևամորթ աղջիկ: Նա մեղ ժպտաց և ցույց տվեց ձեռքին պահած մեծ վահանակը՝ ինչ-որ մակագրություններ:

Հովհաննես Չիլինկիրյանը թարգմանեց այդ մակագրություններ՝ «Եկեք համբուրվենք»: Ես դա այլ կերպ հասկացա, որն անկատ չմնաց նրա ուշադրությունից: Հովհաննես Չիլինկիրյանը մեզ բացատրեց, թե ինչ է կատարվում:

Պարզվեց, որ ստորագրահավաքի կազմակերպման նպատակն է տեղական իշխանություններից պահանջել Բեռնից հեռացնել սևամորթներին, որոնց թիվը գնալով, ընդհանրապես, Շվեյցարիայում չատանում է: Իսկապես, ինչպես ժնևում, այնպես էլ Լոդանում ու մյուս քաղաքներում մենք հանդիպում էինք մեծ թվով Աֆրիկայից եկածների: Նրանք աշխատում են սպասարկման ոլորտում՝ ռեստորանների մատուցողներ, տաքսու վարորդներ, վաճառողներ և այլն:

Իսկ սևամորթ աղջիկն իր վահանակի անսովոր մակագրություններ բողոքում էր ստորագրահավաքի դեմ, անցորդներին հասկացնելով, որ իրենք ևս ունեն մարդկային ջերմ վերաբերմունքի կարիք:

- Այսպիսին է Եվրոպայի վերաբերմունքը, - ասաց Հովհաննես Չիլինկիրյանը, և շարունակեց, - ամեն օր հեռուստատեսությունը մեզ ներկայացնում է Աֆրիկայում ապրող ժողովուրդների թշվառ վիճակը: Եվ այդ թշվառության համար ուղղակի պատասխանատու է Եվրոպան, որը դարեր շարունակ կեղեքել է նրանց ու Աֆրիկայի գաղութների հաշվին ստեղծել է իր բարեկեցիկ կյանքը: Եթե Եվրոպան ժամանակի ընթացքում թալանելու, կեղեքելու, ստրկացնելու և ոչնչացնելու փոխարեն մարդասիրական վերաբերմունք դրսևորեր Աֆրիկայի ժողովուրդների նկատմամբ, ապա նրանք ևս եվրոպացիների նման կստեղծեին իրենց համար բարեկեցիկ ապրելու պայմաններ ու այսօր չէին թափառի եվրոպական երկրներում և արտաքսման վտանգի առջև չէին կանգնի:

Տխուր էր, անչափ տխուր էր այս ամենը և մենք շտապեցինք հեռանալ Շվեյցարիայի մայրաքաղաքից:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԸ

Երեկոյան ժամը 6-ին հասանք Ինտերլաքեն քաղաք: Այդ քաղաքի անվանումը նշանակում է «Լճերի միջև»: Թեև ուշ էր, բայց որոշեցինք ծանոթանալ քաղաքին: Քաղաքը բաժանվում է երկու ոչ մեծ լճերի միջև: Անցանք փողոցներով, հիացանք մաքրությամբ:

Երբ մոտեցանք Ինտերլաքենի ամենից մեծ հյուրանոցին՝ «Հոթել Յենտրայ»-ին, ժիրայր Նայիրին նկատեց, որ դրա բարձր տանիքին ծածանվում է Ռուսաստանի Դաշնության պետական դրոշը: Տեսնելով այդ դրոշը, ժիրայր Նայիրին ու Հովհաննես Չիլինկիրյանը իրենց ուրախությունն արտահայտեցին: Եվ դա առիթ տվեց, որպեսզի հյուրանոցում տեղավորվելուց հետո խոսենք Ռուսաստանի, հայ-ռուսական հարաբերությունների մասին:

Ինձ անչափ հետաքրքրում էր իմ ընկերների դիրքորոշումն այդ հարցերի վերաբերյալ: Ճիշտ է, նրանք մամուլում մշտապես հանդես են գալիս Ռուսաստանի հետ Հայաստանի ամուր դաշինքի հաստատման օգտին: Նրանց հողվածներին ծանոթ եմ և համաձայն եմ նրանց որդեգրած գաղափարախոսությանը: Բայց մի բան է, երբ կարդում ես, մեկ այլ բան է, երբ կենդանի զրուցում ես այն մարդկանց հետ, որոնց հայացքները կիսում ես:

Հովհաննես Չիլինկիրյանն ապրում է Ֆրանսիայում, ժիրայր Նայիրին՝ Լիբանանում: Նրանք հայ-ռուսական հարաբերություններին դիտում են հեռվից, այնպես, ինչպես հեռվից դիտում ես շախմատի խաղը: Այդ դեպքում դրսից դիտողն ավելի լավ է տեսնում, թե ինչ է կատարվում դաշտում: Այդպես էլ հայ-ռուսական հարաբերություններին դրսից նայելու ժամանակ:

Ահա, այս առումով էլ իմ ընկերների դիրքորոշումը, նրանց արտահայտած գաղափարները, փաստերի վերլուծությունն անչափ ուսանելի են: Նրանք միանգամայն լավ են պատկերացնում ու խորապես համոզված են, որ հայ-ռուսական բարեկամությունն այլընտրանք չունի և ավստոսանքով էին փաստում, որ այսօր Հայաստանում, նաև Սփյուռքում դեռևս կան մարդիկ, որոնք շարունակում են հույսը կապել Եվրոպայի, Ամերիկայի հետ:

Մեր զրույցը շարունակվեց մինչև ուշ գիշեր: Խոսեցինք շատ խնդիրների մասին: Արծարծեցինք նաև Հայաստանի աղատագրության հայ գաղտնի բանակի՝ ԱՍԱԼԱ-ի թեման:

Հովհաննես Չիլինկիրյանն ասաց, որ կարդացել է ԱՍԱԼԱ-ի մասին գրած իմ «Չմոռանանք...» աշխատությունը և այդ կապակցությամբ պատմեց, թե ինչպես իր մտերիմ բարեկամ, հայ բողոքական հոգևորական Հարություն Հելվեճյանի հետ միասին 1984 թ. սեպտեմբերի 17-ին ստեղծել են հայ քաղաքական բանտարկյալների օգնության կենտրոնական հանձնախումբ և դրադվել են Գաղտնի բանակի ձերբակալված մարտիկներին օգնելով: Նրանք Նաղարեթ Սրմաքեչյանի հետ այցելել են շվեյցարական բանտում գտնվող մարտիկ Մարտիրոս Ժամկոչյանին և մյուսներին:

Մահից առաջ Հ. Հելվեճյանը կտակել էր, որ իր գերեզմանի վրա հրաժեշտի խոսք ասի և հող լցնի մտերիմ ու պայքարի ընկեր Հովհաննես Չիլինկիրյանը: Նա կատարում է իր հավատարիմ ընկերոջ վերջին ցանկությունը և Հ. Հելվեճյանի հուղարկավորությունը կազմակերպում է Մարսել քաղաքում:

«...ՀՐԱՇՔԸ ԴԵՌ ԱՌՋԵՎՈՒՄ Է»

Հոկտեմբերի 26-ին, առավոտյան ժամը 8-ին դուրս եկանք Ինտերլաքենից և շարժվեցինք դեպի Հարավ: Ինտերլաքենից մոտ 30 կմ հեռու, մայրուղուց դուրս եկանք և մեր ճանապարհը շարունակեցինք մի գեղատեսիլ կիրճով: Հասանք ճանապարհի վերջում գտնվող գյուղը՝ Լյուտերբրունեն: Այդ գյուղը երեք կողմից շրջապատված էր մոտ 200-300 մետր բարձրությամբ ուղղաձիգ ժայռերով, որոնք ավելի շատ նման էին հարթ պատի:

Մենք դեռ չէինք հասցրել հիանալ բնության այդ պատկերից, երբ Հովհաննես Չիլինկիրյանն ասաց.

- Հրաշքը դեռ առջևում է, - և մեզ առաջնորդեց դեպի գյուղի արևելյան կողմում գտնվող ժայռ-պատը:

Հասանք մի գետակի մոտ, որը ուժգին աղմուկով դուրս էր հորդում ժայռի կրճքից: Հովհաննես Չիլինկիրյանը մեզ համար

տոմսակ գնեց և քարե աստիճաններով խորացանք թափվող ջրի ուղղությամբ:

Մեր սիրելի առաջնորդը յուժ էր և ես մտածում էի, թե սա՛ է հրաշքը: Բայց սխալվեցի: Մի քանի աստիճան էլ բարձրացանք ու ժայռի կտևից երևաց հրապարակի վրա բացված մուտքը: Հենց այստեղից էլ սկսվեց հրաշքը: Մտանք ներս: Հսկայական խոռոչի մեջ, որը լայնացվել էր տեխնիկայի միջոցով, կառուցված էր ճուղանուղի: Մտանք վազոն-խուցը և այդ խոռոչով բարձրացանք 200 մետր:

Երբ դուրս եկանք ճուղանուղու խցից, մեզ աշխատողը ցույց տվեց դեպի վերև բարձրացող աստիճանները: Աստիճանները զցված էին այնպես, որ երևում էր վերևից գահավիժող ջուրը: Ուրապատույտ աստիճաններով բարձրացանք ևս 100 մետր: Բարձրանում էինք և հիանում բնության ստեղծած այդ, իսկապես, հրաշք-ջրվեժով: Ռուբեն Սևակն այս ջրվեժն է նկատի ունեցել ստորև բերվող բանաստեղծության մեջ գրած «մութ ջրվեժ» արտահայտությամբ:

Նույն կերպ իջանք ցած և դուրս եկանք ժայռի խոռոչից: Չհամբերեցի և լողացա այդ հրաշք-ջրվեժից սկիզբ առնող գետակի մեջ:

Այստեղից ետ վերադարձանք և նորից մտանք մայրուղի: Մեր ճանապարհն անցնում էր Գրիմզել Պաս լեռնանցքով: Անրնդհատ բարձրանում էինք: Վերջապես հասանք լեռնանցքի բարձր կետին: Այստեղ մի գեղատեսիլ լճի ափին, մոտ 2500 մետր բարձրության վրա գտնվում էր «Գրիմզել» Հյուրանոցը, որի առջևի հրապարակը լիքն էր բազմաթիվ ավտոմեքենաներով ու մոտոցիկլետներով: Հյուրանոցի առջև, սեղանների շուրջ նստած էին բազմաթիվ տուրիստներ: Այս լճափին մնացինք մոտ մեկ ժամ և վայելեցինք Ալպյան լեռների թարմ օդը:

«ՌՌՆԳԼԵՐ» ՍԱՌՑԱԴԱՇՏԸ

Այստեղից ժամը 12-ին շարունակեցինք մեր ճանապարհը, որն անցնում էր Ֆուրկա Պաս լեռնանցքով, որը տանում էր 2400 մետր բարձրություն վրա գտնվող «Ռոնգլեր» կոչվող սառցադաշտը: Մեր ավտոմեքենան կանգնեցրինք սառցադաշտից մի քանի մետր բարձրություն վրա կառուցված հյուրանոցի դիմացի հրապարակում և աստիճաններով իջանք դեպի սառցադաշտ:

Ճանապարհի տարրեր կետերում դրված էին ցուցանակներ, որոնց վրա գրված տարեթվերը ցույց էին տալիս, թե որ թվականին սառցադաշտը ինչ մակարդակի վրա է եղել: Առաջին ցուցատախտակի վրա գրված էր 1936 թվականը: Հաջորդի վրա նշված էր 1947 թվականը: Դրանցից մեկը մյուսից ցած էր գտնվում 15 մետրով: Դա նշանակում էր, որ 1937 թվականից մինչև 2008 թվականը սառցադաշտը իջել էր 50 մետրից ավելի: Սառցադաշտից սկիզբ է առնում Ռոն գետը, որը թափվում է Միջերկրական ծով:

Այդ սառցադաշտն ուներ 5-6 քառակուսի կիլոմետր տարածք: Սառցադաշտի եզրից փորված էր երկու մետր բարձրություն ունեցող թունել, որն ուներ մոտ 500 մետր երկարություն: Ինչպես բոլոր տուրիստները, մենք էլ մտանք այդ սառցե թունելը և քայլեցինք մի հարյուր մետր: Եվ հրաշք էր և սարսափելի: Առաջ չկարողացանք շարժվել, քանի որ թունելի հատակն արդեն լցված էր ջրով:

Սառցադաշտի այն հատվածը, որի տակ փորված էր թունելը, արևի ճառագայթներից պաշտպանելու նպատակով, դրսից ծածկված էր մի հսկայական ծածկոցով: Լուսանկարվեցինք:

Երբ իջնում էինք դեպի սառցադաշտ տանող քարքարոտ ուղծվարին ճանապարհով, լսեցի ոուսերեն խոսակցություն: Ետ նայեցի: Սոսողները կանայք էին: Նրանց բարևեցի ասելով. «Հայրենակիցներ, եկեք ձեզ օգնեմ»: Կանայք հրաժարվեցին օգնությունից և ասացին, որ ոուս չեն: Այնպես ստացվեց, որ նրանք հաճախ երևում էին մեր կողքին, բայց այլևս ոուսերեն չէին խոսում: Ժիրայր Նայիրին կատակելով ինձ սփոփում էր ասելով, թե ոուսների մեջ էլ են լինում հայրենիքից հրաժարվողներ:

Մոտ մեկ ժամ վայելեցինք սառցադաշտի հրաշալի օդը: Ինչպես ես, այնպես էլ Ժիրայր Նայիրին սառցադաշտերի մասին գաղափար ունեինք դասագրքերից և կինոֆիլմերից: Հիմա դժվարանում եմ նկարագրել սառցադաշտից ստացած մեր տպավորությունը: Միայն ասեմ, որ հարկավոր է սեփական աչքով տեսնել սառցադաշտը՝ թե իր հմայքով և թե իր սարսափ առաջացնող պատկերով...

ՇԱՄՊԵՐԻ ԳՑՈՒՂՈՒՄ

Նորից հաղթահարեցինք Ֆուրկա Պաս լեռնանցքը և բռնեցինք դեպի Լոդան տանող ճանապարհը: Անցանք Վիսպ, Սիոն քաղաքներով և Մոնտե քաղաք չմտած դուրս եկանք մայրուղուց:

- Այս ճանապարհը, - ասաց Հովհաննես Չիլինկիրյանը, - վերջանում է Շամպերի գյուղում:

Ոլորապտույտ ճանապարհով բարձրացանք լեռների գրկում տեղավորված գյուղը: Գյուղի մուտքի մոտ Հովհաննես Չիլինկիրյանը կանգնեցրեց ավտոմեքենան և մեզ առաջարկեց հետևել իրեն: Նա մեզ տարավ մի փոքրիկ մատուռի մոտ: Մատուռի պատին փակցված ցուցանակից պարզվեց, որ դա կառուցվել է 1866 թվականին: Մատուռը կոչվում էր Շապել դե Շավայն:

Հովհաննես Չիլինկիրյանը պատմեց, որ այս մատուռն իր համար ունի շատ թանկ նշանակություն, քանի որ այստեղ Ռուրեն Սևակն ու Յանի Ապելը խոստովանել են իրենց սիրո մասին և երգվել մինչև կյանքի վերջը հավատարիմ մնալ միմյանց:

Մենք ակնածանքով մտանք մատուռ: Փոքրիկ սրահում դրված էր մի քանի փայտե նստարան, իսկ բեմի վրա՝ մի սրբապատկեր: Լուսանկարվեցինք: Մտանք գյուղ: Քայլեցինք գլխավոր փողոցով: Նույն մաքրությունը, ինչպես մեր բոլոր եղած բնակավայրերում:

Մեր այցելած բոլոր գյուղերում, փողոցներից ոչ մեկում աղբյուր չտեսանք, չնայած, որ գտնվում էին բարձր լեռների վրա: Բայց, ահա, Շամպերի գյուղի գլխավոր փողոցի վրա աղբ-

յուր տեսանք: Ես հաճույքով խմնցի այդ աղբյուրի սառնորակ ջուրը:

- Հավանաբար,- ասաց Հովհաննես Ջիլինկիրյանը,- Ռուբենն ու իր սիրած աղջիկն էլ են խմել այս աղբյուրի ջուրը:

Հովհաննես Ջիլինկիրյանը պատմեց, որ Ռուբենն ու Յանին Շամպերի գյուղում եղել են 1910 թ. օգոստոսի 20-ին: Հենց այստեղ էլ Ռուբենը գրել է «Սիրոյ ու մահուան երգը» բանաստեղծությունը, որի հիման վրա մի քանի տարի առաջ Երևանում կոմպոզիտորներից մեկը գրել է երաժշտություն: Նրան Երևանից ուղարկել են այդ երաժշտության սկավառակը, բայց, ափսոս, որ դրա վրա չի գրվել Ռուբեն Սևակի անունը:

Ստորև բերում եմ այդ բանաստեղծությունն ամբողջությամբ.

«Իմ կեանքըս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ,
Եղբրական ու միամիտ, սեւ ողբերգ
Իմ սիրտըս թող անհունին մէջ վէրք մ'ըլլայ,
Հսկայական ու տխրօրէն քաղցըր վէրք,
Իմ կեանքըս թող աղաչաւոր երգ մ'ըլլայ...»:

Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական,
Իմ տրտմութիւնս Աստուածներու ցաւին պէս,
Քո՛յր, սրտիս մէջ ինչ խավարներ, վիհեր կան,
Զոր նայուածքովդ կ'ոսկեզօծես ու կ'օրհնես,
Ես կը սիրեմ իմ տրտմութիւնս դիւթական...»:

Եկո՛ւր ինծի, լուսնակին պէս գեղեցիկ,
Եկո՛ւր ինծի, լո՛յս ու ցնցում հեւալով
Քու արծաթի շողերուդ մէջ սլացիկ
Լուսաւորէ աւերակներըս լալո՛վ,
Ես Մահն եմ, եկ ինձ կեանքին պէս գեղեցիկ...»:

Իմ կեանքըս թող առուին երգին պէս ըլլայ,
 Ու երգս անուանդ կրկնումն ըլլայ թող յաւե՛րժ,
 Իմ կեանքըս թող մո՛ւթ ջրվէժին պէս ըլլայ.
 Ու դէպի քեզ անկում մ'ըլլա, գահավէժ,
 Իմ կեանքըս թող առուի երգին պէս ըլլայ...:

Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի պէս,
 Ուր խաւարներ կը փոթորկին մոլեգին,
 Երկու աչերդ՝ աստուածներու սկիհին պէս,
 Տո՛ւր ինձ անոնց մէջ սրբացնել իմ հոգին,
 Ես կը սիրեմ երկու աչերդ վիհի պէս...:

Եկուր ինձի, քեզ կ'ըղձայ շունչըս անզօր...:
 Եկուր, ես մո՛ւթ բաներ պիտի քեզ ըսեմ
 Սիրոյ պէս քաղցրը ու Մահուան պէս հզօր,
 Գերեզմանիս լացող սիւքին պէս նըսեմ
 Եկուր ինձի, քեզ կ'ըղձայ շունչըս անզօր...:

Իմ կեանքըս թող կորած նաւուն պէս ըլլայ,
 Շունչդ ուռեցնէ ծեր առագաստըս անա՛հ,
 Մի, մի լսեր յոգնած հոգիս որ կու լայ,
 Տար զիս Սիրոյ կղզիներէն դէպի Մահ,
 Իմ կեանքըս թող կորած նավուն պէս ըլլայ...»:

Ավելի ուշ կանդրադառնամ Ռուբեն Սևակի սիրո թեմայով գրված բանաստեղծությունների վերաբերյալ իմ մտորումներին:

Շամպերի գյուղում, ինչպես երևում էր, ամեն ինչ մնացել էր անփոփոխ: Միայն մեկ-երկու տեղ երևացին նոր կառուցված տներ: Բնակիչները մեզ հետաքրքրությամբ էին նայում, քանի որ ամեն ինչ դիտում էինք ուշադրությամբ:

Շամպերի գնալու ժամանակ մեր ուշադրությունը գրավեց ուղղաթիռի օգնությամբ ճանապարհին մոտ գտնվող բացատում ինչ-որ շինություն կառուցումը: Երբ վերադառնում էինք, ուղղաթիռը շարունակում էր աշխատանքը: Արդեն շինություն կտուրն էին կապում...

«ՓՈՒՆԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ»

Հետագայում, 1913 թ. Ռուրեն Սևակը գրել է «Փոխան Հարսանիքի» պատմվածքը, որտեղ նկարագրել է նաև իր ամուսնությունը:

Ահա այդ հատվածը. «Օր մը, ես այ իմ ճակատագրիս կը հնազանդէի՝ իմ լաւագոյն կէսիս միանայով:

Բայց իր պսակէն (նկատի ունի ընկերոջ ամուսնությունը՝ Վ. Պ.) որքան տարրեր եղաւ մերինը՝ հակառակ ծայրայեղութիւն:

Առանց թմրուկի, առանց հանդիսաւորութեան հարսնիք մը, քաղաքական այն պարզ հարսանիքը՝ որ Եւրոպան կը պարտադրէ հաւատացեալին այ, ուրացողին այ, հարուստին այ, աղքատին այ:

Զուիցերիացի քաղաքապետը ամուսնական պայմանադրութիւն մը ներկայացուց մեզի՝ երկու վկաներու առաջ:

- Կ'ուզէ՞ք ստորագրել, **Օրիորդ...**:

- Այո, պարոն,- ըսաւ հարսը՝ գրչի համարձակ ստորագրութիւն մը պառկեցնելով թուղթին վրայ:

- Շնորհակալ եմ **Տիկին**, - պատասխանեց քաղաքապետը:

Ու ամէնն այսչափ: Այդ վայրկեանէն Օրիորդը Տիկին եղաւ:

Եւ սակայն,- անկեղծ խօսք մը կ'ուզէ՞ք,- այդ չարութիւնը դիս վիրաւորեց:

Այդ կանխաւ պատրաստուած թուղթը՝ յարձակողական ու պաշտպանողական հողի վրայ գրուած երկուստեք ստորագրուած վաճառականական պայմանադրութեան մը վերածեց մեր տարտամ սէրերը, անշրջագիծ անուրջները, ինքնայօժար նուիրումները, յաւիտենի խոստումները...:

Ու Սէրը, որուն համար Սողոմոն «Մահուան չափ դօրաւոր է» կ'ըսէ, առուտուրի մը չափ խախուտ եղաւ, որովհետեւ Օրէնքը՝ մեզ միացնելու ժամանակ՝ բաժնուելու պայմաններն այ կը մատնանշէր...:

Այս բոլոր օրինական շղթաներուն ծանրութիւնը թեթևացնելու համար երկնային օրհնութիւն մը կը պակսէր: Հարսն այ շուտով նշմարեց այդ պակասը:

- Քանի որ,- ըստ,- մեր ամուսնութեան համար մեծ ծախսեր չբրինք, «փոխան հարսանիքի» դժբախտ աղջիկ մը ուրախացնենք այդ դրամով. ես նշանուած որրուհի մը գիտեմ որ պսակուելու համար միջոց չունի, թող իր ուրախութիւնը մեզի համար օրհնութիւն մը ըլլայ...:

«Մեծ միտքերը սիրտէն կը ծնին», կ'ըսէն, այսինքն կինէն...:

«Փոխան հարսանիքի»...: Այդպէս որոշեցինք, ու այդպէս ալ բրինք:

Ու մեր ուրախութիւնը աւելի կատարեալ ընելու համար, մեկնեցանք Փարիզ՝ հայ եկեղեցիին մէջ փնթոնելու այն, ինչ որ կը պակսէր Լօզանի քաղաքատան:

Բարի քահանայ մը մեզ դիմաւորեց ժպտելով.

- Բայց դիւ գտնելէ առաջ՝ գանձապետ էֆենտին պէտք է գտնէիք.- ըստ:

Քաղաքը տակնուվրայ ընելէ վերջ՝ գանձապետ էֆենտին ալ գտանք գոհարավաճառի գրասենեակի մը մէջ, ոսկի նժարի մը նտին կծկուած, մոմի գոյն ձերունի մը՝ որ ձիւթ կը ծամէր...:

Երբ իմացաւ այցելութեանս պատճառը՝ ըստ.

- Աշխարհիս շորս կողմէն հոս կը թափին աժան օրհնութիւն մը ստանալու համար...Մեր գիները ամէնուն յայտնի են արդէն, այնպէս որ սակարկութեան պէտք չկայ...Եթէ հազար ֆրանք տրուի՝ ամբողջ տաճարը լապտերի պէս կը դարդարենք, բայց նշանաւոր բան մը կ'ըլլայ...Եթէ միայն մէջտեղի ջահը կ'ուղէք՝ գետինի գորգերով՝ այսչափ հարիւր ֆրանք...Բոլոր ջահերը մէկանց՝ այսչափ հարիւր...Սուրբ խորանին լուսավառումը՝ այսչափ հարիւր...:

- Բայց պարզ օրհնութիւն մը...

- «Պարզ օրհնութիւն» ինչ ըսել է, էֆենտիմ: Լուսահոգի Մանթաշօֆ այս չքեղ տաճարին համար միլիոններ ծախսեց նէ՝ պարզ օրհնութիւն մը տալու համար է...Ամէն մոմ հաշիւով կը վառի, ամէն տիրացու հաշիւով կ'ներգէ...Պէտք է գիտնաք որ մեր ձայնաւորները Փարիզի Քոնսէրվատուարին մէջ կ'ուսանին եւ Օփերային մէջ կ'ներգեն...Մեր Շահ-Մուրատեանը «Ֆաուստը» կը խաղայ... Եթէ գովարանական քարոզ մըն ալ կ'ուղէք՝ անոր հաշիւն ալ տէրտէրին հետ յարմարցնելու է...

Ահա թէ ինչ ցեխերու մէջ ստիպուեցայ սողացնել մեր Սէրը՝ անլուծելի, անբաժանելի, երկնային, յաւիտենական ձեւ մը տալու համար անոր...

Բայց հետեւեալ օր արդէն՝ եկեղեցիին մէջ՝ մոռցայ այդ բոլոր դառնութիւնները:

Սորհրդաւոր գմբէթին տակ, ամայի շենքին ճիշդ կեդրոնը, մինակ էինք մենք, իրարու սեղմուած՝ երիտասարդ ամուլ մը, ձերունի քահանայ մը ու ֆրանսացի ժամկոչ մը:

Սորանին վրայ ու մեր երկու քովերը երկար ու ճերմակ կերոններ կը վառէին, լոյս ցերեկով, տժգոյն ու ճրագային բոցով մը՝ որ կար ու չկար...:

Երբեմն դուռին բացուածքէն օտար գլուխ մը կ'երկննար հետաքրքիր: Այն ատեն կը լսուէր փողոցի անվերջ ու անհուն աղմուկը: Դուրսը՝ աշխարհի մայրաքաղաքը կը խժար, կ'ոռնար, կը հայհոյէր, կ'ալեկոծէր...: Ներսը՝ խարտեաչ եւ սև երկու գլուխներ իրարու կը կապուէին՝ ապրշում թելով մը, Կեանքի ու Մահուան համար...:

Դուրսը՝ բոլոր կիրքերն ու բոլոր մեղքերը, բոլոր գիտութիւնն ու բոլոր քաղաքակրթութիւնը... Ներսը՝ Հայաստանցի տէրտէր մը, կարծես Անիի քանդակներէն փրցուած՝ հին ու առաքելատիպ գլուխ մը, հաղարաւոր տարիներու բառեր կը կրկնէր, յաւիտենական ու ահաւոր...:

Ճերմակ մոմերը կը հալէին, բուրվառը կապոյտ ամպով մը մեզ պաշարեց: Տէրտէրը անվերջ կը կարդար ու կ'երգեր, այդ ընթերցումը ու այդ օրօրումը քիչ-քիչ մեզ ընդարմացուցին, վերացուցին, հեռացուցին, հին ու հեռու տեղուանք տարին...:

Կնքահայրը-մենակեաց ու մարդատեաց արուեստագէտ մը, որ եկեղեցի ոտք կոխած չունէր - հիմա տղու մը պէս կու լար: Հարսը - որ ոչինչ կը հասկնար ոսկեդարու աստուածային բարբառէն.- լռիկ մնջիկ կ'արտասուէր...: Ու տաք արցունք մը որ ինկաւ մեր միացած ձեռքերուն վրայ՝ մինչեւ ոսկորներուս ծուծը դողացուց»:

000 000

...Շամպերի գյուղում մնացինք մեկ ժամ: Երեկոյան ժամը 7-ին վերադարձանք Լոզան: Ժիրայր Նայիրիի հետ գնացքով մեկնեցինք Ժնև՝ այդ օրվա տպավորություններով:

Երկու օրվա ընթացքում անցանք ավելի քան 700 կմ: Եվ ամբողջ ժամանակ ավտոմեքենան վարում էր Հովհաննես Չիլինկիրյանը: Հիմա, երբ հիշում եմ լեռնանցքներով անցնող ճանապարհի բարդ ու վտանգավոր կեռմանները, չեմ կարող իմ հիացմունքն ու նաև դարմանքը չարտահայտել Հովհաննես Չիլինկիրյանի կամքի, ուժի և համբերատարության համար: Այդ ամենին էլ ավելացնեմ, որ նա սրտանց ուրախանում էր մեր հրճվանքի համար, որ մենք ստանում էինք Շվեյցարիայի տեսարժան վայրերից:

ՆԱԶԱՐԵԹ ՍՐՄԱՔԵՇՅԱՆԻ ԶԱՅՐՈՒՅԹԸ

Հոկտեմբերի 27-ին մնացինք Ժնևում: Այս անգամ, ինչպես նախորդ օրը, Ժիրայր Նայիրիի հետ նվիրեցինք Ժնևին ծանոթանալուն: Օրվա մեջ, երկու անգամ Ժ. 12-15-ը և 20-24-ը հանդիպեցինք Նազարեթ Սրմաքեչյանի հետ:

Նազարեթ Սրմաքեչյանը հետաքրքիր դրուցակից է: Չնայած աշխատանքով ծանրաբեռնվածությանը, նա եռանդով զբաղվում է Շվեյցարիայի հայ գաղութի կյանքով: Համարյա բոլորին ճանաչում է: Լայն է նրա հետաքրքրությունների շրջանակը՝ Հայաստան-Ռուսաստան, Հայաստան-Եվրոպա, Հայաստան-Ամերիկա, Հայաստան-Թուրքիա հարաբերություններից մինչև Հայաստանի առաջին հեռուստատեսային ալիք:

Ինձ համար առանձնապես հաճելի էր, որ վերոհիշյալ խնդիրների վերաբերյալ Նազարեթ Սրմաքեչյանն արտահայտում էր միանգամայն ճիշտ գնահատականներ: Զայրանում էր, որ անկախ հռչակված Հայաստանում որևէ կարևոր օրինագիծ, նախքան հաստատվելը, ներկայացվում է Եվրախորհրդի քննարկմանը: Ինչո՞ւ, զայրանում էր նա, այդ երբվանի՞ց է, որ ամեն ինչ

Եվրոպայում կարգին է ու Հայաստանին էլ ուղում են սովորեցնել: Եվ իբրև օրինակ, նա ասում էր.

- Ահա, Սիրիան էլ է անկախ, բայց Սիրիան կարող է իրեն թույլ տալ, որ իր ընդունած օրենքները նախապես արժանանան Եվրոպայի հավանությունը: Այդ Եվրոպան ուղղակի ոչնչի է հավասարեցնում մեր անկախ պետության գոյությունը:

Նաղարեթ Սրմաքեչյանն ափսոսանքով էր խոսում նաև Հայաստանի հանրային հեռուստատեսության անճաշակ հաղորդումների մասին: Նա վրդովվում էր, տարակուսանք հայտնելով, թե միթե՞ Հայաստանի հեռուստատեսությունը երգ-երաժշտությունից ու արտասահմանյան մարտաֆիլմերից բացի ուրիշ ոչինչ չունի Սփյուռքի հայերին մատուցելու համար:

Հայրենասեր գործչին շատ էր դայրացրել այդ նույն հեռուստատեսությամբ տրված այն հաղորդումը, որի մասնակից պրոֆեսորն առանց ամոթի, հայ օրիորդներին քարոզում էր ազատ սեր և տված հարցերից մեկին էլ պատասխանել էր, ասելով, թե իր աղջկան տվել է ազատություն, միայն խորհուրդ է տվել՝ զգույշ լինել, որպեսզի չհղիանա:

- Եվրոպան,- դայրացած ասում էր Նաղարեթ Սրմաքեչյանը,- շատ լավ բաներ ունի, բայց ինչո՞ւ են Հայաստանում նրա վատն ընդօրինակում:

Լսում էի Սփյուռքի ճանաչված աղգային-հասարակական գործիչ Նաղարեթ Սրմաքեչյանին և մտածում, թե որքան ճիշտ է նա իր հարցադրումների մեջ:

Հիմա, երբ գրում եմ այս տողերը, Բեյրութից ստացա «Նախիրի» թերթի «Բացառիկ» համարը, որտեղ տպագրված է Նաղարեթ Սրմաքեչյանի «Աղջիկս, միայն թէ...մի մնար» հոդվածը: Նաղարեթ Սրմաքեչյանը գրում է. «Մոտ անցեալին, Հայաստանի Հ-1 հեռատեսիլի կայանէն սփռուող հաղորդումի մը ներկայ եղա: Փոքր սենսակի մը մէջ, մեծամասնութեամբ աղջիկներէ բաղկացած երկսեռ երիտասարդութիւն էր հաւարուած և ուր, հակադիր երկու բրոֆեսէօրներու միջև, հարց պատասխանի ձևով, ասուլիս մը կ'ընթանար:

Զրոյց-բանավէճին նիւթը ընկերային էր, սոսիալ: Մերօրեա կենցաղի շուրջ: Կը խոսուէր ընտանեկան կեանքի՝ ամուսնու-

Թեան, սիրոյ, մեր աւանդական սովորութիւններու, ներկայի և ապագայի՝ «Արեւմտեան» մտածելակերպի ու կողմնորոշումներու մասին: Երիտասարդները իրենց ընտանեկան ու միջավայրի ապրուած ցայտուն դէպքերը, խնդիրները և իրենց անձնական դատողութիւնները երկու հակադիր մտածելակերպի առանցք դարձուցած՝ կ'ընդդիմախօսէին: Կը խոսուէր խորհուրդ-միտումներու շուրջ, որոնք, մերթ ընդ մերթ, երիտասարդներու բողոքին առարկայ կ'ըլլային:

Բրոֆեսէօրներէն մին արդիական, «Եվրոպական» տեսակէտին կը յարէր, իսկ միւսը, մեր «Հին» անցեալի «Նորերէն» եկող «Աւանդական» տեսակէտը կը պաշտպանէր: Բանավէճը վարող օրիորդը, տեղին միջամտութիւններով, վէճը կը պահէր շինիչ հունի մէջ և շնորհալի կեցուածք մը ունէր:

Վերջապէս՝ ասուլիս-բանավէճը «Արդիականացած» Բրոֆեսէօրին հետեւեալ նախադասութեամբ վերջացաւ. «Ես, աղջկանս պատուիրեցի՝ ամէն ինչ ըրէ, կեանքդ ապրէ, բայց...յղի մի մնար»:

Այս վերջին նախադասութիւնը խռովեց և յուզեց զիս»:

Իր հողվածը Նազարեթ Սրմաքեշյանն ավարտում է հետևյալ խոսքերով. «Հայաստանի «Անկախացում»ի օրէն ի վեր, եկած-գացած ու ներկայի իշխանաւորներու առաջնահերթ մտածումը, «Արդիականացում»ի անուան տակ, հայրենի ժողովուրդը մեզի համար խորթ կենցաղի մը ընտելացնել է կարծես: Կը թուի, թէ հայրենի նոր սերունդները վերոյիշեալ այլանդակութիւններով խաթարել, դանոնք մոլորեցնել, անարիւն, ջիղ ու պատիւ չունեցող հաւաքականութեան մը վերափոխել կ'ուզեն:

Մենք (հայրենահայերը) Եւրոպայի պէս հանդարտ երկրամասի մէջ չենք: Անոնց կենցաղակերպը, ձեւը մեզի բնաւ չի յարմարիր: Մենք թշնամիներով պաշարուած ժողովուրդ ենք: Մենք, հազարաւոր տարիներ շարունակ դարբնուած-կոփուած և իւրայատուկ հայկական կենցաղ մը ունինք, որ մեզ ամփոփ, միասնական և պինդ ու պատուաւոր կը պահէ»:

...Նազարեթ Սրմաքեշյանի հետ մեր զրույցի գլխավոր թեմաներից մեկը վերաբերում էր Սփյուռքի բոլոր հայրենասեր ուժերին համախմբելու խնդրին:

Երբ ավարտում էինք մեր զրույցը, խնդրեցի կապվել Նյուչատել քաղաքում բնակվող իմ մեծ բարեկամ Սիմոն Տետեյանի հետ: Սիմոնը հայտնեց, որ ժնև է գալու Հոկտեմբերի 30-ին, առավոտյան ժամը 11-ին:

ԴԵՊԻ ՍԵՆ ԲԵՐՆԱՐ ԼԵՌՆԱՆՑՔ

Հոկտեմբերի 29-ին, առավոտյան ժամը 9-ին նորից մեկնեցինք Լոզան: Այստեղ մեզ դիմավորեց Հովհաննես Չիլինկիրյանը և հայտնեց, որ այսօր մեկնելու ենք Սեն Բերնար լեռնանցքի ուղղությամբ:

- Այդ լեռնանցքի գլխին կա մի հինավուրց վանք, որտեղ եղել է Ռուբենը,- ասաց Հովհաննես Չիլինկիրյանը,- կտեսնենք այդ վանքը և ետ կվերադառնանք:

Իհարկե, մենք չէինք կարող մերժել մեր անխոնջ առաջնորդին, բայց և անհանգստանում էինք նրա համար, նկատի ունենալով, որ նախորդ երկու օրվա ընթացքում ավտոմեքենան վարել էր ավելի քան 700 կմ: Հենց այդ էլ նկատի ունենալով, ժիրայր Նայիրին ասաց.

- Հովհաննես, հոգնած կլինես, եկ հրաժարվենք այդ ուղևորությունից:

- Եթե դուք չեք հոգնել, ապա ես նույնպես,- պատասխանեց նա և գործի դրեց ավտոմեքենայի շարժիչը:

ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊՐԵԶԻԴԵՆՏ ՄԻՏԵՐԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ՆԱՊՈԼԵՈՆԻ ՊԱՐՏՔԸ

Ժամը 11.30-ին հասանք Մարտինի քաղաք, որն ստեղծվել էր Հոռմեական կայսրության ժամանակ: Այս քաղաքից սկսած, ճանապարհն անընդհատ անցնում էր երկար ու կարճ թունելներով: Վերջապես հասանք Բուրգ Սեն Բերներ գյուղը, որը հայտնի է դարձել Նապոլեոն Բոնապարտի ժամանակներից:

Երբ Նապոլեոն կայսրն իր զորքով անցել է այդ բնակավայ-

րով, գիշերել է այնտեղ: Բայց նա գիշերելու վարձը չի վճարել և դրա փոխարեն ստորագրություն է տվել՝ ապագայում մուծելու պայմանով: Նապոլեոնը չի կատարել պարտավորությունը, իսկ գյուղացիները սերնդեսերունդ պահպանել ու փոխանցել են Նապոլեոնի ստորագրած պարտավորագիրը:

Եվ երբ Ֆրանսիայի պրեզիդենտ Միտերանը Իտալիա մեկնելու ժամանակ անցել է այդ գյուղով, բնակիչները նրան ներկայացրել են Նապոլեոնի ստորագրած պարտավորագիրը: Միտերանը վճարում է Նապոլեոնի պարտքը:

Այս գյուղից սկսած ճանապարհը դարձյալ անցնում էր թունելով: Անցանք ևս 5-6 կմ և դեպի Իտալիայի սահմանը շարունակվող թունելի աջ կողմում կառուցված ելքից դուրս եկանք այն ճանապարհը, որը տանում էր դեպի Սեն Բերնար լեռնանցքի գագաթին գտնվող վանքը:

ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՀՐԱՇԻԸ

Անսպասելի սկսեց առատ ձյուն տեղայ: Բայց Հովհաննես Չիլինկիրյանը վճռեց առաջ շարժվել, մանավանդ, որ մնացել էր մի 3-4 կմ, որ հասնեինք լեռնանցքի գագաթը: Սակայն ձյունը սկսեց ուժեղանալ և քանի որ ավտոմեքենան վերցվել էր վարձույթով և փաստորեն այլևս վտանգավոր էր դառնում առաջ շարժվել, որոշեցինք ետ վերադառնալ:

Մինչ Հովհաննես Չիլինկիրյանը ավտոմեքենան ետ էր դարձնում, ևս մտա իմ տարերքի մեջ, մերկացա ու ձյան փաթիլների տակ վազրով անցա մի 100 մետր: Այդպես էլ ինձ Հովհաննես Չիլինկիրյանը լուսանկարեց:

Այդ ժամանակ էլ մենք ականատես եղանք բնության մի հրաշքի: Կարծես մի անտեսանելի ձևոք կտրել էր ձյան ճանապարհը: Մենք կանգնել էինք ճանապարհի մի հատվածում, որտեղ ձյուն էր գալիս, իսկ մյուս տեղում ձյուն չէր գալիս: Եվ այդ սահմանագիծը կարծես քանոնով գծված լիներ: Մենք կանգնել էինք չոր տեղում, իսկ մի քայլ այն կողմ առատ ձյուն էր տեղում:

Վերադարձանք թունելի մուտքի մոտ, որտեղ նույնպես ինձ

ու ժիրայր Նայիրիին Հովհաննես Ջիլինկիրյանը լուսանկարեց: Մտանք թունել և մեր ճանապարհը շարունակեցինք մինչև Իտալիայի սահմանը, որտեղ արդեն կանգնած էին սահմանապահները:

Նույն ճանապարհով ետ վերադարձանք: Իհարկե, շատ ավստացինք, որ այդպես էլ չհաջողվեց հասնել մինչև Սեն Բերնար լեռնանցքի գագաթ: Նորից կանգ առանք Նապոլեոնի գյուղում, լուսանկարվեցինք:

ԲԱԼԹԻՆ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Թունելից դուրս եկանք Օրսիեր քաղաքի մոտ և բռնեցինք Շամպեքս Լաք անունով փոքր քաղաք տանող ճանապարհը: Զյունն այստեղ էլ էր սկսել տեղալ, բայց ճանապարհը, որն անցնում էր ոլորապտույտ կեռմաննով, բաց էր: Վերջապես հասանք Շամպեքս Լաք, որը գտնվում է ծովի մակերևույթից 2000 մետր բարձրության վրա: Տեղում էր խոշոր փաթիլներով ձյուն և ամենինչ ծածկվել էր սպիտակ սավանով: Փոքրիկ այդ քաղաքի կենտրոնում կար մի գեղատեսիլ լճակ, որի ափին լուսանկարվել էր Ռուբեն Սևակը՝ կնոջ հետ:

Ճաշեցինք այդ լճակի ափին գտվող ճաշարանում, որը պատկանում էր մի ընտանիքի: Պարզվեց, որ այդ ճաշարանը գոյություն ունի մեկ դարից ավելի և միշտ պատկանել է միևնույն ընտանիքին: Հավանաբար այստեղ էլ ճաշել էր Ռուբեն Սևակը Յանիի հետ: Թեև այցելուները շատ քիչ էին, բայց ուստորանն աչքի էր ընկնում արտակարգ մաքրությունը ու սպասարկման բարձր կուլտուրայով, սպասարկողների սիրալիրությամբ:

Դուրս եկանք ճաշարանից, առատ տեղացող ձյան տակ քայլեցինք լճի ափերով, լուսանկարվեցինք և ուղղություն վերցրեցինք դեպի Բալթինի քաղաք: Այս քաղաքի տեղում հայտնաբերվել է հռոմեական բնակավայր: Կատարվել են հնագիտական պեղումներ և հայտնաբերված իրերը ցուցադրվում են բոլոր հարմարություններով օժտված թանգարանային շենքում:

Նույն թանգարանի ներքնահարկի հսկայական սրահում

ցուցադրվում էին 1900-1921 թթ. արտադրված դանադան ավտոմեքենաներ: Հետաքրքրություն զիտեցինք դրանք: Լուսանկարվեցինք:

Ավտոմեքենաների ցուցասրահ մտնելու ժամանակ իմ ուշադրությունը գրավեց հետևյալը: Այցելուներին մեջ կար մի կին՝ հաշմանդամի սայլակին նստած: Թանգարանի աշխատակիցներն արագորեն գործի անցան: Նրանք իջեցրին աստիճանների պատին հենված ուղևորը և զգուշությամբ դրանց վրա դրեցին հաշմանդամ կնոջ սայլակը: Նույնը սիրով կատարեցին այդ կնոջը վերև բարձրացնելու ժամանակ:

Երևելոյան ժամը 6-ին հասանք Լոզան և, ինչպես միշտ, Հովհաննես Չիլինկիրյանը մեզ գնացքով ճանապարհեց դեպի Ժնև: Այսպես ավարտվեց Հոկտեմբերի 28-ի օրը:

ԱՐԵԼ ՔԱՀԱՆԱՆ

Հոկտեմբերի 29-ի առավոտյան մեզ իր մոտ հրավիրեց Հակոբ Ավագյանը: Նա մեզ՝ Ժիրայր Նայիրիին ու ինձ ներկայացրեց Ժնևի հայկական եկեղեցու քահանա Արելին, որը նոր էր վերադարձել Ամերիկայից: Արել քահանայի (Հրաչյա Մանուկյան) հետ հետաքրքիր դրույց ունեցանք: Նա հայ եկեղեցու միասնության ջերմ կողմնակից է, հանդես է գալիս Հայաստան-Սփյուռք կապերի ամրապնդման օգտին: Արել քահանային անհանգստացնում էր Հայաստանից շարունակվող արտագաղթը և բերեց մի քանի տխուր փաստ այն մասին, թե ինչպիսի ծանր վիճակի մեջ են հայտնվել արտագաղթածները:

Ծվեցարիայում գտնվելու օրերին մենք համոզվեցինք, որ հայերին համախմբելու և հայապահպանման միակ օջախը եկեղեցին է և բարերախտարար Արել քահանան խորապես գիտակցում է այդ գործում իր պատասխանատվությունը: Նա հսկայական ջանքեր է գործադրում հայ երիտասարդներին եկեղեցուն կապելու միջոցով փրկել ձուլումից:

Այս իրողությունը նկատի ունենալով, կարծում եմ, որ Հայաստանի Հանրապետության պետական մարմինները հաշվի

կառնեն Շվեյցարիայի նման երկրներում գործող հայկական եկեղեցիների դերը և անհրաժեշտ միջոցներ կձևոնարկեն: Ավելի ճիշտ՝ այդ համազգային գործում նրանք էջմիածնի Մայր Աթոռին մենակ չեն թողնի:

ՀԱԿՈՐ ՍԱՐԳՍՅԱՆԸ

Նույն օրը Հակոբ Ավագյանի մոտ էլի մի հետաքրքիր հանդիպում ունեցանք: Ժամը 2-ին մոտ հյուրանոց հեռաձայնեց Հակոբի կինը՝ Շամիրը և ասաց, որ իրենց մոտ է գտնվում Հակոբ Սարգսյանը և ցանկութուն ունի ինձ հետ ծանոթանալ: Գնացի: Ծանոթացանք: Պարզվեց, որ Հակոբ Սարգսյանը Իզմիրյան ֆոնդի գործադիր տնօրենն է և հսկայական աշխատանք է կատարում Երևանի պետական համալսարանին աջակցելու գործում:

Նկատի ունենալով այդ հանգամանքը, նրան խնդրեցի օգնել նաև Համալսարանի տպարանին ձեռք բերելու տպագրական նոր մեքենաներ: Հակոբ Սարգսյանը խոստացավ հնարավորության սահմաններում ընդառաջել և խորհուրդ տվեց այդ խնդրանքը ռեկտորի ստորագրությամբ ուղարկել Ժնև: Երբ վերադարձա Երևան, այդ մասին պատմեցի տպարանի տնօրեն Ստեփան Գոյունյանին: Նա նախաձեռնեց և համալսարանի ռեկտորի ստորագրությամբ նամակն ուղարկվեց Ժնև: Մի երկու անգամ հեռախոսով խոսեցի Հակոբ Սարգսյանի հետ: Նա ասաց, որ 2009 թ. ապրիլին գալու է Երևան և տեղում կլուծի համալսարանի տպարանին օգնելու հարցը:

«ՖՐԱՆԿ-ՄՅՈՒԼԼԵՐ» ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Նույն օրը, ժամը 4-ին Նազարեթ Սրմաքեչյանը մեզ տարավ «Ֆրանկ Մյուլլեր» ժամացույցների գործարան, որի գլխավոր բաժնետերը նրա որդին է՝ Վարդանը: Վարդանը մեզ սիրով ընդունեց: Այստեղ էր նաև Արթենը: Վարդանը պատմեց իր գործարանի մասին: Այնուհետև մեր զրույցն աննկատ տեղափոխ-

վեց բոլոր հայերին հետաքրքրող թեմայի կողմը: Վարդանի հետ լուսանկարվեցինք:

Վարդանի հրավերով, երեկոյան ժամը 8-ին մասնակցեցինք նրա քրոջ՝ Աղավնու աղջկա ու տղայի ծննդյան օրվա նշմանը, որը տեղի ունեցավ իտալական ռեստորանում: Այստեղ էր նաև Լողանից եկած Հովհաննես Չիլինկիրյանը: Ներկա էին նաև Հակոբ Ավագյանը և էլի շատ մարդիկ: Ռեստորանում մնացինք մինչև ժամը 23-ը: Ինչպես միշտ է լինում, մոռացանք, թե ինչի համար ենք հավաքվել և սկսվեց աշխույժ դրույց մեզ հուզող հարցերի շուրջ:

Այդ երեկո մենք վերջին անգամ հանդիպեցինք Հովհաննես Չիլինկիրյանին: Նա հոկտեմբերի 30-ին, առավոտյան մեկնեց Նիս: Անչափ հուզիչ էր մեր հրաժեշտը: Հրաժեշտի պահին Հովհաննես Չիլինկիրյանը ցանկություն հայտնեց մինչև 2009 թ. ապրիլի 24-ը Երևանում տպագրել իր «Թուրքերու (իրը թէ) չգիտցած իրականութիւնները» աշխատության հաջորդ հատորը: Խոստացա կատարել, հենց որ բնօրինակը հասցնի Երևան:

Մի քանի օր վայելեցի նրա ջերմ ու մարդկային վերաբերմունքը, մտերմացանք, դարձանք հոգեհարադատ: Ես անչափ հպարտ եմ, որ ոչ միայն ծանոթ եմ Հովհաննես Չիլինկիրյանին, այլև արժանացել եմ նրա ընկերը լինելու պատվին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԻՄՈՆ ՏԵՏԵՑԱՆԻ ՀԵՏ

Հոկտեմբերի 30-ի առավոտյան ժնև եկավ Սիմոն Տետեյանը: Հարկ եմ համարում պատմել իմ և Սիմոնի ծանոթության մասին:

2004 թ. հունիսի վերջին մեծարգո Վարուժան Սալաթյանի հրավերով և իմ լավ ընկեր Ռոմեն Կոզմոյանի աջակցությամբ մեկնեցի Սիրիա: Հալեպի օդանավակայանում ինձ դիմավորեցին «Ազգային մշակոյթ» միության ղեկավարներից Զորջ Մեծօղլանյանը, Հովսեփ Տետեյանը և Թադևոս Քավլաքյանը: Առանձնապես մտերմացա Հովսեփ Տետեյանի հետ: Նրան ուղարկեցի իմ նոր լույս տեսած «Կոմս Լորիս-Մելիքով» գրքից մի քանի օրինակ: Հովսեփին այդ գրքերից մեկն ուղարկել էր Շվեյցարիայում

բնակվող եղբորը՝ Սիմոնին:

Եվ ահա, Հովսեփից ստանում եմ նամակ, որտեղ նա հայտնում էր, որ իր եղբայր Սիմոնը շատ է հավանել «Կոմս Լորիս-Մելիքով» գիրքը և ցանկություն ունի հովանավորել իմ աշխատություններից մեկը:

Դեռևս 2000 թ. ավարտել էի ԱՍԱԼԱ-ի մասին աշխատությունը, բայց հասկանալի պատճառներով հնարավորություն չունեի տպագրության հանձնել: Այդ մասին էլ հայտնեցի Հովսեփին: Ծուտով նա լուր ուղարկեց, որ Սիմոնը համաձայն է հովանավորել այդ աշխատության տպագրությունը:

ԱՍԱԼԱ-ի մասին աշխատությունը Սիմոնի հովանավորությունամբ լույս տեսավ 2006 թ. «Չմոռանանք...» խորագրով:

Պարտքս համարեցի իմ գրքի առաջին էջերում հրապարակել նրանց հոր՝ Գրիգոր Տետեյանի դեռևս 1984 թ. գրած պատգամը՝ «Թուրքը մեզ ուզեց բնաջնջել: Չկրցաւ: Մենք կապրինք: Պիտի ապրինք» խորագրով: Գրիգոր Տետեյանն իր պատգամն ավարտել է հետևյալ խոսքերով.

«Ձաւակներս, լսեցեք իմ ձայնս:

Հայ մարդեր, լսեցեք մեր ձայնը:

Ու մի մոռնաք, որ եղած է եղեոն, եղած է Ապրիլ 24, մեր կեանքը եղած է գեհէն, բայց այսօր կը գոյատեւենք եւ ունինք ծաղկեալ Հայաստան:

Մի մոռնաք»:

Ահա, այսպես Սիմոնի հետ հեռակա ծանոթացանք:

Ավարտել էի Գրիգոր Հարությունյանին նվիրված աշխատությունը, բայց դարձյալ հնարավորություն չկար տպագրել: Այստեղ ուղում եմ համառոտ պատմել այդ գիրքը գրելու մասին: Գրիգոր Հարությունյանը մեր ժողովրդի պատմության մեջ այն եզակի դեմքերից է, ով հսկայական աշխատանք է տարել Հայաստանի շենացման համար, բայց հանիրավի մատնվել է մոռացության:

Ահա այս իրողությունն էլ հաշվի առնելով դեռևս 1980 թվականից սկսել էի նյութեր հավաքել, հանդիպել ու գրի առնել Գ. Հարությունյանի հետ աշխատած մարդկանց հիշողությունները: Միաժամանակ տարրեր արխիվներից հավաքեցի հսկայական

չափով նյութեր: Երբ սկսել էի գրել աշխատությունը, Երևան էր եկել Գ. Հարությունյանի դուստր Նամի Միկոյանը: Հանդիպեցի նրան: Ծատ հուզվեց, երբ իմացավ, որ գիրք եմ գրում Գ. Հարությունյանի մասին: Նա էլ Մոսկվայից ուղարկեց որոշ նյութեր:

Նախատեսել էի գիրքը հրատարակել չորս հատորով: Երբ ավարտել էի գրքի շարադրանքը, հանդիպեցի 2007 թ. հունվարին Երևան եկած Նամի Միկոյանի որդուն՝ Ստաս Նամին, որը Մոսկվայում դրադվում է բիզնես-շուուով և բավականին ունևոր է: Ստասը խոստացավ գրքի տպագրությունը կազմակերպել էջմիածնի Կաթողիկոսության ֆինանսական օգնությամբ: Այս կապակցությամբ նույնիսկ հանդիպեցի Գարեգին Երկրորդ կաթողիկոսին, որը հանձնարարություն տվեց դիվանապետին: Բայց գործը տեղից չչարժվեց:

Հևոախոսով Նամի Միկոյանին ու նրա որդուն հայտնեցի, որ եկեղեցին երբևք չի հովանավորի Հայաստանի կոմկուսի առաջնորդի մասին գրքի տպագրությունը: Զանգահարեց Նամի Ստասը և հայտնեց, որ ստանձնում է գրքի տպագրությունը: Նա առաջարկեց մոսկովյան ինչ-որ հրատարակչության հետ կնքել պայմանագիր:

Էլեկտրոնային փոստով ստացա պայմանագրի տեքստը: Ըստ պայմանագրի, ինձ որպես գրքի հեղինակի պետք է վճարվեր հոնորար, պայմանով, եթե գիրքն արժանանար հավանության և ընդունվեր տպագրության: Դրանից հետո ես կորցնում էի իմ հեղինակային իրավունքը գրքի հետագա ճակատագրի նկատմամբ: Բնականաբար ես չէի կարող համաձայնվել այդ պայմաններին և Ստասին հայտնեցի իմ դիրքորոշումը, միաժամանակ նրան բացատրելով, որ գրքի ընթերցողները գտնվում են Հայաստանում և նպատակահարմար է գիրքը տպագրել Երևանում, իսկ Մոսկվայում տպագրվելու դեպքում, որպես հեղինակ հնարավորություն չէի ունենա վերահսկել տպագրության ընթացքը:

Ստաս Նամին սկսեց բերել զանազան պատճառաբանություններ իմ խնդրանքը մերժելու համար և ի վերջո հայտնեց, որ հրաժարվում է գրքի տպագրությունը հովանավորելուց: Ահա, այսպես անչնորհակալ եղավ Գ. Հարությունյանի թողը՝ Ստաս Նամին:

Չեմ էլ ուզում հիշել նրանց, թե ղրանից առաջ ու նաև հետո ում դիմեցի գրքի տպագրությունը հովանավորելու խնդրանքով:

Հայտնվել էի անելանելի վիճակի մեջ, երբ երջանիկ դիպվածով հեռաձայնեց Սիմոն Տետեյանը և հետաքրքրվեց իմ գործերի մասին: Նրան հայտնեցի, որ ավարտել եմ Գրիգոր Հարությունյանի մասին գիրքը, բայց չեմ կարողանում տպագրել:

Սիմոնը պատասխանեց, որ ծանոթ չէ, թե ով է Գրիգոր Հարությունյանը և խնդրեց իրեն ուղարկել գրքի համառոտ բովանդակությունը:

Անցավ մի քսան օր: Սիմոնը հայտնեց, որ հավանել է գիրքը և համաձայն է հովանավորել առաջին հատորի տպագրությունը:

Նորից օգնության հասավ Սիմոնը: Նրա հովանավորությամբ 2008 թ. հաջողվեց տպագրել «Գրիգոր Հարությունյանը և նրա ժամանակը» աշխատության առաջին հատորը: Այդ օրերին Երևան էր եկել Հովսեփի և Սիմոնի կրտսեր եղբայրը՝ Մինասը, որը բնակվում է Փարիզում: Մինասի հետ էլ նշեցինք առաջին հատորի լույս ընծայվելը:

Արդեն ինձ համար պարզ էր դառնում, որ չորս հատորի տպագրությունը գրեթե անհնարին կլինի, ստիպված եղա կրճատել և դարձնել երեք հատորով:

Եվ ահա, ժնևում հանդիպում եմ իմ բարերար, լավ ընկեր ու հայրենասեր Սիմոն Տետեյանի հետ:

Երբ ժնևում հանդիպեցի Սիմոնին, առաջին հերթին պարտքս համարեցի նրան իմ խոր երախտագիտությունը հայտնել գրքի տպագրությունը հովանավորելու նամար:

ՍԻՄՈՆ ՏԵՏԵՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ստորև հարկ եմ համարում ընթերցողին ներկայացնել Սիմոն Տետեյանի «Ինքնակենսագրությունը», որը նա գրել է իմ խնդրանքով

«1) 1914 թ.: Աքսոր, արհաւիրք. ծնողքս մանուկ տարուին, թուրք ճիւղային ծրագրուած ցեղասպանութեան ճամբուն

վրայ, կորսնցուցած իրենց հարազատները, կը գտնուին Սուրիոյ անապատներուն մէջ:

Հայրս՝ Գրիգոր, Պուրսայի կէօլտաղ գիւղէն, մայրս՝ Սրբուհի Աւագեան, Պոլսոյ Իզմիտի Ասլանպէկ գիւղէն:

2) Վերածնունդ. Սուրիոյ անապատներէն հաւաքուած որրեր, Գրիգոր և Սրբուհի, աքսորէն տարիներ անցած, կը հանդիպին, կամուսնանան Հալէպի գաղթականական թաղամասերէն մէկուն մէջ՝ Համիտիէ: Կ'ունենան երկու դուստրեր՝ Յովսէփ՝ 1931-ին և Սիմոն՝ 1933-ին (գրողս). և յետոյ, քիչ մը բարելաւուած, կը տեղափոխուին Հալէպի Տաւուտիէ թաղամասը՝ Հայ գաղթականներէ կազմուած: Եվ հոն ընտանիքը կամբողջանա Մինասով՝ 1938-ին և Իսկուհիով՝ 1945-ին, չորս դուստրեր:

3) Տաւուտիէ, Հալէպէն մօտ 2 կմ հեռու բարձր դաշտի մը վրայ, Հայ գաղթականներէ կազմուած նոր թաղամաս մը, մօտ 1000 ընտանիքով, կ'ունենայ իր եկեղեցին և քահանան՝ Եղիշէ Տէրտէրեան, մանկապարտէզը և նախակրթարանը՝ Վարդանեան վարժարանը, որ կը կառավարուէր իր քահանայով և շատ պարզունակ ուսուցիչ և ուսուցչուհիներով:

4) Հաղիւ Տաւուտիէի մանկապարտէզը և նախակրթարանի առաջի նախապատրաստականը աւարտած, ծնողքս դիս կ'արձանագրեն Հալէպի Հայկազեան նախակրթարանը (անուանեալ դաշնակցական)՝ եղբօրս՝ Յովսէփին հետ:

Նախակրթարանի վերջի երէք տարիները ծնողքս դիս կարձանագրեն Կիլիկեան նախակրթարան (անուանեալ հնչակեան):

5) 1950-ին աւարտելով Կիլիկեանը, ուսումս շարունակելու համար այդ թուականին Բէյրութի Հ. Բ. Լ. Մ-ի պատասխանատու Բարունակ Թովմասեանին (կէօլտաղցի) խորհուրդով կը ղրկուիմ Կիպրոսի Մելգոնեան կրթական հաստատութիւն (Մ. Կ. Հ.), Դանիէլ Ոսկեանի տնօրինութեան շրջանին:

6) Աւարտելով Մ. Կ. Հ-ն, չորս շրջանաւարտ ընկերներով՝ Անդրէաս, Վահէ և Նուրէլ և անձս, կ'որոշենք ուսումնիս շարունակել Պոլսոյ ամերիկեան Robert College-ի ճարտարագիտական ճիւղին մէջ՝ 1955-1959:

7) Պոլսոյ ուսման տարիներս, ուսմանս կողքին, ինծի համար ազգային տէսակէտով տպաւորիչ տարիներ եղած են: Հայ մա-

տենագիր Յովհաննէս Դպիրի մը փնտրտուքով ծանօթութիւն ունեցած եմ այդ օրերուն Պոլսոյ պատրիարք Գարեգին Սաչատուրեանին հետ և Իսկիւտարի ազգասէր և հաւատացեալ Տէր քահանայ Շաւարշ Պալըմեանին հետ:

Ի մասնաւորի, հայ գրականութեան մեծերուն շիրիմներուն այցելութիւններս՝ Շիշլիի, Պալըքլըի, Իսկիւտարի գերեզմաններուն մէջ՝ յիշելով անմահ Պետրոս Դուրեանին մահամերձի իր տողերը՝

«Երբ յիշատակս ալ թառամի,
Ռհ, այն ատեն ես կը մեռնիմ»:

8) Պոլսոյ Robert College-ի ուսումնաւարտելով, 9 տարիներու բացակայութենէ մը ետք կը վերադառնամ Հալէպ:

Առաջին գործս կրկայ որպէս ճարտարագէտ՝ Սուրիոյ պետական Najor Projects Administration-ի մէջ, 1959-1962, Chab կոչուած շրջանին մէջ՝ ճամբաներու, ջրանցքներու, ամբարտակի շինութեանց գործերով:

9) 1962-ին կը ձգեմ Սուրիան վերջնականապէս և կը հաստատուիմ Բարիդ, Ֆրանսա: Առաջին ամիսները և տարիները դժուար շրջաններ էին միայն: Ենթոհիւ այդ տարիներուն **Խթան** թերթին հրատարակիչ Տր. Համբարձեանին կրցած եմ visa-ս երկարաձգել, և շնորհիւ էլեկտրագործատէր Նուպար Յովաննէսեանին, HOVAN, կրցած եմ Ֆրանսա մնալու իրաւունք ստանալ:

1962-1964-ի դժուարին տարիներէ ետք, որպէս ճարտարագէտ առաջին գործս կը գտնեմ ամերիկեան ընկերութեան մը մէջ, Procofrance, որ քարիւղի դտարաններու շինութեանց գործունէութեանց մէջ էր:

10) Ֆրանսայի մեծ յուսախափութիւններէ ետք, Հակառակ Procofrance-ի մօտ գոհացուցիչ գործիս, մանկութենէ մնացած Հայաստան հաստատուելու փափաքով, 1965-ին դիմեցի Բարիդի ուսական Հիւպատոսարան: Հիւպատոսարանի պահանջքին համաձայն, շարադրութեան մէջ գրեցի՝

- բնակաւայր (Հայաստանի մէջ), Հայաստանի ծայրամասերէն տեղ մը:

- Ինչո՞ւ կուզեմ Հայրենիք փոխադրուիլ՝

Որովհետև ես ինքզինքս Հայաստանցի կը նկատեմ, որովհետև մեր հայրերը, նախահայրերը երբէք Հայաստան չեն ձգած կամաւոր կերպով և որ բարբարոս արշաւող յորդաններու բռնութեամբ հեռացած են Հայրենիքէն:

11) Հայրենիք վերադառնալու դիմումէս անդին, 1965-1969, Հայրենիքը ինծի համար մնաց երազ մը: Հիւպատոսարանին մէջ հիւպատոսը փոխուեցավ, առաջին քարտուղարը՝ հայ, փոխուեցաւ, և ես մնացի Հայրենիք վերադառնալ փափաքող հիւպատոսարան այցելողը, գրեթէ ամէն ամիս:

1969-ին, իրապաշտութեամբ, տարիներու Զուիցերիացի բարեկամուհիս հետ ամուսնանալով՝ այլևս հիւպատոսարան չգացի:

1970-ին կը փոխադրուինք Զուիցերիա, կունենանք մեր առաջին դավակը՝ Դանիէլ-Գրիգոր:

Աշխատած ընկերութիւններու միջոցով կը մեկնիմ երկար ամիսներով՝ Philippine կղզիները, Pakistan, Nigeria, Soudan և այլն:

1980-ին բաժնուած ըլլալով Զուիցերիացի կնոջմէս, 1985-ին կրկին կ'ամուսնանամ: Այս անգամ Հալէպէն, օր. Եղսան Միհրանեանին հետ՝ հաւիտենական դաշինքով, և ունեցանք մեր Սիլվան, որ միասին ենք և որ իր ուսումը կը շարունակէ Neuchatel-ի համալսարանը:

12) Հալէպի Վարդանեան վարժարանը՝ տնօրինութեամբ Տէր Եղիշէ քահանայ Տէրտէրեանի ուր սորվեցայ Մեսրոպեան Առու Բ-էնը, Հայկազեան վարժարանը՝ տնօրինութեամբ Արմէն Անուշի, Կիլիկեան վարժարանը՝ տնօրինութեամբ Երուանդ Բաբանի, և Կիպրոսի Մելգոնեան հաստատութիւնը՝ տնօրինութեամբ Դանիէլ Ոսկեանի, իմ ազգային ապրումներուս աղբիւրը եղած են: Մասնաւորաբար տպաւորուած Հայկազեանի պատմութեան ուսուցիչ Սիմոն Սիմոնեանի, Կիլիկեանի պատմութեան ուսուցիչ Սրապիոն Խանդատեանի դասերէն:

13) 1946. Համաշխարհային 2-րդ պատերազմը վերջացած, վերածնած, բայց գաղթական հայութեան հայրենադարձութիւնն էր Սփիւռքէն: Հալէպ, կարաւաններուն մեկնումները կը

դիտէինք մանկական աչքերով և յոյսով, և երազներով: Եւ իւրաքանչիւր մեկնումին հետ՝ երգելով՝

Այ կարաւան, հեյ ջան կարաւան,
 Հէյ գշիր քո ճամբան,
 Անապատի բշերի մէջ
 Գշիր քո ճամբան,
 Կարոտել եմ Հայրենիքս,
 Քունս չի տանիր:

14) 1950-1955. Մելգոնեանի մեր գրականութեան ուսուցիչին՝ Նուպար Թամամեան՝ Ն. Կատար, իր բանաստեղծի անունով, իմ որպէս շարադրութիւն իրեն յանձնած և այսօր մոռցած բանաստեղծութիւններէս կը յիշեմ միայն հետևեալ տողերը.

Երազին աչքերուս անցեալի
 Կը դառնամ ամէն օր ես կրկին,
 Մօր մը սերտ շունչին տակ թանկագին
 Պանդուխտ եմ ես կրկին ու կրկին:
 Կեանքին հետ դաւաճան օրերուն,
 Ես գացի, ծովէ ծով ու հեռուն,
 Ու պանդուխտ իմ հոգին երբերուն
 Եղաւ որս մը հողմերուն, ծովերուն:

 Եւ հիմա, անկիւնի մը մէջ խոր,
 Կերագեմ Հայրենիք մը աղուոր:

15) Այսօր, 75 տարիքիս, այս պարզ կենսագրականս գրեցի որպէս յիշատակ իմ դաւակներուս, և բրոֆեսէօր Վլատիմիրին և այս թանկագին հատորներուն ընթերցողներուն համար միայն»:

«ԵԿԵՔ ԱՎԱՆԴՈՒՑԹԸ ՉԽԱՆՏԵՆՔ...»

Ժիրայր Նայիրիի հետ Սիմոնին պատմեցինք Հովհաննես Չիլինկիրյանի նախաձեռնությամբ Ռուբեն Սևակի այցելած վայրեր մեր կատարած ուղևորության մասին:

- Այդ դեպքում, - ասաց Սիմոնը, - եկեք ավանդույթը չխախտենք և մեկնենք Իվերտոն քաղաք, որտեղ եղած տաք ու բուժիչ ջրերից անպայման օգտված կլինի Ռուբեն Սևակը: Ժիրայր Նայիրին ու ևս համաձայնվեցինք Սիմոնի առաջարկությանը:

Իվերտոն քաղաքը Ժնևից հեռու է 100 կմ և գտնվում է Նյուչատել լճի հարավային ափին: Սիմոնն ավտոմեքենան կանգնեցրեց հանքային ջրերի գալերևայի մոտ: Ներս մտանք: Դա մի գեղեցիկ շինություն էր՝ բոլոր հարմարություններով:

Արդարացի չէր լինի՝ հասնել այդտեղ ու չօգտվել այդ հանքային ջրերից: Սիմոնը վերցրեց տոմսակ և ինձ ներս տարավ: Տիրում էր իդեալական մաքրություն: Կար բացօդյա երկու ավազան՝ տաք և սառը ջրերով: Զրավազաններից յուրաքանչյուրն ուներ 200-220 քառ. մետր տարածք: Հաճախորդները սկզբից մտնում էին տաք ջրավազան, հետո՝ սառը ջրավազան: Երկուսում էլ շատ մարդ կար: Շատերն եկել էին երեխաներով: Ես այդ ջրավազաններում հերթականությամբ լողացա ուղիղ մեկ ժամ: Սպասարկումը գտնվում էր իր բարձրության վրա:

Երեկոյան ժամը 6-ին Սիմոնի հետ վերադարձանք Ժնև: Սիմոնը պատմեց Մելքոնյան կրթօջախում իր ուսումնառության մասին, հիշեց, որ Լրիտասարդ տարիներին գրել է բանաստեղծություններ: Դրանցից երկուսն արտասանեց: Ժիրայր Նայիրին ցանկություն հայտնեց այդ բանաստեղծությունները տպագրել «Նայիրիի» «Բացառիկում»: Սիմոնի թելադրելով դրանք գրի առա և հանձնեցի Ժիրայր Նայիրիին: Երեկոյան ժամը 9-ին Սիմոնին ճանապարհեցինք Նյուչատել:

Նազարեթ Սրմաքեչյանը հեռախոսով հայտնեց, որ Հովհաննես Չիլինկիրյանը բարևհաջող տեղ է հասել և մեզ փոխանցեց նրա ողջույնը:

«ԴՈՒՔ, ՀԱՅԵՐԴ ՀԱՇՏՎՈՒՄ ԵՔ...»

Հոկտեմբերի 31-ի առավոտյան, երբ դուրս էինք գալիս հյուրանոցից, առաջին հարկում կանգնած էր մի երիտասարդ: Ժիրայր Նայիրին կարծեց, որ նա արար է, մոտեցավ բարեկեց ու սկսեց զրուցել նրա հետ:

Պարզվեց, որ այդ երիտասարդն աղգությամբ քուրդ էր: Նա ժիրայր Նայիրին հարցրեց.

- Դուք, հայերդ հաշտվո՞ւմ եք թուրքերի հետ:

- Իսկ դուք, քրդերդ, կհաշտվե՞ք թուրքերի հետ, - հարցրեց Նայիրին:

Քուրդ երիտասարդը ժպտաց ու ասաց.

- Երբեք:

Հետո ժիրայր Նայիրին ինձ բացատրեց, որ քուրդ երիտասարդը նկատի ուներ Թուրքիայի նախագահ Գյուլի Հայաստան ժամանելը:

Այս կապակցությամբ հարկ եմ համարում նկատել, որ Շվեյցարիայում բնակվող մեր հայրենակիցների մեջ հանդիպում էին մարդիկ, որոնք անչափ դժգոհ էին Գյուլին Հայաստան հրավիրելու փաստից և ասում էին, որ թուրքերից հարկավոր է ղզուշանայ, որովհետև նրանք միշտ հայերին թակարդն են նետել:

Մեր հայրենակիցներից մեկն էլ ասաց, որ, ընդհանրապես չի ընդունում դաշնակցության գաղափարախոսությունը, բայց ողջունում է նրանց բարձրացրած բողոքը Գյուլի Հայաստան ժամանելու կապակցությամբ:

Հարկ եղավ բացատրել, որ դաշնակցության բողոքը միայն ցուցադրական նպատակ էր հետապնդում:

- Դաշնակցությունն այսօր Հայաստանի կառավարության մաս է կազմում, - ասացի իմ հայրենակցին, - անվտանգ գործ է՝ Հայաստանում նախարարական պաշտոններ զրավել ու այդպիսի ցուցադրական բողոք կազմակերպել: Եթե դաշնակցությունն իսկապես անհանգստանում է Հայաստանի ճակատագրով, ապա ի՞նչն է նրան խանգարում բողոքել ու ժնդացող արտագաղթի դեմ: Ինչո՞ւ նա չի բողոքում Հայաստանի տնտեսությունն ավերելու, ժողովրդին աղքատացնելու դեմ:

Զրուցակիցս ոչինչ չասաց և լռությամբ համաձայնվեց իմ փաստարկներին:

«ԵՍ ԳԱՂՈՒԹԻ «ՍԿԱՆ» ՄԵՔԵՆԱՆ ԵՄ»

Քանի որ ժիրայր Նայիրին նոյեմբերի 1-ին մեկնում էր, գնացինք Հակոբ Ավագյանին հրաժեշտ տալու: Այս անգամ էլ Հակոբը մենակ չէր: Ինչպես միշտ, նրա մոտ հանդիպում էինք տարրեր մարդկանց: Այժմ էլ հանդիպեցինք շվեյցարիացի մի իրավաբանի, որը նոր էր վերադարձել Ուղրեկստանից, որտեղ գործուղվել էր ՄԱԿ-ի գրասենյակի կողմից: Ինձ համար, որ բազմիցս եղել եմ Ուղրեկստանում, անչափ հետաքրքիր էին նրա հայտնած տեղեկությունները:

Երբ իրավաբանը հրաժեշտ տվեց ու գնաց, Հակոբը կատակով ասաց.

- Ես շվեյցարական գաղութի «Սկան» մեքենան եմ, ամեն մարդու դնում եմ մեջը և վերջում իմանում, թե ո՞վ է նա, ի՞նչ մարդ է:

Հակոբի հետ երկար զրուցեցինք: Նա գտնում էր, որ գաղութներում գտնվող հայ մտավորականները պետք է ձերբազատվեն «գետտոյական» հոգևրանությունից և եռանդով մասնակցեն տվյալ երկրի քաղաքական, մշակութային գործերին և դրանով նպաստ բերեն մեր ազգային խնդիրների լուծմանը:

Երբ Հակոբին հրաժեշտ էինք տալիս, նա ժիրայր Նայիրիին ու ինձ ժամացույց նվիրեց, ասելով. «Շվեյցարիան հիշելու համար»:

Նոյեմբերի 1-ին, առավոտյան, ժիրայր Նայիրիի հետ մի անգամ էլ քայլելով հասանք ժնեի լճափ ու վերադարձանք: Այդ ընթացքում նորից քննարկեցինք «Նայիրի» թերթի հետագա անելիքների մասին:

Ժամը 10-ին եկավ Նազարեթ Սրմաքեչյանը և միասին ժիրայր Նայիրիի հետ մեկնեցինք օդանավակայան: Նրան ջերմորեն ճանապարհեցինք Բեյրութ:

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏԻՉ ՇԵԼԵՑՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ

Երբ վերադառնում էինք օղանավակայանից Նաղարեթ՝ Սրմաքեչյանին հիշեցրի իմ ցանկության մասին՝ այցելել Մկրտիչ Շելեֆյանի գերեզմանին: Սիրով համաձայնվեց: Գերեզմանատան մոտ հանդիպեցինք Արթեն Շելեֆյանին և նա մեզ ուղեկցեց գերեզմանատուն:

Սև գրանիտից պատրաստված համեստ գերեզմանաքարի վրա ֆրանսերեն գրված էր. «Մկրտիչ Շելեֆյան. 1914-1987»: Գերեզմանաքարի մեջտեղում տեղադրված էր էջմիածնից բերված մի փոքրիկ խաչքար:

Գերեզմանատունը զբաղեցնում էր մեծ տարածություն: Ոչ մի գերեզման ցանկապատված չէր: Տիրում էր իդեալական մաքրություն: Ինձ պատմեցին, որ Շվեյցարիայում գերեզմանի համար հողատարածքը գնվում է 20 տարի ժամկետով: Եվ եթե 20 տարի անց, այդ հողակտորի համար վճարող չի լինում, ապա սովյալ գերեզմանը վերացվում է և տարածքը նորից վաճառվում:

Ես Մկրտիչ Շելեֆյանին ծանոթացել եմ 1980 թ., երբ եկել էր Երևան: Հետագայում էլ, նրա այցելությունների ժամանակ դարձյալ հանդիպել եմ: Ծրջահայաց, խելացի անձնավորություն էր: Ուրախանում էր Հայաստանի հաջողություններով և ասում էր, որ հարկավոր է «ռուսի փեշը պինդ բռնել»: Չէր սիրում հիշել Ստամբուլում ապրած տարիների մասին: Մի անգամ, երբ իմացավ, որ ծնունդով ապարանցի եմ, Մկրտիչ Շելեֆյանը ցանկություն հայտնեց լինել իմ ծննդավայրում:

Գնացինք մեր գյուղը՝ Հարթավան: Իմ հյուրը շատ ուրախացավ, տեսնելով այդ լեռնային գյուղի բնակիչների բարեկեցիկ ապրելակերպը: Բայց հիմա ամեն ինչ փոխվել է: Մեր գյուղը, ինչպես և Հայաստանի գյուղերի մեծ մասը հայտնվել են ծանր ու անօգնական վիճակի մեջ: Ցույց տալու և հպարտանալու ոչինչ չի մնացել...

Մկրտիչ Շելեֆյանի գերեզմանին ծաղկեփունջ դրեցինք և տխուր հեռացանք: Ես մտովի հիշեցի Մկրտիչ Շելեֆյանի հայտնած ցանկությունը, երբ նրա հետ բարձրացել էինք Արագած լեռան փեշին գտնվող Արագած գյուղի «յայլան»: Նա նայեց մեր

զխնաց բարձրացող Արա լեռան կողմը և ասաց.

- Արևմտյան Հայաստանն էլ ունի այսպես բարձրադիր սարեր և, եթե Աստված կամենա, այնտեղ կունենամ իմ Հավերժական տեղը:

Եվ այսպիսի երազանք ունեցող Հայրենասեր Մկրտիչ Շելփյանը իր Հավերժական տեղը գտել է օտար ափերում...

ooo ooo

...Յրվա մնացած մասն անց կացրի Նաղարեթ Սրմաքեչյանի և Հերման Սարյանի հետ: Խոսեցինք շատ հարցերի մասին: Նրանց հետաքրքրեց նաև իմ գիտական-գրական աշխատանքը: Հայտնեցի, որ իմ «Գրիգոր Հարությունյանի ժամանակը» գրքի առաջին հատորը լույս է տեսել Սիմոն Տևտեյանի հովանավորությամբ, որ նա նաև հովանավորում է երկրորդ հատորի տպագրությունը: Նաղարեթ Սրմաքեչյանը ցանկություն հայտնեց հովանավորել երրորդ հատորի տպագրությունը, ինչի համար ես նրան հայտնեցի իմ սրտալի երախտագիտությունը:

ՍԻՄՈՆԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 2-ին, առափոտյան ժամը 11-ին պայմանավորվածությամբ համաձայն եկավ Սիմոն Տևտեյանը: Նա առաջարկեց գնալ Լոզանի ուղղությամբ մինչև Վեյլ քաղաք: Սիմոնը նպատակահարմար գտավ Վեյլ գնալ հին ճանապարհով, որը գոյություն է ունեցել Ռուրեն Սևակի ժամանակ: Նա ասաց, որ մինչ այդ, մեր ուղևորությունը կատարել ենք միայն 1960-ական թվականներին կառուցված Ժնև-Լոզան-Բեռն մայրուղիով:

Սիմոնի առաջարկած ճանապարհն անցնում էր Ժնևի լճի ափերին գտնվող գյուղերով: Հասանք մինչև Վեյլ քաղաքից 7 կմ հեռավորության վրա գտնվող Քյուլի գյուղը: Բոլոր գյուղերը կապած էին իրար և միայն ճանապարհի եզրին ամրացված ցուցանակն էր ազդարարում, որ ավարտվել է մի գյուղը և սկսվում է մյուսը:

Չհասցրեցի էլ հաշվել, թե այդպես քանի գյուղով անցանք: Բոլոր գյուղերն ունեին նույն կառուցվածքը և աչքի էին ընկնում արտակարգ մաքրությամբ: Լճափին կային բաղձաթիվ ուստորաններ, որոնցում աղատ տեղ չկար: Ամենուրեք տուրիստներ էին՝ ժամանած տարբեր երկրներից: Բոլոր գյուղերից վերև ընկած բարձունքի լանջերին, մինչև նոր ճանապարհի մատույցները, գցված էին խաղողի տեռասավոր այգիներ: Գյուղացիների եկամտի միակ միջոցը խաղողն է, որից պատրաստվում են բաղձաթիվ տեսակի գինիներ:

Ամբողջ ճանապարհին Սիմոնի հետ դրուցում էինք մեղ հուղող շատ հարցերի մասին: Նա ավարտել էր Մելքոնյան հայտնի վարժարանը և շատ լավ գիտեր հայոց պատմությունն ու հայ գրականությունը: Սիմոնն ունի հիանալի հիշողություն: Մինչև հիմա էլ ականջներիս հնչում է, թե նա ինչպիսի պաթոսով արտասանեց Գեղամ Սարյանի հայտնի բանաստեղծությունը՝ «Հազար շեփոր հնչեն թող այս առավոտ...»:

Սիմոնը լավ գիտեր նաև Սփյուռքում տիրող իրավիճակը և խոր տազնապ էր հայտնում աշխարհի տարբեր երկրներում հայ երիտասարդությունից ապագա ճակատագրի համար: Նա շատ էր ոգևորված հայաստանում Սփյուռքի գործերով նախարարության ստեղծումով և կարծում էր, որ այդ նախարարությունը կնպաստի հայ երիտասարդությանը ձուլումի վտանգից փրկելու գործին:

Սիմոն Տետեյանը երբեք հայաստան չի եկել, չնայած մեծ ցանկությունը: Նա Եվրոպական առաջատար երկրների մեքենաչինական ձեռնարկություններում ձևք է բերել մեծ հեղինակություն: Աշխարհի տարբեր երկրների պատվերով կառուցված մեքենաները՝ էլեկտրաքարչից մինչև զեներատոր և այլն, առանց Սիմոն Տետեյանի եզրակացությունից չի հանձնվում պատվիրատուին: Սա շատ պատասխանատու գործ է և Սիմոնից շատ ժամանակ է խլում՝ հաճախ գործուղման մեկնելով այս կամ այն երկիր:

Երևկոյան ժամը 6-ին վերադարձանք ժնև: Սիմոնին ճանապարհեցի նյուշատել: Մի երեք ժամ հետո դանգահարեցի: Հանգստացա, որ Սիմոնը բարեհաջող տուն է հասել:

ԵՐԵՎՈՒՄ ԵՆ ՄԱՍԻՍՆ ՈՒ ԱՐԱԳԱԾԸ

Միժոնի կրտսեր եղբայր Մինասը, որը նույնպես, ինչպես իր երկու եղբայրները՝ Հովսեփն ու Միժոնը, ջերմորեն սիրում է Հայաստանը: Մինասն ամուսնացած է ֆրանսուհու հետ, որը հիանալի խոսում է արևմտահայերենով: Նրանք ապրում են Փարիզում, ունեն երկու դավակ:

Հայաստանի նկատմամբ ունեցած սերը Մինասի մոտ ամբողջացրեց իր նպատակին հասնելու գաղափարը՝ տուն ունենալ Մայր Հայրենիք Հայաստանում: Մինասը կնոջ՝ Մարիամի հետ եկավ Երևան: Նրա ցանկությունն էր գնել այնպիսի բնակարան, որի պատուհաններից երևար Մասիսը: Նա գտավ այդպիսի բնակարան Երևանի կենտրոնական փողոցներից մեկի վրա: Մինասը երջանկության մեջ է: Իր բնակարանից երևում են Մասիսն ու Արագած լեռը:

Հիմա, ասում էր Մինասը, Հայրենիքում տուն ունենք: Արդեն Հայաստան պետք է գան Հովսեփն ու Միժոնը:

Այնպես ստացվեց, որ իմ երեք գրքերը, որոնք տպագրվել են Միժոն Տետեյանի հովանավորությամբ, յույս են տեսել այն ժամանակ, երբ Մինասը Երևանում էր գտնվում: Այս դուգադիպությունը Մինասի հետ օգտագործել ենք պատշաճորեն՝ նշել ենք, ինչպես հարկն է:

«ԼԱՎ ԼՈՒՐ ԵՄ ԲԵՐԵԼ...»

Նոյեմբերի 2-ին, երեկոյան ժամը 6-ին Նաղարեթ Սրմաքեչյանը հյուրանոց եկավ բարձր տրամադրությամբ:

- Լավ լուր եմ բերել, - ասաց նա, - այսօր Մոսկվայում Մեդվեդևը հանդիպել է Սարգսյանին ու Ալիևին և ստորագրել են Ղարաբաղի վերաբերյալ փաստաթուղթ:

Այդ լուրն ինձ համար նորություն էր:

- Մենք, - շարունակեց Նաղարեթ Սրմաքեչյանը, - անչափ ուրախ ենք, որ վերջապես Ռուսաստանը վճռականորեն միջամտում է Ղարաբաղի հարցին:

- Իսկ ի՞նչ բովանդակություն ունի այդ փաստաթուղթը,-
հարցրեցի նրան:

Պարզվեց, որ հեռուստատեսությունը մանրամասներ չի հա-
ղորդել: Անմիջապես դանդահարեցի Երևան և խոսեցի ընկերոջս՝
Բաբկեն Վարդանյանի հետ: Բաբկեն Թադևոսովիչը հայտնեց
որոշ մանրամասներ և ընդգծեց, որ այդ հանդիպման ժամանակ
ստորագրված փաստաթուղթը, թեև ունի դեկլարատիվ բնույթ,
բայց կարևորն այն է, որ Ռուսաստանը նախաձեռնություն է
դրսևորել:

Լսելով այս պատասխանը, Նաղարեթ Սրմաքեչյանն ուրա-
խացած ասաց.

- Այ, հենց Ռուսաստանի այդ նախաձեռնությունն է մեզ
հարկավոր:

Ինձ մնում էր համաձայնվել Նաղարեթ Սրմաքեչյանի հետ և
մտովի պատկերացրի, թե հիմա Հայաստանում արևմտյան
կողմնորոշում ունեցող քաղաքական ուժերն ինչ հիստերիա են
բարձրացնելու այդ կապակցությամբ: Կարծես, Նաղարեթ
Սրմաքեչյանը կռահեց իմ մտքերը և ասաց.

- Մենք արտասահմանում ունենք շատ դժվարություններ,
սակայն ապրում ենք ապահով: Բայց Հայաստանում այդ
ապահովությունը չկա, իսկ դժվարություններն էլ՝ շատ: Ու մեզ
համար հասկանալի չէ, թե ինչո՞ւ Հայաստանում կան մարդիկ,
որոնք չեն գիտակցում Ռուսաստանի կարևոր ու դրական դերը
Հայաստանի ճակատագրում և քար են չպրտում մեր բարեկամ
երկրի ու ժողովրդի կողմը:

Քանի որ վերևում հիշատակեցի Բաբկեն Վարդանյանին,
կամենում եմ մի քանի խոսք ասել նրա մասին:

Բաբկեն Վարդանյանը բնավորությամբ շիտակ ու աղնիվ
մարդ է, հավատարիմ իր սկզբունքներին: Նա երիտասարդ
տարիներին եռանդով ղեկավարել է Երևանի կոմերիտական
կազմակերպությունը և մեծ ավանդ ունի երիտասարդ սերնդին
հայրենասիրությամբ դաստիարակելու գործում:

Մինչև 1991 թ. վարել է կուսակցական և սովետական պա-
տասխանատու աշխատանք, գործուն մասնակցություն է ունե-
ցել Երևանի Սովետական շրջանի կազմակերպման մեջ: Աշխա-

տելով Երևանի քաղաքային սովետի գործկոմի նախագահի առաջին տեղակալ Բ. Վարդանյանն իր արժանի ներդրումն ունի Սովետական Հայաստանի մայրաքաղաք Երևանի ուսումնական և մշակութային հիմնարկությունների ձևաք բերած հաջողությունների մեջ:

Այժմ պրոֆեսոր Բարկեն Վարդանյանը դասախոսական աշխատանք է տանում Երևանի բուհերում և շարունակում է իր գիտելիքները հաղորդել սովորող երիտասարդությանը:

ՎԱՐԴԱՆԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՕՋԱԽՈՒՄ

Երեկոյան ժամը 8-ին Նաղարեթ Սրմաքեչյանի հետ գնացինք նրա որդու՝ Վարդանի տուն: Վարդանն ինձ հրավիրել էր ընթրիքի: Ճանապարհին Նաղարեթ Սրմաքեչյանը պատմեց հետևյալը: Երբ Ստամբուլից տեղափոխվել են Ժնև, շատ դժվարություններ են ունեցել՝ տուն ու աշխատանք գտնելու գործում: Նա ոչ մի աշխատանքից չի խորշել: Շվեյցարիան ժամացույցների երկիր է: Եվ նրա որդին՝ Վարդանը ցանկանում է սովորել ժամագործություն:

- Հավանություն տվեցի Վարդանի ցանկությունը, - պատմում էր Նաղարեթ Սրմաքեչյանը, - բայց նրան ասացի, որ ժամագործ դառնալու համար հարկավոր է ունենալ կարգապահություն և համբերություն: Ժամագործի ամենակարևոր հատկությունները դրանք են:

Երբ Նաղարեթ Սրմաքեչյանը պատմում էր այս ամենի մասին, հիշեցի Կաֆկի հետևյալ խոսքերը. «Մարդկությունն ունի երկու գլխավոր մեղք, դրանք են՝ անհամբերությունը և անփութաջանությունը, որոնցից սկիզբ են առնում մյուսները: Անհամբերության պատճառով մարդիկ դուրս քշվեցին դրախտից, անփութաջանության հետևանքով էլ նրանք այնտեղ չեն վերադառնում: Բայց հավանաբար կա միայն մեկ գլխավոր մեղք՝ անհամբերությունը»:

Վարդանը հետևում է հոր խորհրդին և իր մեջ դաստիարակում է այդ երկու կարևոր հատկանիշները: Կարճ ժամանակ անց

Վարդանը դառնում է Ժնևում հայտնի ժամագործի աշակերտը: Հետո նա այնքան է հմտանում ժամագործություն մեջ, որ կարողանում է ընդունվել Շվեյցարիայում հայտնի «Ֆրանկ Մյուլլեր» գործարանում որպես ժամագործ:

Այս գործարանում էլ Վարդանն աստիճանաբար ձեռք է բերում լավագույն ժամագործ-վարպետի համբավ: Դառնում է այդ գործարանի հեղինակավոր մասնագետներից մեկը: Դրան համապատասխան էլ ավելանում է Վարդանի ամսավճարը:

Գործարանի տերը՝ Ֆրանկ Մյուլլերը ցանկություն է հայտնում վաճառել իր ունեցվածքի 20 տոկոսը: Դա ձեռք է բերում Վարդանը: Ֆրանկ Մյուլլերը զբաղվում էր հարբեցողությամբ, վարում էր շվայտ կյանք և վաճառքի է հանում գործարանի 40 տոկոսը: Դա նույնպես ձեռք է բերում Վարդանը և այդ միջոցով դառնում է «Ֆրանկ Մյուլլեր» գործարանի 60 տոկոսի սեփականատեր: Գործարանը Վարդանի զլխավորությամբ այժմ դարձել է Շվեյցարիայի առաջնակարգ ձեռնարկություններից մեկը, որի արտադրած ժամացույցները համաշխարհային շուկայում մեծ համբավ ունեն:

Վարդանի տունը գտնվում է Ժնևի լճի բարձրադիր ափին: Այստեղ ծանոթացա նրա մայրիկի՝ տիկին Սոնայի, քրոջ՝ Ադամնու և նրա ամուսնու հետ: Մենք Վարդանի հետ շարունակեցինք մեր ընդհատված զրույցը: Վարդանն ասում էր, որ ամեն ինչ պետք է անել Հայաստանից դեպի Բաթում տանող ուղիղ ճանապարհ կառուցելու համար և ինքն էլ պատրաստ է իր ուժերի ներածին չափով օգտակար լինել: Վարդանը նաև մի միտք հայտնեց, որ հնարավոր է անհրաժեշտ միջոցներ հավաքել և Հայաստանի համար գնել մի առևտրանավ: Վարդանը պատմեց նաև, թե ինչ օգնություն է կազմակերպում Հայաստանին ու Ղարաբաղին:

Երեկոյի ընթացքում ծանոթացա Վարդանի երեխաներին՝ Սասունին, Սիսվանին և Լորիին: Նրա երկու տղաներն էլ հետևում են հոր մասնագիտությանը: Երեխաները ընտանիքում ստանում են հայեցի դաստիարակություն, պահպանում են մեր ազգային լավագույն ավանդույթները: Իմ ուշադրությունը գրավեց նրանց ուշադիր ու հարգալից վերաբերմունքը տարեց

մարդկանց նկատմամբ: Այդպես էլ պետք է լինեն: Այլ կերպ չէր լինի: Նրանք գիտակցում էին, որ երկու նշանավոր հայերի՝ Նազարեթ Սրմաքեչյանի և Հովհաննես Զիլինկիրյանի թոռներն են...:

ՀԱԿՈՒ ԱՎԱԳՅԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 4-ին, առավոտյան ժամը 10.30-ին դանգահարեց Հակոբ Սարգսյանը: Ափսոսանք հայտնեց, որ այդպես էլ հնարավորութուն չեղավ հանդիպելու և երկար զրուցելու համար: Խոստացավ, որ 2009 թ. ապրիլին գալու է Երևան և կլրացնենք այդ բացը: Հակոբ Սարգսյանի հետ երկար զրուցեցինք մեզ հետաքրքրող հարցերի շուրջ: Ինձ համար հաճելի էր, որ նա ուներ առողջ ու սթափ հայացք Հայաստանի և նրա շուրջ դարգացող իրադարձությունների մասին:

Հակոբ Սարգսյանին նորից հիշեցրի Երևանի պետական համալսարանի տպարանին օգնելու մասին իմ խնդրանքը: Նա հաստատեց իր մտադրությունը:

Ժամը 11-ին գնացի Հակոբ Ավագյանին հրաժեշտ տալու:

- Կարևոր լուր ունե՞մ ձեզ հայտնելու, - ասաց Հակոբը, - մեր նախաձեռնությունը ժնեի կանտոնի կառավարությունը որոշում է ընդունել հայոց ցեղասպանությունից զոհերի հուշարձան կառուցելու մասին: Որոշվել է, որ մրցույթը պետք է հայտարարվի 2009 թ. հունվարին, որին իրավունք ունեն մասնակցելու միայն տեղացի արվեստագետները:

Հակոբին ջերմորեն շնորհավորեցի այդ կարևոր նախաձեռնության համար: Մենք բաժանվեցինք, ինչպես հին ընկերներ...

Ժամը 11.30-ին եկան Նազարեթ Սրմաքեչյանն ու Հերման Սարյանը: Նրանց ուղեկցությունը հասա օդանավակայան: Ժամը 17-ին ժնեից օդանավն ուղևորվեց Վիեննա: 18.30-ին օդանավը վայրէջք կատարեց Վիեննայում: Ժամը 22-ին օդանավն ուղևորվեց դեպի Երևան: Երևանի ժամանակով առավոտյան ժամը 6-ին օդանավը վայրէջք կատարեց Երևանի օդանավակայանում: Ավարտվեց իմ ուղևորությունը:

ՌՌԻԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՍԵՐԸ

Որքան հնարավոր էր համառոտ ներկայացրի դեպի Շվեյցարիա կատարած իմ ուղևորությունը, որը ցանկանում եմ ընթերցողի ուշադրությունը ներկայացնել «Ռուբեն Սևակի աչքերով» խորագրի տակ:

Ի՞նչու եմ ընտրել այդ խորագիրը:

Այս հարցին պատասխանելուց առաջ կամենում եմ վերադառնալ վերևում արդեն հիշատակված Ռուբեն Սևակի «Սիրոյ ու մահուան երգը» բանաստեղծությունը:

Ռուբեն Սևակի սերն ունի իրական հասցեատեր: Դա Յանի Ապելին է, որին առաջին անգամ տեսնելով Ռուբենը սիրահարվեց և մինչև իր կյանքի վերջը հավատարիմ մնաց նրան: Եվ Ռուբեն Սևակի սիրո թեմայով բանաստեղծություններն ամբողջովին նվիրված են Յանի Ապելին: Առաջին բանաստեղծություններից սկսած երիտասարդ Ռուբենը երազում է իր սիրո հակի մասին, պատկերում իր տառապանքը:

«Երգը յուշքին
Սրտիս խորէն
Կու լայ ուժգին
Ու տրտմագին
Սէրըս նորէն
Կը ծնի ցաւին
Խարոյկներէն»:

Վերջապես երիտասարդ Ռուբենը ծանոթանում է Յանի Ապելին: Եվ այդ ծանոթությունից ծնվում է «Գինով սէր» բանաստեղծությունը, որը բանաստեղծը նվիրում է Յանի Ապելին: Ահա այդ բանաստեղծությունից մի հատված.

«Դուն Հրա՛ չքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սէրն ես.
Տարաշխարհի չքնաղ ծաղի՛կն ես աղուոր.
Միսթիքական խնկումներով թունաւոր
Դուն մըսեղէն խենթացընող տաճարն ես.
Դուն Հրա՛ չքն ես, դուն Երա՛զն ես, դուն Սէրն ես:

Ահա շրթներըս կարոտովըդ կ'այրին,
 Ու կը լայննայ արտասուքի շիթ մը տաք
 Իմ մթաստուներ թարթիչներուս շուքին տակ.
 Անոնց վրայ դուն ցողը դիր համբոյրին,
 Ահա շրթներըս կարօտովըդ կ'այրին:

Բազուկներդ կը գալարուին, կը դառնան,
 Տենչին կըրակը նայուածքդ կը թովէ,
 Որովհետեւ քու մո՛ւթ հոգին գինով է,
 Սիրախտաւոր գիշերներուն պէս գարնան...
 Բազուկները՛դ կը գալարուին, կը դառնան»:

1907 թ. օգոստոսի 12-ին Ռուբեն Սևակն այս բանաստեղծությունը ուղարկում է Հրանդ Նազարյանին, նամակում գրելով հետևյալը. «Ներսիսակ պիտի գտնես բանաստեղծութիւն մը, «Գինով Սէր» վերնագրով: Շատոնց է դրկած չունէի քեզի ոտանաւոր. այս անգամ կը դրկեմ ոտանաւոր մը, որուն վրայ կը դնեմ իմ համեստ գրողի բոլոր հպարտութիւնս: Ոճը նոր է, գաղափարը նոր, արտայայտութիւնը նոր: Տեսակ մը սիրային սաղմոսերգութիւն, ուր տողերը կը կրկնուին այլքներուն համաչափութիւնովը՝ եւ իրար կ'ամբողջացնեն: ...Սրտիս ամբողջ զգայնութիւնը դրի այս տողերուն մէջ, Ձիլինկիրեանը ամբողջ այդ քերթուածին մէջ է: Գինով Սէրը նուիրած եմ Օր. Եաննի Ապելին»:

Վերջապես երկու սիրող սրտեր միմյանց երգվում են հավատարիմ մնալ իրենց ուխտին: Եվ Յանի Ապելը խոստանում է սպասել, մինչև որ Ռուբենն ավարտի համալսարանը: Ռուբեն Սևակն ի պատասխան այդ երգման, 1908 թ. գրում է «Պիտի սպասե՛մ...» բանաստեղծությունը: Ահա այդ բանաստեղծությունը.

«Երեք տարի: Դեռ կը սպասեմ ես իրեն:
 Ահա տարտամ հորիզոններն հեռաւոր,
 Ահա ճամբան որ կ'երկարի տրամօրէն,
 Լռիկ ճամբան որ զայն տարա՛ւ մենաւոր:

Ու ահա հոն գիւղին վերջին տունը ցած՝
Որուն ետին՝ եղենի ծառին քով
Երկա՛ր, երկա՛ր ես մնացի քարացած
Ու իր մեկնիլը դիտեցի արցունքով:

Երե՛ք տարի: Այս հէգ ճամբուն եզրն ի վար
Երե՛ք անգամ ծրնան մարգերը դաշտին,
Երե՛ք անգամ ձիւնի փաթիլն հողմնավար
Անձայն հիւսեց անոնց պատանքը ցրտին:

Յուսա՛լ, յուսա՛լ վերադարձի օրերուն,
Բայց ո՞վ իրեն պիտի երթար պատմելու
Թէ երկրի մութ մէկ անկիւնին մէջ հետուն,
Ես կը սպասե՛մ իրեն՝ սիրոյս իմ հըլու:

Երե՛ք տարի: Մութ ձայն մը կայ անդադրում.
Իմ վիրաւոր հոգւոյս մէջ չար ձայն մը կայ,
Լացո՞ղ ձայն մը որ գիշերիս մէջ տրտում
Կ'ըսէ ինձ. «Խեղճ աղջիկ, ան չի պիտի գայ...»:

Ախ կը ճանչնամ քու բողոքի ձայնըդ, Վիշտ,
Սակայն ի զո՛ւր, այս է իմ գիրըս նրսեմ,
Գնա պատմել Տարիներուն թէ ես միշտ
Պիտի սպասեմ, պիտի սպասեմ, սպասե՛մ...»:

1908 թ. մարտի 16-ին Ռուբեն Սևակը Հ. Նաղարյանին ուղարկելով այս բանաստեղծությունը, գրել է. «Պէտք է հոս պզտիկ խոստովանութիւն մը ընեմ քեզի, որ իմ դրկած ոտանաւորներէս շատերը պարզապէս իր (այսինքն՝ Յաննի Ապելի-Վ.Պ.) նամակներէն բառացի թարգմանութիւններ են ծայրէ ի ծայր»:

Երկար բաժանումից հետո, Ռուբենը մեկնում է էրֆուրտ և հանդիպում Յաննի Ապելին: Այդ հանդիպման նկարագրությունը նա պատկերել է «Համբոյրը» բանաստեղծության մեջ:

«Օ, երջանիկ տարիք ուր մարդ կրնայ գէթ
Տաք համբոյրի մը անհունին մէջ մոռնալ
Գոյութիւնն ալ, տիեզերքն ալ, ինքզինքն ալ,
Ու աշխարհքին ժպտիլ անփոյժ ու անգէտ;

Օր մը սիրոյ ծաղիկները կը դեղնին,
- Ե՛րբ անբաժան եղան փուշերը վարդէն,-
Պէտք է տքնիլ. ցաւը ըմպել, ու արդէն
Քիչ յետոյ ժամն է խորհելու սեւ հողին...»:

Ռուբեն Սևակի Յանի Ապելին նվիրված բանաստեղծությունների զգալի մասը լույս են տեսել 1907-1914 թթ. Կոստանդնուպոլսի հայկական մամուլի էջերում:

ԸՆԴԴԵՄ ԱՅԼԱՍԵՐՄԱՆ

Այժմ հարկ են համարում 20-րդ դարի առաջին տասնամյակում տեղի ունեցած կարևորագույն իրադարձություններին անդրադառնալ Ռուբեն Սևակի աչքերով, նրա տված գնահատականների միջոցով:

Նկատենք, որ **զենքով պայքարելու կոչով** Ռուբեն Սևակը հանդես է եկել 1909 թ. մայիսի վերջին, երբ Ռուսաստանում մոլեզնում էր հակահեղափոխական ուժերի խրախճանքը, իսկ Թուրքիայում երիտթուրքական հեղափոխության անուրջներում օրորվող գործիչներն այնպես էին շփոթվել, որ նույնիսկ Ադանայի հայ բնակչության կոտորածից հետո էլ անկարող եղան ուշքի գալ: Իսկ Ռուբեն Սևակն այն գործիչների շարքումն էր, որ «չգինովցավ» երիտթուրքական հեղափոխությունից և ճշմարիտ ու սկզբունքային դիրքերից գնահատեց տեղի ունեցածը:

Ռուբեն Սևակի գնահատմամբ այդ «գինովցած» գործիչները «կ'ջատեն գործունէութեան ամէն տենչ, երջանկութեան ամէն յոյս, սրբութեան ամէն հաւատք»: (Ռուբէն Սևակ, Երկեր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 1997, էջ 348):

«Անոնք,- ընդգծում էր Ռուբեն Սևակը 1911 թ. գրած «Այլա-

սերում» խորագրով հոդվածում.- չեն յառաջադիմեր, այլ կ'ոստնուն, չեն երազեր այլ կը զառանցեն, չեն օրհներ այլ կը նզովեն, չեն սիրեր այլ տուփան: Իրենց երզը հայհոյանքի մը պէս ամբարտավան է, իրենց ժպիտը հեզնութեան մը պէս վիրաւորիչ»: (Ռուբէն Սևակ, նույն տեղը):

Եվ այդպիսի ամբարտավանների գործունեության արդյունքին, որը «ոչ մէկ քաղաքակիրթ ազգի չէ պատահած», Ռուբեն Սևակը տալիս է խիստ, բայց և արդարացի գնահատական: «Մեր գիւղացի ու շուկայի դասակարգը աւելի մտացի է, քան այն որ մտաւորական կը կոչուի. ընթերցողը աւելի ողջամիտ է, քան գրողը, առաջնորդուողը աւելի հեռատես է, քան առաջնորդողը. ուրիշ խօսքով՝ մարմինը աւելի խելացի է, քան ուղեղը...»:

Զարմանալի չէ, ուրեմն, որ ընթերցողները մեր մէջ հետըզհետէ կը քիչնան: Այսօր արդէն աւելի գրող կայ, քան կարդացող:

Բնախօսական օրենք մ'է, որ մարմինը իր մէջէն քիչ-քիչ կը չեզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ այլասերած մասերը»:

«Նոյն օրենքով,- շարունակում է Ռուբեն Սևակը,- միայն կարելի է բացատրել, թէ ինչո՞ւ մեր մտաւորականութեան ու մեր հասարակութեան միջեւ գտնուող կապը քիչ-քիչ կը բարակնայ: Ցեղը կը մնայ առաւել քան երբեք առողջը ու իր մէջէն կը չեզոքացնէ, կ'անջատէ, կը վտարէ օտարացած ու այլասերած տարրերը: Գլուխը մարմնին կապող նիհար պարանոցը երթալով կը բարակնայ: Ու հետու չէ գուցէ այն օրը, երբոր վիզը փրթելով՝ մեր մտաւորականութիւնը անմարմին գլուխ մը պիտի ըլլայ միայն, եւ մեր ցեղը՝ անգլուխ մարմին մը...»:

«Զէ՞ք տեսներ արդեն,- հարցնում է Ռուբեն Սևակը,- թէ ինչպէս շատ մը գրագէտներ լիրք քաջութիւնն ունին յայտարարելու, թէ իրենք ժողովուրդին համար չէ, որ կը գրեն»:

Արեւմտահայությունը ձգտում էր ազատագրվել թուրքական ստրկության շղթաներից, և նրա համար անհասկանալի էր «գինովցած» մտավորականների շաղակրատանքը: «Ոչ,- փաստում էր Ռուբեն Սևակը,- հոտին ու հովիվներուն միջեւ անհասկացողութիւնը երբեք այսքան մեծ չէր եղած»:

«Որքուկի պէս,- շարունակում է Ռուբեն Սևակը,- անտէր ցեղ մը հուժկու, լուսեղ ու սիրտբուխ բարբառի մըն է ծարաւ:

Իսկ մեր գրագէտները հանելուկային, առեղծուածային, խաւարակուռ բաներ կ'սեն իրեն, ու մեր քերթողները՝ գրիչնին հայ արեան մէջ թաթխելէ վերջ՝ չինարեն տաղեր կը գրեն, որպէսզի մարդ չհասկնայ...»:

Ռուբեն Սևակը չրավարարվեց միայն փաստել դառն իրականութիւններ: Նա տվեց նաև իրավիճակը փոխելու ճշմարիտ միջոցը, պահանջելով հետևյալը. «Հեռու մենէ՛ ախտագին մտաւորականներ: Դուք ցեղին ուղեղն էք, բայց երբ այդ ուղեղը ուրիշ կերպ չի կրնար խորհիլ, քան յուսահատեցնելով մեր կենսունակութիւնը, մենք պիտի փրցնենք ու նետենք այդ ուղեղը:

Մենք նոր միտքեր, նոր սիրտեր, նոր հոգիներ պիտի դարբենենք: Մեզի կարմիր ու մսուտ շուրթերով, ուժեղ ու ժպտուն գրականութիւն մը պէտք է:

Մեզի առողջ ու երիտասարդ մտաւորականներ պէտք են: Զուկն իր գլուխէն կը հոտի, ազգն՝ իր մտաւորականներէն: Անոնք են ցեղի մը գլուխը»:

Նկատի ունենալով արևմտահայութեան պայքարի ոգին և այդ պայքարը փակուղի տանող ուժերին, Ռուբեն Սևակը եզրակացնում էր. «Կրնայ մարմինը շատ ուժեղ ու շատ գործունեայ ըլլալ, բայց երբ ուղեղը խաթարուած է՝ այդ մարմնին շարժումը պիտի ըլլայ միայն յիմարական գործունէութիւն եւ անպտուղ յոգնութիւն:

Ահա, թէ ինչո՞ւ իրական վտանգները թողլով՝ հովերուն դէմ ու մենք մեզ դէմ կը պայքարինք: Ահա, թէ ինչո՞ւ փոխանակ յառաջադիմելու՝ խենթերու պէս կեցած տեղերնուս վրայ կը ցատկենք երկու հազար տարիէ ի վեր...»:

«Այո, - շարունակում է Ռուբեն Սևակը, - մեր ցեղը տարօրինապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը, որ երէկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք Ուրուական Նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի, բայց եւ հաստատ ցամաքի մը հասնելու անկարող...»:

Ռուբեն Սևակը հարկ չի համարում խոսել այդպիսի իրավիճակի բոլոր պատճառների մասին, և միայն անդրադառնում է դրանցից զլխավորին: Դա «այն է, որ դեկին գլուխը կը նստեց-

նենք մեր էն ախտագին, էն այլասերած, էն անպէտ ծնունդները»:

Ռուբեն Սևակն այսպիսի եզրակացութեան է եկել Ադանայի Հայ բնակչութեան կոտորածից հետո և դատապարտելով նրանց, ովքեր շարունակում էին հավատալ երիտթուրքերի խոստումներին, 1911 թ. դգուշացնում էր. «Սակայն ստո՛յգ, ստո՛յգ կ'ըսեմ ձեզի, վտանգը մեծ է, շատ մեծ, աւելի մեծ, քան կրնանք ենթադրել»:

Ռուբեն Սևակը կոչ էր անում. «Ժամանակն է հակազդելու, հակազդենք: Մեզի նոր Ոսկեդար մը պէտք է, նոր Ոսկեդար մը: Այլասերո՞ւմ, ոչ, Վերածնո՞ւնդ»: (Ռուբէն Սևակ, նույն տեղը, էջ 351):

«ԳԻՆՈՎՑԱԾՆԵՐԸ»

Վերևում արդեն նշվել է, որ Ռուբեն Սևակը երիտթուրքական հեղափոխութեամբ նույնպես չհիացավ, ավելի ճիշտ «չգինովցավ» և ճշմարիտ դիրքերից էր գնահատում տեղի ունեցածը:

Երբ «գինովցածները» երիտթուրքական հեղափոխութեան հաղթանակից ուշքի չէին գալիս և ընկել էին անուրջների գիրկը, 1908 թ. Ռուբեն Սևակը նրանց հիշեցնում է «Ստամպոլի Հին տարեգրութիւններուն մէջ» եղած հետևյալ ավանդավեպը. «...Հոն դատաւոր մը կար որ կոյր էր իր աջ աչքէն եւ խուլ իր ձախ ականջէն: Ու այդ դատաւորը ժողովուրդին վէրքերը կը տեսնէր իր աջ աչքով, ու տառապողներուն ողբը կը լսէր իր ձախ ականջով»:

«Չափազանցա՞ծ պիտի ըլլանք,- հարցնում էր Ռուբեն Սևակը,- արդեօք այդ հինավուրց հեքիաթը բերելով, պատշաճեցնելով մեր նոր կեանքին: Կոյր եւ խուլ դատաւոր մը, ինչո՞ւ չէ»:

Ռուբեն Սևակը փաստում էր. «Անբրեւակայելի, անհաւատալի անտարբերութեան չըջան մըն է, որ կը բոլորենք: Ո՞ւր է էրեկի կառավարութեան մշտաբաց աչքը, որ ամենափոքրիկ, ամենախեղճ բառն անգամ անտես չէր փախցնել լրագրութեան

սիւնակներէն: Ո՞ւր է այն մշտարթուն ականջը, որ քարերու, պարիսպներու ետեւէն կը լսէր, կ'իմանար բողոքի ամենաթշուառ ճիչ մը՝ մահուան պատիժովը պատժելու համար զայն: Բողոքի ահռելի աղաղակներ կը գոռան հիմա, որո՞նք են լսողները. ի՞նչ եղաւ հսկողութիւնը, կա՞յ յատուկ պաշտօնէութիւն մը որ մեր բողոքները փոխանցէր...»:

Ռուբեն Սևակը համոզված էր, որ երիտթուրքական հեղափոխութեան հաղթանակով սկսվել են անիշխանութեան օրերը և իրրև ապացույց, բերում էր «Հին օրինակը»: «Պոլսոյ մէջ. - գրում էր նա, - մեր դրացիները օրերով ու գիշերներով Ստամպուլի վախկոտ օդը կը գոռացնեն հրազէնի անօգուտ պայթիւններով. անոնք չեն լսուիր: Գում-Գափուի մէջ խեղճ կապար մը կը սուրայ, ու ահաւասիկ քառասուններու գունդ մըն է, որ սուիններով կը յարձակի միամիտ հայերու վրայ: Լրագիրները կը բողոքեն, մելանը կը հոսի, գրիչները չի հաւատալիք գործունէութիւն մը ցոյց կու տան, բայց որո՞ւ դէմ, ո՞վ է լսողը. ահա խնդիր մը որուն վրայ կ'արժէր որ մտածէինք...»: (Ռուբեն Սևակ, նույն տեղը, էջ 550-551):

Ռուբեն Սևակը գտնում էր, որ երիտթուրքական հեղափոխութեամբ հայերի վիճակը ոչնչով չի փոխվի: Նրանց հալածանքը կշարունակվի, ինչպես որ եղել էր սուլթանի ժամանակ: Ուստի հարկավոր չէ բթացնել ղզոնությունը, որովհետև երիտթուրքական հեղափոխությունը ոչինչ չի տալու Թուրքիայի լծի տակ գտնվող արևմտահայութեանը:

Եվ իր տազնապը հիմնավորելու համար Ռուբեն Սևակը հիշեցնում էր, որ գավառներում ոչինչ չի փոխվել, այնտեղից բռնութեանների դեմ եկող բողոքներին լսող չկա, որ նույնիսկ արգելված է սահմանադրութեան բառն արտասանել: Ռուբեն Սևակը ղզուչացնում էր. «Գործի գլուխ դեռ տխուր պէյեր կան՝ հայ արիւնովը կարմիր ու աստուածներու պէս անսասան: Ներսի գաւառներու մէջ կոտորածի վախ կայ. կը լսէ՞ք. ԿՈՏՈՐԱԾԻ ՎԱՆԸ... Ամէն ժամ թերթերու մէջ յեղափոխական քօմիթէներու հասցէին պաղատանքի, բողոքի անհամար նամակներ կը տեղան. հին ստրկական, շողոքորթական բանաձեւեր գլուխնին կը ցցեն: Երջանիկ քօմիթէներ, որոնք չեն լսեր...»: (Ռուբեն Սևակ,

նույն տեղը, էջ 551): Եվ անդրադառնալով մամուլի ազատությանը, Ռուբեն Սևակը մատնանշում էր. որ գրելու ազատությունը «այն ատեն միայն օգտակար կրնայ ըլլալ՝ երբ մեզի լսող կառավարութիւն մը ըլլայ»:

«ԱՅԴ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԴԵՄ Է ՈՒՂՂՎԱԾ»

1908 թ. ամռանը, երիտթուրքական հեղափոխության հաղթանակից հետո, ուսանողական արձակուրդի առիթն օգտագործելով Ռուբեն Սևակը կարճ ժամանակով եկավ Կ. Պոլիս: Այստեղ հանդիպեց մի շարք նշանավոր գործիչների, նրանց հետ քննարկեց հայ հասարակայնությանը հուղող շատ հարցեր, որոնց մեջ ամենից կարևորը երիտթուրքական հեղափոխության նկատմամբ վերաբերմունքն էր:

Ռուբեն Սևակն իր բնավորության համաձայն շիտակությամբ զգուշացնում էր, որ հարկավոր չէ ժամանակից շուտ ուրախանալ և այդ հեղափոխության հետ հույսեր կապել: «Այդ հեղափոխութիւնը, - ասում էր նա, - մեզ հայերիս համար չէ: Այդ հեղափոխութիւնը մեր դեմ է ուղղված»: Իրեն առարկողներին Ռուբեն Սևակը պատասխանում էր՝ մի շտապեք, համբերեք և շուտով ձեր ընկեր իթթիհադականները ոչ միայն իրենց դեմքը ցույց կտան, այլև ժանիքները:

Իր հրապարակային ելույթներում Ռուբեն Սևակը հասկանալի պատճառներով հաճախ դիմում էր այլաբանության: Հայտնի է 1908 թ. օգոստոսի երկրորդ կեսին Ռուբեն Սևակի այդպիսի ելույթներից մեկը, որը նվիրված էր Վահրամ Փափաղյանի թատերական ներկայացումներին: Այդ ելույթը տպագրվել է «Սուրհանդակ» հանդեսում 1908 թ. օգոստոսի 22-ին:

«Ամբողջ Եվրոպայի մէջ, - ասաց այդ ելույթում Ռուբեն Սևակը. - աշխարհի էն շքեղ կեդրոններէն մինչեւ ամենամութ ու խաւարին անկիւնները՝ ես չեմ տեսեր ու չեմ ալ կրնար հաւատալ, որ գտնուի տակաւին մէկ ուրիշ ազգ՝ որ ամէն օր ու ամէն վայրկեան ապրէր դերասանի ճշմարտապէս կեղծ ու գերեզմանօրէն ծիծաղելի այն կեանքը, որ դարերէ ի վեր մեր կեանքը

եղաւ, մեր, ստրկացած թրքահայերուս կեանքը... Տառապի՛լ ու ստիպուած ըլլալ ամենաերջանիկ կերպարանք մը ցոյց տալու... անպատուիլ, բռնաբարուիլ. գետնաքարչ տապալիլ, ու ստիպուած ըլլալ գոհութեան ջերմագին աղաղակներ բարձրացնելու... Ժպտի՛լ այնպիսի մէկ վայրկեանիդ, որ արիւն արցունք պիտի պոռթկար աչերէդ... մաղթանքի ճիչեր հանել կոկորդէդ այն բռնակալ ձեռքին համար, որ զքեզ կը խեղդէ... մեռնի՛լ- հոգեպէս մեռնի՛լ- ու ապրիլ ձեւացնել... ահա դերասանական ահռելիօրէն կեղծ կեանքը, որ մերը եղաւ այնքան երկար տարիներ... Արդ ինչպէ՞ս կ'ուզէիք, որ այսպիսի պայմաններու մէջ, ժառանգօրէն ու բնածինօրէն մեր ամենաանկեղծ յատկութիւնը մեր կեղծելը չըլլար, ու մեր բնական յարմարութիւնը՝ դերասանութիւնը...»։ (Ռուբէն Սեւակ, նույն տեղը, էջ 549)։

Ահա Ռուբեն Սեակի դիրքորոշումը, որ նա արտահայտեց երիտթուրքական հեղափոխութեան հենց առաջին օրերին։ Ո՞վ էր ճիշտ։ «Գինովցածնե՞րը», թե՞ սթափ մտածող փիլիսոփա բանաստեղծն ու ազգային գործիչը։

Պատմութիւնը տվել է այս հարցի պատասխանը։

ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Ասվածի կապակցութեամբ էլ ուղում եմ ընդգծել հետևյալը։ Մեր գրականութեան պատմութեան մեջ Ռուբեն Սեակը եթե հիշատակվել է, ապա՝ որպէս լիրիկ բանաստեղծ։ Ի՞նչ պատճառով է ուշադրութիւնից դուրս մնացել այդ մեծ հայրենասեր մարդու ազգային, հասարակական-քաղաքական գործունեութիւնը։

Այս հարցին պատասխանելու համար նախ, անհրաժեշտ եմ համարում ասել հետևյալը. եթե մեկ այլ կուսակցութեան պատկանողը խոսում է մյուս կուսակցութեան սխալների, թերութիւնների մասին, ապա հասկանալի է՝ դա կուսակցական պայքար է, որին հատուկ է սուրյնկտիվ մոտեցումը։ Այսպիսի դեպքում միշտ հնարավոր է արդարանալ կամ փոխադարձաբար մեղադրանք ներկայացնել այդ կուսակցութեան հասցեին։

Բայց բոլորովին այլ է, երբ որևէ կուսակցություն զործունեությունը կամ նրա ընդունած քաղաքական որոշումները քննադատում է անկուսակցականը, այն էլ այնպիսին, որն ունի հեղինակություն, անկախ մտածողություն և համակիրների մեծ բանակ:

Այդպիսի դեպքում քննադատվող կուսակցությունը սովորաբար ձգտում է այդ հեղինակավոր անձին դանադան միջոցներով ներգրավել իր ճամբար և այդ կերպ լուեցնել նրան: Իսկ եթե չի հաջողվում, ապա գործի է դրվում մեկ այլ փորձված միջոց: Ամենինչ արվում է այդ հեղինակավոր գործչին վարկարեկել, լավագույն դեպքում պահել ստվերի տակ և ի վերջո մատնել մոռացություն: Այս մեթոդը առանձնապես արդյունավետ է. երբ տվյալ գործիչը այլևս կենդանի չէ ու չկան նաև նրան պաշտպանող շահագրգիռ ուժեր:

Ահա, մոտավորապես, իմ պատկերացմամբ, այդպես են վարվել Ռուբեն Սևակի հետ «գինովցածները» ու նրանց հետագա գաղափարակիրները:

Ճիշտ է, նրանց չհաջողվեց Ռուբեն Սևակին մոռացություն տալ, բայց հասան նրան, որ Ռուբեն Սևակը համարվեց միայն լիրիկ բանաստեղծ և կեղծ բարեպաշտությունը ավստոսանք հայտնվեց, թե երիտասարդ հասակում դարձավ ցեղասպանություն զոհ ու այդ պատճառով չհասցրեց ձևավորվել որպես լիարժեք բանաստեղծ:

Ինչո՞ւ, այնուամենայնիվ, Ռուբեն Սևակի նկատմամբ այդպիսի վերաբերմունք էր ստեղծվել: Անդրանիկ Մառուկյանը դա բացատրում է նրանով, որ Ռուբեն Սևակը կուսակցական չէր: **«Եթէ,- գրել է նա,- Դանիէլ Վարուժանին պէս, Սիամանթոյին պէս Ռուբէն Սեւակը դաշնակցական գործիչ մ'ըլլար, անոնց պէս կը փառաբանուէր»** («Նայիրի», 6 փետրվարի, 1999):

Բայց սա, իմ կարծիքով, միակ գլխավոր պատճառը չէր: Նաև այն էր, որ լինելով անկուսակցական Ռուբեն Սևակը խստորեն ու սկզբունքային դիրքերից քննադատում էր «անսխալական» դաշնակցությունը, մատնացույց անում ոչ միայն նրա գործած սխալները, այլև կանխատեսում երիտթուրքերի հետ համագործակցության ողբերգական հետևանքները: Գլխավորը Ռուբեն

Սևակի անհամաձայնությունն էր դաշնակցության որդեգրած սկզբունքների ու գործելակերպի հետ:

Կարևոր եմ համարում ընդգծել մի հանգամանք ևս: Ռուբեն Սևակի քաղաքական հայացքները, մինչև օրս բավարար չափով չեն ուսումնասիրվել: Առհասարակ, տիրում է այն սխալ կարծիքը, թե Ռուբեն Սևակը լիարժեք ձևավորված քաղաքական հայացքներ չի ունեցել:

Այդպես մտածում են նրանք, որոնք շարունակում են ընդհանրապես կարևոր տեղ չհատկացնել Ռուբեն Սևակին: Իհարկե, այդպես մտածողները սխալվում են:

Ռուբեն Սևակն անդիջում կրքոտությամբ քննադատում էր դաշնակցության ղեկավարներին թույլ տված սխալների համար, կոչ անելով, քանի ուշ չէ, անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել ժողովրդի ուժերը համախմբելու, նրա անվտանգությունն ապահովելու համար:

Բայց, ինչպես արդեն վերը նշվել է, դաշնակցության ղեկավարներն այլ քաղաքականություն էին որդեգրել: Եվ պարզ էր, որ այդպիսի քաղաքականություն որդեգրածների համար անընդունելի պետք է լիներ Ռուբեն Սևակի նման մտածողների գործունեությունը: Անընդունելի էին նաև անձնապես:

Ռուբեն Սևակը ստանում էր նաև այնպիսի նամակներ, որոնց հեղինակները չհասկանալով իրավիճակի ամբողջ ծանրությունն ու լրջությունը, շփոթում էին երևույթները:

Այդպիսի հեղինակներից մեկը՝ Հ. Ալփիարը 1914 թ. մարտի 15-ին Ռուբեն Սևակին ուղարկած նամակում գրում էր. «Դաշնակցութիւնը չեմ սիրեր, ձեռքս չէ, բայց իմ նախընտրած թերթս է «Ազատամարտը»: Ռուբէն Չարդարեանը իբրեւ գրող նմանը չունի եւ մասնաւոր գործով կը կարգամ իր բոլոր այն գրածները, որ կուսակցութեան չեն»: Ալփիարն ավելացնում էր նաև, թե հակադաշնակցական լինելը «պատճառ մը չէ, որ քաջուիմ հիանալէ այն ճշմարիտ գրագէտներուն վրայ, որ կրնան ըլլալ դաշնակցական»: (ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, գ. 10. 13):

Բուլվարային երգիծարան Ալփիարի այս նամակից կարելի է եզրակացնել, որ նա չէր հասկացել, թե ինչու դաշնակցության գործիչներին քննադատելիս Ռուբեն Սևակը հաշվի չի առել

նրանց հայտնի գրող ու բանաստեղծ լինելը: Ռուբեն Սևակին ամենից առաջ հետաքրքրել է նրանց որդեգրած քաղաքականությունը, որի վտանգավորությունը նա խորաթափանցությամբ կանխատեսում էր ու զգուշացնում հետևանքների մասին:

Ռուբեն Սևակն իր սկզբունքային դիրքորոշմամբ խանդարում էր արևմտահայության ճակատագիրը տնօրինելու գործը սեփականաշնորհած ուժերին: Եվ դա աննկատ չէր մնում երիտթուրքական իշխանությունների ուշադրությունից, որոնք Ռուբեն Սևակին դիտում էին այն մտավորականների շարքում, որոնք ձեռք էին բերել մեծ հեղինակություն ու ազդեցություն և վախենում էին նրանցից:

Շատ տարիներ անց. 1915 թ. մարտի 8-ին Ռուբեն Սևակը պատասխանելով իր հայացքների հետ չհամաձայնություններին իր օրագրում գրել է հետևյալը. «Վաղուրն է սկսեալ պիտի ջանամ ըլլալ այն, ինչ որ եմ. որովհետեւ այն, ինչ որ եմ, ինձ կը թուի թէ աւելի բարձր է, քան այն, ինչ որ կ'երեւամ: Օն, ուրեմն, պարզութեան, յստակութեան, գեղեցկութեան աստուածները, օգնեցէք ինձ»:

ԴԱ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՄԻԱԿ ՊԱՀԱՆՁԸ ՉԷՐ

...Վրա հասավ 1909 թվականը: Ռուբեն Սևակը Կ. Պոլսից ստանում էր բաղձաթիվ նամակներ, հաճախ 8-10 էջի վրա. որոնց հեղինակները հայտնում էին տեղի ունեցած իրադարձությունների մասին: Ընկերներից ստացված նամակներն աստիճանաբար դառնում էին տազնապալի:

1909 թ. ապրիլի 14-ին Հրանտ Նաղարյանը Ռուբեն Սևակին հայտնելով Ադանայի հայ բնակչության կոտորածի մասին, գրում էր հետևյալը. «Ժողովուրդը չահարեկելու համար թերթերը ոչինչ կը գրեն ճշմարտութեան տեսակէտէն: Բայց սա բացայայտ ու անուրանալի է թէ դէպի լսու չէ որ կ'երթանք: Ռէպրսիտներ ծայր տուած է... Վտանգը ծայր տուած է»:

Հ. Նաղարյանը միաժամանակ հայտնում էր նաև, որ «...այսօր վայրկեան մը Արլանտիտ գացի: Հոն դաշնակցական բնկեր-

ներ տեսայ. Աթոմ, Շահէնը, Ֆնդքլեանը, ինչպէս Զաւէնը և ուրիշներ: Մարդիկը յոռետես են, ծայրահեղօրէն յոռետես ու ամէն կերպով կը հաւատան ոչաքսիոնին ու փախչիլ կը մտածին, մէկը Պուլկարիա (Աթոմ կ'ըսէ), միւսը Եգիպտոս, միւսը չեմ գիտեր ուր...» (ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ, գ. 105, թ. 2):

1909 թ. ապրիլի 15-ի նամակում Հ. Նաղարյանը գրում էր. «Գաւառներում սարսափելի ջարդ, Աղանա, Սիս, Մերսին... բոլորը ջարդուած ու հրկիղուած: Բռնապետական դահիճը իր պիղծ չունչը... կ'ուղէ անգամ մը ևս հայու արիւնով իր հոգեվարքի ծարար յագեցնել»: (Նույն տեղը):

Երիտթուրքերի ազգային (և թե կարելի է այս բառն օգտագործել) քաղաքականութեան համար ամենաղժվար խնդիրը Հայկական հարցն էր: Պանթուրքիզմի գլխավոր թիրախը հայտարարվեց Հայկական հարցը՝ այստեղից բխող իր բոլոր հետևանքներով: Երիտթուրքական պարագլուխներից Մահմեդ Ռիդան առանց թաքցնելու հայտարարեց, որ սուլթան Աբդուլ Համիդն իրենց շատ ծառայութիւններ կարող է մատուցել նաև ներքին քաղաքականութեան խնդիրները լուծելու գործում:

Եվ, իսկապես, երիտթուրքերը չուշացրին դրանից օգտվելն ու իրագործեցին իրենց ոճրագործ ծրագիրն Աղանայի հայ բնակչութեան նկատմամբ: Նրանք նախօրոք բորբոքեցին ազգային ու կրօնական թշնամանք հայերի նկատմամբ:

Հայ բնակչութեան դեմ ուղղվեց խուժանը երիտթուրքական դորամասերի հետ միասին: Կոտորածը սկսվեց 1909 թ. ապրիլի 1-ին և շարունակվեց 15 օր: Սպանվեց 30 հազար անդեն հայ: Անմեղ հայերի արյունը հոսում էր ամբողջ 15 օր շարունակ, որովհետև երիտթուրքերը որևէ մտադրութիւն չունեին անգնն մարդկանց կոտորածը կանխել: Նրանց հարկավոր էր հայերի կոտորածը հասցնել ավարտին:

Թվում էր, թե այս ահափոր ոճրագործութիւնների դեմ թուրքական պառլամենտի հայ պատգամավորները պետք է բուռն բողոք բարձրացնեին, պահանջեին պատասխանատվութեան ենթարկել հայերի կոտորածը կազմակերպողներին: Կարծես թե պահը եկել էր, որպեսզի դաշնակցութիւնը ցույց տար, որ իսկապես ինքն է այն միակ ուժը, որն ի վիճակի է

պաշտպանել հայության շահերը: Բայց դաշնակցությունը լուրջ:

Պատվամենտի հայ պատգամավորները, որոնց մեծ մասը դաշնակցական էին, լուրջին: Նրանց լուրջությունն առաջ բերեց խոր վրդովմունք, որն առավելապես արտահայտեց «Բիւզանդիոն» թերթը, գրելով, թե հայ պատգամավորները լուրջին, որովհետև գիտեն, որ խոսելն արծաթ է, լուրջ ոսկի, որն ամեն ամիս նրանց տրվում է որպես ոտճիկ: «Բիւզանդիոնի» այս խոսքերն այնքան էին վիրավորել դաշնակցականներին, որ Պոլսի պատրիարքարանի բախում դաժանորեն ձեռնեցին «Բիւզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Քեչյանին:

Ռուբեն Սևակին ուղարկած նամակներից արդեն տեսանք, թե ինչպես էին դաշնակցության լիդերները սարսափած մտածում փախուստի մասին, բայց ահա, հայ խմբագրին ահարեկելու և ձեռնելու համար խրոխտացել էին:

Ինչպե՞ս կարելի էր ինչ-որ մի 30 հազար հայ կոտորելու համար փչացնել հարարերությունները երիտթուրքերի հետ: Դաշնակցության լիդերները հյու-հնադանդ ենթարկվեցին երիտթուրքերի պահանջ-հրամանին՝ «մոռացեք Ադանայի արյունահեղությունը»:

Բայց դա երիտթուրքերի միակ պահանջը չէր: «ՀՅ դաշնակցութեան պատմութիւն» գրքի 2-րդ հատորի 19-րդ էջից տեղեկանում ենք, որ 1909 թ. հուլիսի 15-ին էնվերը եկավ հայոց պատրիարքարան ու հայության գործերը տնօրինող դաշնակցական երևելիների երեսին շարտեց հետևյալը. «... Եթէ հայ ազգն օսմանեան նոր և ազատ վարչակարգի դէմ ալ գլուխ բարձրացնէ անջատողական նպատակով... ապա համարձակօրէն կ'ըսեմ, թէ մենք իթիհադականներս, այնպիսի խստութեամբ պիտի պայքարենք այդպիսի ազգային դաւաճանութեան դէմ, որ պիտի փնտռէք սուլթան Համիտի բռնակալութեան ամենասեւ օրերը» (Վարանդեան Մ., հ. 2, էջ 19):

Եվ դաշնակցության գործիչները, ենթարկվելով էնվերի պահանջին, գլուխ չբարձրացրին ու շարունակեցին ավելի եռանդով առաջ տանել սիրախաղը:

Ոչ մի քննադատություն չի դիմանում թուրքական պառլամենտում դաշնակցության պատգամավորների կեցվածքը:

Նրանք ոչ միայն լուում էին, այլև եռանդով պաշտպանում էին երիտթուրքական կառավարությունը: Ասվածը փաստում է դաշնակցության դեկավարներից Վուսմյանը. որը 1910 թ. գրած «Մեր հավատամքը» գրքում Ադանայի կոտորածը համարում էր հին վարչակարգի մնացուկ, որի դեմ, ըստ նրա, «վրդովված էր» Իթթիհադը: Վուսմյանը եռանդով պաշտպանում էր երիտթուրքերի հետ համագործակցության շարունակելը (Ասում, «Մեր հավատամքը», Կ. Պոլիս, 1910, էջ 16):

Ադանայի ողբերգությունից հետո դաշնակցությունը միայն իր մտքի մեջ էր փայփայում երիտթուրքերի հետ հարարերությունները խզելու մտադրությունը: Իսկ գործնականում նրա լիդերներն ամեն ինչ արեցին, որպեսզի արևմտահայությունը չզինվի: Ավելին, աջակցեցին ժողովրդի դինամիստները: Եվ այս դավաճանական քայլը, որ որոշ հետազոտողներ մեղմացնելու համար կոչում են «սխալ», դաշնակցության լիդերներն արդարացնում են նրանով, թե դա արվում էր արևմտահայության անվտանգությունն ապահովելու շահերից ելնելով:

Եվ այդ շահերը «ապահովելու» առաքելությունն իրենց վրա վերցրին Օտոմանյան բանկի հերոս Գ. Բաստրմաջյանը (Արմեն Գարո) ու ոչ անհայտ Վ. Փափաղյանը (Կոմս): Նրանք մի քանի անգամ հանդիպեցին երիտթուրքերի պարագլուխներից Մ. Շուքրիի և դոկտոր Նազրմի հետ:

Ի վերջո, այդ հանդիպումների արդյունքով ծնվեց մի հայտարարություն, որտեղ ասվում էր. «Հայրենիքի (այսինքն՝ Թուրքիայի- Վ. Պ.) ազատութիւնն ապահովելու, անոր ամուր հողային և քաղաքական ամբողջութիւնը մշտապէս պահպանելու, կարգ մը անձերու մէջ գոյացած թիրիմացութիւնները փարատելու և օսմանեան տարրերու միջև լուսագոյն յարարութիւններ հաստատելու նպատակով Իթթիհադ վե թերաքի և ՀՅ Դաշնակցութիւն կուսակցութիւնները կատարեալ համաձայնութեան եկան»:

Մ. Վարանդյանը հիշատակում է այդ համաձայնությունն սկզբունքները, որոնցից հարկ եմ համարում առանձնացնել այն կետը, որտեղ նշվում էր. թե «Իթթիհադ վե թերաքը» և դաշնակցութիւն կուսակցութիւնը մարտի 31-ին Ադանայի ողբեր-



Կ. Պոլիս. 1905 թ. Պերպերյան վարժարանի շրջանավարտները:
Առաջին շարքի աջից երրորդը Ռուբեն Սևակն է



1909 թ. Ռուբեն Սևակը
Լոզանում



1908 թ. Յանի Ապելը Լոզանում



1909 թ. Ռուբեն Սևակը և Յանի Ապելը Լոզանում



Ռուբեն Սևակը և Յանի
Ապելը Լոզանում,
1909 թ.



Յանի Ապելը իր երկու
երեխաների՝ Լևոնի և
Շամիրամի հետ,
1922 թ. Փարիզ



Ռուբեն Սևակի մայրը
Արմավենի Չիլինկիրյանը
իր թոռնիկ Հովհաննես
Չիլինկիրյանի հետ,
Կ. Պոլիս, 1925 թ.



Ռուբեն Սևակի նկարած Բեթհովենի և Վ. Հյուգոյի դիմանկարները
(Կ. Պոլիս, 1904 թ.)



Ռուբեն Սևակի անվան Հիշատակի տան և պատկերասրահի պաշտոնական բացումը (Նիս, 1986 թ., օգոստոսի 13)



Հովհաննես Զիլինկիրյանը, Շամիրամ Սևակը և Ժիրայր Նայիրին Ռուբեն Սևակի անվան պատկերասրահում (1988 թ., մարտի 9)



**Հովհաննես Չիլինկիրյանը և Նազարեթ Սրմաքեչյանը
(Հոկտեմբեր, 2009 թ., Ժնև)**



Հակոբ Ավագյան



Ժիրայր Նայիրի



**Ձախից աջ՝ Արթեն Շելեֆյանի, Ժիրայր Նայիրիի, Վարդան
Սրմաքեչյանի և Նազարեթ Սրմաքեչյանի հետ
(Հոկտեմբեր, 2009 թ., Ժնև)**



Միսոն և Եղսան Դեղեյանները իրենց դուստր Սիլվայի հետ



Հովհաննես և Իրմա Չիլինկիրյանները Լևոն Սևակի հետ



*Հովհաննես Չիլինկիրյանը Ռուբեն Սևակի անվան դպրոցի տնօրեն
Զուլիա Ղազարյանի և Հակոբ Ավագյանի հետ*

գական իրադարձութիւնները համարելով դաս քաղելու նախադրուչացում, որոշեցին գործել համատեղ հիմնական կէտերն իրականացնելու համար: (**Վարանդեան Մ.**, նույն տեղը, էջ 21):

Կարճ ժամանակ անց, դաշնակցության 5-րդ համագումարը, վերոհիշյալ հայտարարությանը համապատասխան, ընդունեց հետևյալ որոշումը. «Դաշնակցութիւնը պիտի շարունակէ նոր թափով... համագործակցիլ երիտասարդ թուրք կուսակցութեան եւ մտաւորականութեան հետ»:

Բայց սա երևի դաշնակցության ղեկավարության համար շատ քիչ էր, ուստի նաև արձանագրվեց, որ «Դաշնակցութիւնը վճռականապէս ետ մղելով անջատողական ձգտումները, պիտի տքնի վերակազմել երկրի քաղաքական եւ տնտեսական կարգերն օսմանեան պետութեան ամբողջութեան մէջ, հիմնուած բոլոր շրջաններուն տեղական լայն ինքնավարութեան վրայ»:

Այս առնչությամբ չի կարելի չհամաձայնել Ս. Սապահ-Գուլյանի հետևյալ գնահատականին. «Պատմական ամենամեծ սխալը, որ Հ.Յ.Դաշնակցութիւնը գործեց, դա այն պայմանադրութիւնն էր, որ Ադանայի կոտորածից անմիջապէս յետոյ նա կնքեց իթթիհադի հետ, նրա հետ համաձայնելով, համագործակցելով: Դրանով իթթիհադը հայերի մէջ ոչ միայն մշտական մի նեցուկ ունեցաւ, այլեւ ծանրացաւ հայութեան վրայ եւ իր ուղղակի անել չկարողացածը դաշնակցութեան ձեռքով, նրա միջոցով արեց»:
(**Սապահ-Գիւլեան. Պատասխանատուները**, էջ 108):

Անկախ նրանից, որ դաշնակցության շատ գործիչներ համաձայն չէին այս ամենին և շատերն էլ դրա համար հեռացան կուսակցությունից, պետք է ընդգծել, որ 1907 թ. դեկտեմբերին երիտթուրքերի հետ կնքած համագործակցությունը մեծ ճեղք տվեց Ադանայի հայ բնակչության կոտորածի ժամանակ, և դրանով հանդերձ դաշնակցությունը հայտնվեց խոր ճգնաժամի մեջ:

Լուրջ մտածողները դա դիտեցին ոչ միայն որպես դաշնակցության կրախ, այլև որոշակիորեն համոզվեցին, որ դաշնակցությունն այլևս անելիք չունի և հանուն հայ ժողովրդի շահերի այդ կուսակցությունը պետք է արմատապես փոխեր իր տակտիկան ու ստրատեգիան կամ էլ հեռանար քաղաքական ասպարեղից և ինքնալուծարվեր:

Սա կլիներ արդարացի և հայ ժողովուրդը հետադայում կիրկվեր շատ դժբախտություններից:

Բայց դաշնակցությունը չլուծարվեց, մնաց ասպարեզում, որովհետև նրա գոյությունը սույալ ժամանակաշրջանում շատ էր հարկավոր երիտթուրքերին:

Իհարկե, այս ամբողջ անցուդարձին ուշադրություն չետևում էին նաև Թուրքիայից դուրս գտնվող հայկական ուժերն ու շարժումները: Բոլորն էլ զգում էին վերահիշյալ պորձարքի աննպաստ ուղղվածությունն ու բովանդակությունը:

Դաշնակցությունը զգում էր, որ կորցնում է ոտքերի տակի հողը, վտանգում հեղինակությունը: Եվ 1911 թ. Կ.Պոլսում գումարված դաշնակցության 6-րդ համագումարն աղմուկով քննարկեց երիտթուրքական կուսակցության նկատմամբ տեննայիք վերաբերմունքի հարցը: Համագումարը ցուցադրություն համար, ըստ Վ. Մինախորյանի, ընդունեց հետևյալ որոշումը. «...Հայ ժողովուրդի վերաբերեալ կենսական պէտքերու մասին համաձայնութիւններն անհետեւանք մնացած են, իլթիհազը չէ խորհրդակցած երկրի կացութեան վերաբերեալ հարցերու մէջ դաշնակցութեան հետ եւ անպատիժ կը թողու չարագործները...»: (Մինախորեան Վ., 1915 թ.ական, Վենետիկ, 1949, էջ 89):

Դաշնակցության լիդերներից մեկի՝ Ատոմի հետևյալ խոսքերը, որ մեջբերել է Վ. Մինախորյանը, ավելի քան պերճախոս են. «Շատ ջանք թափեցինք յանուն համերաշխութեան, մէկ կողմ դրինք մեր բուն հայեցակէտերը, մեր հաւատոյ հանգանակը՝ ժողովուրդի ինքնապաշտպանութիւնը»: (Մինախորեան Վ., նույն տեղը, էջ 51-52):

Ուրեմն, ո՞րն էր դաշնակցության համար գլխավորը՝ պաշտպանել իր «հավատո հանգանակը» հանդիսացող ժողովրդի ինքնապաշտպանությունը, թե՞ համերաշխությունը երիտթուրքերի հետ:

Եվ դաշնակցությունը գերադասեց երիտթուրքերի հետ համերաշխության պահպանումը: Դաշնակցությունն իր քաղաքականությամբ իրեն հեռացրել էր ազգի գործերի իսկական տնօրինումից և անվերադարձ հրաժարվեց իր ստեղծման գլխա-

վոր նպատակից: Բայց պահանջվեց երկար ժամանակ, որպեսզի ամբողջովին երևար այդպիսի քաղաքականության սնանկությունը:

«ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ»

Աղանայի ողբերգությունից անցել է ուղիղ մեկ դար: Եվ այժմ ուղում եմ այդ ողբերգական իրադարձությունը նայել Ռուբեն Սևակի աչքերով:

Աղանայի ջարդերի լուրն ստանալուց հետո Ռուբեն Սևակը շտապեց դրսևորել իր վերաբերմունքը: 1909 թ. մայիսի 27-ին նա գրում էր. «Սեւ օրեր կ'ապրինք նորէն, սարսափի օրեր: Հեռագիրները ամէն ժամ նոր գոյժ մը կը բերեն: Զարդ, ու եթէ Զարդ չէ, հրդեհ, ու եթէ հրդեհ չէ, սով, ու ինչ որ ամենէն սարսափելին է, համաճարակ»:

1910 թ. Ռուբեն Սևակը հրատարակեց իր միակ գիրքը՝ այն անվանելով «Կարմիր գիրք»: Այս գրքում ամփոփված պոեմները Ռուբեն Սևակը գրել է Աղանայի ողբերգության անմիջական ազդեցությամբ:

Ահա մի պատկեր ջարդից փրկված երեխաների մասին.

«Օր մը տարիքով փոքրիկ, հոգևով մեծ,
Այդ մանուկներու խումբեր դառնահեծ,
Որ ոչինչ չունին այլեւս, ոչ ծնող
Ոչ Աստուած, ոչ ափ մը հայրենի հող...
Եւ որ կը մուրան պատառիկ մը հաց՝
Հեռուէն պժգանքով իրենց կարկառուած...
Եւ որոնք Մարդուն մէջը սրբազան
Ոչինչ գտան, այլ վայրագ մի դազան...»:

Եվ այդ որբերը, «հսկայ մանուկներ» դարձած մի օր պիտի զան կարմիր դատաստան տեսնելու համար: Եվ Ռուբեն Սևակը խորապես հավատում է նրանց գալուստին ու շարունակում.

«Ահա մենք կուզանք,- կ'ըսեն անոնք,

.....

Մեր Յոյսին-կուանիթ գարշապարներով

Խոսեցնելու անանճւն կորած

Գերեզմաննոցներն համայնատարած...:

.....

Մենք՝ հին ուխտերու նոր ուխտագրնաց

Մենք՝ Սուսերը բիրտ ու Գիրքն օրինաց.

Մենք Ցասման վրէժը սարի կողէն.

Մենք՝ Աղջամուղջի ծընունդ լուսեղէն...:

Զեզի՝ որ քերծուած մեր մորթերէն ձիգ

Հարսնիքի, Մեղքի վրաններ կառուցիք...

Ու ձեզ եւրոպեան դիք որ չնագին

Սակարկեցիք մեր արեան լուսթեան գին...»:

Երիտթուրքական դահիճներին դատապարտող «Կարմիր գիրքը» իմ համոզմամբ ունի այժմեական հնչեղություն, քանի որ դրանում արծարծված խնդիրները դուրս են գալիս իր ժամանակի սահմաններից:

Այդ գիրքը միտված է դեպի ապագան, որովհետև, որպես փիլիսոփա մտածող, Ռուբեն Սևակը չի սահմանափակվել Ադանայի ողբերգության մասին գրելով: Նա ամբողջ ուժով տազնապ է հնչեցրել և ընդգծել, որ այդ ողբերգությունը կարող է տարածվել, ավելի մեծ չափերի հասնել ոչ միայն հայ ժողովրդի, այլև բովանդակ մարդկության համար:

Մերկացնելով երիտթուրքական հանցագործներին, Ռուբեն Սևակը «Կարմիր գրքի» մեջ հստակորեն այն գիծն է դարգացնում, որ մարդկությունը, ժողովուրդները դեռ շատ չարիքների կհանդիպեն, եթե մարդասպան հանցագործի ձեռքը բռնելու վճռականությունը չունենան:

«Կարմիր գիրքը» առաջ բերեց Ռուբեն Սևակի նկատմամբ ժամանակակիցների հսկայական ուշադրությունը: Այդ ժամանակ հայտնի էին արևմտահայ գրականության շատ նշանավոր գործիչներ, որոնց զգալի մասը լինելով դաշնակցության անդամներ ու համակիրներ, ձեռք էին բերել փառք ու հեղինակություն:

Բայց նրանք, բոլորը լուցին, երբ կատարվեց երիտթուրքական Հեղափոխությունը և որպես դրա արդյունք կաղմակերպվեց Ադանայի հայ բնակչության կոտորածը:

Միայն Ռուբեն Սևակն էր, որ ոչ միայն բողոքեց այդ ամենի դեմ, այլև 1910 թ. Պոլսում տպագրեց իր միակ գիրքը՝ «**Կարմիր գիրքը**»: Ոմանք դա գնահատում են որպես Ռուբեն Սևակի համարձակության արդյունք: Այդպես գնահատողները սխալվում են, որովհետև դա Ռուբեն Սևակի, որպես սթափ մտածող ազգային-հասարակական գործչի, էությունն էր, նրա սկզբունքային վերաբերմունքն էր այն ամենի նկատմամբ, որն այդպես էլ անկարող եղան տեսնել ու հասկանալ անվանի ու համրավվայելող «գինովցածները»:

Եվ Ռուբեն Սևակը, որը ոչ մի կուսակցության չէր պատկանում, հեռու էր կուսակցական խաղերից, իր հրապարակած միակ գրքով գրավեց հանրության ուշադրությունը, որովհետև կար նոր խոսք լսելու հասարակական պահանջմունքը:

Հենց այս մասին է վկայում Ռուբեն Սևակի ժամանակակից Մկրտիչ Պոտուրյանը, որը «**Կարմիր գիրքը**» նկատի ունենալով, 1911 թ. հունվարի 12-ին Վենետիկի Մխիթարյան Մայրավանքից Ռուբեն Սևակին ուղարկած նամակում գրել է հետևյալը. «Ես կը սիրեմ այն երգիչները, որոնք մարդկային կեանքը, աւելի թշուառներուն կեանքը բարելաւելու, երջանկացնելու նպատակ ունին. և դուն համոզուած եմ, մէկն ես այդ իմ սիրած բանաստեղծներէն, և շատերը պիտի դիտեն զգացուած կեանքը թշուառ մարդկութեան, զոր կրցած ես և կրնաս պատկերել կարմիր կամ սև մելանով» (ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ, գ. 15):

19-րդ դարի ավարտին սուլթանական Թուրքիայում կաղմակերպված հայկական կոտորածներից հետո արևմտահայ գրական-հասարակական կյանքում նկատվեց շեշտակի անկում:

Ստեղծված պայմաններում միակ «անվնաս» թեման սիրո թեման էր: Այդ ժամանակի Պոլսի հայկական մամուլը լեցուն էր սիրո թեմայով գրական ստեղծագործություններով: Սիրո թեման դարձել էր մի տեսակ միջոց գոյությունը փաստելու համար:

Եթե 19-րդ դարի 90-ական թվականներին ինչ-որ կերպ կարելի էր հասկանալ աղատագրական պայքարի թեմայից դեպի

սիրո թեման կատարված վայրէջքը, որը տեղեց շատ երկար, ապա հասկանալի չէր, որ 1908 թ. երիտթուրքական հեղափոխությունից հետո էլ, հրապարակից չէր իջնում սիրո թեման:

Ձեռն սխալվի, եթե ասեմ, որ այս անգամ էլ սիրո թեման դարձել էր արևմտահայությունից զգոնությունը բթացնելու միջոցներից մեկը: Երիտթուրքների հետ տարվող սիրախաղը տեղափոխվեց արևմտահայ գրականություն, որտեղ իշխողը սիրո թեման էր:

Շատերն էին գիտակցարար արմատավորում սիրո թեման, այդ միջոցով ձգտելով հանրություն ուշադրությունը շեղել երիտթուրքների հետ սիրախաղից: Գտնվեցին նաև այնպիսիները, որոնք սիրո թեմայով էին գրում, ելնելով իրենց տարիքին համապատասխանող ռոմանտիզմից:

Ռուբեն Սևակը եղավ այն առաջին բանաստեղծներից մեկը, որ հասկացավ այդ սիրո թեմայով հյուսված ծուղակը: Եվ նա իր միակ գրքով՝ «Կարմիր գրքով» առաջինը բարձրաձայն արտահայտեց տվյալ պահին սիրո թեմայով հրապուրվելու վնասի մասին:

«Ես,- գրել է Ռուբեն Սևակը,- ուրիշ իրապաշտ եմ, ամէն բանէ առաջ իրականութիւնը զիս կը գրաւէ, ամէն իրականութիւնէ վեր մէկ իրականութիւն մը կը ճանչնամ ես, ապրուած, զգացած կեանքը եւ ոչ թէ երեւակայած կեանքը»:

Նկատի ունենալով պոլսահայ գրականության մեջ տիրող տխուր վիճակը, Ռուբեն Սևակը գրել է. «Իրաւ որ խղճալիք ճգնաժամ մը կանցնինք կոր.- Պէրպէրեան մեռաւ, Եղիա Հիվանդ է, Զոհրապ լոեց, Սիպիլ պառաւցաւ, հրապարակը Պարսամեան եւ ընկերութեան մնաց (խեղճ հրապարակ)»:

«Պէտք է,- շարունակում է Ռուբեն Սևակը,- զօրաւոր ցնցում մը առաջ բերել, նոր գրականութիւն մը ծնելու համար: Պէտք է նոր ուժեր հրապարակ նետուին, արուեստին սիրովը վառուած, աշխատած, զարգացած, պէտք է, որ արուեստին անունովը հրապարակ նետուած եղբրապատիր զգացումները դադրեցուին իսպառ, պէտք է, որ արուեստին դրոշմը ԱՆԿԵՂԾՈՒԹԻՒՆԸ ըլլայ միայն (գրել միայն ինչ որ կը զգայ մարդ եւ գրել ամէն ինչ որ կը զգայ...առանց կեղծ ամոթխածութեան քողին), պէտք է,

որ իրենց ոյժին գիտակցութիւնը ունեցող գրիչներ (նոր ու թարմ գրիչներ) սկսին վերածննդեան այս մեծ գործը: Որովհետեւ առանց այս վերածննդեան մեր պոլսահայ գրականութիւնը է եւ պիտի մնայ «ճպուռի մը անխմաստ երգը...»:(ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ, գ. 17, թ. 36):

Ռուբեն Սևակը չբավարարից իրափիճակն արձանադրելով, այլ դարձավ իր պատկերացրած նոր գրականութեան ստեղծողներից մէկը:

Ես այս խնդրի մասին ավելի ծափարուն արտահայտվել եմ 2003 թ. տպագրված իմ «Ռուբեն Սևակը և մեր ժամանակը» աշխատութեան մեջ, ուստի հարկ չեմ համարում դրան նորից անդրադասնալ:

Բայց նկատի ունենալով իմ որոշ ընթերցողների բանավոր կերպով ինձ հայտնած իրենց կարծիքը, ավելի ճիշտ ստորակուտանքը (ստիպում եմ, որ գրաքննադատութեանը «չնկատեց» իմ աշխատութեանը), թե Ռուբեն Սևակին ավելի բարձր եմ գնահատել իր ժամանակակից գործիչներից, հարկ եմ համարում այդ աշխատութեանից այստեղ մի ընդարձակ մեջրելում կատարել. «Հնարավոր եմ համարում, որ ընթերցողներից ոմանք կարող են ինձ մեղադրել, թե Ռուբեն Սևակին ձգտում եմ ներկայացնել որպէս հեղափոխական և համարյա կոմունիստ, որպէսզի ավելի ընդգծեմ նրա կերպարը: Ինձ հարկավոր էլ չէ Ռուբեն Սևակի ստեղծագործութեան մեջ փնտրել կոմունիստական բովանդակութեան, նրա գրվածքներում և ասույթներում որոնել այդ հայացքների ու հասկացութեանների հետ գաղափարախնայական համընկնումներ: Ես սարդապես Ռուբեն Սևակին ընդունում եմ այնպես, ինչպես որ եղել է նա:

Ես նաև չեմ գունադարդում Ռուբեն Սևակին: Իհարկե, անիմաստ է Ռուբեն Սևակին ներկայացնել որպէս «կոմունիստ»: Բայց որ նրա հասարակական-քաղաքական հայացքները, ինչպէս պատանի, այնպես էլ հասուն ժամանակ, եղել են հեղափոխական, դրանում համոզված եմ վճռականորեն: Ընդ որում Ռուբեն Սևակը հեղափոխական էր գիտակցորեն, որն արտացոլվում է նրա տրամարանված ու մտածված դատողութեաններում: Հեղափոխական Ռուբեն Սևակը պատմական փաստ է և

րացարձակ ճշմարտություն:

Իհարկե՛ս, գիտե՛մ, որ իմ այս տեսակետը ոմանք չեն կիսում և Ռուբեն Սևակին լավագույն դեպքում պատկերացնում որպես եղերական վախճան ունեցած լիրիկ բանաստեղծ: Ուստի հարկավոր է շարունակարար ու անխոնջ քարոզել և ապացուցել իմ տեսակետի ճշմարտացիությունը: Այս խնդիրը ես համարում եմ կարևոր և սկզբունքային նշանակություն ունեցող: Եվ ես համոզված ընդգծում եմ, որ Ռուբեն Սևակի նման մտածող բանաստեղծը չէր կարող հեղափոխական չլինել»: (Վ. Պետրոսյան, Ռուբեն Սևակը և մեր ժամանակը, Երևան, 2003, էջ 93-95):

«ԱՅՍ ԴԱՆԱԿԸ»

«Ինչո՞ւ են հայերին կոտորում. - հարցնում էր Ռուբեն Սևակը և տալիս իր գնահատականը, - որովհետեւ...բոլոր «տարեց»-ները, «չնորհքով» մարդերը. ազգին «խելօք»ները. տակաւին չեն մտածած այդ նախնական հարցումին վրայ... Որովհետեւ այդ ինչուն հսկայ անկիւնաքարն է Յեղափոխութեան, եւ որովհետեւ այդ բառին տակէն կրնան անհաճոյ բաներ դուրս գալ իրենց շահուն համար, ինչպէս կարիճներ՝ քարի մը տակէն...»: (Ռուբէն Սեւակ, նույն տեղը, էջ 553):

Իր նամակում Ռուբեն Սևակը մեջբերում է օտար մամուլից հետևյալը. «Աստուած էշերը ստեղծեց անարգուելու համար, հայերը՝ ջարդելու... Թուրքիոյ մէջ ըէժի՞մ պիտի փոխուի. Հայերու ջարդ: Սուլթա՞նը պիտի գահակալէ, Հայերու ջարդ: Շէրիա՞թ պիտի հաստատուի, Հայերու ջարդ: Բայց այս բոլորը այնքան տարօրինակ չէ մեզի համար, որքան այն յուսահատեցուցիչ «խելօքութիւնը», որով Հայերը կ'ողջունեն այդ ջարդերը: Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի...մարդկօրէն կատղիլ...»: (Ռուբէն Սեւակ, նույն տեղը, էջ 553):

Եվ նկատի ունենալով դաշնակցության կեցվածքը, Ռուբեն Սևակն ավստոսանքով նշում էր, որ դրա հետևանքով «հայուն սրտէն» իսպառ հեռացել է «մարդկօրէն կատղիլը»: «Ու այս, - ընդգծում էր Ռուբեն Սևակը, - ոչ միայն աստուածավախ եկեղե-

ցականութեան, խնկամոլ ռամկութեան, տգէտ արհեստաւորութեան մէջ, այլ նոյնիսկ ու մանաւանդ մեր մտաւորականութեան մէջ»:

Եվ իրրև իր գնահատականի փաստարկում Ռուբեն Սևակն արդարացի զայրույթով նշում էր, որ վերջին ամիսներին կատարված դեպքերին, այսինքն Աղանայի կոտորածներին և վրոպական մամուլը «չատ աւելի մօտէն շօշափեց հայուն վէրքը, քան պոլսահայ մամուլը»:

Ռուբեն Սևակի վերաբերմունքը լիակատար ըմբռնելու համար հիշենք նաև նրա հետևյալ գնահատականը. «Սարսափահար, քարացած, Պոլսոյ հայ թերթերուն կը սպասենք, աւելի ընդարձակ տեղեկութիւններու համար, կամ գոնէ հուժկու բողոքի մը ընթերցումով ամոքուելու համար... Թերթերը կուգան. յաւիտենական ոսկեզօծ ունայնութիւնը՝ որ կը յատկանշէ պոլսահայ մտաւորականութիւնը... Մեր թերթերը դեռ կը շարունակեն իրենց անդամալոյծ կեանքը: Նոյնիսկ հանդէսներ կարդացինք, ուր Կիլիկիոյ ջարդերէն անմիջապէս առաջ՝ սիրային յայրատոտանաւորներ յանգուած կային, «նշանածի» պատմութիւններ ու դեռ ինչէր... Մինչդեռ հայ ընդհանուր մամուլը Սուգին սեւովը պէտք էր պատուէր, կամ Արիւնի կարմիրովը պոռթկայ, եւ կամ - եթէ չէր կրնար ամէն բան ըսել - լռէր... Գոնէ սա յուսահատեցուցիչ, ծայրահեղօրէն յոռետես, ջլատ, տրտում դամբանականները չգրէին: Անոնք, որ մեռան, գիտակցօրէն, դիւցազնօրէն, անոնք ոչ արցունքի պէտք ունին, ոչ վարձու կեղծ լալկաններու, ոչ խրատի: Դամբանականները պէտք է կարդալ դամբանական խմբագրողներու գլխուն: Ժողովուրդները ինքնապահպանութեան, ցեղին շարունակութեան, ՊԱՅՔԱՐԻՆ բնագղը ունին: Մամուլը այսպիսի արհաւիրալի շրջաններու մէջ պէտք չէ որ յոռետեսութեան, սուգի, անդարմանելի ցաւի մշուշի մը մէջ խաւարէ ժողովուրդին այս բնագղը: Fatalisme-ը չէ որ պիտի փրկէ ընկճուած ցեղերը, ահա թէ ինչ բան կը մոռնայ մեր մամուլը»: (Ռուբէն Սևակ, նույն տեղը, էջ 554):

Մինչ Ռուբեն Սևակը հրապարակավ մատնացույց էր անում հայութեան «թշուառական ու անդայրոյթ, անհիմաստ ու անվրէժխնդիր» դառնալու և «հաղարներով ջարդուելու» պատ-

ճառներն ու դրանց հեղինակներին, դաշնակցության պարագլուխներն ու նրանց հետ նաև Գր. Զոհրապր շարունակում էին համագործակցությունը երիտթուրքերի հետ:

Ադանայի հայ բնակչության կոտորածի կազմակերպիչներից ոմանց նկատմամբ թուրքական դատարանի կիսատ-պռատ վճիռն այնպիսի բավականություն էր առաջացրել, որ Գր. Զոհրապր 1910 թ. Ակյուտարի հայ բնակչության ու իթթիհադականների ներկայությունը երիտթուրքերի պարագլուխներին պաշտպանելով ասաց. «Ե՞րբ տեսնուած է, որ քրիստոնեական ջարդի մը առթիւ, 100-ի մօտ մահմետականներ կախաղան հանուին եւ 1000-ի մօտ մահմետական եղեռնագործներ շղթայակից բանտարկութեան դատապարտուին»:

Եվ սրա համար գոհունակություն հայտնելով Գր. Զոհրապր հայությունը կոչ արեց. «Սահմանադրական կառավարութիւնը այս արխութիւնը ցոյց տուաւ, եւ ամէն արդարասէր հայու պարտքն է ճանչնալ դայն եւ ըստ այնմ վերաբերիլ իթթիհադական կառավարութեան հանդէպ»:

Այսպիսով, արեւմտահայ իրականության մեջ հստակ հանդես էին գալիս երկու տարրեր՝ գաղափարական ու քաղաքական թեւեր: Նրանց միջև գլխավոր հակադրությունը ընդգծված արտահայտվում էր երիտթուրքական իշխանությունների նկատմամբ վերաբերմունքի մեջ:

Մի թեւը շարունակում էր կույր քաղաքականությունը և իր գլխավոր խնդիրը, ինչպես տեսանք, համարում էր երիտթուրքական կառավարության հետ համագործակցելը:

Մյուս թեւը, ի դեմս Ռուբեն Սևակի, ոչ միայն չէր վստահում երիտթուրքական կառավարությանը, այլև արեւմտահայության ազատագրության ելքը տեսնում էր զինված ու վճռական պայքարի մեջ:

1909 թ. Ադանայի հայ բնակչության կոտորածից անմիջապես հետո, Ռուբեն Սևակը վենետիկում տպագրվող «Գեղունի» տարեգրքի մեջ հրապարակած «Այս դանակը» պոեմում իր գաղափարախոսությունն արտահայտեց հետևյալ կերպ.

«-Ի՞նչ կ'ընէ երբ անգգ մը մնայ նօթի.
 Զեռքէն բահ ու բրիչ կը նետէ մէկդի,
 Կ'երթայ հաղորդուիլ մատուռ մ'անխոտվ,
 Կը զինուի տէգով, կը զինուի սուրով,
 Ու կ'երթայ ամէն միջոցներով վատ
 Ազգի մը կոիւ մըղել յուսահատ...:
 Թէ յաղթուեցավ՝ աւանդ է իրեն,
 Իսկ եթէ յաղթեց՝ աշխարհ համօրէն
 Գովեստի երգեր կ'երգէ ամեն օր,
 Պատմութիւնն ոսկի էջ կու տայ անոր...»:

Բայց, դժբախտաբար, հենց երիտթուրքական իշխանության աջակցութեամբ առաջին թեր դարձավ դրութեան տերը և իր քաղաքականութեամբ արևմտահայութեանը կանգնեցրեց մեծ ողբերգութեան առջև:

«ՄԱՐԴԿՕՐԷՆ ԿԱՏՂԻԼԸ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Համոզված ընդգծում եմ, որ եթե արևմտահայ բոլոր քաղաքական ուժերը համախմբվեին, ասպարեզից հեռացնեին երիտթուրքերի կամակատար դաշնակցութեան ղեկավարներին, ապա ունայ հիմքեր կստեղծվեին Ռուբեն Սևակի նկատի ունեցած «մարդկօրէն կատղիլը», այսինքն՝ զինված պայքարով ազատագրվելն իրական դարձնելու համար:

Ասվածը նկատի ունենալով ընթերցողին նորից հրավիրում եմ ուշադրութեամբ կարդալ Ռուբեն Սևակի վերոհիշյալ մտքերը: Դրանք մեծ հաշվով օտար բռնակալական լծի տակ գտնվող ժողովրդին պայքարի հանելու ծրագրի որոշակի տարրեր են:

Ռուբեն Սևակի հարցը՝ «Ինչու են հայերին կոտորում» և տված պատասխանը այդ ծրագրի առաջին ու կարևոր պահանջներից մեկն է: Ժողովրդի ազատագրական պայքարը կազմակերպելու, նրան հեղափոխութեան նախապատրաստելու համար ամենից առաջ հարկավոր է ունենալ այնպիսի գործիչներ, որոնք անմնացորդ նվիրված են ժողովրդի ազատագրութեան գաղա-

փարին և հավատով են լցված նրա հեղափոխական ուժի նկատմամբ:

Այսպիսի պահանջը նաև նշանակում էր, որ քաղաքական այն ուժը, որն իր մենաշնորհն էր համարում հայության գործերի տնօրինումը, չուներ Ռուբեն Սևակի մատնանշած հատկանիշներն ունեցող գործիչներ, որոնք ոչ միայն չէին կարողանում, այլև չէին ուզում հասկանալ «յեղափոխութեան հսկայ անկիւնաքարը»:

«Ե՞րբ այս ժողովուրդը պիտի սորվի մարդկօրէն կատղիլ» հարցով Ռուբեն Սևակն առաջ էր քաշում հաջորդ կարևոր խնդիրը: **«Մարդկօրէն կատղիլ»** ասելով Ռուբեն Սևակը դնում էր ընդդեմ բռնակալության, հանուն ազատության համաժողովրդական պայքարի անհրաժեշտության հարցը:

Իսկ Ռուբեն Սևակը ինչպե՞ս էր տեսնում այդ անհրաժեշտության իրականացումը: Դա հնարավոր կլիներ միայն այն ժամանակ, երբ ասպարեզ կզային այնպիսի ուժեր, որոնք դերծ կլինեին աստվածավախ եկեղեցականության, խնկամուռ ու տգետ մտավորականության մեջ տիրապետող ախտերից, որոնց պատճառով **«հայուն սրտէն»** հեռացել է **«մարդկօրէն կատղիլը»**: Սրանով Ռուբեն Սևակը դնում էր արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը ղեկավարող իսկական հեղափոխական կազմակերպություն ունենալու խնդիրը:

«Մարդկօրէն կատղիլ» ասելով Ռուբեն Սևակը հասկանում էր համաժողովրդական պայքար և համոզված էր, որ ժողովուրդը պատրաստ է դրան, քանի որ ունի ինքնապաշտպանության, ցնդի շարունակության, պայքարի բնազդը: Այսինքն՝ նա այդ պայքարը համարում էր բնական և օրինաչափ:

Ուրեմն, առկա էր իր իրավունքների համար պայքարող և **«մարդկօրէն կատղիլուն»** պատրաստ ժողովուրդ, որին հարկավոր էր իսկական հեղափոխական կուսակցություն, որը ոչ թե վախենալու էր ժողովրդի հզոր պոռթկումից, այլ ստանձնելու էր դրա կազմակերպումն ու ղեկավարումը:

Բնականաբար, Ռուբեն Սևակի այս ծրագիրը հակասում էր երիտթուրքերի հետ համագործակցող, նրա հետ սիրախաղով զբաղված դաշնակցության թե՛ ծրագրին և թե՛ գործելակերպին:

Որովհետև դաշնակցությունը գերադասում էր պայքարի անհատական միջոցները, որոնց իրականացումը նախ՝ դժվարություն էր ներկայացնում, և երկրորդ, նպաստում էր «նոր հերոսների» ծնվելուն, որոնց փառաբանումը կպանծացներ կուսակցությունը:

Այս առումով դաշնակցությունը որդեգրել էր ոուս սոցիալիստ-հեղափոխականների (էսէռներ) տակտիկան ու ստրատեգիան և իր ամբողջ գործունեությունը ընթացքում մնաց դրանց հավատարիմ: Այս է պատճառը, որ երբ մեկ-երկու անգամ փորձել է համաժողովրդական պայքար կազմակերպել, մատնվել է ձախողման... Ինչպես հայտնի է, դաշնակցության պայքարի անհատական մեթոդը նույնպես արդյունավետ չի եղել: Այստեղ էլ պատմությունը չի արձանագրել որևէ հաջողություն:

Այսպիսով, դաշնակցությունն իր բնույթով, պայքարի միջոցներով անկարող էր ղեկավարել արևմտահայության պայքարը: Հենց այս առումով էլ Ռուբեն Սևակը դնում էր համաժողովրդական պայքարը կազմակերպող ու ղեկավարող կուսակցություն ունենալու անհրաժեշտության հարցը:

Ռուբեն Սևակը, որը խորապես ծանոթացել էր եվրոպական ժողովուրդների ազատագրական, հեղափոխական պայքարի ընթացքին, լավագույնս գիտեր իր ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի պատմությունը, համոզված էր, որ Օտոմանյան բանկի գրավմամբ կամ էլ Խանասորի «արչավանքով» հնարավոր չէ հաղթանակի հասնել, որ եվրոպական տերություններին հետ էլ հույսեր կապելը հեռանկար չունի:

Ուստի, ելնելով նախորդ ժամանակաշրջանի փորձի ընդհանրացումից, արևմտահայության բոլոր ուժերի համախմբման միջոցով Ռուբեն Սևակը դնում էր համաժողովրդական պայքարի անհրաժեշտության հարցը: Միայն այդ դեպքում «**ժողովուրդի մարդկօրէն կատողիլը**» կդառնար իրական: Միայն այդ դեպքում հնարավոր կլիներ թուրքական բռնակալությունից ազատագրվելը:

Ռուբեն Սևակի առաջ քաշած պահանջը հեղափոխական էր և իրագործելի: Դրա համար կային բոլոր օբյեկտիվ ու սուբյեկտիվ պայմանները: Բայց նրա պահանջը չէր համապատասխան-

նում, ինչպես ասվեց, «միակ փրկիչ» ուժի գործելակերպին և պատահական չէր, որ Ռուբեն Սևակը հայտնվեց երիտթուրքերի կազմած «սև ցուցակի» մեջ:

Ոմանք, որ դեռ շարունակում են դերի մնալ դաշնակցության ստեղծած գաղափարախոսությունը, կարող են Ռուբեն Սևակի ծրագիրը համարել անիրագործելի, ուտոպիական և հիմնադուրկ:

Սակայն թուրքիայում այդ ժամանակ տիրող ներքին և արտաքին քաղաքական իրավիճակի անկայունությունը, մի խոսքով ասկա բոլոր իրողություններն ապացուցում են, թե Ռուբեն Սևակն իր ծրագիրը ինչքան ունայ հիմքերի վրա էր կառուցել: Դրանցից կարելի է հիշել համառոտակի կերպով մի քանիսը.

Առաջին. Թուրքիայում կատարված երիտթուրքական հեղափոխությունը երկրի ներքին քաղաքական իրավիճակը բավականաչափ անկայուն էր: Իշխանության եկած երիտթուրքական կուսակցությունը դեռևս իրեն լրիվ չէր զգում դրության տեր և շարունակում էր իր դաշնակիցներին, այդ թվում նաև դաշնակցությունը կերակրել խոստումներով, ինչն ավելի շատ նշանակում էր իր ուժերի նկատմամբ անվստահություն:

Երիտթուրքական հեղափոխության «զարուներ» շատ կարճատև եղավ: Սորանում էր հիասթափությունը: Երիտթուրքերի մեծապետական շովինիստական քաղաքականության գլխավոր նպատակի՝ պանթուրքիզմի արմատավորման հենց առաջին քայլերը սթափեցրին նաև արևմտահայությունը, որն իր դժգոհությունն ավելի բացահայտ էր արտահայտում:

Ահա, օրինակ, բաղձաթիվ փաստերից մեկը, որի մասին Կովկասի զինվորական օկրուգի հրամանատարությունը ռուսական գլխավոր շտաբին հաղորդում էր, թե կառավարությանն իր դժգոհությունը հայտնելու համար Արևմտյան Հայաստանում հավաքվել են մեծ թվով ստորագրություններ (Ռուսաստանի ռազմապատմական կենտրոնական արխիվ, Փ. 2000, գ. 991, թ. 24):

Սա արդեն չէր համապատասխանում «հավատարիմ հպատակ» լինելու սկզբունքին, և դրա ջատագովները հավաքված ստորագրությունները ոչնչացրին: Դրանից օգտվելով երիտ-

Թուրքական իշխանությունները հալածեցին ստորագրահավաքի կազմակերպիչներին:

Երկրորդ. Աղանայի հայ բնակչության կոտորածն ավելի սրեց արևմտահայություն և երիտթուրքական իշխանության միջև հարաբերությունները: Արևմտահայություն մոտ ոչ թե կասեցվեց, այլ ավելի ամրապնդվեց թուրքական բռնակալությունից ազատագրվելու կամքը:

Ամենուրեք դրսևորվում էին անհնազանդություն և պատրաստակամություն վճռական պայքարի համար: Այս մասին է, օրինակ, վկայում Պետերբուրգ ուղարկված ղեկուցագրերից մեկը: 1909 թ. սեպտեմբերի 15-ին Կարին է գալիս երիտթուրքական կուսակցության կոմիտեի լիազոր ներկայացուցիչ մայոր Վահաբ բեյը «հայ բնակչությունից իթթիհադի կոմիտեի բաժանմունք ստեղծելու առաջադրանքով: Կարինի հայերը վճռականորեն մերժեցին այդ մտադրությունը: Վահաբ բեյին մերժեցին նաև Մուշի, Վանի, Բիթլիսի, Դիարբեքիրի և մի շարք այլ վայրերի հայ բնակիչները»: Երիտթուրքական լիազորը հարկադրված էր իր առաքելության ձախողման մասին հաղորդել մայրաքաղաք, նշելով, որ հայ բնակչությունը պատրաստ չէ ընդունելու նոր քաղաքական կարգը: (Նույն տեղը, ֆ. 403, գ. 4192, թ. 33-34):

Երրորդ. Աղանայի հայ բնակչության կոտորածը ցույց տվեց, որ երիտթուրքերը չեն հրաժարվել սուլթանի քաղաքականությունից, և նրանց խոստացած ազատությունը լոկ դատարկ խոստում է:

Չորրորդ. Սկսված հեղափոխության ժամանակ և դրանից անմիջապես հետո եվրոպական տերությունների հակասություններն ավելի էին սրվել Թուրքիայի նկատմամբ քաղաքականության իրականացման հարցում:

Հինգերորդ. Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմները բացահայտեցին ոչ միայն Թուրքիայի ռազմական անկարողությունը, այլև միջազգային ասպարեզում նրա դիրքերի թուլացման խորությունը:

Վեցերորդ. Արևմտյան Հայաստանում առկա էր հոծ հայկական բնակչություն, որը նպաստավոր պայմաններ էր ստեղծում

ուժերի համախմբման համար: Վերջապես արևմտահայությունն իր պայքարը մղելու էր կառչած հայրենի հողին, ապավինելու էր իրեն քաջածանոթ բնական պայմաններին:

Երիտթուրքական հեղափոխությունից հետո ստեղծված նպաստավոր պայմաններից, որոնց մի մասը միայն թվարկվեց վերևում, արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի ղեկավարումը ստանձնած ուժերը չչտապեցին օգտվել, մնացին փարված «հավատարիմ հպատակ» լինելու գաղափարին և այդպես էլ չձերբազատվեցին երիտթուրքական հեղափոխության անուրջներից:

Բայց, ահա, այլբանական ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը կարողացավ օգտվել ստեղծված պայմաններից: Թեև այլբան ժողովուրդը մահմեդական էր, բայց դա նրան չխանգարեց դեն նետել «հավատարիմ հպատակի» պարտականությունը և հասնել անկախության: Այս խնդրին հանգամանորեն անդրադարձել եմ իմ «Ռուբեն Սևակը և մեր ժամանակը» աշխատության մեջ (2003, էջ 130-132):

Թուրքական բռնակալության դեմ տևական պայքարի փորձ կուտակել էր նաև հայ ժողովուրդը: Այդ փորձը լրացվել էր 19-րդ դարի երկրորդ կեսից սկսած ազգային-ազատագրական պայքարով:

Իսկ երիտթուրքական հեղափոխությունից հետո կայի՞ն պայմաններ, որպեսզի արևմտահայությունը հասներ իր նպատակին:

Իհարկե, այդպիսի պայմաններ կային: Միայն հարկավոր էր, որպեսզի հայ քաղաքական ուժերը համախմբվեին, իրենց միավորմամբ ապահովեին նաև արևմտահայության բոլոր խավերի միասնությունը, դրսևորեին կամք ազգային-ազատագրական տևական պայքարի փորձը իմաստավորելու, անհրաժեշտ հետևություններ կատարելու համար: Հարկավոր էր, որ նրանք դիմեին վճռական քայլի՝ նպաստավոր պայմաններից օգտվելու համար:

Այս ամենի փոխարեն չստեղծվեց պայքարի միասնական ճակատ: Հայ քաղաքական ուժերն ավելի շատ իրար դեմ էին պայքարում: Դրա հետ միասին դաշնակցությունն էլ շարունա-



*Հովհաննես Չիլինկիրյանի հետ
Բալթին քաղաքի թանգարանում*



*Լոզանի համալսարանի մուտքի
մոտ*



*Շամիրամ Սևակի հետ
Ռուբեն Սևակի անվան դպրոցի թանգարանում*



Ժնևի Հայոց եկեղեցու Արել քահանայի և Ժիրայր Նայիրիի հետ
(հոկտեմբեր, 2009 թ.)



«Ռոնգլեր» սառցադաշտի մոտ



*Բենն մայրաքաղաքի կենտրոնական փողոցում
(հոկտեմբեր, 2009 թ.)*



Սասուն Գրիգորյան



Բարկեն Վարդանյան



Լոզանի կոնֆերանսի շենքի մոտ



Հովհաննես Զիլինկիրյանը և Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդը էջմիածնում 2009 թ. մայիսի 2-ին



Վարուժան և Զուլիա Սալաթյանները
Հայելի Կիլիկյան վարժարանի
հայոց լեզվի ուսուցչուհի
Ազնիվ Արարյանի հետ

Մինաս Դեղեյան



Այստեղից սկիզբ է առնում Ռոն գետը



Շամպերի գյուղում



Հովսեփ Դեղեյանի, Զորջ Մեծոփյանյանի, Եղիա Գրիգորյանի և
Թադևոս Քավյակյանի հետ (Հալեպ, 03.06.09 թ.)



Հարություն Հելվեճյան



*Ռուբեն Սևակի կիսանդրու մոտ
(Երևանի Ռուբեն Սևակի
անվան դպրոց)*



*Երևանի պետական Համալսարանի տպագրատան մի խումբ աշխատակիցներ
(ձախից աջ)՝ Ստեփան Գոյունյան (տնօրեն), Անահիտ Մելիքյան (գլխավոր
հաշվապահ), Նաչատրյան Նաչատուր (տպագրական արտադրամասի
վարիչ), Անիկ Մալխասյան (կազմարարական արտադրամասի վարիչ),
Մարգարիտա Նոցանյան (կազմարար), Թամարա Վարդանյան (օպերատոր),
Աննա Աղուզուճցյան (համակարգչային դիզայներ), Վահանդուխտ Դերձյան
(գլխավոր խմբագիր), Թամարա Թովմասյան (կազմարար),
Կարինե Սարգսյան (կազմարար), Նորիկ Սարգսյան (մեխանիկ),
Սուսաննա Գասպարյան (օպերատոր)*

կում էր երիտթուրքերի հետ սիրախաղը, կարևորելով «հավատարիմ հպատակ» լինելու դադափարը:

Աղատագրական պայքարի ուժերի ջլատման պատասխանատվությունն առավելապես ընկնում է դաշնակցության վրա, որովհետև նա էր, որ երիտթուրքերի հետ համագործակցելու իր քաղաքականությունը վիժեցնում էր միասնության հասնելու ամեն մի փորձ:

Դաշնակցության դիրքորոշումը շատ հստակ արտահայտել է նրա երևելի գործիչներից մեկը՝ նշանավոր բանաստեղծ Դանիել Վարուժանը: Նա Տրիպոլիտանական և Բալկանյան պատերազմների ժամանակ վճռականորեն դեմ էր արտահայտվում թուրքիայի հնարավոր մասնատմանը և 1912 թ. հունիսի 17-ին համոզված գրում էր. «... Մենք հիմա համերաշխ կ'ապրինք թուրքերուն հետ: Իսկ թուրքիոյ մասնատումը աղետաւոր կ'ըլլայ Հայաստանի ապագային համար: Մենք համոզուած ենք անոր» (Դանիել Վարուժան, Նամականի, Եր., 1965, էջ 32):

Ասվածը ամփոփելով՝ մեկ անգամ էլ հարկ եմ համարում ընդգծել, որ հայ քաղաքական ուժերը չմիավորվեցին, իրենց անմիաբանությամբ պառակտեցին ու ջլատեցին արևմտահայությանը և այրանացիների նման վարվելու փոխարեն, մնացին կառչած իր սնանկությունը վաղուց ապացուցած տխրահռչակ 61-րդ հոդվածից և առաջ քաշեցին բարենորոգումների խնդիրը, շարունակելով երիտթուրքերի հետ սիրախաղը:

Ընդգծենք նաև, որ Ռուբեն Սևակի առաջարկած «մարդկօրէն կատղիլու» բանաձևը ունի հիմքեր ունեւր իրողութիւն դառնալու համար:

Իսկ ո՞վ ձախողեց: Հասցեատերը, կարծեմ, պարզ է բոլորին:

Առաջին հայացքից թվում է. թե 1909 թ. Ռուբեն Սևակի դրած «մարդկօրէն կատղիլու» պահանջը վերաբերում է միայն իր ժամանակին: Բայց այդպես է միայն առաջին հայացքից: Մինչդեռ «մարդկօրէն կատղիլ» Ռուբեն Սևակի ձևակերպած հստակ բանաձևը բխում է հայ ժողովրդի ամբողջ պատմությունից, նրա մղած ազգային և ազգային-աղատագրական պայքարի ընթացքից:

Իսկապես, ե՞րբ է հայ ժողովուրդը իր նպատակին հասել:

Որոշակիորեն կարելի է ասել՝ այն ժամանակ, երբ «մարդկօրէն կատղիլ» է: «Մարդկօրէն կատղիլու» միջոցով էր, որ Արտաշես Առաջին թագաւորն ուժ առաւ և վերականգնեց Հայոց պետականութիւնը: Դրա շնորհիւ էր, որ Տիգրան Մեծի օրոք Հայոց պետութիւնը դարձաւ հին աշխարհի երրորդ հզոր տերութիւնը և Հոռմի ու Պարսկաստանի հետ հավասար իրավունքով մասնակցում էր այն ժամանակվա միջազգային բոլոր խոշոր խնդիրների լուծմանը:

«Մարդկօրէն կատղիլու» շնորհիւ էր, որ Հայ ժողովուրդը Ավարայրի ճակատամարտում հաստատեց իր գոյութեան ու ապրելու կամքը: «Մարդկօրէն կատղիլն» էր, որ կերտեց Սարգարապատի, Ապարանի և Ղարաքիլիսայի հաղթանակը...

Կարելի է բերել նաև բազմաթիւ փաստեր, երբ «մարդկօրէն կատղիլը» հեռացել է «հայու սրտէն» և դրա հետևանքով ժողովուրդը զրկվել է պետականութիւնից, կորցրել պայքարի ունակութիւնն ու բռնել արտագաղթի դաժան ճանապարհը:

Ռուբեն Սևակի բանաձևը՝ «մարդկօրէն կատղիլը» չի վերաբերում միայն անցյալին ու նրա ժամանակին: Հենց Ռուբեն Սևակի խորաթափանց մտածողութիւնը միտված է նաև Հայ ժողովրդի ապագային: Նա կարողացավ նայել հեռուն, տեսավ ապագա ընթացքի կեռմանները և զգուշացնելով ցույց տվեց ելքը:

Իսկապես, ի՞նչ է կատարվում այսօր: Այդ ինչպե՞ս պատահեց, որ դարարադյան շարժման ժամանակ միասնական կամք դրսևորած ժողովուրդն իր մեծամասնութեամբ համակերպվում է աղքատութեան մեջ հայտնվելուն, հաշտվում է գործազրկութեան հետ: Անտարբեր է դարձել ահագնացող արտագաղթի նկատմամբ: Չի մտահոգվում, որ երկրի ամբողջ հարստութիւնը և ունեցվածքը թալանվում է, որ ժողովրդական տնտեսութեան բարիքները հայտնվում են օտարների ձեռքին: Ինչո՞ւ է ժողովուրդը դարձել կամազուրկ և թույլ է տալիս իր հետ վարվել ինչպես գերու, ստրուկի:

Ինչո՞ւ է այս ամենը տեղի ունենում: Չեմ սխալվի, եթե ասեմ, որ այս հարցի պատասխանը տվել է Ռուբեն Սևակը: Որովհետև այսօրվա «հայու սրտէն» հեռացել է «մարդկօրէն կատղիլը»:

«ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՄԵՂՔԻ ՔԱՂԱՔԸ»

Ինչպես նշվել է արդեն, 1909 թ. հուլիսին Ռուբեն Սևակը եկավ Կ.Պոլիս, նպատակ ունենալով մոտիկից դճալ, թե ինչ է կատարվում Արևմտյան Հայաստանում ու Կիլիկիայում:

Տպավորությունը սարսափելի էր: 1909 թ. հուլիսի 18-ին նա գրեց «Մեր քոյրերուն» նվիրված «Պոլսոյ որովայնին մէջ» բանաստեղծությունը, որտեղ թուրքական մայրաքաղաքն անվանեց «Հավիտենական մեղքի քաղաք»: Կոստանդնուպոլիսը Ռուբեն Սևակի այս բանաստեղծության մեջ երևում է իր այլանդակ ու այլասերված էությունը:

«Ո՛վ արեան Ծաղիկ՝ բացուած խօլական՝
Աւերակներուն վրայ բիւզանդական...:
Մշտնջեայ Մեղքի Մշտնջեայ Ական...:
Ո՛վ խաւարակուռ մսեղէն գաւաթ
Ուրկէ մարդկութիւնը թերահաւատ
Կը ստիպուի ըմպել գինիդ յուսահատ...
Սողոմէն բերուած ընծայ մահագին՝
Որ բող Արեւմուտքը Արեւելքին
Կ'երկարէ ժպտո՞ւն. Վոսֆորի կողքին...:
Ո՛վ մահաժպիտ, գարշ, արիւնալի,
Հակադարձ երեսը այն «մետայլ»ի
Ուր ՄԱՐԴ ոսկետառ անունն կը փայլի...»:

Ավելորդ չեմ համարում նկատել, որ Ռուբեն Սևակը հետագայում ավելի որոշակի է արտահայտել իր վերաբերմունքը թուրքական մայրաքաղաքի նկատմամբ: Նա կարծես կանխազգում էր, թե իրեն ինչ է սպասում Կ.Պոլիս վերադառնալուց հետո:

«Ու այս բոլորին վրայ.- գրում էր Ռուբեն Սևակը 1912 թ. ապրիլի 29-ին Հ. Նազարյանին ուղարկած նամակում.- ավելցուր նաեւ Պոլսո մղձավանջը, այն հորիզոնը, որ քանի մը տարիէն իմինս պիտի ըլլայ, եւ որ հեռուէն կը տեսնեմ արդէն Սողոմի մուխն ու Գոմորին մեղքին բոցը: Եւ ըսել, թէ այս մենակեաց

փիլիսոփայութեան հասնելէս յետոյ, դեռ պէտք պիտի ըլլայ ինձ այդ զարհուրելի ոստանին մէջ ապրիլ, ամէնուն հետ ամէնուն պէս...»:

Այստեղ հարկ եմ համարում հիշել թուրք բանաստեղծ Թևֆիկ Ֆիքրեթին, որն Առաջին աշխարհամարտի նախօրյակին գրած «Մառախուղ» պոեմում կրկնելով Ռուբեն Սևակին, Ստամբուլը համարել է «մառախուղով պատված ու խավարի մեջ մխրճված բոնակալների ասպարեղ», որտեղ «անխղճորեն տիրում են կառավարողների կեղծիքը, երկերեսանիությունը և նրանց բութ լրտեսներն ու քսու անկուշտները, որտեղ մոռացված է արդարությունը»:

Թուրք բանաստեղծը իր պոեմն ուղեկցում է հետևյալ կրկնատողերով. «Ծածկվիր մառախուղով հանցագործությունների ու վշտի տանջավայր մայրաքաղաք: Ծածկվիր ու ընդմիշտ մնա քնած, պառաված պոռնիկ» («Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդները» (ոուսերեն), թիվ 6, 1970, էջ 8):

Տասնամյակներ անց, 1983 թ. բանաստեղծ Սասուն Գրիգորյանն այցելել է Ստամբուլ և իր տպավորություններն արտահայտել է «Քսանչորս ժամ Պոլսում» պոեմի մեջ: Ահա մի քանի տող այդ պոեմից.

**«Շրջում եմ այստեղ, այս հին քաղաքում,
Սիրտս նեղվում է, հոգիս՝ աղմկում:**

.....

**Պատերդ ի ծնե արյամբ են թրծված,
Թալեաթ և էնվեր դարձրել ես աստված:**

.....

**Պատերիդ պես պինդ, սև է երեսդ,
Պոռնկանոց է, հարեմ է ներսդ:**

.....

**Զոհրապ սպանես, Սևակ, Վարուժան...
Մնա՞ս անպատիժ, դարավոր խուժան»:**

(Երևան, 1995 թ.):

Այստեղ պարտքս եմ համարում Սասուն Գրիգորյանի մասին

ասել հետևյալը: Նա մեր ժամանակի անվանի բանաստեղծն է, որի ամբողջ ստեղծագործությունը ներծծված է հայրենասիրության վեհ շնչով:

Սասուն Գրիգորյանը տպագրել է 30-ից ավելի գրքեր, որոնցից հատկապես կարևորում եմ մեր ազգային-ազատագրական պայքարի նշանավոր գործիչներին, Հայրենական մեծ պատերազմում զոհված հայ ժողովրդի ղավակներին և Ղարաբաղյան հերոսներին նվիրված «Մուսաները չլուցին» եռահատորը և «Հավերժության լուսամատյան» հանրագիտարանային նշանակություն ունեցող մենագրությունները, որոնք վաղուց վաստակել են Հայաստանի Հանրապետության պետական մրցանակի արժանանալու իրավունքը:

Սասուն Գրիգորյանը հիմնադրել և ղեկավարում է «Մեծ եղեռնի և հայոց ազատամարտի Ուխտատուն թանգարան-ինստիտուտը»: Նա Ռազմածովագիրների միջազգային ընկերակցության փոխնախագահն է:

Ուզում եմ պարզել նաև հետևյալ հարցը: Վերջ ի վերջո Կ. Պոլիսն արևմտահայության քաղաքական, տնտեսական, մշակութային և հոգևոր կենտրոնն էր: Բայց ինչո՞ւ էր Ռուբեն Սևակը Կ. Պոլսին այդպիսի անվանումներ տալիս: Այս հարցին յուրօրինակ ու դիպուկ պատասխան է տվել բանաստեղծի եղբոր որդի Հովհաննես Զիլինկիրյանը:

Հ. Զիլինկիրյանը, որը տարիներ շարունակ ապրել էր Կ. Պոլսում, զգացել էր այդ քաղաքի հրեշավոր, ծանր ու գաղջ մթնոլորտը, իրավացի նշում է այն հանգամանքները, որոնք նպաստեցին այդ քաղաքում մեծ թվով հայերի բնակվելուն: Առաջինը նա հիշատակում է Բուրսայի Հովակիմ եպիսկոպոսին, որը սուլթան Մեհմեդի հրամանով 1453 թ. Կ. Պոլսում ստեղծեց հայկական պատրիարքությունը, որով «հայ ազգին ճակատագիրը ձևով մը թուրքերուն ձեռքը յանձնած եղաւ» (Հ. Զիլինկիրեան, Ռուբէն Սևակ եւ «Փրցուելիք ուղեղներ», 1985, էջ 20-24):

«Հայը, - շարունակում է Հ. Զիլինկիրյանը, - օսմանեան գրաման շրջանին, Արևմտեան Հայաստանի հողերուն վրայ, իսկական իմաստով մէկ հատ հայ քաղաք չկրցաւ հիմնել, Անի քաղաք մը չկրցաւ վերստեղծել»:

Եվ ասվածից ելնելով. Հ. Ջիլինկիրյանը եղրակացնում է. «Որովհետև հառաքարար ապրելու, իրարու դժբախտ ըլլալու և թշնամիի դէմ պայքարելու կարողութիւնը չունէր: Այս է պատճառը, որ Արեւմտեան Հայաստանը 500 տարի իսկական իմաստով ոչ հայկական կառոյց ունեցաւ, ոչ գրականութիւն, ոչ ալ գրող»:

Հ. Ջիլինկիրյանի գնահատականը խիստ է ու արդարացի: Մի կարևոր իրողութիւն էլ է նա նշում: «Երբ.- գրում է նա.- օսմանեան կայսրութիւնը քայքայուիլ սկսաւ և բոլոր գերի ազգերը ապստամբելով թուրքին դէմ, ազատութեան ճամբան ընտրեցին, Պոլսոյ մէջ ապրող կրօնական և համայնքային պետերը իրենց անձնական շահերուն պատճառաւ, նախընտրեցին օսմանեան տիրապետութեան տակ մնալ»:

Շարունակելով իր միտքը Հ. Ջիլինկիրյանն ընդգծում է. «Եւ այս այլասերուած կեղրոնին մէջ Պոլսոյ առաջնորդները, հայկական պատմութեան ամենամեծ սխալը գործեցին»:

Իսկ ո՞րն էր այդ սխալը: Ահա և Հ. Ջիլինկիրյանի պատասխանը. «Օսմանեան կայսրութեան հպատակ քրիստոնեայ ազգերուն ոչ մէկը իրենց վարչական կեղրոնը Պոլիս փոխադրել մտածեց: Անոնք իրենց հողին վրայ մնացին և ազատութեան տիրացան: Բայց հայերը հակառակը ըրին: Այս ձեւով Արեւմտեան Հայաստանի ճակատագիրը Պոլսոյ մէջ կապուեցաւ Օսմանեան կայսրութեան»:

Հ. Ջիլինկիրյանը Կ.Պոլիսը համարում է հայութեան սուտ դրախտ, որը «իրականութեան մէջ մեր բոլոր դժբախտութիւններուն աղբիւրը եղաւ»:

Դժվար է չհամաձայնվել Հ. Ջիլինկիրյանի գնահատականին ու եղրակացութիւններին: Կ.Պոլսի հայ գաղութը, իսկապես, բացասական դեր խաղաց արեւմտահայութեան ազգային-ազատագրական պայքարի գործում և դարձավ անհաջողութիւնների, հետագա բոլոր դժբախտութիւնների պատճառ:

Կ.Պոլսի ամիրայական դասն էր ու կղերը, որ եռանդազին կերպով 1863 թ. Ազգային սահմանադրութեան 9-րդ հոդվածով սահմանեցին, թե «Ազգային վարչութեան առաջին պարտականութիւնն է հայ ազգը Օսմանեան կայսերական պետութեան

հաւատարիմ հպատակութեան մէջ պահել»:

Ազգային սահմանադրությունն իր այդ և մյուս հողվածներով Հ. Զիլինկիրյանի դիպուկ գնահատմամբ «Տրոյական ձի էր հայութեան համար»:

Կարծում եմ, որ Ռուբեն Սևակն անպայման այս ամենը գիտեր և Կ. Պոլիսն իր այլասերվածությամբ ներկայացնում էր ոչ միայն նրա համար, որ այնտեղ էր նստում արյունարբու սուլթանը, այլ նաև այն պատճառով, որ Պոլսի ամիրա-կղերական հատվածը ծախու և նույնքան այլասերված «մտավորականների» հետ միասին անդադար ամրացնում էին արևմտահայությանը կաշկանդող շղթաները:

Երիտթուրքերի հետ դաշնակցության շարունակվող սիրախաղի, այդ ազգակործան քաղաքականության հետևանքով արևմտահայության գլխին կախված սպառնալիքն ավելի մոտեցնող և իրողություն դարձնող անձանց գնահատականը, որ տվել է Ռուբեն Սևակը, հնչում է իրրև դատավճիռ:

Ահա այդ գնահատականը, որը նա տվել է 1911 թվականին. «Քառնուկի պէս անզէն ցեղ մը ամէն օր. ամէն օր կը յոշոտուի: Իսկ մեր գամբռները խելօքցեր, փիլիսոփայացեր. քաղաքակրթուեր են, տիեզերական եղբայրակցութեան մը խօսքերը կ'ընեն մեզի ու կ'երազեն այն հեռաւոր օրուան՝ ուր գայլ ու գառնուկ մէկտեղ կ'արածուին»: (Ռուբէն Սևակ, նույն տեղը, էջ 350):

ԵՐԿՈՒ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Ռուբեն Սևակի ողբերգական մահից հետո, նրա ստեղծագործություններով առաջին հետաքրքրվողները, հավանաբար, չեն իմացել սիրո թեմայով գրված բանաստեղծությունների դրդապատճառը: Եվ դրա հետևանքով էլ Ռուբեն Սևակին բացառապես ներկայացրել են որպես սեր երգող լիրիկ բանաստեղծ:

Մինչդեռ Ռուբեն Սևակը փիլիսոփա բանաստեղծ էր, իր ժամանակի բարդ խնդիրների մեջ ավելի սթափ կողմնորոշվող,

դրանք ավելի ճիշտ դիրքերից գնահատող, քան նրա ժամանակակիցներից շատերը, որոնց հաճախ գրականություն ու պատմության մեջ ներկայացնում են իմաստունի լուսապսակով:

Իսկ այդ իմաստուն կոչվածները չկարողացան տեսնել արևմտահայություն գլխին կախված մահացու վտանգը: Ասենք նաև, որ ոչ միայն չկարողացան տեսնել, այլև իրենց որդեգրած գաղափարախոսությունը պատասխանատվություն են կրում այդ մահացու վտանգի ահավոր հետևանքների համար, թեև իրենք էլ դարձան այդ մահացու վտանգի դոհը:

20-րդ դարի սկզբին Ռուսաստանում և Օսմանյան Թուրքիայում տեղի ունեցավ երկու իրադարձություն, որը կարևոր ազդեցություն թողեց Հայ ազգային-հասարակական, մշակութային-քաղաքական, տնտեսական-սոցիալական իրականության վրա, որոնց անդրադառնալը, սակայն, դուրս է մեր նպատակից: Ուստի դրանց հարկ եմ համարում անդրադառնալ այնքանով, որքանով, որ առնչվում են Ռուրեն Սևակի գործունեության, նրա հայացքների գնահատմանը:

Առաջին. Ռուսաստանում պարտվեց 1905-1907 թթ. հեղափոխությունը: Այդ պարտությունը խոր ազդեցություն ունեցավ հասարակական գիտակցության, այդ թվում գրականության, արվեստի վրա: Ուժեղացան անկումային, դեկադենտական տրամադրություն արտահայտող հոսանքները՝ սիմվոլիզմը և այլն: Այս ազդեցության կրողները հրաժարվեցին ռեալիստական գրականության ավանդույթներից, քարոզում էին «մաքուր արվեստի» տեսությունը, ծայրահեղ անհատապաշտություն ու միստիցիզմ, խոնարհվում Արևմուտքի արվեստի առջև:

Այդ ազդեցության տակ գտնվող գրողները սևացնում էին հեղափոխությունը, գովերգում էին դավաճանությունը, եսասիրությունը, այլասերվածությունը և այս ամենը ներկայացնում որպես անհատի ազատություն:

1905-1907 թթ. ռուսական հեղափոխության պարտությունը նշանակալի ազդեցություն ունեցավ Հայ հասարակական-քաղաքական կյանքի, մշակույթի վրա: Հակահեղափոխության հարձակումը յուրատեսակ քննություն եղավ նաև Հայ գրականության, մշակույթի համար: Այդ հեղափոխության ժամա-

նակ գրած «Աղատության դանդ» բանաստեղծության հեղինակ Ավետիք Իսահակյանը հակահեղափոխության հալածանքների պայմաններում կերտեց «Արու-Լալա-Մահարի» պոեմը, այդ միջոցով արտահայտելով իր բողոքը ստեղծված իրականության դեմ:

Հայ գրականության պատմության մեջ կա նաև այնպիսի բանաստեղծ, որը ոչ միայն բողոքում էր հակահեղափոխության հալածանքների դեմ, այլև լցված էր խոր հավատով առաջադիմության հաղթանակի նկատմամբ: Այդ բանաստեղծն այսօր հանիրավի մոռացված, նույնիսկ դարոցական դասադրքերից հանված Հակոբ Հակոբյանն էր, որը հակահեղափոխության փայրենի հարձակման ընթացքում, 1909 թ. գրեց «Նոր առավոտ» պոեմը: Հակոբ Հակոբյանը ոչ միայն դատապարտում էր անհատապաշտությունն ու հոռետեսությունը, այլև համոզված էր, որ կգա «Նոր առավոտը», լույսի ու արդարության հաղթանակը:

Երկրորդ. Օսմանյան կայսրությունում հաղթեց երիտթուրքական հեղափոխությունը: Այդ հեղափոխության հաղթանակն իսկական քննություն եղավ արևմտահայ հասարակական-քաղաքական, ազգային ուժերի համար: Մեծ էր նաև այդ հեղափոխության ազդեցությունը գեղարվեստական գրականության, արվեստի վրա:

Արևմտահայ այն գործիչները, որոնք դաշնակցության անդամ էին կամ համակրում էին այդ կուսակցությանը, գոհունակությամբ ողջունեցին երիտթուրքական հեղափոխության հաղթանակը և ոգևորությամբ լծվեցին դրա պաշտպանության գործին: Նաև չէին թաքցնում իրենց հպարտությունը, որ եղել են այդ հեղափոխության ոչ միայն մասնակիցը, այլև ունեցել են որոշակի դերակատարություն:

Այստեղից էլ այն մտայնությունը, թե ավարտվել է պայքարը և հարկավոր է պաշտպանել ձեռք բերված աղատության խորհրդանիշը՝ վերականգնված Միտհաղյան սահմանադրությունը: Եվ այդ մտայնության գերի դարձած գործիչները, որոնք Ակնունու վկայությամբ «գինովցած» էին, լծվեցին «նոր» Թուրքիայի ստեղծման գործին և այնքան էին ոգևորվել, որ նույնիսկ ներկայացրել էին Թուրքիայի ներքին կառուցվածքը, կրթական

Համակարգը վերափոխելու ծրագիր:

Մինչդեռ երիտուրքերը Հեղափոխության Հենց առաջին օրից սկսեցին իրականացնել իրենց Հակահայկական, շովինիստական ու հետադիմական քաղաքականությունը: Եվ այդ ամենի արդյունքն եղավ 1909 թ. ապրիլին Ադանայի Հայ բնակչությունը կոտորածը, որին դո՛ւզ գնաց 30 հազար մարդ:

ԵԶԱԿԻ ԴԵՄՔԵՐԻՑ ՄԵԿԸ

Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ բարեբախտաբար բոլորը չէ, որ ընկան անկումային տրամադրությունների մեջ, դարձան հոռետես: Եվ ի պատիվ Ռուբեն Սևակի ուղում եմ նկատել, որ նա արևմտահայ գրական, հասարակական ու ազգային գործիչների մեջ եղավ այն եղակի դեմքերից մեկը, որը հավասարակշռված ու սթափ վերաբերմունք դրսևորեց՝ արդարություն հաղթանակը կապելով կարմիր դրոշի, դինված պայքարի հետ: Ռուբեն Սևակը բարձրաձայն բողոքում էր, թե ինչու են այդքան տաճարներ կառուցվում, երբ որբերը նույնիսկ գիշերելու տեղ չունեն:

Ռուսական Հեղափոխությունը և երիտթուրքական Հեղափոխության հաղթանակը Ռուբեն Սևակը գնահատեց միատեսակ՝ հաղթանակած հետադիմության խրախճանք, որն ավելի ուժեղացրեց ազգային ու սոցիալական հալածանքը: Հենց դրանից էլ ելնելով Ռուբեն Սևակն իր ստեղծագործությունների հիմնական թեման դարձրեց ազգային ու սոցիալական խնդիրները:

Փաստելով այս իրողությունը, հարկ է նշել, որ ի դեմս Ռուբեն Սևակի մենք գործ ունենք մի եղակի երևույթի հետ, երբ Հայ գեղարվեստի ասպարեղում ազգայինն ու սոցիալական խնդիրներն այդպես ներդաշնակորեն են դրսևորվում: Այո, եղակի երևույթ է, քանի որ այն տարիներին, երբ ստեղծագործում էր Ռուբեն Սևակը, տիրապետում էր այն մտայնությունը, ըստ որի արևմտահայությունը միայն պետք է մղեր ազգային-ազատագրական պայքար, որ սոցիալական պայքարի անհրաժեշտ

տուժյունը հայ իրականության մեջ գոյություն չունի:

Ռուբեն Սևակի ստեղծագործությունների միջով այս ներդաշնակությունն անցնում է կարմիր թևի նման: Ահա մի հատված 1907 թ. գրված «Դրամին աղօթքը» բանաստեղծությունից, որը հեղինակը նվիրել է «Խնդճերուն»;

**«Հողագունտիս կեղեւին վրայ տրտմածին
Թափառայած իմ ոտքերըս քալեցին
Եղբայրութեան տաքուկ շունչը փնտռելէն,
Ու ամէն տեղ իմ հէգ աչերըս լալէն
Տեսան փարթամ մեծատունին դրրան քով,
Աղքատ մայր մը, որ կը սպասէր արցունքով:**

.....
**Մարդն, առաջին այն մարդը որ տենչավար
Պեղեց, խուզեց հողին արգանդը խաւար.
Ու չարանենգ թաքըստոցէդ դարաւոր՝
Խըլեց քեզի, յղկեց, մաքրեց փառաւոր,
Այդ մարդը, վա՛խ, ժանտ ցոլքերուդ մէջ ժպտուն
Չը նշմարեց տխրւր անկումը Մարդուն:**

**Տառապանքի, անյուսութեան ողբեր խուլ,
Կը խեղդուին քար պատերու տակ խարխուլ.
Սովալըլուկ բիւր թշուառներ տրտմօրէն
Իրենց նիհար ձեռքերը քեզ կ'երկարեն.
Ու տենդահար փողոցին վրայ, ամէն դի,
Քանի փոքրեր կան մայրազո՛ւրկ, անօթի»:**

Արժե՛ն հիշել նաև «Որո՞ւ համար» բանաստեղծության հետևյալ տողերը.

**«Ըսաւ ինծի վաշխառուն այն՝ որ
Հազար խեղճերու անկումն ահաւոր
Կ'որոճար՝ երկաթ իր արկղին առաջ.
«Իզո՞ւր են արցունք, իզո՞ւր են հառաչ
Քու քնարիդ ձայնէն.- հաւատայ խօսքիս-**

Աւելի քաղցրիկ կը հնչէ ոսկիս...:

.....
 «Բոցին տուր,- ըսին. ա՛զգ, քերթուած, տոանձ.
 Մէկ կրոն կայ՝ կեղծիք, մէկ Աստուած՝ Դրամ»:

«Այս դանակը» բանաստեղծութեան մեջ Ռուբեն Սևակը պատկերում է «գետնափոր նկուղներում» ապրող մարդկանց չարքաշ կյանքը և ամբողջ ուժով բողոքում անարդարութեան դեմ:

«Հա՞ց...Ո՛վ ողորմուկ երեխայ սոված,
 Հաց չկայ. այսպէս է տնօրինուած...:
 Դու դեռ շատ փոքր ես, դեռ չես հասկընար
 Որ հարուստն ունի իրաւունք, հնար
 Քեզ մեռցնելու ծանրածանր մահով,
 Օրէնքն է իրեն պաշտպան ապահով...:

.....
 Հա՞ց...: Աշխատելէն հայրըդ դարձաւ ծեր,
 Հացի խնդիրն ինքն ալ չէ հասկըցեր:
 Ինչո՞ւ ոմանք տէր են, ոմանք գերի...:
 Թէ Բախտը կո՛յր մ'է որ կը դեգերի
 Ինչո՞ւ օր մ'իրենց դուռին չի զարկաւ...:

.....
 Գործարաններու դուռները փակ են,
 Ամիս մ'է արդէն: Հազարը մէկէն
 Բանուորներն ամբողջ նետեր են փողոց,
 Ամէնքն ալ հայրեր մի քանի տըղոց:
 - Մատուցումը շատ, խնդրանքներ չիկան,
 Կ'ըսեն, ապրանքով լեցուեր է շուկան.
 Գործի մե՛ծ օրէնքն է տնտեսավար.-
 Այդ լաւ, բայց նօթի մեռնիլն է դժուար:
 Թէ բանուորն այնքան արտադրեր է շատ,
 Ինչո՞ւ հաց չունի բանուորն անաշխատ...»:

Ու այդ բանվորին Ռուբեն Սևակը դիմում է հետևյալ խոսքերով.

«Դուն, այնքան համեստ ու այնքան խելօք,
 Եւ որ կրնայիր շարժումով մը լոկ
 Արեան վրայ հիմնել Օրէնքդ ապագայ,
 Բայց կը սպասես որ խաղաղութեամբ գայ,
 Արդարութեամբ գայ, գա՛յ տարուէ տարի,
 Զրկուած մարդկութեան երազը բարի...»:

«ՍԻՐԵՑԻ ՏԱՌԱՊԱԿՈՄ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ»

Ռուբեն Սևակն ուներ աղքատասեր սիրտ և դրանով հպարտանում էր: Նրա աղքատասիրությունն արտահայտվում էր իրավագուրկ մարդուն պաշտպանելու ազնիվ պարտականությունամբ: «Սիրեցի տառապակոծ մարդկությունը»՝ հռչակում էր Ռուբեն Սևակը: Ոմանք այդպիսի պարտականությունը չփոթում են հղիացած բուրժուանների հետ, որոնք պարապությունից մի կտոր չոր հաց են նետում աղքատին և պահանջում հրապարակավ մեծարել ու պատվել իրենց այդ «մեծ» բարեգործության համար:

Եկեղեցու մեջ երկու նորածինների կնունքի արարողությունը նկարագրելով, Ռուբեն Սևակը շարունակում է.

«Պատարագէն վերջ, քով քովի անձայն,
 Երկու թափորներ իրար քսուեցան:

.....

Ոչ: Երկու թափոր, երկուքն ալ ժպտուն,

Մէկը նորածին որդին մեծատուն

Միւսը աղքատի ծնունդը անտուն.

Մէկը բեհեզով քնած, միւսն արթուն.

Մէկուն ժանեակներ, մետաքսի հիւսկէն,

Միւսին ձորձ մը խեղճ՝ հօրը շապիկէն.

Առաջնոյն ոսկի, ժանեակ բիւր տեսակ,

Երկրորդին ճակտին փուշի սեւ պսակ.

Մէկը Տէր արդեն, միւսը Գրաստ,

Ճակատագիր, վա՛խ, տղաքները փաստ...»:

Ռուբեն Սևակը ոչ միայն նկարագրում է «Խնդճերի» տխուր կյանքը, այլև ցույց է տալիս ելքը: Նա չի սահմանափակվում հասարակության ճակատի մուրը պատկերելով, այլև դնում է այդ մուրը մաքրելու անհրաժեշտությունը, ցույց է տալիս դրան հասնելու ճիշտ միջոցը:

1909 թ. մայիսի մեկին Լոդանում գրված «Կարմիր տոնը» բանաստեղծության մեջ նա բանվորին կոչ է անում.

«Ընդվզումի մը մէջ հըզօր
Քանդեցէք կուռքը Մեծերուն,
Ձերին կարմիր տօնն է այսօր...:
Թափորներով դուք դեգերուն
Դրօշակներու ներքեւ բոսոր
Վրէժն երգեցէք ձեր վէրքերուն
Վրէժի ահեղ տօնն է այսօր...»:

Իսկ «Կարմիր դրոշակը» (1909 թ.) խորիմաստ բանաստեղծության մեջ նկարագրելով բանվորների կուռ շարքերը, Ռուբեն Սևակն եղրակացնում է.

«Ու ինձ այնպէս թուեցաւ թէ լռելեայն
Ճակատագրին թելը կ'իշխէր իրենց վրան...
Բայց կ'երթային անոնք, Ի Ձէ՛ն, Ի ՊԱՅՔԱՐ,
Արդարութեան կը դիմէին խո՛նջ տըկա՛ր.
Արդարութեան որ այս կերպով պիտի գար...»:

Ռուբեն Սևակը պայքարի համար կարևորում էր ատելության գաղափարը, ատելության զգացումը բոլոր նրանց նկատմամբ, ովքեր անխղճարար կեղեքում են աշխատավոր մարդուն և նրա դժբախտության վրա կերտում իրենց երջանկությունը: 1911 թ. գրած «Փողոց ալողը» բանաստեղծության մեջ բանաստեղծը կոչ էր անում.

«Ու սորվէ ատել նողկանքով անհուն.
Անոնք որ «փրկչի» կը կրեն անուն

Ու ճոխ խօսքերով տունըդ կը քանդեն.
 Սորվեցուր տղոցդ ատել արգանդէն՝
 Քաղաքագէտները ամէն գոյնի,
 Որոնք կը սպաննեն քեզ առանց թոյնի:
 Սորվեցուր իրենց խօսքը հետագայ՝
 «Աղքատին համար բարեկամ չիկայ».
 Փոքրերն անվրէպ մեծերուն կեր են.
 Մարդերը կատղած կենդանիներ են...»:

Սոցիալական բովանդակությամբ զրված բանաստեղծություններով Ռուբեն Սևակն առանձնանում է իր ժամանակակից շատ նշանավոր գրողներից ու ազգային-հասարակական գործիչներից, որոնք նույնպես հանդես էին գալիս կապիտալիստական դաժան հարաբերությունների քննադատությամբ, պատկերում հասարակ մարդկանց չարքաշ կյանքը: Բայց այդ գրողները հենց դրանով, այդ նկարագրությամբ էլ բավարարվեցին, խուսափելով ավելի հեռուն տեսնել: Իսկ Ռուբեն Սևակը չբավարարվեց կապիտալիստական հարաբերությունները քննադատելով: Նա հստակորեն ցույց տվեց այդ նողկալի հարաբերությունների կապանքներից աղատագրվելու ելքը՝ իր հերոսներին մղելով դեպի պայքար, մատնացույց անելով սոցիալական հեռանկարը: Ահա հենց սրանումն է կայանում Ռուբեն Սևակի սոցիալական թեմատիկայի գլխավոր բովանդակությունը:

«Գիւղական եկեղեցիին մէջ» պոեմում Ռուբեն Սևակն անդրադառնում է «քաղաքակիրթ Արևմուտքին»՝

«Ուր խիղճը բառ մ'է, մարդը՝ մեքենայ.
 Աշխարհը գործարան մ'անխոնջ, անխնայ.
 Սէրը հաշիւ մ'է, կրօնքը՝ դրամ.
 Երջանկութիւնը ձանձրալի մի տոամ.
 Մահն՝ անմտութիւն, կեանքն՝ անհաշտ մի կոփւ.
 Ուր ժամանակն իսկ վատ մ'է ալեխոփւ,
 Որ ամէն ըոպէն իր մանրակրկիտ,
 Մուրճի հարուածով կը զարնէ մտքիդ...»:

Ուշադրություն դարձնենք նաև Ռուբեն Սևակի հետևյալ մտքին, որը նա արտահայտել է 1911 թ. «Այլասերում» խորագիրը կրող հոդվածում. «Թռչունի պէս վիրաւոր ցեղ մը, փոքրիկ վիրակապի մըն է կարօտ՝ իր թեւերը նորէն բանալով միջոցին մէջ արծիւի պէս սաւառնելու համար: Իսկ մեր ընկերաբանները թո՛յն կը փչեն բոյներէն ներս, ու մեզ կը խօսին այն տարտամ ապագաներուն վրայ՝ ուր ազգ ու հայրենիք ու ընտանիք կը լուծուին համաշխարհային միջազգայնութեան մը մէջ...»:

Ռուբեն Սևակի այս կանխատեսումն ամեն ինչով հիշեցնում է մեր ժամանակներում ժողովուրդներին պարտադրած ու ամեն ինչ ոչնչացնող գլոբալիզացիան:

Այսօր էլ հանճարեղ բանաստեղծի գնահատմամբ, 21-րդ դարի առաջին երկու տասնամյակի ընթացքում շատ վնասներ տեսած ու ապրած մեր ժողովուրդը «փոքրիկ վիրակապի» կարիքն ունի, որպեսզի նորից սավառնի վերելքի ճանապարհով:

Բայց մեր իրականության մեջ գործող կեղծ լիբերալ-դեմոկրատները, նեոլիբերալները դեռ անկաշկանդ շարունակում են շաղակրատել «ազատ» շուկայի բերած «բարիքների» մասին, որի պայմաններում համաժողովրդական ունեցվածքը թալանեցին ու յուրացրեցին:

21-րդ դարի առաջին տասնամյակում լիբերալ դեմոկրատների վարած քաղաքականության արդյունքով Հայաստանի ժողովրդական տնտեսությունն ամբողջովին քայքայվեց: Դա չլսված իրողություն է, այն էլ խաղաղ պայմաններում: Եվ դարձանալին այն է, որ այդ ամենը լիբերալ դեմոկրատները հրամցնում են որպես հաջողություն, որպես նվաճում:

Հոգեբանորեն կարելի է նրանց հասկանալ, որովհետև այդ տարիների ինչպես տարբեր տնտեսագետներ ու խորհրդականներ, այնպես էլ քաղաքագետներ փորձում են այդ ձևով դուրս գալ դժվարին վիճակից և պահպանել իրենց վարքը:

«Ազատ» շուկան, նեոլիբերալիզմը՝ գաղափարախոսություն է և տնտեսական ծրագիր, որն ունի իր գործողությունների կոնկրետ ժամանակացույց:

Դեմոկրատիայի միջոցով ձեռներեցության անցնելու մասին գեղեցիկ կարգախոսների տակ քողարկվելով նեոլիբերալներն

ազատությունը վերածնցին մի գործիքի, որը ծառայեց միջոց եկամուտները բնակչության մեծամասնության հաշվին վերնախավի օգտին վերաբաժանելու համար:

Նեոլիթերայիդան օգտագործվում է որպես հսկայական չափերի հասնող թալանի միջոց: Եվ հայ ժողովրդի ամբողջ պատմության մեջ չի եղել այդպիսի համատարած թալան, յուրացում, համաժողովրդական ունեցվածքի այդպիսի վերաբաժանում:

Ահա ասվածի կապակցությամբ հիշելով Ռուբեն Սևակի կանխատեսումը, փտահարար կարելի է ասել, որ մենք դեռ չգիտենք, թե ով է վերջում ծիծաղողը, քանի որ պատմությունը շարունակվում է և դերերը մեկ անգամ չէ, որ պետք է փոխվեն: Եվ ամենայն հավանականությամբ այդ ծիծաղողները նեոլիթերայները չեն լինելու...:

«ՄԱՐԴԸ» ԱՎԱՐՏԱԿԱՆ ԹԵԶԸ

Մարդը, նրա էությունը, հասարակական կյանքում նրա դրժունությունների արդյունքը կարևոր տեղ են դրադեցրել Ռուբեն Սևակի պատմափիլիսոփայական մտորումների մեջ:

Փորձեմ, որքան հնարավոր է, համառոտ ներկայացնել Ռուբեն Սևակի այդ մտորումները և մարդուն նայել նրա աչքերով:

Նախ, ասեմ, որ այդ մտորումները իրենց վրա կրում են ապագայի կանխագուշակման կնիքը: Մարդուց դուրս հասարակության ապագա գոյություն չունի և այդ պատճառով էլ մարդկային գործոնը նրա իրականացման գլխավոր միջոցն է:

Գիտական հաշվարկների համաձայն մարդու կյանքի միջին տևողությունը 70 տարի է կամ 600 հազար ժամ: Եթե դրանից հանվի քնելու և ֆիզիոլոգիական այլ պահանջմունքներին հատկացված 400 հազար ժամը, ապա ախտիվ կենսագործունեության համար մնում է 200 հազար ժամ: Այստեղից էլ գլխավոր հարցը. ինչպե՞ս ծրագրավորել, որպեսզի ոչ մի ժամ անտեղի չվատնվի:

Անտիկ առասպելների համաձայն աստվածները մարդուն պատժում էին այն բանով, որ հայտնում էին նրա ապագան: Սա-

կայն բոլոր դեպքերում ապագայի զաղտնիքը մշտապես հրապուրում է մարդուն: Ի՞նչ կլինի վաղը, մեկ ամիս հետո, մեկ տարի հետո:

Նախագուշակման, կանխատեսման պարադոքսն այն է, որ մարդը ձգտում է իմանալ այն, ինչը որ դեռևս չկա: Բայց, այնուամենայնիվ, հիմնական գծերով, իր էությունամբ ապագան կարելի է կանխատեսել, քանի որ հայտնի է ներկան, հայտնի են նրա փոփոխման օրենքներն ու միտումները:

Պետք է ընդգծել նաև, որ գիտական կանխատեսման մեջ չկա միատիկա: Այն ներկայացնում է արժանահավատ գիտելիքներ, եթե, իհարկե, հենվում է բնության ու հասարակության օրենքների իմացության վրա, եթե նրա օգնությամբ չեն փորձում ամբողջապես ստեղծել ապագայի նկարագիրը...

Իմ խորին համոզմամբ գիտական կանխատեսութայն բնորոշ փաստ է Ռուբեն Սևակի «Մարդը» ավարտական թեզը, որը նա գրել է 1905 թվականին: Այստեղ ուժգին կերպով դրսևորվում է Ռուբեն Սևակի սոցիալական հասունությունը: Այս «սոցիալական հասունությունը» չպետք է նույնացնել «հասուն տարիքի» հետ, որովհետև սոցիալական հասունությունն անհատի դարգացման ընդհանրացված բնութագիրն է, իսկ հասուն տարիքը վերաբերում է կյանքի որոշակի փուլին: Ուստի ամեն մի հասուն մարդ չի կարող սոցիալական իմաստով լինել հասուն:

Սոցիալական հասունությունը բնորոշում է անհատի դարգացման աստիճանը, նրա կենսափորձը: Սոցիալական հասունությունն ինքն իրեն չի գալիս, այլ ձևավորվում է վաղ տարիքից: Ինչպես ասում են, պատանեկությունը վճռական ավանդունի այդ գործում: Իսկ Ռուբեն Սևակի դեպքում այդ ավանդը կախված է եղել ընտանիքից, դպրոցից և ամենից առաջ հենց իրենից:

Սոցիալական հասունությունը Ռուբեն Սևակի կայացման գործում կարևոր փուլ է: Ընդ որում՝ դա կապված չի եղել տարիքի հետ: Ռուբեն Սևակն այն հանճարեղ անհատականություններից է, որ սոցիալական հասունության բարձրագույն աստիճանին հասավ շատ երիտասարդ տարիքում: Եվ ասվածի վառ ապացույցն է «Մարդը» ավարտական թեզը:

Իր համառոտ, բայց շատ տարողունակ շարադրանքի մեջ Ռուբեն Սևակը մարդ արարածին քննում է երեք ժամանակաչրջաններում՝ անցյալում, ներկայում և ապագայում: Դիմելով իր ժամանակակցին՝ Ռուբեն Սևակը գրում է. «Դուք, մարդեր, քսաներորդ դարու լուսափառ սեմին վրայ բարձրացած, մտածած էք երբեք ձեր նախահօր վրայ, դողդոջ ու բիրտ, տկար ու վայրագ միանգամայն այն էակին վրայ, որ սերունդ է ի սերունդ, դար է ի դար զքեզ կազմեց, զքեզ, լոյսի երկնաբաղձ գաւակներ»: (Ռ. Սևակ, Անտիպ էջեր, Երևան, 1992, էջ 17):

Եվ հետևելով նախահօր, նախամարդու տառապանքներով անցնող ճանապարհին, խավարի մեջ նրա խարխափումներին՝ Ռուբեն Սևակը ի վերջո փաստում է, որ նա հաղթեց, ոտքի կանգնեց «մեծ անկորնչելի զօրութիւն մը՝ մտածումով ու լեզուով»: «Այսպէս, - եզրակացնում է Ռուբեն Սևակը, - և մտածումը և լեզուն իրարու միացած՝ առաջնորդեցին մարդը ամէն դժուարութիւններուն մէջէն եւ դանդաղ, այլ վստահ յառաջացումով մը բերին հասցուցին իր ներկա վիճակին»: (Նույն տեղը, էջ 19):

Գնալով դեպի պատմության ծալքերը՝ Ռուբեն Սևակը զգուշացնում է, որ յուրաքանչյուր նոր սերունդ պետք է շարունակի կյանքը և ոչ թե նորից սկսի: Այս պարզ ճշմարտությունից ելնելով՝ Ռուբեն Սևակը զգուշացնում է պատմության քաղքենիական հասկացության վտանգից, որի կրողները քարոզում են «հաճոյքի, շահու բարոյականը, որ ժողովուրդներ ամբողջ անասնական կիրքերու տիղմին մէջ ընկղմելէ վերջ՝ մահախրատ վարդապետներ պիտի հարուցանէր իր ետեւէն»: (Նույն տեղը, էջ 21):

Իհարկեւ, այսպիսի ընդհանրացում կատարելով՝ Ռուբեն Սևակը, իմ համոզմամբ, նախ՝ նկատի է ունեցել օսմանյան բռնատիրությունը, որին ուղղակի չի կոչել, ելնելով գրաքննության պահանջից: Նաև նկատի է ունեցել կապիտալիստական հասարակությունը, որտեղ ամեն ինչ վերածվել է առևտրի առարկայի:

Իսկապես, կապիտալի նախնական կուտակման ժամանակաշրջանից մինչև մեր օրերը բուրժուական հասարակության գրականության «հավերժական» սյուժեն դարձած երեխաների

կողմից հորը թալանելու, ունեցվածքին տիրելու նպատակով ծնողներին սպանելու պատմություններն անվիճելիորեն փաստում են Ռուբեն Սևակի եղբայրացության ճշմարտացիությունը:

«Ինչ է արդի մարդը» հարցով Ռուբեն Սևակը շարադրում է իր վերարևմունքը մարդու նկատմամբ ընկերության, կրոնի, գիտության, արվեստի և բարոյականության տեսանկյունից: Պատշաճ գնահատելով կրոնի դերը մարդկային քաղաքակրթության զարգացման գործում՝ Ռուբեն Սևակը հատուկ ուշադրություն է դարձնում գիտությանը: **«Մարդը, - գրում է նա, - կրօնքի սիրոյն հետ ուրիշ սէր մըն ալ ունի, եղբայր մը առջի սիրոյն, որ սակայն տարբեր ճամբաներէ պիտի քալէր ու մերթ թշնամի պիտի ըլլար իր եղբօր»:** (Նույն տեղը, էջ 21-22):

Սակայն վրա հասավ այն ժամանակը, երբ երևույթների կրօնական բացատրությունը, դիցաբանական վեպերը չէին կարող այլևս հագեցնել **«մարդուն հետաքրքիր միտքը»:** Ուստի **«լոյսին ծարաւը ունեցող մարդը ուզեց վերցնել բնութեան քողը ու քիչևքիչ ճանչցաւ զայն իր այլազան երեւոյթներուն մէջ. ասկէց յառաջացան գիտութեանց այնքան բազմապիսի ճիւղերը»:** (Նույն տեղը, էջ 22):

Ռուբեն Սևակը հակիրճ, բայց շատ տարողունակ կերպով մեկնաբանում է ճարտարապետությունը, արձանագործությունը, նկարչությունը, երաժշտությունը, բանաստեղծությունը և այդ միջոցով հանգում հետևյալ մտքին. **«Գեղեցիկը բնութեան մէջ աղոտ է ու խառնակ միանգամայն. մարդ զուտ մաքուր գեղեցիկը ըմբռնեց, իտեալ գեղեցիկը»:** **«Ինքը, - շարունակում է փիլիսոփա բանաստեղծը, - հիւլէ մը տիեզերքին մէջ, երկրորդ տիեզերք մը զգաց իր մէջ, կեանքով ու գեղեցկութիւնով լեցուն՝ զգացումների տիեզերքը՝ սիրտը»:** (Նույն տեղը): Ահա այս մի քանի տողի մեջ ամփոփած է Ռուբեն Սևակի էսթետիկան: Դա կյանքի փրկության, մարդկության փրկության էսթետիկան է: Ռուբեն Սևակի մոտ Գեղեցիկի ըմբռնումը համահունչ է Դոստոևսկու հանրահայտ ձևակերպմանը՝ **«Գեղեցկությունը կփրկի աշխարհը»:**

Բայց դա ամբողջը չէ: Ռուբեն Սևակը մարդու մեջ տեսնում է մեկ այլ, ավելի վսեմ գորություն՝ պարտքը: Եվ նա ազդարար-

րում է. «Պահրտքը իր անձին հանդէպ, պահրտքը այլոց անձին հանդէպ, պահրտքը Աստուծոյ հանդէպ: Պահրտքը օրօրոցէն մինչեւ գերեզման, ու պահրտքը գերեզմանէն ալ անդին... Յաւիտենական, անմահ, վսեմ Պարտքը...»: (Նույն տեղը, էջ 24):

Ռուբեն Սևակն ապագա մարդու գլխավոր խնդիրը համարում է մարդկային ցեղի փրկութիւնը: Ապագա մարդը կունենա՞ այդ ուժն ու կամքը սեփական փրկութեան համար: Իմ պատկերացմամբ այսպիսի հարցադրմամբ Ռուբեն Սևակը կանգնում է մարդկութեան պատմութեան մեջ եղած անկանելի իրավիճակ չընդունող ամենահամարձակ մարդկանց շարքում: Նա իր շարադրութեան մեջ երևում է ոչ միայն մահացու վտանգի մասին հանճարեղ զգուշացնող, այլև այդ վտանգը հաղթահարելու ճանապարհը ցույց տվող հանճարեղ մտածող:

Ռուբեն Սևակը խնդիր է դնում թափանցել «ապագայի մթութիւններուն մէջ ու հոն՝ մարդը տեսնել իր բոլոր կարելիութիւններովը»: (Նույն տեղը): Եվ այդ կարելիութիւններին մեջ Ռուբեն Սևակն առաջին հերթին կարևորում է առաջադիմութիւնը, որպես տիեզերքի օրենք, մարդկութեան օրենք: Իսկ առաջադիմութեան համար պետք է գիտութիւնը հասնի դարգացման այնպիսի աստիճանի, որպեսզի իրենով բարձրացնի մարդուն, ճանաչելով բնութիւնը՝ կառավարել նրան և դարձնել մարդու սպասավորը:

Ռուբեն Սևակը մարդկութեան ապագա առաջադիմութեան գործում գիտութեան դերը կապում է բնութեան և հասարակութեան օրենքների իմացութեան հետ: Միայն այդ օրենքներին տիրապետող մարդը կարող է գիտութիւնը ծառայեցնել մարդկութեան շահերին:

Այսօր գիտութիւնը դարձել է անմիջականորեն արտադրական ուժ: Եվ ոչ միայն այն պատճառով, որ կարող է հայտնվել չարագործի ձեռքին: Գիտութիւնն այդպիսին կարող է դառնալ այսպես կոչված բարի գիտավորութիւն ունեցողների ձեռքին, որոնք հանուն փորձարկումների Երկրագունդը վերածել են փորձարարական լաբորատորիայի:

Իսկապես, Երկրագնդի վրա ամեն ինչ կա, որպեսզի մարդիկ ապրեն երջանիկ ու խաղաղ, չկռվեն իրար դեմ, չոչնչացնեն

բնության հարստությունը: Բայց, այնուամենայնիվ, մեր օրերում աշխարհը գտնվում է աղետի եզրին: Այս ողբերգական հակասությունը կանխատեսելով՝ Ռուբեն Սևակն առաջ է քաշում «տիեզերական եղբայրության մեծ պատվերը»: Այդ մեծ պատվերը Ռուբեն Սևակը համարում է այն ներդաշնակ միությունը, որը կոչվում է Մարդկություն: (Նույն տեղը, էջ 25):

Ահա թե ինչու Ռուբեն Սևակը տարիների հեռվից դնում է մարդու պաշտամունքի անհրաժեշտությունը: Ռուբեն Սևակի մոտ մտածող, իմաստավորող մարդը տարբերվում է նրանից, ով պատրաստ է կատարել ցանկացած կառավարություն ցանկացած առաջադրանք:

Ճիշտ է ասված՝ «Մարդը պատմության արդյունքն է»: Չի խանգարի, եթե ավելացնենք, որ մարդը նաև իր ճակատագրի տերն է: Այս հասկացություններն այսօր արդեն դարձել են արդիական, որովհետև խոսքը վերաբերում է ամբողջ մարդկության ճակատագրին: Ապագա մարդու, ապագա մարդկության ճակատագրի մասին խորհելով՝ Ռուբեն Սևակը կարևորում է բարոյականության դերը: «Ապագան, - ընդգծում է նա, - բարոյականին յաղթանակը պիտի ըլլայ մանաւանդ»: (Նույն տեղը):

Մարդկությունը կարող է իր նպատակին հասնել, երբ, ինչպես գրում է Ռուբեն Սևակը, «ազգերը այս մեծ ընտանիքին անդամները պիտի լինեն սիրակցորդ: Հայրենիքները ջերմին, ճվլուն բոյներու պէս պիտի ըլլան»:

Ինչպիսի՞ մարդը կարող է իրականացնել Ռուբեն Սևակի կանխատեսումը: Խորհելով այս հարցի շուրջ՝ նախ ուզում եմ հետևյալն ասել: Հանրահայտ է, որ շատ վտանգավոր են այն մարդիկ, որոնց զլխավոր նպատակն է ինքնահաստատումը: Նրանք վտանգավոր են բոլոր ասպարեզներում, իսկ արվեստի մեջ նաև զզվելի:

Բյուրոկրատիզմը միշտ տանում է դեպի կոնֆորմիզմ, հրաժարում ինքնուրույն լուծումներ գտնելուց, հետևաբար նաև պատասխանատվությունից: Այդպիսի կենսակերպ ունեցող մարդը ոչ միայն կորցնում է կամքը, այլև բարոյական սկզբունքները: Հակառակ դեպքում հաստատուն համոզմունքներ ունեցող մարդը համարձակ ու վստահ ընտրում է իր համոզմունքներին

Համապատասխանող վարքագիծ: Իհարկե, այլ հարց է, թե ինչպիսի բարոյական հատկանիշներ ու համողմունքներ է սահմանում այդ ընտրությունը:

Հանուն Հայրենիքի աղատագրություն պայքարի արդարացիություն մեջ բարոյական հավատը բնորոշ է եղել բոլոր ազնիվ մարդկանց: Միտքս փաստելու համար ընթերցողին հիշեցնեմ ոուսաց աղատագրական պայքարի պատմությունից մի հանրահայտ և շատ ուսանելի իրողություն: Դեկաբրիստ Միլնայիլ Լունինին հարցաքննում էր իր համագնդեցի գեներալ Չերնիշովը: Լունինը 10 տարով արքայազն տաժանակրություն: Հինգ տարի անց, նա խորհրդավոր պայմաններում դոհվեց Սիրիում: Իսկ Չերնիշովը Լունինին հարցաքննելուց չորս ամիս անց ստացավ կոմսի տիտղոս, մեկ տարի հետո դարձավ ռազմական նախարար, արժանացավ պայծառափայլ իշխանի տիտղոսի: 30 տարի անց, այդ ապաշնորհ գեներալը Ղրիմի պատերազմում Ռուսաստանին հասցրեց խայտառակ պարտություն և պաշտոնաթող եղավ:

Ահա կյանքի ուղու երկու ընտրություն, երկու ճակատագիր: Մեկը՝ ողբերգական և անմահություն, մյուսը՝ արտաքուստ փայլուն, բայց խայտառակ ավարտ:

Եթե դեկաբրիստների կյանքի ուղուն նայենք քաղքենու աչքերով, նեղ սպառողական հոգեբանության դիրքերից, ապա կարող է հարց առաջանալ, թե ինչն էր նրանց կյանքում պակասում: Դեկաբրիստ Մ. Օոլովը 26 տարեկանում դարձել էր գեներալ, Պ. Պեստելը Սիրիի գեներալ-նահանգապետի որդին էր, Ա. Վոլկոնսկին, Ս. Տրուբեցկոյը և Ա. Օդոևսկին իշխաններ էին: Ի. Անենկովի տանը կար 150 սպասավոր, 14 խոհարար: Բայց նրանց մոտ մեծ էր բարոյական հավատը, բարոյական համողմունքը, որպեսզի սպայական փայլուն կարիերայից գերադասեին կախաղանը, շղթաները, տաժանակրություն դրկանքները:

Դեկաբրիստների օրինակը հիշեցի նրա համար, որպեսզի փաստեմ նաև հետևյալը: Ցարը Կովկաս է արքայազն մոտ 3000 շնորհադրկված դեկաբրիստ սպաների, որոնք որպես շարքային դինավորներ, մասնակցեցին 1826-1828 թթ. ոուս-պարսկական երկրորդ պատերազմին: Արքայազն դեկաբրիստներ Ե. Լաչինովը,

Մ. Պուշչինը, Պ. Կոնովիցինը, Ն. Օրժիցկին, Պ. Բեստուժևը, Ա. Գանգլերովը և շատ ուրիշներ, ինչպես նաև նրանց համակիրներ, գեներալներ Պ. Երմոլովը, Ա. Կրասովսկին, բանաստեղծ Դ. Դավիդովը, նշանավոր գրող ու ղիվանագետ Ա. Գրիբոյեդովը դարձան Արևելյան Հայաստանը պարսկական լծից ազատագրելու ակտիվ մասնակիցներ, չղափաճանեցին իրենց բարոյական սկզբունքներին և հավատարիմ մնացին ազատության գաղափարին:

Ռուբեն Սևակն իր «Մարդը» ավարտական թեզը գրել է 1905 թվականին: Տասը տարի անց Ռուբեն Սևակը կանգնեց այդ աշխատության մեջ մարդուն ներկայացրած բարոյական սկզբունքների իրազորման դաժան փորձության առջև: Ես նկատի ունեմ աքսորավայրում թուրք ազդեցիկ պաշտոնյայի աղջկան բուժելը և վերջինիս սիրահարվելը Ռուբեն Սևակին: Թուրք պաշտոնյան փորձում է համոզել Ռուբեն Սևակին ամուսնանալ իր աղջկա հետ, ընդունել մահճակալանություն և այդ միջոցով փրկվել մահից:

Ռուբեն Սևակի հետ աքսորավայրում էին գտնվում շատ երևելի կուսակցական ու հասարակական գործիչներ, որոնք նրան խորհուրդ էին տալիս, համոզում թուրքի առաջարկը ընդունել և փրկել իր կյանքը: Բայց Ռուբեն Սևակը մերժեց, որովհետև հավատարիմ էր իր բարոյական սկզբունքներին, իր բարոյական պարտքին և շատ լավ էր գիտակցում, թե ինչ հետևանք կունենար դրանցից հրաժարվելը:

Եվ Ռուբեն Սևակը գերադասեց նահատակվել, քան դավաճանել իր համար սրբություն դարձած սկզբունքներին:

Այս փաստին անդրադարձա, որպեսզի ընթերցողի հետ միասին խորհենք, թե ինչպես կվարվեին Ռուբեն Սևակին խորհուրդ տվող ու համոզող երևելի ու համբավավոր գործիչները, եթե իրենց կյանքը փրկելու համար այդպիսի երջանիկ առիթ ստեղծվեր: Իհարկե, նրանք կգերադասեին ընդունել թուրքի առաջարկը, որովհետև չունեին Ռուբեն Սևակի համար կյանքի օրենք դարձած բարոյական սկզբունքները, ազգի գոյատևման համար պատասխանատվության գիտակցումը: Նրանք չունեին գիտակցված մահն ընդունելու ոչ անձնական և ոչ էլ բարոյական քաջություն:

Մեծ է, չատ մեծ Ռուբեն Սևակի և այդ գործիչների միջև եղած բարոյական անջրպետը, թեև նրանք բոլորը հավասարապես են հիշատակվում որպես նահատակներ:

Ռուբեն Սևակը «Մարդը» ավարտական թեզի մեջ հանդես էի գալիս որպես ուտոպիստ երազող: Նա ըմբռնել էր պատմության դարգացման ընթացքը և լավ էր հասկանում, թե ինչի կհասցնի դրանից շեղվելը: Մարդկությունը 20-րդ դար էր հասել նաև արյունահեղ ու ավերիչ պատերազմների միջով: Առաջադեմ մտածողներն ամբողջ խորությամբ դգում էին մարդկային քաղաքակրթության գլխին կախված վտանգը: Նրանց շարքում էր նաև Ռուբեն Սևակը, որն այդ վտանգի վերացման մեջ ամենից առաջ կարևոր էր համարում «**Թշնամութեան, ատելութեան՝ վրիժառու ժանտ փուշերը արմատախիլ**» անելը «**ժողովուրդներու սրտներուն մէջէն**»:

Ռուբեն Սևակը որպես մարդկության հետագա անվտանգ գոյություն երաշխիք ազդարարում էր. «**Ալ թնդանոթը քարուքանդ չպիտի աւերէ լուսողող քաղաքները, ալ բոցերը չպիտի լափլիզեն կեանքով լեցուն երկիրները, ալ գնդակը չպիտի շաչէ կուրծքերէ ներս**»:

Ռուբեն Սևակը հանդես էր գալիս ժողովուրդների բարեկամության հաստատման օգտին, համոզված լինելով, որ դա է միակ ու ճիշտ ուղին դեպի խաղաղություն, դեպի առաջընթաց, դեպի, ի վերջո, մարդկության փրկություն:

«**Նաղաղութեան կենսաւէտ ստուերին մէջ ու ազատութեան ջերմին երկնքին տակ՝ ազգերը բոլոր պիտի երթան իրենց ոյժերուն պատարագը մատուցանելու միշտ՝ իրականացող գաղափարին նուիրական խորանին վրայ**»: Ահա այս խոսքերով է ավարտում «Մարդը» ավարտական թեզը փիլիսոփա Ռուբեն Սևակը:

Ես այսպես հանգամանորեն անդրադարձա «Մարդը» աշխատությունը՝ նկատի ունենալով, որ դրան ընթերցողները քիչ են ծանոթ: Ինչպես այս, այնպես էլ Ռուբեն Սևակի հետագայում գրած ստեղծագործություններն աչքի են ընկնում փիլիսոփայական լայն ընդհանրացումներով: Ռուբեն Սևակը շեշտը դնում է մարդու և բնություն հավերժ միասնություն վրա: Նա այդ միաս-

նության ներդաշնակության մեջ է տեսնում անմահության գաղափարը:

Ուղում եմ ասվածի կապակցությամբ հիշել Պոլ Լաֆարգի դիպուկ գնահատականը. «Եթե բանաստեղծը փիլիսոփա չէ, սպա արհեստավոր է» և փաստել, որ Ռուբեն Սևակն իր գաղափարներով հաստատուն տեղ է դրադեցնում փիլիսոփա բանաստեղծների շարքում:

Ունենալով առաջադեմ ազգային մտածողություն, կանգնած լինելով ազգային գաղափարախոսության դիրքերում՝ Ռուբեն Սևակը, ինչպես «Մարդը» աշխատության, այնպես էլ մյուս գործերի մեջ ընթերցողի առջև երևում է որպես ինտերնացիոնալիզմի գաղափարախոս:

Կար ժամանակ, ոչ շատ հեռու անցյալում, մեղնում «ինտերնացիոնալիզմ» բառն օգտագործվում էր առանց որևէ պատճառի: Այժմ էլ այդ բառը մոռացության է տրվել, նույնիսկ հիշելը համարվում է անվայելուչ և ծաղրի է ենթարկվում: Մինչդեռ այդ ամենի փոխարեն հարկավոր է պահպանել այդ բառի նվիրական ու սուրբ նշանակությունը, այնպես, ինչպես հասկանում էր մեծ Հումանիստ, փիլիսոփա Ռուբեն Սևակը:

«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՂ ԳԱՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ»

Ռուբեն Սևակ բանաստեղծի կերպարը և Ռուբեն Սևակ մարդու կերպարը միահյուսված են ներդաշնակությամբ և մեղնից յուրաքանչյուրի համար մնում է որպես հարազատ ժողովրդի համար կյանքը զոհած բարություն ու ճշմարտության բոցավառվող աստղ: Նա զոհվեց հանուն իր ժողովրդի արժանապատվության: Եվ դրա համար էլ միշտ հիշում ենք Ռուբեն Սևակին և սրտի մորմոքով ողբում նրա եղևոնական մահը:

Ռուբեն Սևակն ընկավ երիտթուրքական բարբարոսների ձեռքով: Ընկավ իր ուժերի ծաղկման տարիքում: Նա չհասցրեց ասել այն ամենը, ինչ կարող էր ասել իր ժողովրդին: Այդ չասվածը նա եղրափակեց իր մահով:

Ռուբեն Սևակի կյանքն ու ճակատագիրը, նրա ողբերգական

մահը չընկճվելու, համարձակության տիպար է և հաստատում է մարդկային անհատականության բարձրագույն արժանապատվությունը:

Ուզում եմ նորից ու նորից կրկնել, որ Ռուբեն Սևակի մահից կանցնեն շատ տարիներ, բայց, այնուամենայնիվ, նա չի ծերանա: Ձի ծերանա ոչ թե այն պատճառով, որ կյանքից զրկվեց 30 տարեկան հասակում, այլ այն բանի համար, որ այսօր էլ, 21-րդ դարի սկզբին, նրա մտքերը շարունակում են հնչել նույն ուժգնությամբ: Ռուբեն Սևակը մեզ հետ է, քայլում է մեր ժամանակի հետ: Հենց դրա շնորհիվ է, որ մենք երբեք չենք զգա Ռուբեն Սևակի ֆիզիկական բացակայությունը:

Ես այս ամենը չեմ ասում հավուր պատշաճի, այլ խորապես համոզված եմ դրանում: Որովհետև Ռուբեն Սևակը պատկանում է հավերժ ապրող ու շարժվող երևույթներին և Վ. Բելինսկու խոսքերով ասած՝ կանգնած չի մնացել այն կետին, որտեղ վրա է հասել մահը ու շարունակում է դարգանալ հասարակական գիտակցության մեջ:

Ռուբեն Սևակի դարը 20-րդ դարն էր, որն սկսվեց ահավոր դաժանությամբ: Մենք նոր ենք դուրս եկել այդ «դաժան դարից» և արդեն չեմել ենք 21-րդ դար: Սակայն 21-րդ դարը կարող է լինել ավելի ահավոր ու սարսափելի: Չմոռանանք, որ 21-րդ դարը հագեցած է ոչնչացման ավելի հզոր ու հրեշավոր միջոցներով: Գերիշխող են եսասիրությունը, անասնական կրքերը, դաժանությունը, բարբարոսությունը, մարդատյացությունը:

Այս բոլոր չարիքները մշտապես ձգտում են պճնվել ինչ-որ «ոռմանտիկ արժանապատվությամբ»: Դրանց կրողները հանդես են գալիս արվեստի ու պոեզիայի գույներով, ձայնով ու խոսքով: Նրանք իրենց հոգևոր աղքատությունը, չահամոլությունը, անասնականությունն աշխարհին ներկայացնում են արվեստի ձևով, առանձնահատուկ բարդացվածությամբ, տպավորություն ստեղծելով, թե դա բոլորին հասու չէ և որ միայն իրենց է վիճակված լինել իրերի գաղտնի ու նվիրական տերը:

Ռուբեն Սևակի պոեզիան ներծծված է այդ ամենի ուղղակի հակադրությամբ: Ուշադիր կարդանք Ռուբեն Սևակի գործերը: Դրանք հզոր հակաթույն են ժամանակակից մարդատյաց, այս-

պես կոչված զերոնալիստական արվեստի քայքայիչ հովերի դեմ:

Ռուբեն Սևակի պոեզիային հատուկ է ձգտումը դեպի ճշմարիտ կյանքը, որն արտահայտվում էր Արևմտյան Հայաստանում կատարվող բռնությունների, թուրքական սարսափելի աշխարհում տիրող վայրենի կամայականությունների մերկացմամբ:

Ռուբեն Սևակի լիրիկան, իմ պատկերացմամբ, մարդկային ազնիվ զգացումների, առինքնող բարեկամության ու սիրո արտահայտությունն է, կյանքի անվերջանալի արժեքի հասկացությունն է: Ռուբեն Սևակի համար աշխարհը չի վերջանում առանձին անհատի հեռանալով:

Ռուբեն Սևակի գրառումների մեջ հանդիպել եմ այսպիսի դատողության. «... Տղաքները մեռնել ինչ է չեն հասկնար, խելքերնին մէջ չը մտնիր եւ մեծերուն մէջ ալ շարք կայ, որ դեռ մեռնելը չեն հասկնար, ես ասոնցմէ եմ...»: Մեկ այլ տեղ նա գրել է, թե «կեանքը մահով չի կրնար սահմանուիլ»: «Սուգը, - գրել է Ռուբեն Սևակը, - ապուշ բան մըն է, յետամնաց սովորոյթ մը եւ աւելի կը ծանրացնէ մահուան գաղափարը»: Եվ պահանջում էր՝ «Պէտք է ջնջել սուգը»: (ԳԱԹ, Ռ. Սևակի Փոնդ, գ. 51):

Ռուբեն Սևակի գաղափարական-ստեղծագործական սրբնթաց աճը տեղի ունեցավ Ադանայի հայ ընակչության կոտորածի ազդեցությամբ: 1907-1910 թթ. արդեն ամբողջովին ձևավորվել էին նրա բանաստեղծական աշխարհը, փիլիսոփայությունը: Ռուբեն Սևակի աշխարհըմբռնումը, փիլիսոփայությունը նուրբ լիրիզմի հետ միասին բոցավառ քաղաքացիությունն է, նրա խոհերը մարդու և ժամանակի, անհատի ու հասարակության փոխհարաբերությունների մասին են: Դա արևմտահայությունն սպառնացող վտանգի զգացողությունն է:

Ռուբեն Սևակն Ադանայի ողբերգությունը շատ ծանր տարավ: Բայց և կարողացավ այդ ողբերգությունը ճիշտ դիրքերից գնահատել որպես սուլթանի ու երիտթուրքերի ժամանակավոր հաղթանակ, որը չի կարող ի վերջո կասեցնել պատմության ընթացքը:

Ռուբեն Սևակի պոեզիան, իմ համոզմամբ, բացատրելի է թե՛ պատմականորեն և թե՛ հոգեբանորեն: Ստեղծագործական կյանքը սկսելով որպես ռոմանտիկ երազող՝ Ռուբեն Սևակը կա-

րողացավ ժամանակի ընթացքում իր ստեղծագործությունները հագեցնել կոնկրետ պատմական բովանդակություններ և իրականությունների ռեալ դրացումով: Դա սուլթանական թուրքիայում տիրող անթափանց խավարն է ու գերեզմանոցային սառնությունը: Դա Արևմտյան Հայաստանի ողբերգությունն է, արևմտահայության տառապանքը՝ շղթայված ու ստորացված սուլթանիզմի կողմից: Դա նաև ժողովրդի անսպառ ստեղծագործական ուժն է:

Ռուբեն Սևակի պոեզիայի մի այլ կարևոր առանձնահատկություն է նաև աչքի ընկնում: Դա, իմ համոզմամբ, հետևյալն է: Ազատ կերպով տիրապետելով աղգային, առանձնապես արևմտահայ բանաստեղծական հարուստ ժառանգությանը, ստեղծագործաբար յուրացնելով նրա մեծ ավանդույթները (Մ. Պեշիկթաշյան, Պ. Դուրյան), սիրով դիմելով համաշխարհային ժառանգությանը (Հ. Հայնե և ուրիշներ), իր ժամանակի պոեզիայի առավել արժեքավոր կողմերը նրբորեն ըմբռնելով, մի միասնություն մեջ ձուլելով բանաստեղծական տարբեր հոսանքներ, արմատապես նորացնելով ու վերաիմաստավորելով համաշխարհային պոեզիայի որոշ «հավերժական» թեմաներ՝ Ռուբեն Սևակը հայ բանաստեղծական խոսքին հաղորդեց նոր էներգիա, նոր արտահայտչություն: Ինձ այսպիսի հետևություն է բերում նրա «Թրուպատուրներ» պոեմը, որը տպագրվել է 1911 թվականին:

Ռուբեն Սևակն իր ընթերցողի համար նրբանկատորեն պայմաններ է ստեղծում խորհելու այն հարցի շուրջ, թե, առհասարակ, բարոյականության օրենքներ կա՞ն, գործո՞ւմ են, թե՞ ոչ: Հենց այստեղ էլ, իմ համոզմամբ, Ռուբեն Սևակի արվեստն ամբողջովին մոտենում է գիտությանը: Որովհետև նա շատ լավ գիտեր, որ օրենքների օբյեկտիվությունը կախված չէ մարդուց, այլ մարդն է կախված այդ օրենքներից:

Ռուբեն Սևակը նաև լավ էր հասկանում, որ օրենքների օբյեկտիվությունը հենց այն է, որ եթե դրանք հաշվի չառնվեն, ապա ուղղակի, թե անուղղակի, վատ է թե ուշ պատժելու է խախտողին և ստիպելու է ընդունել իրեն, թեկուզ կրախի միջոցով: Սրանից էլ ելնելով՝ Ռուբեն Սևակն իր ստեղծագործություններով բողոքում էր այն բանի դեմ, որ մարդուն ենթարկում են մե-

ուած օրենքներին, մարդուն զրկում աղատ մտածելուց ու գործելուց:

Ռուբեն Սևակին լավ հասկանալու համար ուղում եմ հիշել մարդկային բնավորության բացասական ու դրական զգացմունքների, կրքերի ամբողջությունը: Խելք և հիմարություն: Գիտելիք և տգիտություն: Անշահասիրություն և շահամոլություն: Արիություն և վախկոտություն: Բարություն և նախանձ: Պատվասիրություն և անհոգ փառասիրություն: Աղնվություն և անամոթություն: Խիղճ և անխղճություն: Գեղեցկություն և տգեղություն:

Այս բոլոր որակներն անմիջականորեն դրսևորվում են մարդու, նրա հարադատների ու մտերիմների ճակատագրի, ազգություն և մարդկություն ամբողջ ցեղի ճակատագրի վրա: Այս բոլորն օրյակտիվ օրենքներ են, որոնք ոչ միայն կախված են մարդուց, այլև մարդն էլ է կախված դրանցից:

Այս միասնությունը համաշխարհային գեղարվեստական գրականությունն արտացոլել է հին հունական ողբերգություններից մինչև Ռուբեն Սևակի «Կարմիր գիրքն» ու մինչև մեր օրերը:

Դարեր շարունակ միևնույն ստեղծագործությունները կարդացվում են չթուլացող հետաքրքրությամբ: Ինչո՞ւ: Պատասխանը, կարծում եմ, պարզ է: Որովհետև ամենից առաջ այդ ստեղծագործությունները շոշափում են մարդու մեջ գոյություն ունեցող մարուր խղճի ամենախոր, ամենանվիրական ու նուրբ լարերը: Եվ մի՞թե այս ամենը օրյակտիվություն չէ:

Բոլոր մեծերը, նրանց թվում նաև Ռուբեն Սևակը, իրենց կյանքով ու գործով հաստատում են, որ կան բարոյականության օրյակտիվ օրենքներ: Կան դրանք և իրագործվում են այնպիսի անհրաժեշտությամբ, ինչպես, ասենք, Փիղիկայի օրենքները: Եվ բարոյականության օրենքների խախտումը պատժվում է նույնպիսի անխուսափելիությամբ, ինչպես պատժվում է մարդը, երբ երկրի ձգողականության մասին օրենքը ժխտելու նպատակով որոշում է թռչել բազմահարկ շենքի տանիքից:

Բարոյականության օրյակտիվ օրենքների խախտումը դարձել է մահացու վտանգ ամբողջ մարդկության համար: Անամո-

Թուլթյունը հասցնում է կործանման, իսկ խիղճը փրկում է: Ընդ որում՝ ներկա պայմաններում այդ կործանումն ու փրկումը ոչ թե կլինեն բարոյապես կամ հոգեպես, այլ ֆիզիկապես: Այսօր արդեն սովորական աչքի համար դարերով անտեսանելի մնացած բարոյական օրենքները հանկարծակի դարձել են ֆիզիկապես շոշափելի:

Կարծում եմ, տեղին է մի երկարաչունջ մեջբերում կատարել Ֆ. Դոստոևսկուց: «Միայն թվում է, - գրել է ոուս հանճարեղ հոգերան գրողը, - թե մարդկուլթյունը դրադված է առևտրով, պայմանագրեր կնքելով, պատերազմներով, գիտություններով, արվեստներով: Նրա համար միայն մի գործն է կարևոր և այդ գործն է նա կատարում՝ իր համար պարզում է այն բարոյական օրենքները, որոնցով ապրում է: Բարոյական օրենքներն արդեն գոյություն ունեն, մարդկությունը միայն իր համար պարզում է դրանք և այն անկարևոր ու աննկատ է թվում նրանց համար, ում հարկավոր է բարոյական օրենքը, ով չի ուղում դրանով ապրել: Բայց բարոյական օրենքի այդ պարզումը ոչ միայն զլխավորն է, այլև ամբողջ մարդկության միակ գործը»:

Դոստոևսկու այս միտքը յուրովի է արտահայտել Ռուբեն Սևակը՝ բարոյականության օրենքների խախտումը բնորոշելով «այլասերում» շատ բան ասող այս մի հատիկ բառով: Ռուբեն Սևակը գտնում էր, որ Եվրոպային տազնապող այլասերման վտանգը առավել սարսափելի չափերով սպառնում է մեր հին ցեղին և վճռականորեն դնում էր դա արմատախիլ անելու խնդիրը: (ԳԱԹ, Ռ. Սևակի Փոնդ, գ. 51):

Իհարկե, չեմ բացառում, որ կարող են լինել մարդիկ, որոնք չեն համաձայնվի վերոհիշյալ տեսակետին: Ի՞նչ բարոյական օրենքների մասին է խոսքը, երբ կյանքն ու ժամանակը հրամայական են դարձրել դրանցից ավելի բարձր հասկացություններ, - ահա այսպես են մտածում այդ մարդիկ և առաջին սլան մղում մարդկությունը ոչնչացնելու միջոցների ստեղծումը, այսինքն՝ ինքնասպանությունը:

Նրանք, այդպես մտածողներն ու գործողները մարդկային մտքի ստեղծած առաջավոր միջոցները ոչ թե ծառայեցնում են մարդկության պահպանմանը, այլ նրա ոչնչացմանը:

Ահա հենց այս է, իմ կարծիքով, գլխավոր տարրերությունը: Եվ կարևորն այն է, որ Ֆ. Դոստոևսկու, Ռուբեն Սևակի և մյուս հումանիստ գործիչների հռչակած կրեդոն ամենից առաջ նշանակում է աշխարհի և իրենց համար լիակատար պատասխանատվության ստանձնում: Որովհետև եթե բարոյականության օրենքների վրա հիմնված այդ կրեդոն խախտվել կամ էլ ոտնահարվել է, առևտուրը, պայմանագրերը, գիտությունները, արվեստները հակադրվել են դրան, ապա մարդկությունը կրել է չատ վնասներ, որոնց վերացման համար պահանջվել են տասնյակ ու տասնյակ սերունդների ջանքեր:

Սակայն չմոռանանք, որ այդպես եղել է անցյալում: Իսկ այժմ, 21-րդ դարի սկզբին, երբ միջուկային կործանման վտանգը մնում է կախված մարդկության գլխին, որքան կարևոր է բարոյականության օրենքների պապանումը:

Բարոյականության օրենքների մասին խոսելիս արժև հիշել նաև Կ. Մարքսի հետևյալ խոսքերը. «... Նպատակը, որի համար պահանջվում են անարդար միջոցներ, չի կարող լինել արդար նպատակ»: (Կ. Մարքս, Ֆ. Էնգելս (ռուս.), հ. 1, էջ 65):

Սա, իսկապես, բարոյականության գլխավոր օրենքներից է և ունի օրյեկտիվ բնույթ: Պատմությունից հայտնի են բազմաթիվ փաստեր, որոնք ապացուցում են, որ եթե կա միջոցների անարդարություն, նշանակում է հենց նպատակի մեջ ամեն ինչ կարգին չէ ու արդար չէ: Անարդար միջոցները հենց անարդար նպատակի արտահայտությունն են: Ուստի նպատակը չի արդարացնում միջոցները, այլ դրանք ձևավորում է: Ահա այս դեպքում է, որ նպատակը դառնում է միջոց, իսկ միջոցը՝ ինքնանպատակ:

Ռուբեն Սևակը համոզված էր, որ «անարդարությունը ուրիշ մէկ անարդարութեամբ չեն լուծեր»: Նա գիտեր ինչ է պատերազմը, ինչ է անմեղ արյուն թափելը և որպես հումանիստ մտածողը պահանջում էր. «արդարությունը թող գայ խաղաղութեամբ»:

Ռուբեն Սևակի ամբողջ գրական ժառանգության մեջ նրա լիրիկան մեծապես առնչվում է մեր օրերի հետ, այսօրվա մարդու բարոյական ու էսթետիկական պահանջմունքների հետ: Ես այս

խնդրի վրա ընթերցողի ուշադրությունը հրավիրում եմ այն տխուր իրողության կապակցությամբ, որ կարծես թե Ռուբեն Սևակի (և ոչ միայն նրա) լիրիկայի մեջ արտահայտված զգացմունքների հարստությունն ու տրամադրությունը որևէ ազդեցություն չեն թողել մեր առանձին երիտասարդ բանաստեղծների վրա: Այս ասելով ընդգծեմ, որ մտադրություն չունեմ անդրադառնալ այսօրվա երիտասարդ բանաստեղծներին:

Դա ավելի շատ գրաքննադատության գործն է: Ես միայն հարկ համարեցի ուշադրություն բեռնել դրա վրա, որպեսզի փաստեմ, որ այսօրվա պոեզիան զաղափարապես աղքատ է, ժլատ պոետական բովանդակությամբ ու մտքով: Ավելացնեմ նաև, որ մեր նորօրյա բանաստեղծների զգալի մասը չի կարդում մեր մեծերին, նրանց պարզապես վատ գիտե: Այն տպավորությունն են թողնում, որ բավարարվել են նրանով, ինչը «անցել» են դպրոցում կամ համալսարանում:

«ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԷՆ ՓՐՑՈՒԱԾ ԷԶԵՐԸ»

Ինձ թվում է, որ Ռուբեն Սևակը շուտ ըմբռնեց, որ իր պատկերացրած լիրիզմը չի համապատասխանում «մեծ արվեստի» էությունն ու խնդիրներին: Նա գիտակցում էր, անշուշտ, լիրիզմի «թունավոր» հրապուրանքը և ձգտում էր դուրս գալ դրա կապանքներից, գնալ դեպի կյանք, ուր գերիշխող էր ողբերգությունը:

Լիրիկան, որպես աշխարհայացքի արտահայտման ձև, գրողին, առհասարակ, կյանքից հեռացնում է դեպի սեփական ոգու ներաշխարհ: Այս իրողությունը, իհարկե, զգում էր Ռուբեն Սևակը և դա հաղթահարելու համար դիմեց արձակին: Ես նկատի ունեմ նրա «ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԷՆ ՎԻՐԳՈՒԱԾ ԷՋԵՐԸ»:

Ռուբեն Սևակի արձակ գործերը երևան եկան այն ժամանակ, երբ նա արդեն իր վրա էր բեռնել հանրության ուշադրությունը որպես լիրիկ բանաստեղծ: Նրա արձակի հիմնական բովանդակությունը դարձավ իրականության պատկերումը: Ռուբեն Սևակն անխոնջ կերպով ցույց էր տալիս իրականության

ստվերոտ կողմերը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով այն հիվանդություններին, որոնք սոցիալական պայմանների հետևանք էին:

Իհարկե, այսպիսի տարողունակ հասարակական-քաղաքական բովանդակության համար հարկավոր էր արձակում գտնել նոր ոճ: Այդ ոճը Ռուբեն Սևակը, անշուշտ, հեշտ չի գտել: Բայց նրա գտած ոճն այնպիսի սահունությունը, կոնկրետությունը, օրյեկտիվությունը, ներդաշնակ ավարտունությունը է աչքի ընկնում, որ համարձակորեն կարելի է դասել համաշխարհային գրական ստեղծագործությունների շարքում:

«Փրցուած էջերում» Ռուբեն Սևակը շոշափում է այնպիսի թեմաներ, մատնացույց անում այնպիսի պրոբլեմներ ու հասարակական ախտեր, որոնց մասին բուրժուական սալոններում գերադասում էին երեսպաշտությունը չխոսել: Մինչդեռ այդ սալոնների մշտական բնակիչներն էին իրենց վարք ու բարքով պայմաններ ստեղծում հասարակական ախտը տարածելու և ուրիշներին դժբախտացնելու համար:

Ահա այս առումով էլ Ռուբեն Սևակի **«Փրցուած էջերը»** շառաչուն ապտակ են բուրժուական հասարակարգի ոսկեղօծ պատերից այն կողմ պատսպարված հասարակության պորտաբույծների երեսին, որոնք ուրիշի դժբախտության մեջ տեսնում են միայն սեփական բարեկեցության ծաղկումը:

«Փրցուած էջերի» մեջ նկարագրված մարդկային դժբախտությունների միջոցով Ռուբեն Սևակը մատնացույց է անում դրանք առաջացնող սոցիալական պայմանները: Հենց այստեղ էլ երևում է Ռուբեն Սևակի հեղափոխական լինելը: Նա շեշտում է, որ սոցիալական հիվանդությունները կվերացվեն միայն դրանք առաջացնող պայմանները ոչնչացնելով: **«Փրցուած էջերում»** Ռուբեն Սևակը մեծ հաշվով դնում է ապականված հասարակության վերացման անհրաժեշտությունը:

Ռուբեն Սևակի **«Բժիշկին գիրքէն փրցուած էջերը»**, որոնցում տեղ գտած բժշկական թեմաներով գրված ակնարկներն ու հոդվածները տպագրվում էին **«Ազատամարտ»** թերթում, լայն արձագանք էին գտնում ընթերցողների մոտ: Այդ մասին է վկայում **«Եփրատ»** գործակալության տնօրեն Արամ Հակոբյանի

1914 թ. փետրվարին Ռուբեն Սևակին գրած հետևյալ նամակը. «Յարգելի տոքթոր «Աղատամարտի» մէջ Ձեր յօդուածները շատ սիրով կը կարդանք և կը կարծենք, որ մօրէն կամ հիսկն այդ ցաւերու հետ որեւէ առնչութիւն ունեցողներ, առանձին յուղումով կը լափեն իրենց ցաւերը քրքրող «էջ»երը: Ի նկատի ունենալով այդ տրամադրութիւնը, մեր մէջ միտք ծագեց այդ յօդուածները (և եթէ կան ուրիշ անտիպներ) գրքի ձեռով տպագրել և հրապարակ հանել: Արդեօք, դուք ի՞նչ կը մտածէք այդ մասին, և եթէ համաձայն էք մեր առաջարկին, ի՞նչ պայմանով թոյլ կու տայիք մեզ ձեռնարկել հրատարակութեան»: (ԳԱԹ, Թ. Աղատյանի ֆոնդ, գ. 153.13):

Սակայն այս մտադրությունը չիրագործվեց: Միայն 1925 թ. «Բժիշկին գիրքէն փրցուած էջերը» գիրքը Սալոնիկ քաղաքում տպագրեցին Ռուբեն Սևակի երախտագետ աշակերտները:

Այդ գրքի առաջաբանում նրանք գրել են հետևյալը. «Ձինադադարէն ասդին, շատ մը սպառած ու հոս-հոն ցրուած երկեր հրատարակութեան արժանացան, բայց ոչ մէկ հրատարակիչ մտքէն անցուց, հատորի մը մէջ ամփոփել այս թանկարժէք էջերը, որոնք այլապէս կորսուելու պիտի դատապարտուէին:

Այժմ ձեռնարկելով այս գրքի հրատարակութեան, կ'ուզենք նախ կորուստէ փրկել հանճարեղ բժշկին ու գրագէտին գրչի այս արտադրութիւնները, և յետոյ, կը կարծենք, թէ այսօրուան ու փաղուան մեր պատանի ու երիտասարդ սերունդը աւելի քան պէտք ունի այս գրքին, իբր լաւագոյն խորհրդատու մը, շողշողուն խայծերով ու փորձութիւններով լեցուն այս կեանքին մէջ»: («Նայիրի», 13 օգոստոսի, 2002):

«Փրցուած էջերում» նկարագրված սոցիալական հիվանդություններն այսօր լայնորեն տարածվում են նաև Հայաստանում, որոնք շուկայական, կապիտալիստական հարաբերությունների արդյունք են, դրանց ստեղծած սոցիալական անապահով պայմանների հետևանք:

Մեզ համար թանկ է Ռուբեն Սևակի ժառանգությունը: Դա մեծագոյն էսթետիկական ու էթիկական արժեք ունի: Եվ իր այդպիսի ժառանգությամբ Ռուբեն Սևակը հանդիսանում է հայ գրականությանը հատուկ հիմնարար սկզբունքների կերտողներ-

րից մեկը, սկզբունքներ, որոնք անմիջական ու բարերար ազդեցություն են ունեցել հայ հասարակական մտքի ու հեղափոխական գաղափարների ձևավորման վրա:

ՌՌԻԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ

Մի հարց էլ եմ կամենում շոշափել: Ռուբեն Սևակի անձինկատմամբ հետաքրքրությունը տանում է դեպի մեր մշակույթի այն ժամանակաշրջանը, որտեղ տիրապետող դարձավ մեր ազգային կենսական պահանջմունքը: Ոոսքս վերաբերում է 19-րդ դարի վերջին և հատկապես 20-րդ դարին:

Իմ այս համոզմունքը այն բանի արդյունք է, որ այժմ կատարվում է վերոհիշյալ ժամանակաշրջանի մեր դասականների իսկական վերածնունդ: Մենք նրանց նորից ու նորովի ենք բացահայտում, կարդում ենք, ինչպես առաջին անգամ և, իսկապես, չենք դադարում դարմանալ, թե ինչպիսի հարստություն ունենք և որքան քիչ ջանք ենք գործադրում այդ ազգային հարստությունը յուրացնելու համար:

Ուզում եմ առանձնակի շեշտել կարևորությունն այն իրողությունան, որ մեր մեծ գործիչները մեզ վրա առավելապես ներազդում են ոչ միայն գրականությամբ, իրենց գրքերով, ստեղծած կերպարներով ու հերոսներով, այլև իրենցով, իրենց կենդանի կերպարով, իրենց ամբողջ կյանքով:

Այդ մեծերի շարքում է Ռուբեն Սևակը իր կյանքով ու ճակատագրով:

Իմ պատկերացմամբ՝ Ռուբեն Սևակի ժառանգությունը մի հսկայական լեռնաշղթա է իր բազում բարձունքներով: Այդ ժառանգությունը մեզ հետ է, և կարծում եմ, որ ամեն մի ուսուցիչ շատ ուրախ կլինի, եթե իր աշակերտներին հասցնի այդ բարձունքներին և նրանց աչքերում տեսնի Ռուբեն Սևակի պոեզիայի, նրա գաղափարների արձակած լույսի փայլը:

Ռուբեն Սևակի ժառանգությունը նաև պարտավորեցնող դեր ունի հայերիս համար շատ հարազատ մայրենի լեզվի անադարտությունը պահպանելու գործում:

Ռուբեն Սևակի գործերը հավաքող և հոգատարությամբ պահպանող Հովհաննես Զիլինկիրյանը պատմում է հետևյալ փաստի մասին: Ռուբեն Սևակի քրոջ դուստրը՝ Ատրինե Յակոբովիչը, ընդունվում է Սիլվիբրի հունական վարժարան: Նա այնքան է հմտանում հունարենի մեջ, որ 1910 թ. այդ լեզվով նամակ է գրում Ռուբեն Սևակին: Ահա այդ առիթով էլ Ռուբեն Սևակն Ատրինեին պատասխանում է հետևյալ նամակ-բանաստեղծությամբ.

«Իմ սիրելի փոքր Ատրինե,
 Ինձմէ բարձր ես յունարէնէ,
 Բայց հօրդ, մօրդ քնքուշ լեզուն
 Մի մոռնար, որ հայերէն է:
 Եթէ միջոցդ ներէ
 Մեծ դպրոցներ գնաս, Ատրինե,
 Բայց մայրենի անուշ լեզուդ
 Մի մոռնար, որ հայերէն է:
 Ծոյլ մի ըլլար, ծոյլը անօրէն է,
 Դուն շատ գիտուն եղիր մեզմէ,
 Բայց մայրենի եւ Սուրբ լեզուդ
 Մի մոռնար, որ հայերէն է»:

Ռուբեն Սևակի այս բանաստեղծությունը հայտնաբերվել է 1980-ական թթ. վերջերին և առաջին անգամ հրատարակել է Հ. Զիլինկիրյանը 2001 թ. հոկտեմբերի 23-ին «Նայիրի» թերթում:

Ռուբեն Սևակն այս պատգամը գրել է 1910 թ.: Դրանից մի քանի տասնամյակ հետո նույն վտանգը դարձյալ իրական էր դառնում, որի համար էլ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը գրեց իր «Նոսք որդուս» պատգամ-բանաստեղծությունը:

Դժբախտաբար, այսօր այդ վտանգն ավելի ու ավելի է դգայի դառնում: Վտանգը ոչ միայն օտարահունչ բառերի, հատկապես անգլերենի ներխուժման մեջ է, այլ նաև նրանում, որ հայոց լեզուն անխղճարար աղավաղում են մամուլն ու հեռուստատեսությունը: Իրեն դգացնել է տալիս երեսպաշտությունը: Այս առումով ցայտուն օրինակ կարող է ծառայել «Արմենիա» հեռուստատեսային ընկերությունը: Այստեղ կա շատ արդիական

«Մեր լեզուն, մեր խոսքը» հաղորդաչարը, որով ունկնդիրներին եռանդով համոզում ու սովորեցնում են խոսել մաքուր հայերեն լեզվով:

Բայց այդ հաղորդաչարը կորցնում է իր իմաստը, որովհետև նույն «Արմենիա» այլիքով արվող հաղորդումների մեծ մասը, հատկապես սերիալները, թող թույլ տրվի ասել՝ նաև անհամ հումորն ու երգիծանքը եթեր են արձակվում ոչ միայն խաթարված, այլև ժարդոնային լեզվով...

ՉԷՏԵՎԵԼ ՓԶԱՑԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԻՆԱԿԻՆ

Այստեղ տեղին եմ համարում հիշեցնել Ռուբեն Սևակի այն ղգուչացումը, թե նոր սերնդի դաստիարակության զործում հարկավոր է ամենից առաջ արմատախիլ անել «ախտավարակ ծիլերը» և նոր սերնդին փրկել այլասերումից, «անգիտորեն» չհետևել «փչացած Եվրոպայի» օրինակին: Ռուբեն Սևակը, իհարկե, այստեղ շատ էր կարևորում դպրոցի դերը, նրա ազգային դիմագծի պահպանումը:

Վերջին տարիներին ավելի ու ավելի է ղգացվում Ռուբեն Սևակի ղգուչացման կարևորությունը: Այստեղ ուզում եմ հիշել Ռուբեն Սևակի գնահատմամբ այն «ախտագին մտաւորականներին», որոնք 1980-ական թվականների վերջերին անասելի գրոհ կաղմակերպեցին Սովետական Հայաստանի կրթական համակարգի դեմ՝ ամպագոռոզու պահանջներ ներկայացնելով «Հայեցի դպրոցն ու հայեցի կրթությունը վերականգնելու» մասին:

«Ախտագին մտաւորականները» հասան իրենց նպատակին: Սովետական Հայաստանի կրթական համակարգը ավերված է: Փոխարինելու է եկել կրթության ամերիկյան համակարգը: Իսկ ո՞ւր մնաց հայեցի դպրոցի ու հայեցի կրթության պահանջը: Ինչո՞ւ են լռում դրա հեղինակները:

Պատասխանը պարզ է: Լռում են, որովհետև հայեցի կրթության պահանջը միայն շղարչ էր, ծխածածկույթ իրենց չար ու ավերիչ դիտավորությունները ժողովրդից թաքցնելու համար:

ԳԵՂԵՑԻԿ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՋ ԿԵՐՊԱՐԸ

Ռուբեն Սևակն ապրում էր իր ժամանակի մեջ, իր ժամանակակիցների հետ, իր միջավայրում: Բայց նրա ոգին պատկանում է ապագային: Նա քայլում է ներկա ու դալիք սերունդների հետ:

Թող այնպիսի տպավորություն չստեղծվի, թե ինձ՝ պատմաբանիս թվում է, որ Ռուբեն Սևակի ստեղծագործական ուղին պարզ ու հեշտ է եղել: Ընդհակառակը: Ռուբեն Սևակն անցել է դժվար ուղի: Եվ այդ ուղին է, որ ստեղծագործական առաջին տարիներին ունեցած լիրիկական մտայնությունից ու երազանքներից նրան տարավ դեպի ժողովուրդ ու հայրենիք:

Բոլոր բանաստեղծները չէ, որ կարողանում են հաղթահարել այդ ճանապարհին եղած դավադիր հրապուրանքները: Իսկ իմ պատկերացմամբ դա Ռուբեն Սևակին հաջողվեց, որովհետև ստացել էր Հովհաննես Զիլինկիրյանի նման լայնախոհ հոր դաստիարակությունը, վայելել էր վարժարանի տնօրեն Ռ. Պերպերյանի համակրանքը, առնչվել էր առաջադեմ մտածողներին, ծանոթ էր եվրոպական կյանքին: Ավելացնեմ նաև Ռուբեն Սևակի անձնական հատկությունները՝ աղնվությունը, քաղաքացիական պարտքի դժգոհումը, սկզբունքայնությունը, համարձակությունը, շրջահայացությունը:

Ահա այս ամենի շնորհիվ էր, որ Ռուբեն Սևակը կարողացավ հոգևոր ուժերի մեծ լարումով վեր բարձրանալ իր շրջապատի գրական-հասարակական միջավայրից:

Ռուբեն Սևակին վիճակվեց դառնալ 20-րդ դարի սկզբի խոշոր իրադարձությունների վկան, մասնակիցը, նաև դրանց անմեղ դոհը: Աղգային-աղատագրական պայքար, Առաջին համաշխարհային պատերազմ, հայ ժողովրդի մեծ ողբերգություն՝ սրանք են այդ խոշոր իրադարձությունների և տեղաշարժերի գլխավոր հանգրվանները: Եվ պատմական այդ կարևոր սահմանագլխին հայտնված Ռուբեն Սևակը չէր կարող իր գործերում չարտահայտել այդ բեկումնային ու շրջադարձային ժամանակաշրջանի էական, բնորոշ գծերը:

Ռուբեն Սևակի ժամանակը հագեցած էր բացառիկ բուռն ու ողբերգական իրադարձություններով: Չգիտեմ, գուցե խաղաղ

ու միապագադ պայմաններում Ռուրեն Սևակի ստեղծագործական կյանքն ընթանար հանգիստ վիճակում: Բայց նրան բաժին էր հասել ուրիշ ճակատագիր: Նրա ապրած տարիների ողբերգական իրադարձություններն էլ ձևավորեցին տազնապով լեցուն Ռուրեն Սևակի կյանքն ու գործը, նրա պոեզիան:

Ռուրեն Սևակի պոեզիայում վեր է հանում տանջվող ու տառապող, բայց և զեղեցիկ հայրենիքի վեհ պատկերը:

Ուշադիր կարդանք Հայրենիք-Հայաստանին նվիրված Ռուրեն Սևակի չափածո և արձակ գործերը: Այնտեղ կգտնենք վիշտ ու ամիսոսանք, բայց հուսահատություն ոչ մի նշույլ: Հայաստան հայրենիքի թեման ներծծված է խոր լավատեսություն: Այստեղ միայն ուղում և՛մ հիշել, որ 1910 թ. դեկտեմբերի 10-ին գրած «Առջի հայերը» բանաստեղծության մեջ Ռուրեն Սևակը, նկատի ունենալով Ախուրյան գետի ափին գտնվող Անիի ավերակները, գրել է, ավելի ճիշտ՝ քանդակել է հետևյալ տողերը. «Ազգերը կնքեր են վրան՝ «Մահ հայուն», բայց միւս երեսին վրայ «Անմահութիւն» գրեր են հայերը...»: (Ռ. Սևակ, Անտիպ էջեր, Երևան, 1992, էջ 278):

Կարդում ևս Ռուրեն Սևակին և համոզվում, որ իսկապես հայրենիքը միայն այն հողը չէ, որի վրա ծնվել և ապրում ենք, որը մեզ շնորհվել է որպես կյանք: Մեր ժամանակը նույնպես մեր ընդհանուր հայրենիքն է, որին նույնպես չի կարելի դավաճանել, որին հարկավոր է փրկել, որպեսզի մեզնից հետո էլ մնա կենդանի ու պտղաբեր: Հայրենիքը նաև մեր պատմությունն է, որի նկատմամբ պետք է ունենալ հարգալից վերաբերմունք, որից պետք է սովորել:

«ՃԱՆԱԶԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՅԲԸ»

Ռուրեն Սևակը պահանջում էր ճանաչել «ազգային պատմութեան այբը»: (Նույն տեղը, էջ 546): Նա չի գրել հատուկ պատմագիտական աշխատանք: Բայց նրա գործերում զանազան առիթներով շոշափվում են ազգային պատմության պրոբլեմներ: Դրանից էլ կարելի է որոշակիորեն ասել, որ եթե Ռուրեն Սևա-

կին վիճակվեր երկար ապրել, ապա նա անպայան կստեղծեր պատմագիտական աշխատություն: Ափսոս, շատ ափսոս, որ այդպես չեղավ:

Ինչևէ, փորձեմ, գոնե ընդհանուր գծերով անդրադառնալ Ռուբեն Սևակի պատմագիտական մտորումներին և դրանից էլ ելնելով՝ կատարել մի քանի ընդհանրացում:

1908 թ. Հուլիսի 18-ին գրած «**Լալիք զաւեշտը**» անչափ կարևոր ու հրատապ հարցադրումներով հողվածում նա ընդգծել է. «**Անին՝ ուսա Մառ մըն էր, որ կը պեղէ: Մեր լեզո՞ւն՝ գերմանացի բանասէրները կը զբաղուին անով: Մեր ազգային հնութիւնները՝ Ս. Բեթրսպուրկի եւ Մոսկուայի արքայական թանգարանները գացէք փնտռել զանոնք: Մեր ձեռագիր ամենարժէք մագաղաթները, Լոնտրայի միւզէն: Մեր պատմութիւնը, Եւրոպայի պատմաբաններու գրչին տակ...**»: (Նույն տեղը, էջ 564): Ուշադիր կարդանք Ռուբեն Սևակի այս կշտամբանքը: Արդյո՞ք չի չափադանցնում, գույները չի՞ խտացնում: Համողված կարող եմ ասել՝ ոչ: Ամեն ինչ ճիշտ է ասված: Ասված է սպառիչ դիպուկությամբ:

Ռուբեն Սևակի վրդովմունքն արդարացի է ոչ միայն նրա համար, որ մեր ազգային պատմամշակութային արժեքները գտնվում են Հայաստանից դուրս, այլ նաև նրա համար, որ Եվրոպայի բանասերներն ու պատմաբանները, զբաղվելով մեր լեզվով ու պատմությամբ, թույլ են տալիս սխալներ, անտեղյակության պատճառով ու կամայականորեն կեղծում ու աղավաղում մեր պատմությունը, մեր ժողովրդի ծագումնաբանությունը:

Որ Ռուբեն Սևակի դայրույթը ճիշտ էր ու տեղին, հիշեցնեմ միայն մի փաստ: Հանգամանքների բերումով, մինչև 19-րդ դարի առաջին կեսերը, Հայոց պատմությամբ հիմնականում զբաղվում էին այն գործիչները, որոնց գրվածքների վրա իրենց ամբողջ դոգմատիկ ծանրությունը ընկած էին կրոնական կանխադրույթները:

Մեր հոգևորական պատմիչներն ու պատմագիրները անասելի հրճվանքով էին նշում, որ Արարադ երկիրը հիշատակվում է Աստվածաշնչի մեջ և մեր ժողովրդի պատմությունն էլ սկսում

էին Նոյի տապանից ու ջրհեղեղից: Նրանց բոլորովին չէր հետաքրքրում, թե այդ Հայաստան կոչված երկիրն ինչ էր եղել աստվածաշնչյան ջրհեղեղից առաջ, և կուրորեն մեր պատմությունը կապեցին մի օտար ժողովրդի կրոնական առասպելների հետ:

Մինչ մեր կրոնական պատմիչ-պատմագիրները երանության մեջ էին, եվրոպացի ճանապարհորդները հայտնաբերեցին Միջագետքում, Հայկական լեռնաշխարհում բազմաթիվ ավերակներ ու սեպագիր արձանագրություններ: Այդ ամենով սկսեցին դրադվել եվրոպացի հետազոտողները: Նրանց ջանքերով էլ աշխարհին հայտնի դարձան Արեմենյան Պարսկաստանի մայրաքաղաք Պերսեպոլիսը, Բարսիլոնը, Տուշպան և այլն:

Հետազոտողները հայտնաբերեցին դրանք կերտող ժողովուրդներին, այդ թվում նաև Վանա լճի շրջակայքում եղած հոչակավոր կառույցների ու հուշարձանների հեղինակ ժողովրդին՝ նրան կնքելով «ուրարտացիներ» անունով...

Այսպիսով, Հայաստանի բուն տարածքում հայտնաբերվեցին հարուստ ու անկրկնելի մշակութային արժեքներ: Եվ քանի որ դրանք որևէ առնչություն չունեին Աստվածաշնչի առասպելի հետ, մեր հոգևորական պատմիչները դրանց ոչ մի ուշադրություն չդարձրին, տեր չկանգնեցին: Ո՞վ գիտե, զուցե նաև վախենում էին, որ եթե դրանց տեր կանգնեին և ընդունեին որպես հայոց պատմության անքակտելի մաս, ապա կրոնական առասպելը հօդս էր ցնդելու...

Ծիշտ է, երկու հայ գիտնականներ՝ Քերովրե Պատկանյանն ու Հովսեփ Սանտալճյանը, փորձեցին ուրարտական սեպագիր արձանագրությունները վերծանել հայերենի միջոցով, բայց նրանք մնացին մենակ եվրոպացի դիրք ու հեղինակություն ունեցող հետազոտողների դեմ դիմաց: Եվրոպական գիտությունն արդեն քմահաճորեն որոշել էր ուրարտական քաղաքակրթություն ստեղծող ժողովրդի հասցեն...

Ահա այս ամենի արդյունքում գիտության մեջ ստեղծվեց այն կեղծ տեսությունը, թե հայերը Ուրարտուի հետ որևէ առնչություն չունեն, և հայ ժողովրդի կազմավորումը դիտվեց որպես Ուրարտուի անկումից հետո կատարված իրողություն:

Պահանջվեցին տասնյակ տարիներ ու բազմաթիվ հայ և օտար գիտնականների հսկայական ջանքեր, որպեսզի ուղղվեր այդ թյուրիմացությունը և վերականգնվեր պատմական ճշմարտությունն այն մասին, որ Ուրարտուն ու Հայաստանը նույն երկիրն են, որ այդ նույն երկիրը կերտել է նրա բնիկ ժողովուրդը՝ հայ ժողովուրդը: Վերոհիշյալ պրոբլեմը միայն պատմագիտական նշանակություն չունի: Այն ունի նաև քաղաքական նշանակություն: Որովհետև մինչ օրս էլ լավում են ձայներ թե՛ մեր իրականության մեջ և թե՛ դրսում, որոնք դարձյալ հին երգն են երգում՝ Ուրարտուն անջատելով Հայաստանի ու նրա ժողովրդի պատմությունից:

Առանձնակի ուժով են աղմկում ժամանակակից թուրքական պատմահանները, որոնք ճգնում են ապացուցել, թե թուրքերը եկվոր չեն, այլ հայերի կողմից ոչնչացված ուրարտացիների ժառանգներն են: Այս թուրքական պատմահաններն իրենց կեղծիքների մեջ այնքան են առաջ անցել, որ նույնիսկ հայտարարեցին, թե Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ կոտորել են հայերին, որպեսզի վրեժ լուծեն թուրքերի նախնի ուրարտացիների համար...

Սակայն թուրքական պատմահանների և մյուսների ջանքերն այլևս ոչինչ չեն կարող անել, որովհետև վերջնականապես պատմագիտությունը փաստել է, որ Ուրարտուն նույն Հայաստանն է: Այս ֆոնի վրա դավեշտական է, որ մեր եկեղեցական գործիչները շարունակում են կառչած մնալ օտար ժողովրդի առասպելին և միշտ առաջին պլան են մղում ջրհեղեղի պատմությունը: Ժամանակը չէ՞, որպեսզի մեր եկեղեցին պատմական ճշմարտությունը հաշվի առնի և աստիճանարար հրաժարվի վերոհիշյալ դոգմայից, մի դոգմա, որի կրկնությունը որևէ օգուտ չի տալիս մեր ժողովրդին:

Իր ժամանակին Ռուբեն Սևակը ձաղկում էր նրանց, ովքեր չգիտեին ու չէին պաշտպանում սեփական երկրի պատմությունը: Այդ նրանց նկատի ուներ նա, երբ գրում էր. «... առանց իսկ մեր Ազգային պատմութեան ԱՅԲԸ ճանչնալու, կ'ելլենք ու ... Ազգային երեսփոխան կ'ընտրուինք»: (Նույն տեղը, էջ 546):

Ռուբեն Սևակն այս գնահատականը տվել է 1908 թ.: Անցել

է ուղիղ 100 տարի: Ուշադիր նայենք մեր չորս կողմը, մինչև Ադգային ժողով և ամբի ճեղքու... Մի՞թե Ռուբեն Սևակի գնահատականը այժմեական չէ:

Նույն հոգվածում Ռուբեն Սևակը գրել է նաև հետևյալը. «Եզրիպտոս իր անդրապատմական սփինքսին խորհուրդին մէջ կը գտնէ իր փառքերուն աստուածացումը: Յունաստան իր երբեմնի շքեղ ոսկեդարուն վրան է, որ կը յամառի պահել իր գոյութեան արդարացումը: Լատին գորութիւնը դեռ հինն Հռոմայ աւերակները կը յուզէ: Ամբողջ ազգութիւնները իրենց անցեալին մէջ կը գտնեն ապագային արտացոլումը: Ու միայն մենք ենք, աւաղ, քսան անգամ դարաւոր Հայերս, որ յոժարակամ կ'անգիտանանք մեր դեռ երեկի պատմութիւնը...»:

Ռուբեն Սևակը կարծես գուշակում էր և կարողացավ մտովի հեռու նայել, հասնել մինչև 21-րդ դարի սկիզբը և հայոց ապագա սերունդներին զգուշացնել այն վտանգի մասին, որն այսօր, դժբախտարար, դարձել է իրողություն:

Անշուշտ, Ռուբեն Սևակը հասկանում էր, որ պատմութիւնը հարթ պողոտա չէ: Բայց և համոզված էր, որ պատմութիւնը ջունգլի չէ, որտեղ ամեն ինչ թույլատրելի է: Ռուբեն Սևակը խնդիր էր դնում կարգալ, ուսումնասիրել մեր պատմութիւնը: «Հոն պիտի գտնենք,- գրում էր նա,- մեր ազգին երկու հազար տարիներու ճամբան, ու իր բոլոր զարտուղութիւնները, յետադարձութիւնները, անել ուղղութիւնները, վերելքներն ու զառիթափերը»: (Նույն տեղը, էջ 546): Այսինքն՝ հարկավոր է պատմութիւնից դասեր վերցնել, չսխալվել, որովհետև կյանքը, ժամանակը միշտ անկանխատեսելի իրողութիւնների առջև են կանգնեցնում նրան, ով այդ ամենը հաշվի չի առնում ու չի ուզում սովորել իր պատմութիւնը:

Եվ այսպիսիներին, որոնք չգիտեն իրենց պատմութիւնը, Ռուբեն Սևակը տալիս էր դիպուկ գնահատական: «Ան,- գրել է նա,- որ իր պատմութիւնը չը գիտեր, այն, որ իր ազգութիւնը չի ճանչնար, այնպիսի վատ քաղաքացի մըն է ու յոռի օսմանցի մը»:

Այսպիսով, իր պատմութիւնը չիմացողին Ռուբեն Սևակը համարում էր «յոռի օսմանցի մը»: Սա դիպուկ ու սուր քաղաքա-

կան ակնարկ է: Վերոհիշյալ հոդվածը, ինչպես ասվեց, գրվել է 1908 թ. հուլիսի 18-ին և տպագրվել է «Սուրհանդակի» 93-րդ համարում: Դա այն ժամանակն էր, երբ երիտթուրքերը հայ դաշնակցականների աջակցությամբ ու համագործակցությամբ հայտնվել էին թուրքական հեղափոխության ալիքների վրա և դրություն տերն էին:

Հենց իրենց հեղափոխության նախօրյակին երիտթուրքերն ազդարարեցին, թե թուրքիայում ապրող բոլոր ազգերը ստանում են հավասարություն, և այսուհետև նրանք կոչվելու են «օսմանցի»: Արտաքուստ այն տպավորությունն էր ստեղծվել, որ բոլոր ազգությունները համարվում են մեկ երկրի իրավահավասար քաղաքացի և կրելու են «օսմանցի» խորհրդանշական անվանումը: Երիտթուրքերի այս խորամանկ քայլը բոլորն ընդունեցին հալած յուզի տեղ և միամտաբար հավատացին այդ հեքիաթին:

Իսկ ահա Ռուբեն Սևակն այն եղակի գործիչներից էր, որ հասկացել էր, թե ինչ է նշանակում «լինել օսմանցի» և իր վերաբերմունքը արտահայտեց վերոհիշյալ եղանակով:

Ցանկացած երկիր ու ժողովուրդ կարիք ունի մաքուր, անաղարտ և միաժամանակ դաժան հայելու: Ամեն մարդ նույնպես զգում է այդպիսի հայելու կարիք: Բոլորին է անհրաժեշտ իր վրա նայել դրսից, ուրիշի հայացքով, ոչ իր աչքերով:

Այդ մաքուր ու անաղարտ հայելու, դրսից հայացքի անհրաժեշտությունը, ինձ թվում է, որ զգում էր Ռուբեն Սևակը: «Կեանքին մէջ, - գրում էր նա, - օրինակ մը գոյութիւն ունի: Մարդ չի կրնար տեսնել այն վիճակը, որուն մէջ կը գտնուի, բայց մէկ ուրիշը կը տեսնէ: Չի կրնար տեսնել, թէ ինչ դէմք կ'առնէ, բայց մէկ ուրիշը կը տեսնէ (կ'ուղղէ զայն...): Ի վիճակի չէ գիտակցելու, թէ ինչ խենթութիւն կ'ընէ, բայց մէկ ուրիշը կը գիտակցէ (եւ կ'ըսէ անոր)»: Եվ իր միտքը հաստատելու համար Ռուբեն Սևակը բերում է հետևյալ օրինակը, գրելով. «Շոգեկառքի ուղեւորը չի զգար արագութիւնն ու չի կրնար տեսնել առջեւը, բայց ուրիշ մը, որ պատուհանէն դուրս կը նայի, կ'զգայ արագութիւնն ու կը տեսնէ առջեւի անդունդը: Անոր գերագոյն պարտականութիւնն է նախազգուշացնել, թէ անդունդ մը կայ ճամ-

բուն վրայ»: (Ռ. Սևակ, Հ. 2, էջ 183):

Ռուբեն Սևակը խորաթափանց կերպով տեսնում էր գալիք դաժան վիճակը և իր գերագույն պարտականությունն էր համարում ոչ միայն կանխատեսել, այլև ղգուշացնել, որ եթե բարու և առաջընթացի ուժերը չհամախմբվեն, ապա ապագայում երկրի վրայից «կնոսրանա» հոգևոր-բարոյական մթնոլորտը: Եվ թվում է, թե Ռուբեն Սևակը կարողանում էր երկրին նայել «այնտեղից», ուրիշի հայացքով: Այդպես էին վարվում նաև մյուս մեծերը, ինչպես, օրինակ, Դանթեն:

Եվ այն, ինչ տեսավ մեղնից 100 տարի առաջ ու կանխատեսեց Ռուբեն Սևակը, մենք այսօր համոզվում ենք դրանում: Մենք դարձել ենք դրանց վկան: Սա, իհարկե, բավական չէ: Մեզ էլ է հարկավոր այդպիսի հայելի, այդպիսի հայացք դրսից:

«...ՄԵՐ ՀՆԱՄԵՆԻ ՆԱԻԸ ԴԵՌ ԶՈՒՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԿԸ ԾՓԱՅ...»

Ամփոփելով խոսքս Ռուբեն Սևակի պատմագիտական հայացքների վերաբերյալ՝ ուզում եմ մի հարցի մասին ևս հիշել: Խոսքն այն մասին է, որ վերջին շրջանում մեր իրականության մեջ նկատվում է հանկարծակի հետաքրքրությունն անցյալի նկատմամբ: Ի միջի այլոց, դա բնորոշ է նաև համարյա բոլոր երկրների մշակույթին ու գրականությանը:

Ինչո՞ւ հանկարծակի անվանեցի: Որովհետև դա, իմ կարծիքով, առաջին հերթին կապված է ամբողջ մարդկության կյանքի ու մահվան համար պատասխանատվության հետ: Մարդիկ այլևս չեն կարող չզգալ, չգիտակցել, որ իրենց դարերով ու հազարամյակներով կուտակածը կարող են վերջնականապես կորցնել: Սա մեծ հաշվով, ամբողջ աշխարհի ու մարդկության գոյությանն է վերաբերում:

Իսկ մեր հայկական իրականության մեջ: Մենք՝ հայերս, նույնպես մարդկության մասն ենք և համամարդկային խնդիրները մեզ էլ են առնչվում և գուցե ավելի շատ ու խորը, քան ուրիշ ազգերի:

Սրա բացատրությունը տվել է Ռուբեն Սևակը և նորից հիշենք 1911 թ. գրած հետևյալ միտքը. «Այո, մեր ցեղը տարօրինապէս կենսունակ ու աշխատող ցեղ մըն է: Այո, մեր հնամենի նաւը դեռ ջուրերուն վրայ կը ծփայ, դեռ չընկղմեցաւ: Բայց ի՞նչ է պատճառը, որ երեկուան նաւակները մեզ արդէն անցան, ու մենք ուրուական նաւին պէս կը ծածանինք դեռ, անխորասուզելի, բայցեւ հաստատ ցամաքի մը հասնելու անկարող»: (Նույն տեղը, էջ 351):

Այո, վիճակն այսպիսին էր 20-րդ դարի սկզբին, և Ռուբեն Սևակն ամենայն ճշգրտությամբ արձանագրել է փաստը: Այդ նույն վիճակն ավելի ծավալուն կերպով, դժբախտաբար, կրկնվում է 100 տարի անց, 21-րդ դարի սկզբին:

Վերջին տարիներին կրած կորուստներն այնքան բաղձաթիվ են ու այնքան մեծ, որ հարկադրեցին մարդկանց սթափվել: Այստեղից էլ հանկարծակի հետաքրքրությունն անցյալի նկատմամբ: Այսօր արդեն խոսքը վերաբերում է հոգևոր գենոֆոնդի վերականգնմանը, որի պահանջը դրել են պատմական հիշողությունն ու խիղճը:

Միտքս հաստատել եմ ուզում մի օրինակով: Սրանից 30-40 տարի առաջ նշանավոր բնախույզ ու ճանապարհորդ Կուստոյի շնորհիվ մենք հնարավորութիւն ունեցանք տեսնել օվկիանոսը ներսից: Դա աննկարագրելի զգացողութիւն էր, որ հասնում էր խորհրդավորութեան:

Իմ կարծիքով, ճիշտ այդպիսի զգացողութիւն ենք ունենում՝ թափանցելով մեր անցյալը: Հասկանում ենք, որ ամեն ինչ միահյուսված է բոլոր ժամանակների՝ անցյալի, ներկայի ու ապագայի մեջ: Եվ կարևորագույն պահանջ է առաջացել պարզել, թե որտե՞ղ, ե՞րբ և ի՞նչ պայմաններում խղվեց կամ էլ խաթարվեց այդ երեք ժամանակների միջև կապը և հատկապես ո՞վ է դրա համար մեղավոր ու պատասխանատու: Վերջին հաշվով, կարծում եմ, որ նոր սերնդին անպայման կհետաքրքրի, թե այդ ո՞ւմ մեղքով, ի՞նչ հանգամանքների բերումով Ռուբեն Սևակի պատկերավոր արտահայտութեամբ «մեր ՆԱԻԻՑ առաջ անցան երեկուան ՆԱԻԱԿՆԵՐԸ»:

ՆԱ ՈՐՍԱՑ ԺԱՄԱՆԱԿԻ ՌԻԹՄԸ

Ռուբեն Սևակի պոեզիան արդար ու լուսավոր կյանքի համար մղվող պայքարի հիմն է: Նրա պոեզիայում ամբողջ ձայնով հնչում է պարտքի դճացումը: Այնտեղ կա ըմբոստություն, հոգևոր անհանգստության ոգի, ապագայի սուր դճացողություն:

Ռուբեն Սևակն անքակտելիորեն կապված էր արևմտահայության իրական կյանքին, որը նրա ստեղծագործության հենց սկզբից ներխուժեց բանաստեղծ-քաղաքացու սիրտը և նրան հասցրեց իր բարձունքին:

Եվ կարծում եմ, որ այս հանգամանքն էլ կարևոր դեր խաղաց, որպեսզի Ռուբեն Սևակը հենց այդ բարձունքից տեսներ ու դճար արևմտահայության հակասություններով լեցուն իրականությունը: Նա այդ բարձունքից տեսավ սովածների սովը, կուչտերի կուչտը, արևմտահայության, իր ժողովրդի տառապյալ վիճակն ու ողբերգությունը: Այստեղից էլ, իմ պատկերացմամբ, Ռուբեն Սևակի քաղաքացիական բարձրագույն խղճի ձայնը, որը հնչեց մինչև նրա ողբերգական կյանքի վերջին պահը:

Անժխտելի փաստ է դեպի աշխարհը, մարդկանց, դեպի հայրենիք միտված մեծ պոեզիայի լայն ասպարեզ դուրս գալը մեծապես նպաստեց, որպեսզի Ռուբեն Սևակն իր գործերում գլխավորը դարձներ արևմտահայության ճակատագիրը: Նա դրան հասավ աշխարհում, Արևմտյան Հայաստանում դարճացող իրադարձությունների վերլուծման ու քննարկման միջոցով: Ռուբեն Սևակի համար հայրենիքը կենդանի էակ էր, որի տառապանքը նրան հանգիստ չէր տալիս:

Գրողի, բանաստեղծի, ամեն մի ստեղծագործողի համար ժամանակն ունի կարևոր դերակատարություն: Ստեղծագործողին ժամանակը ոչ միայն թեմա, բովանդակություն և գաղափար է տալիս, այլև հաղորդում է իր ուրիշը: Եվ ստեղծագործողի խնդիրն է՝ որսալ ժամանակի ուրիշը: Ռուբեն Սևակն այն բանաստեղծն ու գործիչն էր, որի առջև ժամանակն ամբողջ սրությունամբ դրել էր Հայաստանի, արևմտահայության ճակատագրի թեման:

Եվ Ռուբեն Սևակը գտավ իր ժամանակի ուրիշը: Դա նրա

Հայաստանն է՝ տանջված, բայց չհուսահատված, մեռնող, բայց հարույթուն առնող հսկան է, որը պատրաստ է կատարել իր պատմական թոփչքը:

Բնությունից անփոփոխ համեստությամբ օժտված, բայց և իր նկատմամբ խստապահանջ Ռուբեն Սևակն իր նամակներից մեկում (1907 թ. փետրվարի 12-ին) գրում էր այն մասին, թե ինչպես է ուրախանում «ոտանաւորի մը աւարտումէն վերջ», և երազում էր, որ ապագա ընթերցողը իր ստեղծագործությունների մեջ կտեսնի բարություն, լույսի ու ազատության հաղթանակը:

Ռուբեն Սևակը երազում էր նաև, որ ապագայում երգեր կհորինվեն իր սիրային բանաստեղծությունների խոսքերով: Ահա թե այդ մասին ինչ է գրել նա 1910 թ. հունվարի 12-ին Յաննի Աբելին ուղարկած նամակում. «... Հիանալի կ'ըլլայ, եթէ օր մը արուեստագէտ բարեկամներ հրաւիրենք մեր ընտանեկան, գրական եւ երաժշտական երեկոյթին, եւ հոն դուն ալ կարենաս նուագել գործերդ, երգել իմ քերթուածներս...»: (Նույն տեղը, էջ 196):

Ռուբեն Սևակի ողբերգական մահից անցել են տասնամյակներ: Թոչում է ժամանակը, աշխարհը փոխում է իր կերպարանքը: Առաջ են եկել նոր հասկացություններ, նոր պահանջներ: Բայց համոզված ընդգծում եմ, որ Ռուբեն Սևակի ստեղծագործության վրա ժամանակը տիրապետող ու իշխող չէ, որովհետև իսկական պոեզիան անմահ է: Իհարկե, կարող են հնանալ պոետի լեզուն, ոճը, բայց նրա գործը, նրա էությունը՝ երբեք:

Եվ մենք, մեր ժամանակաշրջանի՝ 21-րդ դարի արչալույսից, մեր պատմական օրվա բարձունքից ավելի պարզ ու հստակ ենք տեսնում էությունն այն գործի, որին իր կյանքը նվիրեց Ռուբեն Սևակը, ավելի ճիշտ ենք հասկանում այն հսկայական դերը, որ նա խաղաց 20-րդ դարի սկզբին Հայ պոեզիայի մեջ, ավելի խորն ենք ներթափանցում նրա ստեղծագործության հարուստ ու բարդ աշխարհը:

Ռուս գրողները մեկը Դոստոևսկուն է ներկայացնում իր գրվածքը՝ նրա կարծիքը ստանալու հույսով: Դոստոևսկին կարդում է այդ գրվածքը ու ետ է վերադարձնում՝ ասելով. «Թույլ է,

վատ է, ոչ մի բանի պետք չէ: Լավ գրելու համար հարկավոր է տառապել, տառապել»:

Ով ծանոթ է Ռուբեն Սևակի կյանքին, նրա ստեղծագործություններ, անպայման նկատած կլինի, որ Ռուբեն Սևակն անցել է անձնական ու հասարակական տառապանքի բովով: Եվ այդ տառապանքի գնով է ստեղծվել նրա պոեզիան: Այդ տառապանքի արդյունքով է, որ նրա պոեզիան միշտ հնչում է որպես արդիական ու հրատապ կանչ՝ ուղղված ապագա սերունդներին:

Ռուբեն Սևակն ապրեց 30 տարի, ընդամենը 11.139 օր: Ինչո՞ւ կատարեցի Ռուբեն Սևակի ապրած օրերի հաշվարկը: Շտապեմ միտքս պարզել ու նախևառաջ ասել, որ դա բոլորովին էլ թվարանական հաշվարկ չէ: Երբ կյանքը հաշվում ես տարիներով, թվում է, թե դա շատ երկար է, և ստեղծվում է այն տպավորությունը, թե մարդու կյանքը կառուցվում է ինչ-որ մեկի կողմից, անկախ տվյալ մարդու կամքից:

Բայց փորձենք կյանքը հաշվել օրերով, և այդ դեպքում կյանքը թվում է շատ կարճ: Ու այդ ժամանակ առանձնակի սրություն մը գիտակցում ես, որ կյանքիդ յուրաքանչյուր օր կառուցում ես ինքդ, որ կյանքի ամեն մի օրը մի քար է, որ ինքդ ես դնում պատին, որը հետո այլևս չես փոխելու կամ էլ դուրս չես գցելու: Ասեմ նաև, որ ի վերջո, եթե տարվա հաշվարկով ես մոտենում կյանքին, ապա ինքնախարհություն համար կա ավելի շատ հնարավորություն, քան օրերի հաշվարկով:

Իհարկե, այստեղ ես նկատի չունեմ օրերի տառացի հաշվարկը, խոսքը դրան չի վերաբերում: Այլ խոսքը վերաբերում է այդ հաշվարկի սուր, մշտապես ներքին դգացողություններ, ապրած ամեն օրվա արժեքի դգացողություններ:

Այդպիսի դգացողություն ուներ նաև Ռուբեն Սևակը, որն իր վերաբերմունքը արտահայտել է հետևյալ խոսքերով. «...ամէն իրականութիւնէ վեր մէկ իրականութիւն մը կը ճանչնամ ես, ապրուած, զգացուած կեանքը, եւ ոչ թէ երեւակայած կեանքը»:
(ԳԱԹ, Ռ. Սևակի ֆոնդ, գ. 17, թ. 24):

Մենք, առհասարակ, ընտելացել ենք հաճախ կրկնվող արտահայտություններ, թե Հոմերոսը, Դանթեն, Շեքսպիրը, Պուշկինը, Հովհ. Թումանյանը, Կոմիտասը և ուրիշ շատ այլ մեծություններ

մեռած չեն, այլ անցել են անմահ Հավերժության, որ նրանք՝ այդ մեծերը, մեզ համար մեռած չեն, այլ միշտ եղել են ու կմնան, ինչպես երկինքն ու երկիրը:

Այստեղ տեղին է հարցնել, թե ինչո՞ւ այդպիսի տպավորություն ունենք: Գո՞ւցն նրա համար, որ այդ մեծերը ծնվել, ապրել ու մեռել են մեղհից շատ առաջ: Այդ մեծերից յուրաքանչյուրի մեռնելուց անմիջապես հետո նրանց ժամանակակիցները, օրինակ, Պուշկինի կամ էլ Հովհ. Թումանյանի մահից հետո անպայման ասած կլինեն. «խավարեց արևը»: Սակայն նրանք՝ մեծերը, մեզ ու հաջորդ բոլոր սերունդների համար հավերժական են:

Իմ գնահատմամբ՝ Ռուբեն Սևակը նույնպես իր կյանքով ու գործով «ղեպի հավերժություն» գնացած մեծերի շարքում իր արժանի տեղն զբաղեցնելու պատիվն ունի: Այստեղ, իհարկե, նկատի չունենմ Ռուբեն Սևակի ողբերգական մահը:

Այո, մեծերը գնացել են դեպի անմահություն, դեպի հավերժություն: Այդ մեծերը միայն իրենց ծնած ժողովրդին չեն պատկանում: Նրանք ամբողջ մարդկությանն են, դարձել են մարդկության խիղճը: Սակայն այդ մեծերը իրենց հետ որքան մտքեր, գաղափարներ ու մտահղացումներ ընդմիշտ տարան, որ չհասցրին ստեղծել: Եվ նրանք ինչքա՞ն չեն ուղեցել իրենց կենդանի կյանքից գնալ դեպի այդ անմահությունը: Ահա, օրինակ, Ռուբեն Սևակը գրում էր, որ «մեծերուն մէջ ալ շարք կայ, որ դեռ մեռնելը չեն հասկնար, ես ասոնցմէ եմ», որ «կեանքը կը սիրեմ»: (Նույն տեղը, գ. 151):

Մեծերից ոչ մեկը չի ուղեցել կենդանի կյանքից գնալ հավերժություն ոչ թե նրա համար, որ կյանքից շատ բան չէին վերցրել, այլ նրա համար, որ կյանքին ու մարդկանց դեռ շատ քիչ բան էին տվել: Ու հիմա դժվար է պատկերացնել այդ կորստի անչափելիությունը: Թերևս սրանով են մեծերը տարբերվում, առանձնանում սովորական մարդկանցից:

Հայտնի է, որ Գյոթենն 50 տարեկան էր, երբ սկսեց գրել իր գլուխգործոցը՝ «Ֆաուստը», որի երկրորդ մասն ավարտեց 82 տարեկանում: 80-ամյա Լ. Տոլստոյը հաճախ էր կրկնում, թե իրեն ամենաքիչը հարկավոր է տասը կյանք, որպեսզի պատկերի

այն ամենը, ինչ ամբարովել է իր մտքում: Իսկ Հանճարեղ Միքել-յանջելոն 89 տարեկան հասակում հանկարծ հայտնագործեց, որ հաղիվ հասցրել է սովորել կարողալ իր մասնագիտությունը: Իսկ ինչքան չիրականացած ծրագրեր թողեցին մյուս մեծերը:

Ձեռ սխալվի, եթե ասեմ, որ նրանք՝ բոլոր մեծերը, ապագա սերունդների համար կատարել են մի ընդհանուր հայտնագործություն, որը կարելի է բանաձևել «նոր սկսել եմ» արտահայտությամբ: Սա համամարդկային դժգոհում է, որը միավորում է բոլորիս: Միավորում է բոլորին, բացի նրանցից, ովքեր ունեցել են և ունեն միայն մի ձգտում՝ «մենք ամեն մի տաղանդ կլսեղդենք օրորոցում»: Այդպես էին մտածում ու գործում միջնադարյան հավատաքննիչները, երբ ամեն մի լուսավոր միտք մատնում էին խարույկի:

Այդպես էին մտածում ու գործում երիտթուրքերը, երբ ոչնչացրին հայ ժողովրդի մշակութային արժեքներն արարող տաղանդավոր մտավորականներին:

Այդպես էին մտածում ու գործում գերմանական Փաշիստները, երբ մարդկանց ոչնչացնելու համար ստեղծել էին համակենտրոնացման ճամբարներ ու դիակիզարաններ:

Ռուբեն Սևակը, ինչպես բոլոր մեծերը, նույնպես չհասցրեց իրականացնել իր մտահղացումների գոնե մի չնչին մասը: Նրա գեղարվեստական երազանքները մնացին անավարտ:

Կարելի է միայն պատկերացնել, թե ինչ կստացվեր, եթե հնարավոր լիներ ի մի հավաքել բոլոր մեծերի չիրականացած ծրագրերը: Եթե հնարավոր լիներ, ապա դա կլիներ կանխատեսումների գիրք: Կիմանայինք նաև, թե մեզ հետ դեռ ինչեր կպատահեն: Այդ գրքում կերևային նաև մեծերի սխալները, որոնք անչափ ուսանելի կլինեին: Իհարկե, այս ամենը երազանք է:

Միտքս ավարտելու համար ուզում եմ այստեղ հիշել մի կանխադրույթի մասին: Խոսքս «Սուրբ տեղը դատարկ չի մնում» արտահայտությանն է վերաբերում:

Ալեքսանդր Պուշկինի մահից անցել է 172 տարի: Բայց մինչև օրս ռուսական իրականությունը չի ծնել մեկի, որ դրադեցներ նրա տեղը թեկուզ և ռուսաց գրավոր խոսքը զարգացնելու գործում: Կարելի է էլի օրինակներ բերել այլ ժողովուրդների մշա-

կուլթային պատմությունից: Բայց բավարարվենք Պուշկինի օրինակով:

Այդ նույնը իմ պատկերացմամբ վերաբերում է նաև Ռուբեն Սևակին: Նրա ողբերգական մահից անցել է 94 տարի, բայց նրա զբաղեցրած տեղը Հայ մշակույթի, քաղաքական-ազգային մտածողությունից մեջ մնում է դատարկ: Նույնիսկ նրան չփոխարինեց մեկ այլ տաղանդավոր բանաստեղծ, որին կնքեցին Սևակի անունով: Հայ իրականության մեջ անցած տասնամյակներում ասպարեզ են իջել շատ տաղանդավոր գրողներ ու բանաստեղծներ, բայց նրանցից ոչ մեկն այդպես էլ չփոխարինեց Ռուբեն Սևակին, որովհետև հանճարներն անկրկնելի են թե՛ իրենց կյանքով և թե՛ պատմությունից մեջ զբաղեցրած իրենց տեղով:

«ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՀԱԻԱՏԱՑՈՂՆԵՐՆ ՌՒՐ ԵՆ...»

Վրա Հասավ Առաջին Համաշխարհային պատերազմը: Իրականություն էին դառնում Ռուբեն Սևակի կանխատեսումն ու զգուշացումը: Արևմտահայության գլխին դամոկլյան սրի նման կախվել էր բնաջնջման վտանգը:

Իրավիճակն ըմբռնելու համար համառոտ անդրադառնանք Հայ ազգային-քաղաքական ուժերի գործելակերպին:

Գլխավոր դերակատարը դաշնակցությունն էր, որը, չնայած 1913 թ. պաշտոնապես հայտարարել էր, թե հեռացել է երիտթուրքերից, բայց մինչև 1915 թ. ձմռան վերջը մշտապես ցուցադրում էր երիտթուրքերի նկատմամբ անկեղծ համագործակցության պատրաստակամությունը հանուն օսմանյան Հայրենիքի: Դաշնակցության նման կեցվածքը հարուցում էր հայկական շրջանների զայրույթը, որոնց մեջ էր նաև Ռուբեն Սևակը:

Դաշնակցության վարքագիծն ամբողջությամբ խտացված իր արտահայտությունը գտավ 1914 թ. հուլիսին Կարինում գումարված 8-րդ համագումարում: Կարիք չկա այստեղ հանգամանորեն անդրադառնալ այդ համագումարին, միայն ուղում եմ ընթերցողների ուշադրությունը ներկայացնել Ս. Վրացյանի

վկայություններ. «Այս ընդհանուր կացությունն հանդեպ, այլև աչքի առաջ ունենալով թուրք իշխանությունների կասկածոտ ու բռնականորեն վերաբերումը՝ Հ.Հ.Դ. ընդհանուր ժողովը կարճ կապեց իր օրակարգը և ցրվեց՝ նախօրոք քննությունն առնելով թուրքիայի պատերազմի մեջ մտնելու հավանականությունը և այդ առթիվ որոշելով հրահանգել իր մարմիններին և ընկերներին **մնալ օրինապահ** (ընդգծումն իմն է-Վ. Պ.) իրենց ապրած երկրի վերաբերմամբ և կատարել իրենց բաժին հասած քաղաքացիական պարտականությունները»։ (Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1995, էջ 8)։

Այսպիսի դիրքորոշումը թե՛ հեղհեղուկ էր և թե՛ արտահայտում էր դաշնակցության ետ նայելու միտումը։ Ց-րդ համագումարը որոշեց նաև, որ յուրաքանչյուր հայ պետք է մնա «օրինապահ իր ապրած երկրի վերաբերյալ», որ «արևմտահայությունը չպէտք է ապստամբուի, պատերազմի ընթացքին յստակ ազդային խնդիր չպէտք է յարուցանէ, իր վրայ ընկնող բոլոր քաղաքացիական պարտականությունները պէտք է կատարէ, բարեխիղճ, համբերող և պարտաճանաչ պէտք է լինի թուրքիոյ և թուրքերու հանդէպ»։ (Տերտերեան Ի., Հայկական գոյամարտը, 1957, էջ 202)։

Այո, հին սերը դաշնակցությունը դժվարությամբ էր մոռանում։ Արժե այստեղ հիշել դաշնակցության ղեկավարներից մեկի՝ Վոսաճյանի հետ ուս լրագրող Ա. Տիրկովայի ունեցած զրույցը, որի ժամանակ Վոսաճյանն ասել է. «Երիտթուրքերի մեջ կան ազնիվ մարդիկ, որոնց կարելի է վստահել։ Խորհրդարանի ներկայիս նախագահ Ահմեդ Ռիդան, Հուսեյին Ջավիդը։ Վերջապես Թալևաթ բեյը։ Նա կրթված մարդ չէ, բայց ոգեշունչ և ազնիվ հայրենասեր է։ Նա հասկանում է, որ թուրքիայի փրկությունը բարեփոխումների մեջ է»։

Ի պատասխան դրա՝ Ա. Տիրկովան հարցնում է. «Իսկ ո՞րն է հայերի փրկությունը։ Չէ՞ որ երիտթուրքերի օրոք տեղի ունեցավ Ադանայի կոտորածը։ Դուք արդյո՞ք ապահովագրված եք, որ այն այլևս չի կրկնվի»։

«Ոչ, ոչ։ Դա կրկնվել չի կարող, - պատասխանում է Վոսաճյանը, - Ադանայի կոտորածը հին վարչակարգի մնացուկ էր։

Իթթիհադն ինքն էր վրդովված...»:

Ա. Տիրկովայի այն հարցին, թե այժմ ո՞րն է դաշնակցության քաղաքական մարտավարությունը, Վուսմյանը պատասխանում է. «Գլխավորը՝ դաշինք իթթիհադի հետ: Մենք կորցրել ենք բոլոր հույսերը, որ բարենորոգումներ հնարավոր են քրիստոնյա տերությունների օգնությամբ... Մենք գործում ենք՝ հենվելով հիմնականում երիտթուրքերի ձախ թևի վրա... Թալեաթ բեյ, Ջավիդ բեյ, Հալիլ բեյ, Ադիլ բեյ, Նազըմ բեյ»:

Հիշեցնեմ, որ վերոհիշյալ դրույքը տեղի է ունեցել 1911 թ. դեկտեմբերին: Նույն Վուսմյանն արդեն 1912 թ. գարնանը Ա. Տիրկովային ասել է. «Թվում է, թե մենք սխալվել ենք: Մենք նրանց համարում էինք տգետ, բայց ազնիվ մարդիկ: Իսկ նրանք պարզապես ստախոս, քաղաքական սրիկաներ են... Եթե այս անգամ էլ նրանք խաբեն... մենք կգործենք այլ ձևով»: (Ս. Պողոսյան, Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն, հ. 1, Երևան, 2001, էջ 63-69):

Բայց քանի՞ անգամ կարելի է խարվել ու չհասկանալ, որ երիտթուրքերը հաստատապես հետամուտ են իրենց դիվային ծրագրի իրագործման մեջ: Վերջապես քանի՞ անգամ կարելի է խարվել քաղաքական սրիկաներին:

Այդ օրերին տիրող իրավիճակի մասին պատկերացում կադմելու համար բավականաչափ կարևորություն ունեն Գր. Զոհրապի գրառումները, որոնք աչքի են ընկնում անկեղծությամբ ու անմիջականությամբ:

Այստեղ կբերեմ միայն մեկ-երկու հատված այդ գրառումներից, որոնք իմ կարծիքով շատ խոսուն են: 1914 թ. օգոստոսի 4-ին Գր. Զոհրապը գրում էր, որ թուրքական կառավարությունը «կը պատրաստուի կոուին մէջ մտնել»: Գտնվում ենք ամենամեծ դեպքերի նախօրյակին, ընդգծում էր նա, «որոնք ուզեն չուզեն մեր ազգին ճակատագրին վրայ ալ պիտի ազդեն»:

Գր. Զոհրապի գրառումներից երևում է, որ նա տեղյակ չէր, թե դաշնակցությունն ինչ կեցվածք պետք է որդեգրեր մոտալուտ պատերազմի նկատմամբ: Այլապես նա չէր գրի, թե «Հայոց վիճակը մեծապէս մտահոգութեան պատճառներու հանգամանքը ունի, Թուրքիոյ եւ Ռուսիոյ մոտալուտ բախումին առթիւ, որ

կողմը բռնել... պատասխանատուութիւններով լեցուն խնդիր և նոյնիսկ խիստ կարելի ըլլայ որոշում մը տալ...»:

Այնուհետև Գր. Զոհրապը վրդովվում է, թե «մարդ չը կայ պատրիարքարանի մէջ, դառնայ հետևողական, կուսակցութիւնները դուրկ են նշանակութենէ, միմիայն դաշնակցութիւն կեցած է աչքի վրայ աւելի թերթերով, քան իւր ուժերով»:

Ով՞ ով, բայց Գր. Զոհրապը, որը թեև դաշնակցութեան անդամ չէր ու սերտորեն կապված էր նրան, բոլորից լավ գիտեր, թե իրենից ինչ էր ներկայացնում դաշնակցութիւնը: Իսկապես, դա այն ուժը չէր, որն այնպես աղմկալից կերպով ներկայացվում էր՝ թյուրիմացութեան մէջ գցելով արևմտահայութեան այն հատվածին, որ դեռ հավատում էր դաշնակցութեանը և նրա հետ շարունակում էր հույսեր կապել:

Իսկ դաշնակցութեան ղեկավարները շարունակում էին սնապարծութեան գերի մնալ ու իրենց թույլ ուժերի մասին ազդեցիկ տպավորութիւն ստեղծում թե՛ արևմտահայերի և թե՛... երիտթուրքերի մոտ:

Բայց հետևենք Գր. Զոհրապի գրառումներին: Օգոստոսի 4-ին նա արդեն հստակ արտահայտում է իր վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ՝ գրելով, որ «Ռուս պետութիւնը մեր միակ ապաւէնն է»: (ԳԱԹ, Գ. Զոհրապի ֆոնդ, գ. 18):

Ափսոս, շատ ափսոս, որ Գր. Զոհրապի նման շրջահայաց գործիչը, հայրենասերն այդքան ուշացած հասկացավ այդ բացարձակ ճշմարտութիւնը:

Ի միջի այլոց, դեռևս 1914 թ. հունվարի 18-ին Արշակ Զոպանյանին ուղարկած նամակում Գր. Զոհրապը, հայտնելով, որ «հայկական բարենորոգումներու պայմանագիրն ստորագրելու վրայ է Բ. Գոան և Ռուսիոյ դեսպանատան մէջ», գրում էր. «...բան մը ձեռք բերինք, կարելոր բան մը անժխտելիօրէն, Եւրոպայի հսկողութեան մատեն (մանդատը- Վ. Պ.) ձեռք բերինք Հայաստանի մէջ»:

Այնուհետև գրելով, թե նախկինում շատ դիմումներ են ևղկված պետութիւններին, Գր. Զոհրապը հայտնում էր. «Բայց հիմը և իրականը ռուսական պետութեան պաշտպանութիւնն էր և ատոր շնորհիվ ձեռք բերինք ամէն բան, ան է, որ այսօր ալ կը

խոստանայ ապագային աւելի ընդարձակել և հաստատուն ձևի մը վերածել այսօր առնուած *statu*ն»:

Գր. Զոհրապր համողված գրում էր, որ «մեր ողջամտութեան, Ռուսիոյ հանդէպ պահպանելիք մեր մտերմական յարաբերութեան շնորհիւ այդ խոստումին իրագործումը պէտք է ունենանք թերևս շատ աւելի մօտիկ թուականի մը մէջ՝ 10 տարուան յրանալէն առաջ»:

Լափատեսորեն տրամադրված Գր. Զոհրապր, այնուամենայնիվ, հարկ է համարում Արշակ Զոպանյանին տեղեկացնել իրեն անհանգստացնող մի երևույթի մասին. «Միայն վախ մը ունիմ, - գրում էր Զոհրապր, - խիստ մեծ ցաւ մը շատ խորունկ, այդ վախը, այդ ցաւը սա է, որ Պոլսոյ հայոց մէջ անիշխանական եւ խուժանավարական հոսանք մը (ընդգծումն իմն է - Վ. Պ.) ստեղծուած է եւ այդ հոսանքը դսպել կարելի չէ: Եւ սակայն ասկէ վերջը մանաւանդ ազգին գործերը խոհեմութեամբ և հեռատեսութեամբ կառավարելու կարօտ են: Ո՞վ պէտք է կառավարէ դանոնք...»: (ԳԱԹ, Արշակ Զոպանյանի ֆոնդ, գ. 2178ա. 2):

Այսպիսով, Արշակ Զոպանյանին ուղարկած նամակից երևում է, որ Գր. Զոհրապր սկսել էր գիտակցել դաշնակցութեան գործունեութեան անօգուտ ուղղութիւնը և առանց անունը տալու հասկացնում է, թե հայութեան պառակտման մեջ ով է գլխավոր դերակատարը:

Ընթերցողին ծանոթացնեմ Գր. Զոհրապրի մեկ այլ գրած մանր, որ նա արել է 1914 թ. նոյեմբերի 5-ին, Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց մօտ մեկ շաբաթ հետո: «Այսօր, - գրում է նա, - Վարտկէսը, Ակնունին եկան մեզի ևս հիւանդ՝ անկողնիս մէջ ելայ նստայ: Սօսեցանք: Ակնունին Պոլիսէն հեռանայ կ'ուղէ: Հրաման առնելու կաշխատի: Դիւրին չէ. Թալաթին դիմում պիտի ընեն վաղը»:

«Ինչ հակապատկեր այն օրուան հետ, - խոր վշտով ու հիասթափութեամբ շարունակում է Գր. Զոհրապր, - որ Ակնունին Պոլիս եկաւ օսմ. սահմանադրութենէն անմիջապէս յետոյ, այդ միջոցին ինչ յաղթական մուտք, ինչ խանդավառութիւն և հիմայ ինչ խուճապ ու ինչ փախուստի պատրաստութիւն... Տաճկաս-

տանի վերածնունդի հաւատացողներն ո՞ւր են...»: (Նույն տեղը, դ. 17):

Փախուստի դիմողն այն Ակնունին էր, որ «գինովցել» էր թուրքական հեղափոխությունից և երիտթուրքերի հետ համագործակցելն ամեն ինչից վեր էր դասում: Ճիշտ է, Ակնունին էլ դարձավ թուրքական յաթաղանի դոհ, բայց թող դաժանություն չհամարվի, եթե ասեմ, որ նույնիսկ եղևոնական մահը նրա վրայից չի հանում պատասխանատվությունը, որովհետև Ակնունու և դաշնակցության մյուս պարագլուխների անմիտ ու անհեռատես քաղաքականության հետևանքով զոհվեց մի ամբողջ ժողովուրդ:

Գայով Գր. Զոհրապին՝ պետք է ասել, որ նրա ամբողջ օրագրությունը, որը հաղիվ թե գրած լիներ ուրիշի համար՝ իր անձը մեծարելու նպատակով, աչքի է ընկնում ոչ միայն խոր հիասթափությամբ, այլ նաև թույլ տված սխալներն ընդունելու համոզմունքով: Բայց շատ ավստոս, որ Գր. Զոհրապն այդպիսի եզրակացության եկավ բավականաչափ ուշացած, երբ այլևս ոչինչ անել հնարավոր չէր և նրա համար միակ ելքը մնաց նահատակվելու ճանապարհը:

ՌՎ ԷՐ ՃԻՇՏ ԵՎ ՈՎ՝ ՍԽԱԼ

«Հնչակ» կուսակցությունն ի սկզբանե մերժեց երիտթուրքերի հետ համագործակցության գաղափարը և գերադասեց կապվել իթթիհականների հակառակորդ «Իթթիլաֆի» («Համաձայնություն») կուսակցության հետ:

Տարօրինակ վիճակ էր ստեղծվել: Բավական չէր դաշնակցությունն ու «Հնչակը» ունեին յուրջ տարաձայնություններ, նրանք միացան իրար նկատմամբ թշնամանքով տրամադրված թուրքական երկու քաղաքական կուսակցություններին և դրանով ավելի խորացրին արևմտահայության ուժերի ջլատումը: Մինչդեռ դաշնակցությանն ու «Հնչակին» հարկավոր էր մի կողմ թողնել տարաձայնությունները և համախմբվել, ի մի բերել ուժերը վերահաս վտանգի դեմ:

Սակայն, բոլոր դեպքերում Հնչակյան կուսակցությունն ավելի սթափ էր գնահատում ստեղծված իրավիճակը: Դեռ 1913 թ. սեպտեմբերին Հնչակյան կուսակցության 7-րդ համագումարը ընդունել էր հետևյալ որոշումը. «Համոզուած ըլլալով, որ կուսակցութիւն մը, որպիսին է Ս.Գ.Հ.Կ.-ը, օսմանեան պետութեան տուած ներկայ պայմաններով չի կրնար այլևս իր որդեգրած գաղափարներու իրականացումը հետապնդել եւ հայ ազգի զլխուն կախուած մահարեր սուրը ետ մղել... Այսուհետեւ կանգնիլ միմիայն իր սկզբունքներէն ըխող ոչ-օրինական գետնին վրայ... մինչեւ որ աւելի քաղաքական ու տնտեսական նպաստաւոր պայմաններ ստեղծուին»: Համագումարը եռանդով արգելում էր՝ ոչ մի համագործակցություն իթթիհաղի քաղաքականութեան հետ, այն գնահատելով վտանգավոր ու վնասակար: (Ա. Կիտուր, Պատմութիւն Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962, հ. 1, Բեյրութ, 1962, էջ 350-368):

Հնչակյանների համագումարը վճռականորեն արտահայտվեց նաև Ինքնավար Հայաստանի հռչակման օգտին: Հնչակյանները բարձրաձայն հայտարարում էին, որ «Իթթիհաղը... աշխատում է հայկական մեծ կոտորած սարքել»: (Հ. Գանգրունի, Հայ յեղափոխութիւնը օսմանեան բռնատիրութեան դէմ (1890-1910), Բեյրութ, 1973, էջ 389):

Հանգամանորեն քննարկելով ստեղծված իրավիճակը՝ Հնչակյանները 1913 թ. առաջ քաշեցին Արևմտյան Հայաստանի անկախության համար պայքարի անհրաժեշտության հարցը՝ այն դիտելով որպես հայությանը նոր կոտորածներից փրկելու միջոց:

Այսպիսով, երկու կուսակցություն, երկու դիրքորոշում: Հնչակյանները նոր կոտորածներից հայությանը փրկելու համար ղնում էին Արևմտյան Հայաստանի անկախության համար պայքարի անհրաժեշտությունը: Դաշնակցությունը հայությանը փրկելու համար որդեգրել էր երիտթուրքերի հետ համագործակցելու քաղաքականություն: Ընդ որում՝ պետք է նկատի ունենալ, որ հայության նոր կոտորածի վտանգը գալիս էր երիտթուրքերից:

Թե երկու կուսակցություններից ով էր ճիշտ և ով՝ սխալ,

թողնում եմ ընթերցողին դատելու:

Երիտթուրքերն անպայման տեսնում էին Հնչակյան կուսակցության որդեգրած քաղաքականության վտանգը իրենց հրեշափոր ծրագրերի իրականացման գործում և վճռեցին Հենց առաջին հարվածը հասցնել Հնչակյաններին: 1914 թ. հուլիսի 16-ին երիտթուրքական իշխանությունները ձերբակալեցին Հնչակյան կուսակցության ղեկավարներին:

Սահմանադրական ռամկավար կուսակցությունը Թուրքիայում թույլ օղակներ ուներ: Եվ, ըստ երևույթին, այդ էր պատճառը, որ 1913 թ. հունվարին Կ.Պոլսում ռամկավարները հայտարարեցին, թե իրենք ապստամբներ չեն և Հայկական հարցն անջատողական շարժում չէ: Ռամկավարները հայտարարում էին նաև, թե հայ ժողովուրդը դժգոհ է, բայց ապստամբ չէ: («Վան-Տոսպ», 1913, թիվ 1):

Այսպիսով, կարելի է փաստել, որ հայ ազգային քաղաքական կուսակցությունները յուրովի էին ղգում հասունացող վտանգը, բայց նորից ու նորից ուղում եմ ընդգծել, որ ամբողջ դժբախտությունն էլ Հենց այն էր, որ նրանք փորձ չարեցին համախմբվել, միասնական ճակատ ստեղծել ու այդ միջոցով միաձուլել արևմտահայության ուժերն ու դիմադրության պատրաստակամությունը:

Ահա այսպիսի պայմաններում երիտթուրքական կառավարությունը 1914 թ. հուլիսի 21-ին սկսեց դորահավաք, թեև աշխարհով մեկ հայտարարվում էր Թուրքիայի չեղոքության մասին: Չնայած գոյություն ունեցող օրենքին, ըստ որի զորակոչի ենթակա էին 20-30 տարեկան երիտասարդները, թուրքական իշխանությունները զորակոչի ենթարկեցին 18-48 տարեկան զենք կրելու ընդունակ հայ տղամարդկանց: Զորահավաքն ընթանում էր խիստ ու դաժան պայմաններում: Զորակոչված հայերի մեծ մասին նույնիսկ դինվորական համազգեստ չտրվեց, էլ չենք խոսում զենքի մասին:

Այն միջոցները, որոնցով իրականացվում էր զորահավաքը, ինչպես նաև գավառներից ստացված լուրերը վկայում էին թուրքական իշխանությունների մտադրությունների մասին: Բայց զարմանալին այն էր, որ որևէ դիմադրություն ցույց

չտրվեց զորահավաքի ժամանակ գործադրված բռնություններին:

Դրա փոխարեն Հենց Հայտնի դաշնակցական Ռուբենի վկայությամբ Վանում «դաշնակցության դեկավար գործիչները, առանձնապես Արամը, տավուլեզուունան ետևը ձգած, ոգևորում ու հրահանգում էր ժողովրդին ճակատ մեկնելու»: (Ռուբեն, Հայ-Թրքական կնճիոր, Կահիրե, 1924, էջ 89):

Այդպես էր համարյա բոլոր գավառներում: Նույն Ռուբենի վկայությամբ Տարոնում, Սասունում և այլ վայրերում դաշնակցությունն ամեն կերպ օգնում էր երիտթուրքական իշխանություններին զորահավաքի կազմակերպման գործում: Դաշնակցությունը նույնիսկ ստեղծել էր զորակոչի հանձնախումբ, որը շրջում էր հայկական գյուղերով, համողում ու ոգևորում երիտասարդներին: Այդ հանձնախումբը հայտնաբերում էր զորակոչից խուսափողներին, ձերբակալում նրանց և հանձնում իշխանություններին: (Նույն տեղը, էջ 94-101): Ահա, այսպես, պրովոկատոր քաղաքական այծերը ժողովրդին տանում էին դեպի սպանդանոց:

Հայերին դանգվածաբար զորահավաքի ենթարկելով՝ երիտթուրքերն սկսեցին իրականացնել Հայոց ցեղասպանության առաջին գործողությունը: Զորակոչի արդյունքում, որը տևեց վեց ամիս, հայերից կազմվեց 120 աշխատանքային վաշտ: Ահա այսպես հավաքվեց 300 հազար հայ զինվոր: Այդ զինվորների մեծ մասը ոչնչացվեց տարրեր միջոցներով: Այս ոճրագործության մասին այժմ հրապարակի վրա են բազմաթիվ պաշտոնական փաստաթղթեր ու վկայություններ, որոնց հարկ չկա այստեղ անդրադառնալ:

Միայն ուղում եմ երկու փաստ հիշատակել՝ դրանց մեկնաբանությունը թողնելով ընթերցողին:

Առաջին. 1914 թ. հոկտեմբերի 14-ին դաշնակցության Կ. Պոլսի կենտրոնը փաստեց, որ «ներքին գաւառներու վիճակն օրըստօրէ կը ծանրանայ: Ընդհանուր զօրակոչին պատճառով զինուորական պաշարումի վիճակ է յայտարարուած: Անկէ ի վեր հայերը դրական պատասխանեցին զօրակոչին: Ըրինք այն, ինչ որ կրնայինք, որպէսզի բոլոր հայերը, որպէս օսմանեան քաղա-

քացիներ, կատարէին իրենց պարտականութիւնները»: (Ընդգծումն իմն է- Վ. Պ.)

Երկրորդ. «Հնչակ» թերթը 1914 թ. դեկտեմբերին գրում էր. «Մեծագոյն պատուհասներից է նաև զօրահաւարը... առանց տարիքին, դիրքին, առողջութեանն ուշադրութիւն դարձնելու, բոլոր հայերին, անգամ դինուորական հարկ վճարողներին, կոպտութեամբ, ձեռով քշում են իրենց ընտանիքներից... և հետատես դգուշաւորութեամբ ուղարկում են կայսրութեան հետաւոր մասերը՝ Սիրիա, Արարիա, Միջագետք: Կոմիտեն (Երիտթուրքական-Վ.Պ.) խնդիր է դրել հայ ամբողջ բնակչութեանը հայաշատ վայրերից տեղափոխել թրքաշատ տեղեր և թուրքական կառավարութիւնը սրի գործադրութիւնը փութկոտ առաջ է տանում»:

(Ս. Պողոսյան, նույն տեղը, էջ 422-423):

«ՊՈԼՍԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԴԵՐԻՑ ՄԷԿԸ»

1914 թ. հունիսին, երբ արդեն զգացվում էր Առաջին համաշխարհային պատերազմի մահարեր շունչը, Ռուրեն Սևակը խաղաղ ու ապահով Շվեյցարիայից վերադարձավ Կ. Պոլիս, իր հետ բերելով նաև ընտանիքը: Նա վերադարձավ, որովհետև չէր կարող վերահաս վտանգի պայմաններում հետու մնալ իր ժողովրդից:

Կ. Պոլսում Ռուրեն Սևակն աշխատեց Ազգային հիվանդանոցում: Միաժամանակ ստանձնեց Կ. Պոլսի Կեդրոնական վարժարանում կենդանարանության ուսուցչի պաշտոնը: Նույն առարկան նա դասավանդում էր նաև Սկյուտարի հայ օրիորդաց ճեմարանում: Ռուրեն Սևակը հաճախ հանդես էր գալիս բժշկական թեմաներով՝ ինչպես հողվածներով, այնպես էլ ղեկուցումներով:

Կ. Պոլսի Բանկալթիի շրջանում գտնվող Ռուրեն Սևակի բնակարանը դարձավ արևմտահայության ճակատագրով մտահոգված առաջադեմ մտավորականների հանդիպման վայր: Բանաստեղծի բնակարանը հիշեցնում էր Հովհաննես Թումանյանի ստեղծած «Վերնատունը»:

Այդ հանդիպումների կենտրոնական

դեմքը Ռուբեն Սևակն էր: Նա աչքի էր ընկնում բանավեճ վարելու կարողությամբ, սկզբունքային հարցերում զրուսորած վճռականությամբ:

Ռուբեն Սևակը մշտապես հանդես էր գալիս նաև Կ. Պոլսի Բերա թաղամասում գտնվող «Սուրբ Երրորդություն» կոչվող վերնատանը, որտեղ կաղնակերպվում էին գրական-մշակութային ասուլիսներ ու բանավեճեր: Այդ «Արհեստանոցում» տեղի ունեցող բանավեճերին մասնակցում էին նաև դաշնակցության երևելի գործիչներ Ռուբեն Զարդարյանը, Սաթակը, Ակնունին և ուրիշներ: Իր ելույթներում Ռուբեն Սևակն անխնա քննադատում էր նրանց, ովքեր գտնվում էին հին պատրանքների մեջ և չէին ձևափոխվում երիտթուրքերից: Ռուբեն Սևակն իր տեսակետներն արտահայտում էր հստակորեն ու դրանք հաստատում համոզիչ փաստարկներով:

Դաշնակցության ներկայացուցիչները հակադրվում էին ընթացիկ քաղաքական հարցերի և հատկապես արևմտահայության ճակատագրի վերաբերյալ Ռուբեն Սևակի արտահայտած տեսակետներին, ինչ-որ խորհրդավոր ակնարկներով հասկացնում, թե այդպիսի հարցերի մասին հրապարակավ խոսելու հարկ չկա, որ դրանք ներկուսակցական խնդիրներ են և այլն:

Բայց խոսքը վերաբերում էր ազգի գոյությանը սպառնացող վտանգին և Ռուբեն Սևակը հակադարձում էր՝ ազգի անվտանգությունը չչիտթել ներկուսակցական խնդիրների հետ:

Կուսակցական մարմաջով տարված գրչակից ընկերներից ոմանք Ռուբեն Սևակին հորդորում էին մտնել դաշնակցության մեջ և հասու լինել ներկուսակցական խնդիրներին: Ռուբեն Սևակը մերժում էր նրանց, ասելով, որ չի ուզում իր խղճի վրա ծանրացնել երիտթուրքերի հետ սիրախաղի պատասխանատվությունը:

Եվ Ռուբեն Սևակը չմտավ դաշնակցության շարքերը:

Ազգային հրատապ խնդիրների, արևմտահայությանը սպառնացող վտանգը կանխելու վերաբերյալ Ռուբեն Սևակի ելույթներն ընդունվում էին հետաքրքրությամբ և արժանանում էին համակրանքի: Այդ մասին է վկայում, օրինակ, 1915 թ. փետրվարի 4-ին Ռուբեն Սևակին ուղղված նրա ունկնդիրներից մեկի՝

Մեկրոն Հովակիմյանի նամակը: Մ. Հովակիմյանը գրում էր.

«Աղնիւ տօքթէոր Ռ. Զիլինկիրեան.

Քաղցր պարտականութիւն մը կը համարիմ Զեղ ուղարկելու իմ խորին հիացումս ու անկեղծ շնորհաւորութիւններս երեկ գիշերուան Զեր խիստ նշանակալի, ազդու և օգտակար բանաստեղծութեան համար, որ առաջինն է վեց տարիէ ի վեր Գատլո գիւղի «Հայ ակումբին» մէջ մեր լսածներէն: Անխախտ կերպով համոզուած ևմ, որ բոլոր ներկաներն ալ ճիշտ իմ տպաւորութեանս տակ մեկնեցան, ինչպէս որ Զեղ ցոյց տրուած ընդհանուր համակրանքն ու այսօրուան իմ հանդիպած մի քանի ընկերներու կատարելապէս անկեղծ արտայայտութիւնները զայդ կը հաստատեն»: (ԳԱԹ, Թ. Աղատյանի ֆոնդ, գ. 170.13):

Կարճ ժամանակամիջոցում Կ. Պոլսում ծավալած գործունեությամբ Ռուբեն Սեակը ժամանակակիցների վկայությամբ դարձավ «պոլսահայ մտավորականութեան ղարղերէն մէկը»: («Նայիրի», 15 փետրվարի 1982):

Նկատի ունենալով Կ. Պոլսում Ռուբեն Սեակի ծավալած գործունեությունը, նրա դրսևորած ունակությունները և, ընդհանրապես, բանավեճերի ընթացքում նրա ցուցաբերած խորիմաստ ու սթափ մոտեցումները, Թեոդիկը գրել է. «Աթէնա իմաստութեան շիթը դրած է անոր ուղեղին մէջ. էսկիւլապ՝ բժշկութեան խորհուրդը, Հերմես ալ կայծը պերճաստեղծութեան»: (Հ. Զիլինկիրեան, Ռուբէն Սեակի գաղափարականը, 1989, էջ 16):

Նկատենք, որ Ռուբեն Սեակը Կ. Պոլսում այդ գործունեությունը ծավալել էր այն ժամանակ, երբ արդեն զգացվում էր համաշխարհային պատերազմի շունչը, ընդհուպ մինչև 1915 թ. հունվար ամիսը: Ռուբեն Սեակի այդ եռանդուն գործունեությունը չվրիպեց երիտթուրքական իշխանությունների ուշադրությունից և հայկական միջավայրից մեկուսացնելու նպատակով նրան որպես բժշկի՝ զորակոչեցին բանակ:

Դատելով հայ օրիորդաց ճեմարանի տնօրինուհու նամակից, որը թվագրված է 1915 թ. հունվարի 23-ին, պետք է ենթադրել, որ Ռուբեն Սեակը զորակոչվել է հունվարի 10-15-ից հետո, որովհետև 1915 թ. մարտի 8-ին իր օրագրում նա նշում է. «գրե-

Թէ երկու ամիսէ ի վեր զինուորական եմ»: (Ռ. Սևակ, նույն տեղը, էջ 555):

Այն դորամասը, որտեղ դորակոչվել էր Ռուբեն Սևակը, գտնվում էր Կ. Պոլսում: Դա նրան հնարավորութուն էր տալիս լինել տանը, հանդիպել ընկերներին, մասնակցել գիշերային հավաքներին և հանդես գալ ելույթներով:

Սակայն ամենուրեք վխտում էին լրտեսները՝ թուրք և ընտանի, որոնք հետևում էին Ռուբեն Սևակի ամեն քայլին: Երիտթուրքական իշխանությունները, ի դեմս Ռուբեն Սևակի, տեսնում էին մեկին, որին լուսնային միջոցը միայն ֆիզիկական հաշվահարդարն էր:

ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ

Շուտով ստեղծվեց հարմար առիթը: 1915 թ. ապրիլի կեսերից դաշնակիցների զորքերը ընդհուպ մոտեցան թուրքական մայրաքաղաքին՝ սպառնալով զրավել: Կովկասյան ռազմաճակատում էլ ռուսական զորքերն էին հաղթանակներ տանում: Սկսվել էր խուճապ: Թուրքական իշխանությունները նույնիսկ պատրաստվում էին Կ. Պոլսից ապահով վայր տեղափոխել սուլթանին: Չնայած երիտթուրքերի ահաբեկվածությանը, այնուամենայնիվ, դաշնակիցների զորքերին չհաջողվեց զրավել Կ. Պոլիսը:

1915 թ. ապրիլի 24-ին, Դարդանելում տարած հաղթանակից հետո, թուրքական իշխանությունները սկսեցին Կ. Պոլսում գտնվող հայ մտավորականներին ձերբակալել և ուղարկել արսոր: Արտաքուստ դա կատարվում էր վտանգավոր ու կասկածելի հայերին մայրաքաղաքից հեռացնելու քողի տակ: Դավաճանների ու մատնիչների օգնությամբ նախապես կազմվել էին այդպիսի անձանց ցուցակները: Միայն մայրաքաղաքում ձերբակալվեց 336 բժիշկ, 176 ուսուցիչ, 160 իրավաբան, 196 գրող, 168 նկարիչ, 62 ճարտարապետ, 578 երաժիշտ, 64 դերասան և այլն: Ձերբակալվեց ու արսորվեց նաև Ռուբեն Սևակը:

1915 թ. ապրիլի վերջերին Կ. Պոլսում սկսվեց Փարամազի և

Հնչակյան կուսակցությունն մյուս գործիչների դատավարությունը: Մինչ այդ, ապրիլի 8-ին, Վանի բանտում ձերբակալված 120 Հնչակյաններ գաղանարար հռչակեցին: (Քսան կախաղաններ, Պրովիտենս, 1916, էջ 162-163): Հնչակյաններին երիտթուրքական իշխանությունները ձերբակալեցին ու ոչնչացրին նաև այլ վայրերում:

Դրանից մոտ մեկ տարի առաջ 1914 թ. հուլիսի 16-ին մատուցված ձերբակալվել էին Հնչակյան 20 գործիչները: Այդ ժամանակ էլ Կարինում ընթանում էր դաշնակցության ընդհանուր ժողովը: Ես այս հանգամանքը հատկապես եմ նշում, որովհետև դաշնակցությունը նույնիսկ այդ ձերբակալությունից համար ցավ չհայտնեց: Հնչակյան կուսակցությունը երիտթուրքերի նկատմամբ անզիջում դիրքորոշում ուներ և այդ առումով էլ նրանց համար մեծ վտանգ էր ներկայացնում:

Այն հանգամանքը, որ Հնչակյան կուսակցության ղեկավարները ձերբակալվեցին հայերի դորահավաքի ընթացքում, շատ բանի մասին է վկայում: 1915 թ. հունիսի 2/15-ին թուրքական դատարանի վճռով Հնչակյան կուսակցության 20 անդամները Կ. Պոլսում կախաղան հանվեցին: Իմ պարտքն եմ համարում այստեղ հիշել կախաղան հանվածներին անուն առ անուն. Փարամազ (Մաթևոս Սարգսյան), Պենե Թորոսյան, Արամ Աչըքպաչյան, Գեղամ Վանիկյան, Երվանդ Թուփուզյան, Ռուբեն Կարապետյան, Հովհաննես Տեր-Ղաղարյան, Թովմաս Թովմասյան, Հակոբ Պասմաջյան, Մուրադ Զարարյան, Մկրտիչ Երիցյան, Գարեգին Պողոսյան, Արմենակ Համբարձումյան, Երեմիա Մանուկյան, Արրահամ Մուրադյան, Մինաս Քեչիչյան, Սմբատ Գելեջյան, Գառնիկ Պոյաջյան, Հրանտ Եկավյան, Պողոս Պողոսյան:

Ռուբեն Սևակի աքսորում գտնվելու, նրա կյանքի վերջին օրերի մասին ևս հանգամանորեն անդրադարձել եմ իմ «Ռուբեն Սևակը և մեր ժամանակը» աշխատությունում մեջ: Այստեղ միայն ուզում եմ ընթերցողի ուշադրությունը ներկայացնել հետևյալը:

1920 թ. իր հուշերն է հրապարակել բժիշկ Վահան Ալթունյանը: Նա պատմում է, որ Զանկերի աքսորում վարուժանի շուրջ համախմբված «թուրք բանաստեղծությունների մասին իր քննադատություններուն կ'ունենդրէինք», երբ ներս են մտցնում

Ռուբեն Սևակին: Ռուբենը ներկաների հարցումներին ի պատասխան՝ «կը սկսի մանրամասնօրէն պատմել իր ձերբակալման պատճառը, մատնութեամբ միայն ձեռք անցուիլը... Ամենէն ղէպերն իսկ անփութօրէն եւ զուարթութեամբ կը նկարագրէր, ասիկա Ջիլինկիրեանին բնատուր յատկութիւնն էր»:

«Սևակի շէնշող եւ ընկերական ազնիւ բնավորութիւնը, շարունակում է Վ. Ալթունյանը, - պատճառ եղած էր, որ մենք ալ չբարոյալքուենք, որով իր իսկ թելադրութեամբ գետնզերեայ պարտէղներու մէջ փոքր պտոյտներ կը կազմակերպէինք...»: Վ. Ալթունյանը հիշում է նաև, որ Ռուբեն Սևակը չանկըրրցի թուրքերին այնպես էր բուժում, որ սկսել էին նրան աստվածացնել:

1915 թ. օգոստոսի կեսերին արսորյալներից առանձնացվում է 25 հոգանոց խումբ Պոլիս վերադառնալու համար: «Նոյն գիշեր, - պատմում է Վ. Ալթունյանը, - Ջիլինկիրեան զիս տեսնելու եկած էր, կ'ուզէր գաղտնի տեսակցութիւն մը ունենալ, հետաքրքրութեամբ կ'ընդունիմ առաջարկը, ուստի դուրս կ'ելլենք բացօթեայ տեղ մը երթալու համար: - Լաւ մտիկ ըրէ, Վահան, կ'ըսէ ինձ թրթռուն ձայնով մը, ես մահուան դատապարտուած եմ, ասով հանդերձ կեանքս քու ճարպիկութենէդ կախում ունի, աշխատէ որպէսզի ժամ առաջ ազատուիմ...»:

Չանկըրիի արսորում գտնվելու ժամանակ Ռուբեն Սևակը բուժում է նաև տեղացի թուրք պաշտոնյաններից մեկի ծանր հիվանդ աղջկան:

Ինչպես հաճախ է պատահում, այդ աղջիկը սիրահարվում է իր կյանքը փրկող բժշկին: Երբ թուրք պաշտոնյային հայտնի է դառնում այդ մասին, որոշում է կատարել աղջկա ցանկությունը: Նա Ռուբեն Սևակին առաջարկում է ամուսնանալ իր աղջկա հետ և ընդունել մահճակալանություն, եթե ուղում է կենդանի մնալ: Ռուբեն Սևակը կտրականապես մերժում է այդ առաջարկությունը:

Թուրք պաշտոնյայի առաջարկության մասին Ռուբեն Սևակը Վ. Ալթունյանին հայտնում է հետևյալը, որը մեջբերում եմ ամբողջութեամբ. «Հոս իթիհադական Չէթէ Բէիսի Արապաճը Պաշը ըստած արարածին աղջիկը անյոյս վիճակի մէջ հիւանդ էր, խնամելու համար զիս կանչեցին, լաւ առիթ մըն էր, այդ

կարգի գազան մը ձեռք ձգելու, ուստի ամէն ճիգ ու ջանք ի գործ դրի աղջիկը ստոյգ մահուընէ մը փրկելու, յաջողութիւնս կատարեալ եղաւ, աղջիկը բուժուած էր: Ժամանակ մը վերջ այդ մարդակերպ անասունը զիս տուն հրաւիրեց, սենեակին մէջ առանձին էինք, սկսաւ շնորհակալ ըլլալ, եւ խօսքը շարունակելով՝ «Աղջկանս կեանքը ինձ շնորհած ըլլալուդ յաւիտեան երախտապարտ եմ, ուստի կը փափագիմ որ ես ալ փոխարինեմ, ահա առիթը ներկայացած է, Պոլսոյ կեդրոնը մահուանդ վճիռը արձակած է եւ գործադրութիւնը հոս հրամայուած է: Բայց դուն անհոգ եղիր, քանի որ դուն ալ աղջիկս ազատեցիր, ես քեզ պիտի ազատեմ, միայն մէկ պայմանաւ, այսինքն պէտք է անմիջապէս իսլամանաս եւ աղջիկս կնութեան առնիս: Արդէն մեղք չէ՞ որ քեզի պէս գեղեցիկ եւ ֆիտան մէկը կեաւուր մնայ»: – Բայց պէյ, ըսի, ես արդէն ամուսնացած եմ, կինս գերմանուհի է, Ֆոն Տէր Կոլց փաշայի թիկնապահներէն գերման սպայի մը քոյրն է, երկու զաւկի ալ հայր եմ, այդ ինչպէ՞ս կարելի է: – Էհ, լաւ, պատասխանեց անայլայլօրէն, շատ մեղք պիտի ըլլայ երիտասարդութեանդ, որովհետեւ վստահ եղիր, եթէ նոյնիսկ յաջողիս Պոլիս երթալու հրաման առնել, քաղաքէն դուրս ելլելուդ անպայման պիտի սպաննուիս, ուրեմն 15 օր միջոց կուտամ, լաւ խորհէ՛»: Ալ պատասխանել անօգուտ էր. «շատ լաւ» ըսի ու մեկնեցայ:

Ռուբեն Սևակն ընկերոջը հանձնարարում է, որ Պոլիս հասնելիս նրա առաջին գործը լինի հանդիպել Կոմիտաս վարդապետին, նրա հետ գնալ իր տուն և տիկնոջը պատմել ամեն բան, քանի որ «նա գիտէ, թէ ուր պիտի դիմէ, ինձի ապահով կերպով ուրիշ տեղ մը փոխադրելու ճարը գտնելու...»: »: («Հայ բուժակ», Կ. Պոլիս, թիվ 3-4, 1920):

Իրերի բերումով Վ. Այթունյանին տեղափել են այլ աքսորավայր, ու այդպես էլ չի կարողացել կատարել Ռուբեն Սևակի խնդրանքը:

Հովհաննես Զիլինկիրյանը պատմում է, որ 1970 թ. ձայնագրել է Ռուբեն Սևակի քրոջ՝ Հայկանուշ Չեիկյան-Զիլինկիրյանի հուշերը, որտեղ նա հայտնում է որոշ փաստեր եղբոր մասին: Հայկանուշը հիշել է նաև, որ Ռուբեն Սևակը մերժել է թուրքի

պահանջը՝ ասելով, թե «անունիս պէս պիտի չսեւցնեմ իմ հոգիս թրքանալով»:

Ինչպես վկայում է Հ. Զիլինկիրյանը 1990 թ. նշանավոր պատմարան Վահան Տատրյանը Նյու Յորքում հայտնաբերում է 1920 թ. Պոլսում հրատարակված «Հայ բուժակ» թերթը, որտեղ էլ տպագրվել էին Վ. Ալթունյանի վերոհիշյալ հուշերը, որոնք հաստատում էին Հայկանուշի պատմածը: («Նայիրի», 2 մայիսի, 2000):

1915 թ. օգոստոսի 26-ին ոստիկանները Ռուբեն Սևակին, Դանիել Վարուժանին երեք այլ աքսորյալների հետ միասին երկու կառքով, Չանկըրիից տարան Այաշի ուղղությամբ: Նույն օրն էլ, ճանապարհին, Ռուբեն Սևակը, Դանիել Վարուժանը և մյուսները դաժան խոշտանգումներով սպանվում են: (Յուշարձան ապրիլ տասներմեկի, Կ. Պոլիս, 1919, էջ 113-121):

1922 թ. «Հայաստանի կոչնակ» հանդեսում հրատարակվել են Հովհան վարդապետ Կարապետյանի հուշերը: Նա նույնպես որպես աքսորյալ գտնվում էր Չանկըրի քաղաքում, Ռուբեն Սևակի հետ միասին: Վարդապետը հայտնում է, թե Ռուբեն Սևակը թուրքի առաջարկությունը մերժել է, որպեսզի հավատարիմ մնա իր կրոնին:

Սակայն, Ռուբեն Սևակը մերժել էր կրոնափոխ լինելու առաջարկը ոչ թե նրա համար, որ ուզում էր հաստատ պահել «քրիստոնեական հաւատքը»: Այլ մերժման համար կար այլ, ավելի մեծ պատճառ:

Ռուբեն Սևակը լավ էր հասկանում, թե ինչ ազդեցություն կունենար իրենց իսլամացումը գավառներում ապրող անօգնական հայություն վրա և համոզված էր, որ այդ փաստն, անկասկած, նրանց մոտ մեռցնելու էր պայքարի ոգին, կոտրելու էր դիմադրելու կամքը, վերջնականապես նետելու էր հուսահատություն մեջ:

«Եթե,- ասել է Ռուբեն Սևակը,- մենք իսլամանանք կամ ընդունինք թուրքին ըսածները, մենք մեր դատին դաւաճանած կ'ըլլանք: Մենք առաջնորդներ ենք Հայ ժողովուրդին: Թրքանալը նուաստանալ է: Եթէ մենք դաւաճանենք մեր դատին, ժողովուրդը պիտի կորսնցնէ իր հաւատքը պայքարի: Մենք օրինակ

պիտի ըլլանք անոնց: Մենք պիտի մեռնինք, որ Հայ ազգը ապրի»: (Հ. Զիլինկիրեան, Ռուրէն Սևակի գաղափարականը, էջ 17):

Սա էր իմ համոզմամբ Ռուրեն Սևակի համար կարևորը:

«ՎԵՐՋԻՆ ՕՐՕՐ»

Հուշագիրներից ոմանք Ռուրեն Սևակի սպանությունը վերագրում են այն թուրք աղջկա հորը, որն իբր թե դրանով վրեժ էր լուծում Ռուրեն Սևակից իր առաջարկությունը մերժելու համար: Ինձ թվում է, որ այդ միջոցով Հուշագիրները ձգտել են իրողությունը գունադարդել, գուցեև դրան գեղարվեստական շունչ տայ: Նրանց ցանկություն դեմ ոչինչ չունեմ, բայց կա մեկ և, իմ համոզմամբ, ավելի կարևոր հանգամանք:

Ռուրեն Սևակի սպանությունը պետական մակարդակով նախապատրաստված հանցագործություն էր, որին տեղյակ էին Կ. Պոլսում գտնվող գերմանական դիվանագետները: Այդ հանցագործությունն իրականացրին «Թեչքիյաթի մախսուսա» հատուկ կազմակերպության ավաղակները:

Ռուրեն Սևակի սպանությունը պատահականության հետևանք չէ: Նրա սպանությունն իրագործվել է թուրքական պետության ուղղակի հանձնարարությամբ:

1917 թ. Կ. Պոլսում թուրք կեղծարարները ֆրանսերեն հրատարակեցին մի ծավալուն գիրք, որով փորձել են արդարացնել հայերի նկատմամբ գործադրած բռնությունները, որոնք իբր թե մինչև 1915 թ. հետապնդել են թուրքական պետությունը տապալելու նպատակ: Գրքում ղետնղված են նաև դիակներ պատկերող բազմաթիվ լուսանկարներ և դրանք ներկայացվում իբրև հայերի կողմից սպանված թուրքեր:

Այդ գրքում, որպես ապացույց, թե հայերը նպատակ են ունեցել տապալել թուրքական պետությունը, հիշատակել են միայն Ռուրեն Սևակին, հրապարակելով նրա «Վերջին օրօր» բանաստեղծությունը:

«Օրօր, օրօր...օրօր ըսեմ քնանաս,
 Վիրաւոր Հօրըդ ճիչերն ալ չ'իմանաս:
 Ծիծէս ծրծածըդ թոյն է, կաթ չի գիտնաս...
 Օրօր ըսեմ քնանաս:
 Արիւն-հեղեղ յորդեց այս սուրբ ձորերէն,
 Բայց չի փախիս, փարէ երկրիդ, զայն սիրէ,
 Հողիդ վըրայ գերի մի ըլլար, այլ տիրէ...
 Օրօր ըսեմ քնանաս:
 Հօրըդ վըրայ եթէ անշո՛ւնչ չինկայ ես,
 Զի ուխտեցի Հրոտմի էգ գայլին պէս,
 Նոր Ռոմուլոս մը դիեցնել ստինքէս...
 Օրօր ըսեմ քնանաս:
 Բազուկներուս՝ պարան, ոտքիս ալ՝ կացին,
 Ստինքիս զոյգ պտուկներն, ա՛հ կտրեցին:
 Վէրքէս՝ արիւնըս ծծէ որդեակ միածին...
 Օրօր ըսեմ քնանաս:
 Ահա կ'իյնամ...Հայաստանը Մայր քեզի:
 Կտակ կուտամ այս կոտորած Սուրն երկաայրի՝
 Ուր Հայրիկիդ դեռ տաք արիւնը կ'այրի...
 Օրօր ըսեմ քնանաս»:

Ուշադրությամբ կարդանք այս բանաստեղծութիւնը: Ռու-
 բեն Սևակն այստեղ պատկերում է իր հարազատ օջախում
 սպանված ամուսնու համար ողբացող մահացու վիրավոր կնոջը,
 որը զավակին հորդորում է փարվել հայրենի երկրին, սիրել
 նրան, երբեք հայրենի հողի վրա գերի չմնալ և տեր կանգնել
 նրան: Եվ մահամերձ մայրը որդուն պատգամում է, որ իրենից
 հետո Հայաստանը կլինի որդու մայրը և նրան կտակում է սուրը,
 թեև կոտորած, որ վրեժ լուծի բարբարոսներից:

Ահա, թե ինչ էր ասում Ռուբեն Սևակը իր «Վերջին օրօր»
 բանաստեղծութիւն մեջ: Ինչպես տեսանք, այնտեղ որևէ ակ-
 նարկ չկա թուրքական պետութիւնը կործանելու մասին, այլ
 խոսքը վերաբերում է հայոց հայրենի հողը զավթիչներից
 սլաշտպանելուն, անհամար դոհերի վրեժը լուծելուն:

«ԱՆ...ԿՐՆԱՅ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՏՔԻ ՀԱՆԵԼ...»

Ռուբեն Սևակի ձերբակալությունից ու արսոր տարվելուց անմիջապես հետո, նրա կինը՝ Յանին, որպես գերմանական հպատակ, սկսեց միջոցներ ձեռնարկել իր ամուսնուն փրկելու և արսորից ետ վերադարձնելու համար:

Յանին Կ. Պոլսում հանդիպում է երիտթուրքերի միջավայրում մեծ հեղինակություն վայելող Հայիտե էղիպ խանումին և խնդրում միջամտել ամուսնուն արսորից ազատելու և ետ վերադարձնելու համար: Հայիտե էղիպը իսլամացած հրեայի խորամանկ ու ճարպիկ աղջիկ էր: Լինելով Թալեաթի սիրուհին՝ նա մեծ ազդեցություն ուներ երիտթուրքերի միջավայրում: Հայտնի էր որպես բանաստեղծուհի և հրապարակախոս: Ղեկավարում էր որրացած հազարավոր հայ երեխաներին իսլամացնելու գործը: Պատերազմից հետո դարձավ Մուստաֆա Քեմալի սիրուհին և հանդես էր գալիս երիտթուրքերի դատապարտմամբ:

Հայիտե էղիպը սառնասրտորեն մերժում է Յանինի խնդրանքը՝ ասելով, թե «տոքթոր Ռուբեն Սևակը ուրիշ մեծ յանցանք մը ունի, ան ալ, շատ լաւ գրելու եւ խօսելու կարողութիւն ունենալն է: Ան մեծ ազդեցութիւն ունի հայ ժողովուրդին վրայ, իր խօսքերովը եւ իր գրութիւններովը կրնայ հայ ժողովուրդը ոտքի հանել: Այս է իր յանցանքը»: («Նայիրի», 15 փետրվարի, 1982):

Տիկին Սևակը մշտապես դիմում էր նաև Կ. Պոլսի ոստիկանապետ Պետրի բեյին՝ նրան խնդրելով, պահանջելով լուր հաղորդել իր ամուսնու գտնվելու վայրի մասին: Ոստիկանապետը խորամանկում էր և ամեն անգամ մի սուտ հորինում՝ ասելով, թե Ռուբեն Սևակին պետք է ուղարկեն Գերմանիա, կամ էլ՝ շուտով նրան կազատեն: Բայց այս խաբույթները երկար չէր կարող շարունակվել և, ի վերջո, տիկին Սևակը ոստիկանապետի երեսին չպրտում է՝ «կը խաբես զիս, կը խաբես զիս»: («Արարատ», 14 հունվարի 1993):

Ռուբեն Սևակի կինը չէր հաշտվում դառն իրողության հետ և մեծ հույսեր փայփայելով՝ դիմում է Գերմանիայի դեսպան Վանհենհայմին: Բայց խորամանկ ու հայատյաց դիվանագետը

ամեն անգամ հրաժարվում էր ընդունել Յաննիին՝ իր շատ դրադվածությունը պատճառաբանելով: Ի վերջո, դեսպանը նահանջեց տիկին Սևակի համառություն առջև ու օգոստոսի մեջ ընդունեց նրան: Օգնության փոխարեն Վանհենհայմը տիկին Սևակի խնդրանքին պատասխանեց՝ ասելով. «Դուն թշուառական գերմանուհի, լքեցիր աղգո, ամուսնացար այս հայուն հետ եւ հիմա կուգաս խնդրելու, որ աղատես դինքը: Ան ետ պիտի չգայ մէջ մըն ալ: Անոնք մեռնելու գացին»: (Նույն տեղը):

Տիկին Սևակին մնում էր դեսպանին տալ արժանապատիվ պատասխան. «Մանչ դաւակ մը ունիմ: Անիկա պիտի մեծցնեմ այնպէս, որ օր մը պիտի գայ իր հօր վրէժը առնէ գերմանացիներէն»: (Նույն տեղը):

Այժմ, կարծում եմ, շատ կարևոր է պարզել այն հարցը, թե ինչու էր գերմանական դեսպանը հրաժարվում ընդունել Ռուբեն Սևակի տիկնոջը և ինչու այդ դեսպանությունը չօգնեց Ռուբեն Սևակին աղատելու և վերադարձնելու համար:

«Թեչքիլաթի» կաղմակերպմանն ու գործունեությանն ակտիվ մասնակցում էին գերմանացի շատ սպաներ, որոնք, ըստ էության, գործնական ու կարևոր դեր էին խաղում: Գերմանիայի դեսպան Վանհենհայմը, որը հայտնի էր իր հայատյացությունամբ, անպայման տեղյակ էր «Թեչքիլաթի» ծրագրերին ու գործողություններին:

Ռուբեն Սևակի նկատմամբ ֆիզիկական հաշվհարդարի հարցը որոշված էր «Թեչքիլաթի», ավելի ճիշտ՝ թուրքական պետության մակարդակով: Այդ մասին գիտեր գերմանական դեսպանը և դրա համար էլ տևական ժամանակ խուսափում էր ընդունել Ռուբեն Սևակի տիկնոջը:

Հետագայում էլ գերմանական դեսպանատունը խուսափողական պատասխաններ էր տալիս Յաննի Սևակի ու նրա ծնողների դիմումներին՝ կեղծելով իրականությունը: Այդ մասին է վկայում գերմանական դեսպանատան պատասխանը ուղղված Ֆրանց Աբելին: Ահա այն.

«Գերման կայսերական դեսպանատուն

Բերա, 15 սեպտեմբերի 1915

Յարգարժան պարոն Ֆրանց Աբել.

...Ինչ կը վերարերի ձեր բժիշկ Չիլինկիրեան կոչուող փեսին հարցին, անպայման տիկին Արելի ճամբով տեղեակ եղած էք, թէ վերը անունը նշուող անձը օգոստոսի վերջաւորութեան, Չանդըրըէն Անկարա դացող ճամբուն վրայ ոճրագործներու ձեռքով սպաննուած է:

Գերման կայսերական դեսպանատունը այս հարցին այս տեսակ տխուր վերջաւորութիւն մը ունեցած ըլլալուն համար իր վշտակցութիւնը կը յայտնէ և կայսերական հիւպատոսարանին հետ գործակցարար, տիկի Արելին, իր աղջկան և իր թոռնիկներուն հետ անվտանգ Գերմանիա վերադարձին ապահոված է:

Կ'ուղեմ նաև աւելցնել, թէ Բարձրագոյն դոնէն ստացուած տեղեկութեան համեմատ ոճրագործներուն չորսը, որոնց դոհը եղած է ձեր փեսան, ձերրակալուած են և միւսներուն հետապնդումը կը շարունակուի»: («Նայիրի», 15 ապրիլի, 2003):

Անշուշտ, այսպիսի պատասխանը չէր կարող բավարարել Յաննի Սեակին ու նրա ծնողներին, որոնք էլ դիմեցին գերմանական կառավարութեանը: Այս անգամ դեսպանատունը ավելի ընդգծված ցինիզմով լեցուն գրութիւն է ուղարկում իր կառավարութեանը:

Ժամանակին Լեիսիուսը հրապարակել է գերմանական դեսպանատան այդ պատասխան գրութեան միայն երկրորդ մասը, հասկանալի պատճառով խուսափելով դրա առաջին հատվածը հանրութեանը հայտնի դարձնելուց:

Ավելի ուշ սփյուռքահայ անվանի պատմաբան, Հայոց ցեղասպանութեան պատմագրութեան մեջ մեծ վաստակ ունեցող Վահագն Տատրյանը գերմանական արխիվներից հայտնաբերել է այդ գրութեան ամբողջական տեքստը, որին ծանոթանալը շատ հարցերի պատասխան է տալիս: Հենց դա էլ նկատի ունենալով ստորև այդ փաստաթղթի լրիվ տեքստը Վ. Տատրյանի թարգմանութեամբ ներկայացնում եմ ընթերցողի ուշադրութեանը:

**«Առ կայսերական վարչապետ գերմանական
կայսերական դեսպանատուն,**

Բերա, 5 Հոկտեմբերի, 1915

Բժիշկ Ռուբէն Զիլինկիրեան, որ հայ շրջանակներու մէջ ծանօթ անձնաւորութիւն մըն է, ուրիշ շատ մը հայերու հետ ապրիլ 24-ին ձերբակալուեցաւ Անատոյու արսորուելու նպատակաւ: Նախապէս որոշուած էր, որ ան Անքարայի մօտ՝ Այաշ արսորուի, տեղ մը, ուր կը պահուին և մասամբ ոստիկանական հսկողութեան տակ կը գտնուին աւելի ծանր կերպով մեղադրուողները: Դեսպանատան միջամտութեան շնորհիւ, ան Չանկիրրի (Անքարա) մէջ արգելակուեցաւ, ուր արգելակեալները կրնան ազատ կերպով ման գալ և իրենց արհեստները կիրարկել:

Տիկին Տոքթ. Զիլինկիրեան և մայրը՝ Տիկ. Արէլ այնուհետև աշխատեցան ենթակայի վերադարձը և ապա իր Գերմանիա հաստատուիլը ապահովել: Թուրք կառավարական պաշտօնեաները երկու առաջարկներն ալ մերժեցին, սակայն այն առարկութեամբ, որ, ինչպէս կը հետևի խնդրոյ առարկայ պաշտօնեաներու արտայայտութիւններէն-Տոքթ. Զիլինկիրեան կը նկատուի իբրև մէկը այն մտաւորականներէն, որուն զանգուածներու վրայ ունեցած ազդեցութենէն կը վախցուի (ընդգծումն իմն է՝ Վ. Պ.): Տիկ. Արել դեսպանատան մէջ պնդեց, որ ոստիկանական ընդհանուր տնօրէն Պետրի պէյ ըսած էր, որ ապահով պայմաններու տակ Գերմանիա ճամբորդելու արտօնութիւն կրնար տրուիլ Տոքթ. Զիլինկիրին: Երբ կայսերական դեսպանատունէն պաշտօնեայ մը Պետրիի հարցուց սակայն թէ՛ իրա՞ւ էր ասիկա, ան բացարձակ կերպով հերքեց այդպիսի արտայայտութիւն մը ունեցած ըլլալը:

Վերջապէս երկու տիկինները փորձ մըն ալ ըրին Տոքթ. Զիլինկիրեանի Անքարա մնալու արտօնութիւն ձեռք ձգելու ուղղութեամբ՝ այն պահուն, երբ իրմէ օգոստոս 26-ին, հետագիւր մը ստացան որ կը ծանուցանէր թէ՛ դինքը նոյն օրը Այաշ պիտի փոխադրէին:

Դեսպանատան գրաւոր դիմումին վրայ՝ ներքին գործոց նախարարութիւնը հետագրով հրահանգ սուլաւ, որ վերոյիշեալը

Չանկրրրի մէջ թողուն և ևթէ ճամբայ հանուած է, զինքը հող վերադարձնեն:

Այս հեռագիրին ի պատասխան օգոստոս 30-ին Չանկրրրի կառավարիչը կը ծանուցանէր, թէ Տ. Չիլինկիրեանը ամսոյն 26-ին Չանկրրէն մեկնած, Գալէճիքի մօտերը ասպատակներու կողմէ յարձակումի ենթարկուած և սպաննուած էր և թէ 12 ասպատակներէն 4-ը իշխանութիւններու կողմէ ձերբակալուած էին: Ասոր վրայ, կայսերական ղեսպանատան ընծայած օգնութեամբ, որուն համար կայսերական ղեսպանատունը ընդհանուր հիւպատոսարանի հետ շփման մէջ մտած էր, Տիկին Չիլինկիրեանը իր մօրը Տիկ. Արելի և երկու զաւակներուն հետ նախորդ ամսու 16-ին առանց թուրք իշխանութիւններէն նեղութիւն կրելու Գերմանիա մեկնեցան:

Դեսպանատան ղիմումին վրայ ներքին գործոց նախարարութիւնը հրահանգ ուղարկեց ստուգելու համար մեռեալի մօտ գտնուած արժէքաւոր իրերը և առարկաները, և այրիին վերադարձնելու նպատակաւ «հոս դրկելու» ինչ որ կարելի կ'ըլլար տակաւ ձեռք բերել:

Երբ Տիկ. Արել իր ամուսնոյն ղրկած տեղեկութիւններուն մէջ կ'ակնարկէ որ ղեսպանատունը «որոշ չափով», որով, ըստ իր ըմբռնումին, ոչ գոհացուցիչ կերպով օգնութիւն ընծայած է իրեն և ղստեր, ան՝ աննկատ կը թողու այն պարագան, որ ղեսպանատունը իր ղստեր և փեսային համար միայն անպաշտօն սահմանափակումներով կրնար ղիմումներ ընել թուրք կառավարութեան մօտ, քանի որ երկուքն ալ թրքահպատակ էին: Այս ուղղութեամբ ղեսպանատունը ոչ մէկ բան զանց առած է և մինչև իրենց մեկնումը, Տիկ. Արել և իր ղստերը, իրենց բոլոր գործառնութեան մէջ թէ խորհուրդով և թէ գործով օգնութիւն ստացած են:

Փոխանորդարար՝ Ֆրայհեր ֆոն Նեյրաթ»:

Սակայն Յաննի Սեակը չէր հաշտվում կատարվածի հետ և շարունակարար ղիմում էր գերմանական կառավարութեանն ու ղեսպանատանը՝ պահանջելով հայտնել ճշմարտութիւնն իր ամուսնու սպանութեան մասին և պատժել ոճրագործներին:

Ի պատասխան Յաննի Սեակի հերթական ղիմումին, 1915 թ.

ղեկտեմբերի 8-ին դեսպանությունը գրել է.

«Գերման կայսերական դեսպանատուն,

Թիւ 10860, Բերա, 8 դեկտեմբերի 1915,

Տիկ. Հելեն (Յաննի) Չիլինկիրեան, Լոզան

(Թրքական) ներքին նախարարութեան տուած տեղեկութեան համաձայն, ձեր հանգուցեալ ամուսինին գողցուած իրեղէններէն մէկ մասը վերագտնուած է եւ դատական իշխանութեան յանձնուած:

Այս իրեղէններուն մէջ կը գտնուին երկու մատանիներ եւ կոճակ մը:

Այս իրեղէնները հոս՝ Պոլիս բնակող եւ ձեր փոխանորդագիրը ունեցող անձնաւորութեան մը միջոցաւ, ձեզի պիտի յանձնուին:

Այս փոխանորդագիրը դուք կրնաք հայթայթել ձեր բնակած տեղւոյն հիւպատոսարանէն, վաւերացնելով նաեւ նոյն հիւպատոսարանէն, որ հանգուցեալին ժառանգորդները դուք եւ ձեր երկու դուակներն են:

Այս պատեհութեամբ (Թրքական) ներքին գ. նախարարութիւնը կը տեղեկացնէ, թէ ձեր ամուսինին եւ իր ճամբու ընկերներուն վրայ յարձակումը կատարուած է 15 (28) օգոստոս 1915 թուականին:

Եւ ձեր ամուսինին մահը՝ փամփուշտի վէրքի հետեւանքով յառաջ եկած է:

Կայսերական դեսպան՝ Փոն Նեյրաթ»: («Նայիրի», 15 ապրիլի, 2003):

Յաննի Սևակին հստակ պատասխանելու փոխարեն դեսպանությունը թաքցնում է Ռուբեն Սևակին մորթոտելով սպանելու հանգամանքը և շեշտը դնում նրանից գողացած իրերը գտնելու վրա:

Ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում գերմանական դեսպանատան ցինիղմով լեցուն վերոհիշյալ գրությունները ստորագրողի ազգանվանը, որի տերը՝ փոխարինել էր արդեն մեռած դեսպան Վանհենհայմին: Ենթադրում եմ, որ այսօրվա ընթերցողներից շատերին հավանաբար հայտնի չէ այդ ոճրագործը, ուստի փորձեմ համառոտ ներկայացնել նրան:

Ինչպես վերևում նշվել է, Թեչքիլաթի կաղամակերպմանն ու գործունեությունն ակտիվ մասնակցում էին գերմանական սպաներն ու դիվանագետները: Նեյրաթը մեկն էր այն գերմանական դիվանագետներից, որը ոչ միայն ուղղակի տեղյակ էր ամեն ինչից, այլև ուղղություն էր տալիս երիտթուրքական հանցագործներին...

Անցան տարիներ: Եվ Նեյրաթն ու Թուրքիայում գործող գերմանական շատ սպաներ ու դիվանագետներ հայտնվեցին Հիտլերի կողքին, դարձան նրա դիվային ծրագրերի մոլի իրագործողներ: Այդ նրանք էին, որ Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին ավելի կատարելագործեցին մարդկանց մասսայական ոչնչացման միջոցները: Այդ ճիվաղների մեջ առանձնապես աչքի ընկավ Փոն Նեյրաթը:

Պատերազմից հետո Փաշիստական պարագլուխների թվում Փոն Նեյրաթը նույնպես կանգնեց Նյուրնբերգյան դատարանի առջև որպես պատերազմի հանցագործ ու Հիտլերի մերձավորագույն դինակից:

Դատավարությունն ընթացքում Փոն Նեյրաթը խորամանկում էր, դրսևորում ցինիզմ, ձգտելով իր վրայից զցել պատասխանատվությունը: Սակայն նրա բոլոր փորձերը ձախողվեցին՝ հանդիպելով մեղադրող կողմի անառարկելի փաստերին: Նեյրաթը պատերազմի գլխավոր հանցագործների թվում ստացավ իր արժանի պատիժը:

ՅԱՆՆԻ ՍԵՎԱԿԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ

Ռուբեն Սևակի այրին երկու զավակների ու մոր հետ 1915 թ. սեպտեմբերի 16-ին Կ. Պոլսից մեկնեց Շվեյցարիա: Պատերազմի ավարտից հետո Յաննին զավակների հետ վերջնականապես հաստատվեց Ֆրանսիայում: Նա վճռականորեն մերժեց ու չընդունեց գերմանական հպատակություն և ապրեց Նանսենյան անձնագրով և մինչև կյանքի վերջը գերմաներեն ոչ մի բառ չարտասանեց և իր զավակներին էլ գերմաներեն չսովորեցրեց:

Ժամանակակիցները Ռուբեն Սևակի կնոջը՝ Յաննիին բնորոշում էին որպես «գեղեցիկ հոգիով ու գեղեցիկ դէմքով յարաժպիտ տիկին»: («Երջանիկ տարեգիրք», 1961, էջ 46):

Ամուսնուն կորցնելուց հետո Յաննին մերժեց բոլորին, ովքեր խնդրում էին նրա ձեռքը: Մերժեց ու մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց այն մարդուն, որը նրա առաջին ու միակ սերն էր եղել: Մերժեց, որովհետև երգվել էր իր ու Ռուբեն Սևակի դավակներին պահել ու մեծացնել որպես հայ...

Ռուբեն Սևակի ավագ դավակը՝ Լևոնը, ծնվել է 1914 թ.: Մեկ տարեկան էլ դեռ չկար, երբ դոհվեց հայրը: Դուստրը՝ Շամիրամը, ծնվեց 4. Պոլսում 1915 թ.: Հետաքրքիր է, որ արսոր տարվելուց մի քանի օր առաջ Ռուբեն Սևակի հրավերով Կոմիտասը, որի հետ նա ուներ ջերմագին մտերմություն, կատարում է Շամիրամի կնունքի արարողությունը:

Ռուբեն Սևակի մահից հետո Յաննին երգվեց իր ամբողջ կյանքը նվիրել հորից որրացած դավակներին՝ Լևոնին ու Շամիրամին:

1919 թ. Յաննի Սևակը դիմեց Փարիզում գտնվող Հայաստանի Հանրապետության պատվիրակության գեկավար Ավետիս Ահարոնյանին, խնդրելով օգնել իր դավակներին հայկական կրթության տալու գործում:

Ստանալով «քաղաքավարի» մերժում, Յաննիին այլևս չհաջողվեց դավակներին տալ հայկական կրթություն:

Նույնիսկ դժվար է պատկերացնել, թե այդ անվահեր կինը, դրկված արյունակից հարազատների ուշադրությունից, կորցրած սիրելի ամուսնու հարազատներին, ինչպիսի ծանր զրկանքների ու տառապանքի գնով փրկեց իր երկու մանկահասակ դավակներին և նրանց դաստիարակեց իրենց հոր՝ Ռուբեն Սևակի հիշատակին հավատարիմ մնալու ոգով:

1939 թ. սեպտեմբերի 1-ին սկսվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը: Այս անգամ էլ դարձյալ Գերմանիան էր նախահարձակը: Հիտլերյան ֆաշիզմը մոլեգնում էր Եվրոպայում: Ֆրանսիան նույնպես պարտվեց: Ֆաշիստական զորքերը մտան Փարիզ: Ֆրանսիայում կաղմակերպվեց հորը դիմադրական շարժում: Ռուբեն Սևակի այրին՝ այնզարդ Յաննին, իհարկե, չէր մո-

ուացել իր կրողումը, որ 1915 թ. մղձավանջային օրերին շարտել էր գերմանական դեսպան Վանհենհայմի կրեսին. «Մանչ զաւակ մը ունիմ: Անիկա պիտի մեծցնեմ, այնպէս, որ օր մը պիտի գայ իր հօր վրէժը պիտի առնէ գերմանացիներէն»:

Ահա և հասել էր վրեժի պահը: Եվ այնպարզ մայրը իր միակ որդուն՝ Լևոնին ճանապարհեց մարտադաշտ: Լևոնը մտավ ֆրանսիական դիմադրական շարժման մեջ: Աչքի էր ընկնում համարձակությամբ, մարտական ընկերների նկատմամբ արտակարգ հոգատարությամբ:

Պատերազմն ավարտվեց ֆաշիստական Գերմանիայի պարտությամբ: Ֆրանսիայի ազատագրմանը իր որդու՝ Լևոնի մասնակցությունը տիկին Յաննին հպարտորեն համարում էր որպես հատուցում, որպես վրեժ գերմանացիներից իր սիրելի ամուսնու՝ Ռուբեն Սևակի ողբերգական մահվան համար:

Ռուբեն Սևակի դուստրը՝ Շամիրամն ապրում է Ֆրանսիայի Նիս քաղաքում: Այժմ նա 94 տարեկան է: Ամեն տարի հաղթահարելով մեծ դժվարություններ, նա գալիս է Հայաստան, հանդիպում Երևանի Ռուբեն Սևակի անվան դպրոցի աշակերտներին և ուսուցիչներին, հետաքրքրվում նրանց կյանքով, ուրախանում ձեռքերբաժ հաջողությունների համար:

Չնայած իր տարիքին, կյանքում տեսած շատ փորձություններին, Տիկին Շամիրամը չի մոռանում իր որբացած մանկության թողած ծանր հետևանքները, բայց և լի է կենսախնդրությամբ:

- Հայրս կյանքից հեռացավ շատ երիտասարդ տարիքում և ճակատագիրն ինձ է հանձնել հորս չապրած տարիները,- ասում է նա:

2006 թ. սեպտեմբերին, երբ Տիկին Շամիրամը հերթական անգամ եկել էր Հայաստան, ցանկություն հայտնեց գնալ Ոոր Վիրապ և հետո տեսնել Նորատուսի խաչքարերը: Հաճույքով ուղեկցեցի նրան: Առաջին անգամ էր Շամիրամը լինում Սևանա լճում, հետաքրքրությամբ դիտեց Աշոտ Երկաթի բերդի ավերակները, հիացավ Սևանի գեղեցկությամբ: Իսկ Նորատուսի խաչքարերի անտառի մեջ քայլելով, Շամիրամը դայրույթով ու հառաչանքով բացականչեց.

-Այսքան խաչապաշտ ժողովրդի նկատմամբ Աստվածն

ինչքան անարդար է եղել ու հիմա էլ շարունակում է վարվել նույն կերպ:

Ինձ մնում էր համաձայնվել այդ իմաստուն կնոջ կարծիքին...

...Յաննի Սևակը մահացել է 1967 թ. դեկտեմբերի 28-ին և իր վերջին կամքի համաձայն հողին է հանձնվել հայ եկեղեցական ծեսով, Ֆրանսիայի Նիս քաղաքում: Հուղարկավորության օրը Նիս քաղաքի Հայ Առաքելական Սուրբ Աստվածածին եկեղեցին մարդաչատ էր: Եկել էին բազմաթիվ հայեր Ֆրանսիայի տարրեր վայրերից ու Մերձավոր Արևելքի երկրներից:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու, որը մինչև իր կյանքի վերջը դրսևորել էր մեծագույն հավատարմություն իր առաջին ու միակ սեր Ռուբեն Սևակին:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու, որն ամբողջ կյանքի ընթացքում բարձր էր պահել իր ամուսնու՝ Ռուբեն Սևակի անունն ու պատիվը:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու, որը հանուն այդ հավատարմության, իր երկու դավակներին դաստիարակել էր Ռուբեն Սևակի գաղափարներով ու ոգով:

Եկել էին հրաժեշտ տալու մի գերմանուհու, որը մինչև կյանքի վերջը չներեց իր սիրելի ամուսնու ողբերգական մահվան մեջ մեղսակցության բաժին ունեցած գերմանական իշխանություններին:

Ինչո՞ւ այսպես հանգամանալի կերպով անդրադարձա Յաննի Սևակի կյանքին: Այս հարցին պատասխանելու համար նախ ուզում եմ հիշել ռուս մեծ բանաստեղծ Ալեքսանդր Պուշկինին: Եվ ահա թե ինչ առումով: Պուշկինը Ռուսաստանի պարծանքն է: Ռուսաստանի խորհրդանիշն է: Պուշկինն այդպիսին էր թե՛ իր կենդանության ժամանակ և թե՛ հետո, անցած ամբողջ ժամանակաշրջանում: Եվ այդպիսին էլ կմնա, քանի գոյություն կունենան ռուս ժողովուրդն ու Ռուսաստանը:

Ասում են, թե անփոխարինելի մարդ չկա: Պուշկինի կյանքի թելը ողբերգականորեն կտրվեց 1837 թ. հունվարի 29-ին, մեծամարտում ծանր վիրավորվելու հետևանքով: Նրա մահից անցել է 172 տարի, բայց մինչև օրս նրա տեղը ոչ մեկի չի հաջողվել դրադեցնել:

Պուշկինին չէր ընդունում ու ատում էր նրան պաշտոնական Ռուսաստանը: Նրանից այնպես էին սարսափում, որ նույնիսկ Նիկոլայ Առաջին ցարը ստանձնել էր մեծ բանաստեղծի գրաքննիչի դերը:

Բայց Պուշկինը մնաց ռուս ժողովրդի սրտում, և ինչպես ռուս Հանճարեղ գրող Ֆ. Դոստոևսկին էր ասում, Ռուսաստանում ամեն ինչ սկսվում է Պուշկինից, նկատի ունենալով ռուսական մշակույթի ու ռուսական ոգու բարեսրտությունն ու հումանիզմը:

Սակայն Պուշկինն անձնական կյանքում դժբախտ էր, որի «կերտման» մեջ, երևի թե, գլխավոր դերը պատկանում էր կնոջը՝ Նատալյա Գոնչարովային (Պուշկինա): Կալվածատիրոջ այս չփացած աղջիկը չէր հոգնում պարահանդեսներից, սեթևեթում էր երկրպագուների հետ և բոլորովին չէր հետաքրքրվում ամուսնու կյանքով ու շատ վատ էր կատարում իր պարտականությունները: Միայն պահանջում էր ճոխություն, որպեսզի ետ չմնար ցարական պալատի մշտական այցելուհիներից: Նա հաճախ էր իր թեթևամտությամբ վիրավորում ամուսնու ինքնասիրությունը՝ նրան ներքաշելով անվայելուչ բանասարկությունների մեջ, որոնց գազաթնակետն էլ եղավ ողբերգական ավարտով մենամարտը:

Պուշկինի զոհվելուց կարճ ժամանակ անց Նատալյա Նիկոլաևնա Գոնչարովա-Պուշկինան, թեև ուներ Պուշկինից չորս երեխա, ամուսնացավ գեներալ Պյոտր Լանսկու հետ: Նա անմիջապես փոխեց ազգանունը, մոռացավ ամեն ինչ, բացի Պուշկինի գրական ժառանգությունը թանկ գնով վաճառելու դրադմունքից...

Ռուբեն Սևակի կինը՝ գերմանուհի Յաննին, հանուն ամուսնու թողեց Շվեյցարիայում ունեցած բարեկեցիկ ու ապահով կյանքը և նրա հետ եկավ Կ. Պոլիս: Այստեղ, թուրքական մայրաքաղաքում, Յաննին հանուն ամուսնու արագորեն հաշտվեց նոր պայմաններին, հասկանում ու գնահատում էր Ռուբեն Սևակին և ամեն ինչով դարձավ նրա հավատարիմ նեցուկն ու հենարանը:

Յաննին անհուն սիրով կապված էր Ռուբեն Սևակին և ամուսնու գործը համարում էր իր գործը: Ռուբեն Սևակի ողբերգական մահից հետո Յաննին դրսևորեց արտասովոր կամք ու

վճռականություն: Նա մինչև կյանքի վերջը հավատարիմ մնաց իր ամուսնական երդումին և անդավաճան նվիրվեց երևիսաներին:

Ռուբեն Սևակն անձնական կյանքում երջանիկ էր, և այդ հանգամանքը մեծ դեր էր խաղում նրա գրական-հասարակական գործունեության համար: Պուշկինի դեպքում հակառակն էր: Նրան կինը չերջանկացրեց:

Երկու բանաստեղծ, երկու տարբեր ճակատագիր: Պուշկինը գրավեց իր արժանի տեղը և մինչև օրս ուս գրականության, ուսական հասարակական մտքի պատմության մեջ նրան ոչ ոք չի փոխարինել:

Ռուբեն Սևակի դեպքում այդպես չեղավ: Ռուբեն Սևակն աչքի ընկնող հասարակական-ազգային գործիչ էր: Միաժամանակ նա ոչ մի քաղաքական կուսակցության անդամ չէր, դրանցից ոչ մեկին չէր հարում ու համակրում, բայց և անաչառ դիրքերից հանդես էր գալիս թույլ տրված սխալների դեմ:

Հանգամանքների բերումով Ռուբեն Սևակի ստեղծագործական կարճատև կյանքի ընթացքում (1905-1915 թթ.) հայ իրականության մեջ դեկավար դերը ստանձնել էր դաշնակցությունը, որն իր գործունեությունը սխալներից տանում էր դեպի առավել կոպիտ սխալների, ենթարկվում էր Ռուբեն Սևակի սուր և արդարացի քննադատության:

Այս հանգամանքը, իմ խոր համոզմամբ, ունեցավ անչափ բացասական դեր Ռուբեն Սևակի գործունեությունը հետազայում պատշաճ գնահատելու համար: Հասկանալի պատճառներով մոռացության էին տրվում Ռուբեն Սևակի քաղաքական հայացքները, նրա գաղափարները: Լավագույն դեպքում նա ներկայացվում էր որպես լիրիկ բանաստեղծ, որը միայն սեր ու թիթևն է երգել:

«ԹՈՒՐՔԸ ՀԱՍԿՑԱԾ ԷՐ ՌՈՒԲԷՆ ՍԵՒԱԿԻՆ ՈՎ ԸԼԼԱԼԸ...»

Չնայած այսպիսի պայմաններին, բարերախտարար կար մեկը, որը տարիներ շարունակ միայնակ, հաղթահարելով բազում դժվարություններ, կարողացավ ոչ միայն մեկիկ-մեկիկ հավաքել տարրեր մարդկանց մոտ պահպանված Ռուբեն Սևակի նամակները, հոդվածները, գրառումները, անձնական իրերը, ստեղծել «Ռուբեն Սևակ մշակութային հիմնարկ» և «Ռուբեն Սևակի անվան հիշատակի տուն», միաժամանակ լայն գործունեություն ծավալել Ռուբեն Սևակի գաղափարները պաշտպանելու, դարգացնելու և տարածելու համար:

Այդ անձնագոհ մարդը Հովհաննես Չիլինկիրյանն է, Ռուբեն Սևակի եղբոր որդին, որը իրավացիորեն գտնում է, թե հայ գրականագիտական միտքը մեղավոր է Ռուբեն Սևակին բացառապես ներկայացնելով որպես միայն քնարերգակ բանաստեղծ: Մինչդեռ Ռուբեն Սևակը նաև հեղափոխական էր, Հայկական Հարցին ծառայած գրող մտավորական:

«Ռուբեն Սևակի դիմագծին այս երեսը, - ընդգծում է Հովհաննես Չիլինկիրյանը, - որ մութին մէջ մնացած էր, լուսաւորող մեր աշխատանքները այսպանուեցան: Յայտնուեցաւ այն միտքը, որ Ռուբեն Սևակը խեղաթիւրուած է»: («Արարատ», 14 հունվարի, 1993):

Իր այս անհանգստությունն ու անհամաձայնությունը Հովհաննես Չիլինկիրյանը հայտնել է «Մասիս» թերթում տպագրված պատասխանում: Սակայն հարձակումները չէին դադարում: Դրանց տոն տվողը «Հորիզոն» թերթն էր, որն իր էջերը բացել էր կեղծարարների և լույսից վախեցող խավարասերների առջև:

Հովհաննես Չիլինկիրյանն որպես պատասխան հիշեցնում է թուրքական արխիվներից հայտնաբերած մի փաստաթուղթ, որտեղ Ռուբեն Սևակը դիտվել է «վտանգաւոր դէմք մը իր խօսքի և գրչի կարողութիւններով»: Պատմելով այս մասին՝ Չ. Չիլինկիրյանը եզրակացնում էր. «Թուրքը հասկցած էր Ռուբեն Սևակին ով ըլլալը, բայց այս գրականագէտը՝ ոչ»: (Նույն տեղը):

Ինձ թույլ եմ տալիս չհամաձայնել Չ. Չիլինկիրյանի հետ, որ

կարծում է, թե «Հորիզոնի» «գրականագետ» հեղինակը չի հասկացել Ռուբեն Սևակին:

Հենց հասկանալով էլ այդպես է վարվել, որովհետև դաշնակցության գաղափարախոսներին բոլորովին էլ ձեռնտու չէ, երբ անկուսակցական Ռուբեն Սևակը ներկայացվում է որպես հեղափոխական ու աղգային գործիչ: Ըստ դաշնակցության գաղափարախոսների, եթե որևէ մեկը դաշնակցության անդամ չէ, ապա նա չի կարող հեղափոխական լինել, առավելապես՝ աղգային գործիչ, ավելի առավելապես՝ հայ:

Հովհաննես Զիլինկիրյանի հովանավորությամբ տպագրվել են հայ ժողովրդի պատմության, հայագիտության վերաբերյալ երեք տասնակից ավելի գրքեր: Նա մեծ ուշադրություն է դարձնում Երևանում գտնվող Ռուբեն Սևակի անվան դպրոցին և իր ուժերի ներածին չափով դանաղան հարցերում օգնում մանկավարժական կոլեկտիվին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ

2009 թ. մայիսի 2-ին 31 տարվա ընդմիջումից հետո վերջապես Ամենայն Հայոց Կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրավերով Հովհաննես Զիլինկիրյանը Հակոբ Ավագյանի ուղեկցությամբ ժամանեց Հայաստան:

Մայիսի 5-ին Թեքեյան մշակութային հաստատության կենտրոնում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո նվիրված Հովհաննես Զիլինկիրյանի պատվին: Սակայն այնպես ստացվեց, որ նախապես հաստատված ղեկուցողն ու ելույթ ունեցողները, չգիտես ինչու, մոռացան, թե ինչի համար են հավաքվել ու սկսեցին գովերգել մեր գրողներից մեկին, որը գիրք էր գրել Ռուբեն Սևակի մասին: Ստեղծվեց անհարմար իրավիճակ, որի մասին երեկոյի ավարտին իմ ամսոսանքն արտահայտեցի երեկոյի կազմակերպիչներին:

Վերջում ելույթ ունեցավ Հովհաննես Զիլինկիրյանը և ներկաներին հայտնելով շնորհակալություն, խոսեց Ռուբեն Սևակի մասին:

Երբ ավարտվեց երեկոն, ևս մոտեցաւ իմ մեծ բարեկամին: Մենք ջերմորեն ողջագուրվեցինք: Պայմանավորվեցինք հանդիպել հաջորդ առավոտյան:

Մայիսի 6-ին լրանում էր Ջոն Կիրակոսյանի ծննդյան 80-ամյակը և պետք է մասնակցելի նրա գերեզմանի պսակադրությանը: Երբ այս մասին իմացավ Հ. Ջիլինկիրյանը, նույնպես ցանկություն հայտնեց միանալ ինձ: Մենք և Հակոբ Ավագյանը ևղանք Ջոն Կիրակոսյանի տանը: Հովհաննես Ջիլինկիրյանին ներկայացրի Ջ. Կիրակոսյանի որդուն՝ Արմանին:

Հովհաննես Ջիլինկիրյանն Արմանին դիմելով ասաց, որ Ջոն Կիրակոսյանն արժանիորեն տեղ է գրավում այն ազնիվ հայ պատմաբանների ու դիվանագետների շարքում, որոնք ամենայն վճռականությամբ պաշտպանել ու պաշտպանում են հայկական հարցը՝ հանուն դրա արդարացի լուծման:

Հովհաննես Ջիլինկիրյանն ավստոսանք հայտնեց, որ Ջոն Կիրակոսյանը շատ շուտ հետացավ կյանքից, կիսատ թողնելով իր գործը:

Այստեղ նրան միջամտելով ասացի, որ տղան շարունակում է հոր կիսատ թողած գործը:

Մինչև գերեզմաններ գնալը դեռ կար ժամանակ և մենք դուրս եկանք Ջոն Կիրակոսյանի տանից, շրջեցինք Մարտիրոս Սարյանի դրոսայգում, լուսանկարվեցինք:

Մայիսի 7-ին Հովհաննես Ջիլինկիրյանը և Հակոբ Ավագյանը հյուր եղան «Հրաչյա Աճառյան» համալսարանում, հանդիպեցին ուսանողության հետ:

Հանդիպումը բացեց համալսարանի ռեկտոր Ավագ Խաչատրյանը: Հետո ելույթ ունեցաւ ես և բավականաչափ հանգամանորեն ներկայացրի մեր հյուրերին և խոսեցի Հովհաննես Ջիլինկիրյանի աղգային-մշակութային ու պատմագիտական գործունեության մասին: Պատշաճորեն խոսեցի նաև Հակոբ Ավագյանի գործունեության մասին և դրանով կարծես թե լրացրեցի Թեքեյանի կենտրոնում կատարված բացթողումը:

Այստեղ Հ. Ջիլինկիրյանը շատ հետաքրքիր ելույթ ունեցավ և ուսանողներին պատմեց Ռուբեն Սևակի կյանքի ու գործունեության մասին:

Համալսարանի գիտական խորհրդի և ռեկտորատի որոշմամբ Հովհաննես Չիլինկիրյանին ու Հակոբ Ավագյանին շնորհվեց պատվավոր պրոֆեսորի կոչում: Դիպլոմները նրանց ջերմորեն հանձնեց ռեկտոր Ավագ Սաչատրյանը:

Հաջորդ օրը՝ մայիսի 8-ին Եղանք Ռուբեն Սևակի անվան դպրոցում: Տեղի ունեցավ ջերմ հանդիպում ուսուցչական կադմի հետ: Դպրոցի տնօրեն Զույյա Ղաղարյանը պատմեց դպրոցի գործունեության մասին, նշեց նաև, թե ինչ չլուծված հարցեր ունեն: Հ. Չիլինկիրյանը խոստացավ նպաստել այդ հարցերի լուծմանը:

Մայիսի 10-ին մեր հյուրերին Զույյա Ղաղարյանի հետ միասին ուղեկցեցինք Ցեղասպանության զոհերի և Վերածննդի հուշահամալիր: Թանգարանում բացատրություն էր տալիս տնօրենը: Եթե բոլոր այցելուներին են այդպես հրամցում ցեղասպանության պատմությունը, ապա, իսկապես, այդ թանգարանը չի ծառայում իր նպատակին:

Երբ մոտեցանք այն մեծադիր նկարին, որտեղ պատկերված է Հուշարձանը բացելու պահը, թե ինչպես է Անտոն Քոչինյանը վառում անշեջ կրակը, թանգարանի տնօրենը պատմեց, թե Մոսկվան արգելում էր հուշարձանի կառուցումը և Յակով Զարորյանը դիմել է շինարարությանը մասնակցող ուսանողներին ու խնդրել՝ արագացնեն կառուցումը, այլապես, եթե Մոսկվան իմանա ու, ինչպես տնօրենն ասաց՝ «չվացնի», ապա կձախողվի հուշարձանի կառուցումը:

Ես, որ այդ տարիներին աշխատում էի Երևանի քաղաքային կոմիտեում և ինձ հայտնի էր ամեն ինչ, ուստի հարկադրված եղա միջամտել տնօրենին, ասելով. «Ի՞նչ կարիք կա հեքիաթ պատմել: Մոսկվան բոլորովին էլ ղեմ չի եղել հուշարձանի կառուցմանը»: Տնօրենը դայրացած պատասխանեց, թե հեքիաթ չի պատմում, այլ ասում է այն, ինչ իրեն հայտնել է հուշարձանի հեղինակ Սաչուրը:

Թող ընթերցողը չզարմանա, որ այս մանրուքի վրա այսքան ուշադրություն դարձրեցի: Դարձրեցի, որովհետև տնօրենն ու նրա նման մտածողները Սփյուռքից ժամանած մեր հայրենակիցներին շատ նրբորեն փորձում են հակառուսական թույն ներարկել:

Բարերախտարար Հովհաննես Չիլինկիրյանը հաստատապես կանգնած է հայ ժողովրդի ոուսական կողմնորոշման դիրքերում և համոզված այդ մասին գրում է իր աշխատություններում: Եվ տնօրենի թափանցիկ ակնարկը չէր կարող արժանանալ նրա հավանությունը...

000 000 000

Ահա և հարգելի ընթերցող ավարտին մոտեցավ իմ պատմությունը՝ նվիրված Շվեյցարիայում Ռուբեն Սևակի ապրած վայրերի այցելությունը: Դրանց նայեցի Ռուբեն Սևակի աչքերով ու ինձ համար հասկանալի եղան այդ մեծ բանաստեղծ փիլիսոփայի մտքերն ու հույզերը:

Ժամանակն անողորարար առաջ է անցնում, բայց պատմությունը չի փոխվում, միայն լրացվում է նորանոր դեմքերով ու դեպքերով: Այդ դեմքերին ու դեպքերին ես փորձեցի նայել Ռուբեն Սևակի աչքերով, նրա միջոցով գնահատել մեր անցած պատմությունը, նաև մեր ժամանակը...

Եվ մեծապես շնորհակալ եմ ու երախտապարտ մեծարգո Հովհաննես Չիլինկիրյանին ու Նադարեթ Սրմաքեչյանին, որոնք ինձ համար ստեղծեցին այդ անսպասելի հնարավորությունը:

ՎԵՐՋ

ԲՈՎԱՆ ԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՆՍՊԱՍԵԼԻ ՀՐԱՎԵՐ3

ՇՎԵՅՑԱՐԻԱ4

ԺՆԵՎ6

«ԻՆՉՊԵՍ ՃԱՆՉՑԱՔ ԶԻՍ»7

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԻԼԻՆԿԻՐՅԱՆԻՆ9

ԱՌԱՋԻՆ ՕՐԸ ԺՆԵՎՈՒՄ13

ԴԻՄԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻԻՆ13

ԳՆՈՒՄ ԵՆՔ ԼՈՉԱՆ14

ՀԱՄԱՌՈՏ ԼՈՉԱՆԻ ՄԱՍԻՆ16

ԼՈՉԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ17

«...ԱՅՍՏԵՂ ԹԱՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ».....20

ՇՆԵՐԻ ԳԵՐԵԶՄԱՆՈՅԸ22

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՀԱՄԱՌՈՏ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....22

«ԱՅՍ ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐՈՎ ՈՐՈՇԵՑԻ ԲԺԻՇԿ ԸԼԼԱԼ...»25

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ԾՈՑԱՏԵՏՐԸ28

«...ԿԸ ՎԱԶԷԻՆ ԱՆԿԱՅՈՒՆ ԿԱՄՈՒՐՁԻ ՄԸ ՎՐԱՅ...»33

«ԳԻՆՈՎՑԱԾՆԵՐԸ».....35

ԺՆԵՎՅԱՆ ԼՃԻ ԿԱՐԱՊՆԵՐԸ.....37

«...ԵՍ ԶԵՄ ԿՐՆԱՐ...»39

ԼԵՄԱՆԻ ՊԱՏԿԵՐԸ.....40

ԼՈՆԴՈՆԻՑ ԵԿԱԾ ԵՐԻՏԱՍԱՐԴ ԲԱՆԱԽՈՍԸ.....43

ԹԱԼԻՆ ԱՎԱԳՅԱՆԸ45

«ՓՈՂՈՑ ԱՎԼՈՂԸ»46

«...ՍԱ ՀԱՅԱՍՏԱՆ ԶԷ...ՍԱ ԵՎՐՈՊԱ Է...»47

«ԶԵԶԻ ՍՅՈՒՐՊՐԻԶ ՄԸ ՊԻՏԻ ԸՆԵՄ»48

ՀԱԿՈՔ ԱՎԱԳՅԱՆԸ50

ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆ ՍՓՅՈՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ52

ԾԱՆՈԹԱՆՈՒՄ ԵՆՔ ԺՆԵՎ ՔԱՂԱՔԻՆ54

ՀԵՐՄԱՆ ՍԱՐՅԱՆԸ.....55

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՄԱՍԻՆ.....	56
ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱՅՑԵԼԱԾ ՎԱՅՐԵՐՈՎ.....	57
«ԵԿԵՔ ՀԱՄԲՈՒՐՎԵՆՔ».....	58
ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԴՐՈՇԸ	60
«...ՀՐԱՇՔԸ ԴԵՌ ԱՌՋԵՎՈՒՄ Է»	61
«ՌՈՆԳԼԵՐ» ՍԱՌՅԱԴԱՇՏԸ	63
ՇԱՄՊԵՐԻ ԳՅՈՒՂՈՒՄ.....	64
«ՓՈՒԱՆ ՀԱՐՍԱՆԻՔԻ».....	67
ՆԱԶԱՐԵԹ ՍՐՄԱՔԵՇՅԱՆԻ ԶԱՅՐՈՒՅԹԸ	70
ԴԵՊԻ ՍԵՆ ԲԵՐՆԱՐ ԼԵՌՆԱՆՅՔ	73
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՊՐԵՋԻԴԵՆՏ ՄԻՏԵՐԱՆԸ ՎԵՐԱԴԱՐՁՆՈՒՄ Է ՆԱՊՈԼԵՈՆԻ ՊԱՐՏՔԸ	73
ԲՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՀՐԱՇՔԸ	74
ԲԱԼԹԻՆ ՔԱՂԱՔԻ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ	75
ԱԲԵԼ ՔԱՀԱՆԱՆ	76
ՀԱԿՈՐ ՍԱՐԳՍՅԱՆԸ.....	77
«ՖՐԱՆԿ-ՄՅՈՒԼԼԵՐ» ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ	77
ՀԱՆԴԻՊՈՒՄ ՍԻՄՈՆ ՏԵՏԵՅԱՆԻ ՀԵՏ.....	78
ՍԻՄՈՆ ՏԵՏԵՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ.....	81
«ԵԿԵՔ ԱՎԱՆԴՈՒՅԹԸ ԶԽԱՆՏԵՆՔ...».....	86
«ԴՈՒՔ, ՀԱՅԵՐԴ ՀԱՇՏՎՈՒՄ ԵՔ...».....	87
«ԵՍ ԳԱՂՈՒԹԻ «ՍԿԱՆ» ՄԵՔԵՆԱՆ ԵՄ».....	88
ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆ ՄԿՐՏԻՉ ՇԵԼԵՖՅԱՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻՆ.....	89
ՍԻՄՈՆԻ ՄՏԱՀՈԳՈՒԹՅՈՒՆԸ	90
ԵՐԵՎՈՒՄ ԵՆ ՄԱՍԻՍՆ ՈՒ ԱՐԱԳԱԾԸ.....	92
«ԼԱՎ ԼՈՒՐ ԵՄ ԲԵՐԵԼ...».....	92
ՎԱՐԴԱՆԻ ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ՕԶԱԽՈՒՄ	94
ՀԱԿՈՐ ԱՎԱԳՅԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆԸ	96
ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՍԵՐԸ.....	97
ԸՆԴԴԵՄ ԱՅԼԱՍԵՐՄԱՆ	100
«ԳԻՆՈՎՑԱԾՆԵՐԸ».....	103
«ԱՅԴ ՀԵՂԱՓՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐ ԴԵՄ Է ՈՒՂՂՎԱԾ».....	105
ԱՆԴՐԱՆԻԿ ԾԱՌՈՒԿՅԱՆԻ ԲԱՅԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ	106
ԴԱ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ՄԻԱԿ ՊԱՀԱՆՁԸ ԶԷՐ	109
«ԿԱՐՄԻՐ ԳԻՐՔԸ»	115

«ԱՅՍ ԴԱՆԱԿԸ»	120
«ՄԱՐԴԿՕՐԷՆ ԿԱՏՂԻԼԸ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ	123
«ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՄԵՂՔԻ ՔԱՂԱՔԸ»	131
ԵՐԿՈՒ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ	135
ԵԶԱԿԻ ԴԵՄՔԵՐԻՑ ՄԵԿԸ	138
«ՍԻՐԵՑԻ ՏԱՌԱՊԱԿՈՐ ՄԱՐԴԿՈՒԹԻՒՆԸ»	141
«ՄԱՐԴԸ» ԱՎԱՐՏԱԿԱՆ ԹԵԶԸ	145
«ԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ ԹՈՂ ԳԱՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՄԲ »	154
«ԲԺԻՇԿԻՆ ԳԻՐՔԷՆ ՓՐՑՈՒԱԾ ԷՋԵՐԸ»	161
ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՊԱՏԳԱՄԸ	164
ՉՀԵՏԵՎԵԼ ՓԶԱՑԱԾ ԵՎՐՈՊԱՅԻ ՕՐԻՆԱԿԻՆ	166
ԳԵՂԵՑԻԿ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՎԵՀ ԿԵՐՊԱՐԸ	167
«ՃԱՆԱԶԵԼ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՅԲԸ»	168
«...ՄԵՐ ՀՆԱՄԵՆԻ ՆԱԻԸ ԴԵՌ ԶՈՒՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ ԿԸ ԾՓԱՅ...»	174
ՆԱ ՈՐՍԱՅ ԺԱՄԱՆԱԿԻ ՌԻԹՄԸ	176
«ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԻ ՀԱԻԱՏԱՑՈՂՆԵՐՆ ՈՒՐ ԵՆ...»	181
Ո՞Վ ԷՐ ՃԻՇՏ ԵՎ ՈՎ՝ ՍԽԱԼ	186
«ՊՈԼՍԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԶԱՐԴԵՐԻՑ ՄԷԿԸ»	190
ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ	193
«ՎԵՐՁԻՆ ՕՐՕՐ»	198
«ԱՆ...ԿՐՆԱՅ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ՈՏՔԻ ՀԱՆԵԼ...»	200
ՅԱՆՆԻ ՍԵՎԱԿԻ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ	206
«ԹՈՒՐՔԸ ՀԱՍԿՑԱԾ ԷՐ ՌՈՒԲԷՆ ՍԵՎԱԿԻՆ ՈՎ ԸԼԼԱԼԸ...»	212
ՀԱՆԴԻՊՈՒՄ ԵՐԵՎԱՆՈՒՄ	213

ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ԱԶՔԵՐՈՎ

*Սրբազրիչ՝ Վահանդուխտ Դերձյան
Համակարգչային ձևավորումը՝ Աննա Աղուզումցյանի*

*Ստորագրված է տպագրության՝ 18.12.2009 թ.:
Չափսը՝ 60x84 1/16: Թուղթ՝ օֆսետ: Տպագրություն՝ օֆսետ:
Տպագր. 13.9 մամուլ+16 էջ ներդիր: Տպաքանակ՝ 500:*

ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՏԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. «Հաւաքածոյ արեւմտահայ գրողներու»- չորս հատոր: ՎԵՐԺԻՆ ՏԵՕՇԷՄԵՆԵԱՆ. Պոլիս, 1971:
2. «Հայ ժողովուրդի ողբերգական անցեալը եւ խրախուսիչ ներկան»: ԿԱՐՈ ՍԵՅԵԱՆ. Ս. Ղազար, Վենետիկ, 1982:
3. «Որպէս երազ անկրկնելի», Բ հատոր, «Պատմուածքներ»: ԿԱՐՈ ՍԵՅԵԱՆ, Անթիլաս, 1984:
4. «Ռուբէն Սեւակ եւ փրցուելիք ուղեղներ»: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1986:
5. «Ռուբէն Սեւակի վերջին օրերը», Թատերախաղ 5 պատկերով: ԳԵՈՐԳ ԳԱՍՊԱՌԱՆԵԱՆ, Պեյրուս, 1986:
6. «Ս.-Դ. Հնչակեան կուսակցութեան հարիւրամեակը»: ԺԻՐԱՅՐ ՆԱՅԻՐԻ, Պեյրուս, 1987:
7. «Մատենագիտութիւն հայատառ օտար լեզուներով տպագիր գիրքերու»: ԱՐՏԱՇԵՍ Հ. ԳԱՐՏԱՇԵԱՆ, Փարիզ, 1987:
8. «Ովքեր են ի վերջոյ արիացիները»: ԱԼԵՔՍԱՆԴՐ ՎԱՐՊԵՏԵԱՆ, Մարսել, 1988:
9. «Ռուբէն Սեւակի անուան յիշատակի տուն», «Ռուբէն Սեւակի գաղափարականը». «Ռուբէն Սեւակի անուան գրական մրցանակ»: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Փարիզ, 1989:
10. «Թրքական համաթուրանականութիւնը վարագոյրով չի ծածկուիր»: ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, Պեյրուս, 1990:
11. «Ռուբէն Սեւակ», Երկեր, հատոր երկրորդ: ԱԼԵՔՍԱՆՏՐ ԹՈՓՉԵԱՆ, Երեւան, 1996:
12. «Էնվեր փաշայի վերջը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Պեյրուս, 1996:
13. «Ռուբէն Սեւակ», Երկեր: Բ հրատարակութիւն, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997:
14. «Արարատը պետք է մնայ Երեւանի կողմը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍԵԱՆ, Բեյրուս, 2001:
15. «Ռուբեն Սևակը և մեր ժամանակը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2003:
16. «Թուրքերու իբր թէ չգիտցած իրականութիւնները»: Ա հատոր, հայերեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն: ՅՈՎՀԱՆՆԷՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2004:

17. «ՌՈՒԲԵՆ ՍԵՒԱԿ. Բանաստեղծություններ, թարգմանություններ: Ռուսերեն, Երեւան, 2004:
18. «Սուտերու եւ երազներու զոհ «էջի նահատակ» եղած ազգ մը՝ «հայերը»: Ա հատոր, ՅՈՎՅԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Պեյրուք, 2004:
19. «Իմ Ռուբէն Սեւակը»: ԹՈՐՈՍ ԹՈՐԱՆԵԱՆ, Յալեպ, 2004:
20. «Մենագրույց նահատակ բանաստեղծի հետ»: ՎԼԱԴԻՄԻՐ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, Երևան, 2005:
21. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, հայերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
22. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, անգլերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
23. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, ֆրանսերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
24. «Թուրքերուն (իբր թէ) չգիտցած իրականութիւնները»: Բ հատոր, թուրքերեն, ՅՈՎՅԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԿԻՐԵԱՆ, Երեւան, 2005:
26. ՌՈՒԲԵՆ ՍԵՎԱԿ. «Յատընտիր»: Ֆրանսերեն, Երևան. 2007:
27. «Ժամանակի հրամայականը»: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2008:
28. Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները (Լրացված վերահրատարակություն), Բ հատոր, հայերեն, Երևան, 2009:
29. Թուրքերուն [իբր թէ] չգիտցած իրականութիւնները (Լրացված վերահրատարակություն), Բ հատոր, թուրքերեն, Երևան, 2009:
30. Ռուբեն Սևակի աչքերով: ՎԼԱԴԻՄԻՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Երևան, 2010:



Վլադիմիր Գևորգի Պետրոսյանը ծնվել է Ապարանի շրջանի Հարթավան գյուղում: Ավարտել է Ապարանի միջնակարգ դպրոցը: Ստացել է բարձրագույն մանկավարժական կրթություն: Ապարանի միջնակարգ դպրոցում դասավանդել է պատմություն, աշխատել նույն դպրոցի ուսումնական մասի վարիչ:

Հետագա տարիներին զբաղվել է ժուռնալիստիկայով, վարել կուսակցական-սովետական աշխատանք: Աշխատել է նաև ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի համակարգում:

1992 թվականից Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի պատմության ամբիոնի վարիչն է: Դասավանդում է Հայ ժողովրդի պատմություն և Ռուսաստանի պատմություն:

Մի շարք գրքերի և գիտական-հրապարակախոսական հոդվածների հեղինակ է: Պատմական գիտությունների դոկտոր է, Ինֆորմատիկայի միջազգային ակադեմիայի ակադեմիկոս: